Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայ
1064

№148

201

162

Հրատարակութիւն «Կովկասեան գրավաճառանոց
Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ»

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայոց դպրոցների համար

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
Հայրապետ Դուշկասեանց

ՀԱՏՈՐ Ա.

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1255

ՏՓԽԻՍ
ի տպարանի Ա. Ա. Միխէլեանի
1880.

142

Հրատարակութիւն «Կովկասեան գրավաճառանոց
Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայոց դպրոցների համար

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
Հայրապետ Ղուկասեանց

ՀԱՏՈՐ Ա.

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ

ՏՓԽԻՍ
ի տպարանի Ա. Ա. Միխէլսօնի
1880.

Дозволено цензурою, Тифлисъ 19-го Ноября 1879 года.

(584)
1064-2013
Հ.Ֆ-1059.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընդհանուր պատմութեան ուսումն, ամեն մարդու համար, որ ձգտում է կենցաղագէտ լինել՝ անմերժելի կարեւորութիւն ունի. այս այնքան պարզ է, որ կարօտ չէ բացատրութեանց ու ապացոյցների: Ուրախալի է, որ մտահայեցութեան հորիզոնն ընդլայնող, սիրտն ազնուացնող, հոգին վեհացնող և առհասարակ կեանքի գիտակցութիւն ազդող այս ուսումն արժանապէս գնահատուած է այժմ մեր դպրոցների մէջ և գրեթէ ամեն տեղ ուսանելի նիւթերի շարքում մի պատուաւոր տեղ է բռնում: Դժբաղդաբար այդպիսի մի կարեւոր առարկայի համար բաւականացուցիչ ձեռնարկների պակասութիւնը մեր դպրոցներում զգալի խոչընդոտներ է յառաջացնում թէ ուսուցչի և թէ մանաւանդ աշակերտների համար. ով որ պարապել է պատմութեան դասատուութեամբ դիւրաւ կըհամաձայնի ասածիս ճշմարտութեանը:

Այսպիսի կարօտութեան առաջն առնելու համար՝ մենք ձեռնարկեցինք ներկայ աշխատութիւնը, որպէս զի մասամբ իւիք յագեցրած լինինք դպրոցական գործին ծառայելու մեր փափագը: Եւ որովհետեւ չէ թէ միայն դպրոցական գոհացուցիչ ձեռնարկների պակասութիւն կայ մեզանում, այլ և ընդհանրապէս պատմութեան վերաբերեալ ընթերցանելի գրեանց, որոնք պէտքէ օժանդակէին մանկան՝ իւր ստացած խմացութիւնները լրացնելու և անհատական հետաքրքրութեան ծարաւը լցուցանելու, ուստի չուզեցանք որ սոյն դասագրքի բովանդակութիւնը չափազանց սեղմուած լինի և փոքր ինչ ստուարացրինք նորան նշանաւոր անցքերի կամ նշանաւոր անձանց կեանքի նկարագիրներով:—փորձը և քննադատութիւնը

մեզ առաջնորդ կլինին ապագայում այս ձեռնարկի պակասութիւններն ուղղելու:

Այն դասագրքի մէջ Չինաց, Հնդկաց և Հրէից պատմութիւնը բաց է թողնուած: Այսպէս վարուելու պատճառն այն է, որ առաջին երկու ազգերի կեանքի անցեալ կազմակերպութիւնն աւելի գիտնական հետաքրքրութեանց նիւթ է և սովորաբար չի մըտնում ընդհանուր պատմութեան տարրական շրջանի մէջ: Իսկ Հրէից հին պատմութիւնը, անբաժան լինելով Սրբազան պատմութիւնից՝ մեզանում ուսուցանվում է հին Կտակարանի պատմութեան մէջ. գոնէ այդպէս է տակաւին այժմ: Եւ ինչ որ մի դասի մէջ ուսուցանվում է իբրև առանձին աւանդուող առարկայ, մի ուրիշ կապակից դասի մէջ, տեղն ընկած ժամանակ, կարող է միայն լրացնուել. բայց պէտք չէ որ դա էլ առանձին ժամանակ խլէ: Նոյնը կարելի է ասել և Հայոց պատմութեան մասին. հարկաւոր եղած տեղն կապակցութիւնն պէտք է դրուի, և դրած է ներկայ ձեռնարկիս մէջ. բայց նա մեր դպրոցներում պէտք է աւանդուի իբրև առանձին առարկայ, ուստի և ամբողջապէս չի կարող առանձին տեղ գրաւել ընդհանուր պատմութեան դասագրքի մէջ:

Վերջացնելով այս համառօտ նախածանօթութիւնը՝ պարտաւոր ենք յայտնել, որ սոյն աշխատասիրութեան մէջ աչքի առաջ ունեցանք մասամբ Գրուբէի և Հ. Ամբ. Գալֆայեանի ձեռնարկները (Հին պատմութիւն) և մասամբ Կօլ՛բի երկհատոր աշխատութիւնը (Պատմութիւն մարդկային կենցաղակրթութեան): Բայց ամենքից աւելի օգուտ քաղեցինք Մինստերի գիմնազիոնի դասատու Վել՛տերի եռահատոր երկասիրութիւնից, որ Գերմանիայի մէջ մեծ ընդունելութիւն է գտած, իբրև դասագիրք:

Հ. Գ.

ՑԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հատուած առաջին.

	Երես.
Նախագիտելիք .	1
Ա. Եգիպտոս	14
Բ. Փիւնիկիա.	29
Գ. Բաբելաստան և Ասորեստան .	39
Դ. Մարք և Պարսիկք.	45

Հատուած երկրորդ.

Ա. Յունաստան .	69
Բ. Սպարտա	87
Գ. Աթէնք.	98
Դ. Պարսկական պատերազմները .	105
Ե. Յունաստանի վիճակը Պարսիկներին հալածելուց յետոյ.	116
Զ. Աթէնքի ծաղկելը Պերիկլէսի ժամանակ .	118
Է. Պելոպոնէսեան պատերազմը .	122
Ը. Սոկրատէս .	131
Թ. Սպարտայի Գերիշխանութիւնը.	137
Ժ. Թեբէի Գերիշխանութիւնը .	138
ԺԱ. Մակեդոնիա	143
ԺԲ. Աղ՛էքսանդր Մեծ.	148

Հատուած երրորդ.

Ա. Հռովմայեցիք	160
Բ. Հռովմ թագաւորաց ժամանակ.	163
Գ. Հռովմէական հասարակապետութիւն.	177
Դ. Կռիւ ազնուականների ու ռամիկների մէջ.	180

II.

Երես.

Ե. Տամպետների օրէնսդրութիւնը . . . 186
Զ. Ներքին խռովութեանց շարունակութիւնը և արտաքին յաղթութիւնները 188
Է. Գալլիացիք Հռովմում. 190
Ը. Սամնիկների վերջնական յաղթութիւնը. . . 193
Թ. Պատերազմներ Սամնիացւոց և Լատինացւոց դէմ. 194
Ժ. Պատերազմ Տարենտոնի դէմ 196
ԺԱ. Պունիկեան պատերազմները. . . . 201
ԺԲ. Աննիբալ 205
ԺԳ. Մակեդոնիայի և Յունաստանի նուաճումն. . 216
ԺԴ. Երրորդ Պունիկեան պատերազմը. . . 218
ԺԵ. Հռովմի ներքին տկարութիւնը . . . 220
ԺԶ. Յիւգուրթայի պատերազմը. Մարիոս և Սուլլա. 226
ԺԷ. Յուլիոս Կեսար. 234
ԺԸ. Առաջին Եռապետութիւն 237
ԺԹ. Երկրորդ Եռապետութիւն. Կիկերոն . . 244
Ի. Հռովմէական Պետութեան արտաքին փառքը և ներքին անկումը 250
ԻԱ. Քրիստոնէութեան սկիզբն ու տարածումն. . 252
ԻԲ. Հռովմ կայսերաց ժամանակ. Օգոստոս. . 255
ԻԳ. Օգոստոսի յաջորդները. 258
ԻԴ. Խաղաղ կառավարութեան ժամանակները. . 260
ԻԵ. Հռովմի կայսրութեան աստիճանաբար անկումը. 263
ԻԶ. Դիոկղ՚ետիանոս, Կոստանդիանոս Մեծ. . 263
ԻԷ. Հռովմի վերջին կայսերները. . . . 266
ԻԸ. Հոնաց արշաւանքը 268
ԻԹ. Ալարիք Արեւմտեան Գոթացւոց թագաւորը . 270
Լ. Արեւմտեան Հռովմէական Պետութեան կործանումը. 273

Ընդհանուր հայեացք Հռովմէական Պետութեան զարգացման և անկման վերայ.

ՀԻՆ ԴԱՐ

Հատուած առաջին

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԻՐԱՆՑ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

1.

Քանի որ աշխարհիս վերայ ապրում էին Ադամը, Եւան և իրանց որդիքը՝ կերակուր գտնելու համար դժուարութիւն չէին քաշում: Ինչ բան էր հարկաւոր նոցա, այդ էլ գտնումէին իրանց չորս կողմը: Նոքա ո՛չ ցանում ո՛չ հնձումէին և բնութեան առատութիւնից կերակրվումէին ինչպէս թռչունները, որովհետև ապրումէին Ասիայի մի բարեբեր կողմում, Հայաստանի մէջ, Եփրատի և Տիգրիսի հովիտներում: Այդ տեղ համեղ, գեղեցիկ պտուղներ աճում ու հասնում էին իրանք իրանց, առանց մարդու աշխատութեան: Օդն էլ այնքան տաք էր, որ շատ թեթև հագուստն էլ հերիք էր նոցա: Սկզբում նոքա իրանց անձը ծածկում էին թզենու մեծ-մեծ տերևներով, յետոյ գործ էին ածում անասունների մորթի: Զափազանց տօթից նոքա պատսպարվում էին ծառերի շուաքի տակ. բաց երկնակամարի տակ, փափուկ կանաչները նոցա օթոցներն էին: Նոքա իրանց ուժեղ բազուկներով յաղթում էին կատաղի գազաններին և ահագին ցուպերով սպանում էին նոցա: Հին ժամանակներում մարդիկ ցուպը գործ էին ածում իբրև զէնք:

Կայէնը ցուպով սպանեց իւր եղբայր Աբէլին։ Քարերն էլ էին ինչպէս զէնք գործ ածվում։ Մինչև անգամ յետին ժամանակներումն էլ քարերով կռիւ էին դուրս գալիս Թշնամու դէմ. մանուկ Դաւիթը քարո՛վ սպանեց Գողիաթին։ Հին Գերմանացիք քարէ կացիններ էին գործ ածում։

Երբ որ մարդիկ շատացան՝ ուտելեղէնի պակասութիւն զգացին. այս պատճառով առաջին մարդիկ հարկադրուեցան ցրուիլ զանազան կողմեր, որ կերակուր ճարեն իրանց համար։ Նոքա հետեւում էին գետերի հոսանքին, որովհետև առանց ջրի չէին կարող ապրել։ Այսպէս ահա մարդիկ ստիպուեցան Թափառել այս ու այն կողմ և շատ անգամ քաղցած էին մնում, որովհետև պատահում էր, որ նոր հայրենիքը, անպտուղ էր լինում։ Այս հանգամանքից հարկադրուած՝ նոքա սկսան մտածել իրանց վիճակի վերայ և հնարքներ որոնել։ Այսպէս կարօտութիւն ունենալը շատ օգուտ եղաւ մարդու համար, որովհետև առանց դորան նա ո՛չ կխորհէր ոչ կաշխատէր։ Այժմ նա պէտքէ սեպական աշխատանքով բարւոքէր իւր վիճակը։ Եթէ որ մարդ ամեն ժամանակ պատրաստ գտնէր բնութեան մէջ իրան հարկաւոր ապրուստը՝ անգործութեան ու ծուլութեան մէջ կընկնէր, և նորա միտքը չէր բացուիլ յաւիտեան։ Նա այն օրին կընկնէր, որ գուցէ Թէ անասուններից շատերը նորանից աւելի սրամիտ ու ճարպիկ լինէին։

Ուրեմն մարդիկ տարածուելով զանազան տեղեր՝ պարտաւոր էին ամեն մեկը երեսի քրտինքով իրանց հացը ճարել, որ սովից չմեռնին։ Նայելով Թէ իրանց նոր հայրենիքում ինչ ճանապարհով կարելի էր ապրուստ անել՝ նոցանից ոմանք սկսան *որսորդութեամբ* պարապել, ոմանք *խաշնարածութեամբ*, այլ ոմանք *երկրագործութեամբ*։

2.

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Մարդիկ այս ու այն կողմ տարածուելիս՝ նոցանից ոմանք

ընկան այնպիսի մի երկիր, որ պատած էր խիտ անտառով և լիքն էր անհամար գազաններով։ Այդտեղ չէր կարելի պարապել ո՛չ երկրագործութեամբ, ո՛չ խաշնարածութեամբ։ Կամայ ակամայ մարդ պէտքէ զէնքը ձեռքն առնէր որսորդ դառնար. ոչ մի գազանի մռնչիւն է՛լ չէր վախեցնում նորան, նա հարկադրուած էր սպանել առաջն եկած կենդանուն, նորա միսն ուտել, արիւնը խմել և մորթին ծածկել։ Այսպէս, որսորդութիւնը մարդու համար դարձաւ մի սիրելի զբաղմունք, նա աշխատում էր հետզհետէ կատարելագործել իւր զէնքները և խորամանկ հնարներ էր գտնում որսը հեշտութեամբ ձեռք բերելու համար։ Ցերեկուան աշխատանքից յետոյ նա հանգստանում էր այրերի մէջ կամ ծառերի փուչակներում, ստուերների տակ։ Այլ որսորդներ բնակուեցան ծովերի եզերքում և ուրի՛շ կերպ որսորդութիւն էին անում— ձկնորսութիւն։

Դեռ մինչև այսօր էլ շատ վայրենի ազգեր հում հում ուտում են իրանց սպանած գազանի միսը. նոցա ատամներն ամուր ու սուր են, և նոքա հում միսն այնքան եւս հեշտութեամբ են ուտում, որքան մենք եփածը։ Բայց շատ տեղ վայրենիքը չեն բաւականանում անասունների միսն ուտելով. Հարկ եղած ժամանակ նոքա մարդու միս էլ են ուտում։ Հիւսիսային Ամերիկայում Հուդսոնեան ծոցի մօտ, Լաբրադոր Թերակղզում, մի դաժան սովորութիւն կար. որդին պարտաւոր էր իւր ձեռքով սպանել զառամեալ հօրը, երբ նա այլ ևս ընդունակ չլինէր որս անելու։ Այս մի ախորժալի պարտաւորութիւն էր նոցա համար, և մնում էին զարմացած, Թէ ինչո՞ւ եւրոպացիք խստութիւն էին համարում այդ բանը։ Մի քանի վայրենի ազգեր ամենամեծ կատաղութեամբ սպանում ուտում էին գերեալ Թշնամիներին։

Առ հասարակ պէտքէ ասել, որ վայրենի որսորդական կեանքը մարդու մէջ հաստատում է մարդուն անվայել կատաղի բնաւորութիւն. ընկերի Թշուառութիւնը նորա կարեկցութիւնը չի շարժում որովհետև նա սովոր է ամեն օր տեսնել իւր սպանած զոհերի դողդողագին չարչարանքները։ Նորա մէջ ամենայն ազնիւ

զգացմունք բթանում մեռնում է: Անասունների վերայ իշխելով նա ամբարտաւան է դառնում և ինքն իրան անընկճելի մի արարած է ճանաչում: Հարուստ որս ունեցած ժամանակն էլ ոչընչի հոգս չի քաշում և թաղվում է ծուլութեան մէջ: Այսպիսի կենցաղավարութեան հետեւանքը լինում է կատարեալ վայրենութիւն, որ մինչև այսօր էլ մենք նկատումենք աշխարհիս զանազան կողմերում:

3.

ԽԱՇՆԱՐԱԾՈՒԹԻՒՆ

Դեռ շատ հին ժամանակներումն էլ յայտնի էր խաշնարածութիւնը: Արդէն Աբէլը հովիւ էր: Մարդուն շրջապատող կենդանիներից շատերը չէին փախչում նորանից, և ընդհակառակն հեշտութեամբ ընտելանում էին նորան. ոչխարը, այծը, կովը, համբերող ուղտը, առոյգ ձին՝ վաղ ժամանակներից ընտանի կենդանի էին համարվում: Մարդս տեսնելով, որ կենդանիների մէջ մայրը կերակրում է ձագերին իւր իւղալի կաթով՝ փորձեց նորա համը և տեսաւ որ նա մի զուարթարար ու կազդուրիչ ըմպելիք է. ուստի և սկսաւ պահել խնամել նոցա և աճեցնել: Բայց հովիւը չէր կարող երկար ժամանակ միևնոյն տեղը մնալ. երբ մի դաշտում խոտը պրծնում էր՝ նա պէտքէ տեղափոխուէր ուրիշ դաշտ: Այստեղ էլ մի առժամանակ մնալով իւր վրանում՝ գաղթում էր մի երրորդ տեղ, և՛ն: Այսպիսի դրութեան մէջ նա չէր կարող հաստատ տուն-տեղ ունենալ: Խաշնարածն ուր որ գնում էր՝ տընկում էր իւր վրանը, որի սիւները և առաստաղը բաղկացնում էին մի քանի բարակ ձողեր՝ գլուխները կորացրած, իրար հետ կապած ու գազանների մորթով կամ թաղիքով ծածկած: Խաշնարածները իրանց գերդաստանով այսպիսի շարժական կեցարաններում բնակվում էին ուրախ ու զուարթ, շրջապատուած իրանց հօտերով, որ արածում էին կանաչազգեղ արօտներում: Եթէ անջրդի տեղ էր լինում նոքա ջրհորներ էին փորում, կամ փոսեր էին շինում, որ-

տեղ անձրևի ջուր էր հաւաքվում: Մինչև այսօր էլ մեր աշխարհում Կուր և Երասխ գետերի հովիտներում՝ բնակվում են Թուրք կամ քուրդ վրանաբնակ խաշնարածներ: Նոքա ամառը գաղթումեն հովաշունչ լեռների վերայ, իսկ ձմեռը նորէն իջնումեն դաշտերը: Արաբացի ամբողջ ցեղեր մինչև հիմի էլ իրանց հօտերն առած տեղից տեղեն թափառում: Աստուածաշունչը լաւ է նկարագրում խաշնարածների թափառական կեանքի բոլոր զուարճութիւնները՝ առաջին նահապետների-Աբրահամի, Իսահակի և Յակոբի պատմութեան մէջ:

Հին ժամանակները խաշնարածութիւնը մի յարգելի պարապմունք էր. մինչև անգամ թագաւորներ ու արքայորդիք հովւութիւն էին անում: Այսպէս Դաւիթ արքան արածեցնում էր իւր հօտերը, երբ եկան թագաւորական աթոռը առաջարկելու նորան:

Թափառական ազգեր շատ շատ են Ասիայի և Աֆրիկայի անապատներում: Մանկութեան օրերից ազատութեան և անկախութեան զգացումն այնքան է արմատանում այդ ,,անապատի որդոց" մէջ (ինչպէս իրանք են անուանում իրանց), որ նոքա ատում են քաղաքները ինչպէս բանտ: Իրանց առաջնորդին անուանում են — ա մ ի ր, շ է յ խ, ս ո ւ լ թ ա ն, խ ա ն և այլն, բայց նոքա մի որոշ իշխանութիւն չունին և այդ կոչումն ստանում են ըստ մեծի մասին իրանց հարստութեան, բազմաթիւ հօտեր ունենալուն համար: Առաջնորդը վերջացնում է ցեղի մէջ պատահող վէճերը. ընտրում է վրան զարկելու տեղը և առաջ ինքն է վրանը վերցնում, երբ պէտք է փոխուի մի ուրիշ տեղ. արշաւանքների և պատերազմների ժամանակ թէև առաջնորդում է իւր ցեղին, բայց իրաւունք չունի հրամաններ տալու. բանակի մէջ իւրաքանչիւր ոք այնպէս անկախ է համարում իրան, ինչպէս և մեծաւորը, եթէ միայն չքաւորութեան պատճառով կախումն չունի սորանից: Բայց տան մէջ հայրը համարեա թագաւոր է. բոլոր տնեցիք պարտաւորեն մեծ ու գլուխ ճանաչել նորան, յարգել նորան ու հնազանդիլ: Թափառական ազգերի այս կերպ կառավարութիւնը կոչվումէ ն ա հ ա պ ե տ ա կ ա ն: Խաշնարածութիւնը որսորդութիւնից օգտակար պարապ-

մունք էր: Խաշնարածին աւելի շատ դէպքեր են պատահում իւր միտքն աշխատեցնելու: Նա տեսնում էր, որ հիւանդացող ոչխարը զանազան խոտեր է գործ ածում, փորձ արաւ ինքն էլ հիւանդացած ժամանակը նոյնպիսի խոտեր գործ ածել. այսպէս սկսուեցաւ առաջին անգամ հիւանդութեան բժշկութիւնը: Նա նկատեց, որ ոչխարի բուրդը թրջուած ժամանակը ոլորվում է. այս տեղից նորանում միտք ծագեց, թէ կարելի է բրդեայ մանուածներ շինել և այսպէս հետզհետէ սովորեցաւ մանել ու գործել:

Այսուամենայնիւ հովուի բնատուր ընդունակութիւնները չէին կարողանում զարգանալ: Թափառական կեանքը նորա մտաւոր զարգացմանն արգելք էր լինում: Նա ամեն տեղ համարեա օտար էր, միշտ անբան անասունների մէջն էր կեանքն անցկացնում: Նորա տունը վրանն էր. տնային կահ կարասիքը շատ քիչ էին և ամենապարզ: Նա քիչ բանով պէտք է բաւականանար, որ կարողանար հեշտութեամբ տեղափոխել: Պիտոյքները որ քիչ էին՝ նորա աշխատութիւնն էլ աննշան էր, այս պատճառով նա անհոգութեան ու ծուլութեան մէջ էր ընկնում. ապա ուրեմն նա էլ հարկաւորութիւն չէր զգում միտքը պարապեցնելու գիւտեր անել: Հովիւները փոխանակ, երկրագործների նման իրար օգնելու, շատ անգամ կռւում էին իրար դէմ, ինչպէս օրինակ Աբրահամի ու Ղովտի հովիւները:

4.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մարդիկ շուտով նկատեցին, որ անմշակ հողի տուած բոյսերը հերիք չէին իրանց. այս պատճառով հարկադրուեցան արհեստական կերպով աճեցնել բնական բերքերը: Բնութիւնն ինքը ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք էր շատացնէին ծառերն ու տունկերը: Տեսնում էին, որ բնութիւնը ցանում էր սերմերը, իսկ անձրեւը ջրում: Մարդիկ էլ աշխատեցին նոյն կերպով մշակել հողը: Հողի մէջ ձգած սերմը շուտով աճում էր ու պտուղ էր

տալիս մէկին երեսուն, մէկին հարիւր: Մարդիկ հասկացան որ աշխատանքը մեծ բարիք է: Երկրագործութեան բարեբեր հետեւանքներն այնքան զմայլեցրին մարդուն, որ հին հեթանոսները կարծում էին, թէ իրանց աստուածները խնամք են տանում երկրագործութեան վերայ և տարին մի անգամ երկնքից իջնում են երկիր, որ երկրագործութիւն սովորեցնեն մարդկանց: Հին Հռոմայեցւոց ամենաերեւելի զօրապետներն ու պաշտօնականները պատիւ էին համարում իրանց ձեռքով մշակել իրանց դաշտերը: Շատ հին ժամանակներից իվեր Չինաստանի մէջ այնպէս սովորութիւն կայ, որ կայսրը տարին մի անգամ ժողովրդի բազմութեան առջեւ մի քանի ակօս կըվարի, ինչպէս երկրագործութեան պաշտպան: Այնքան ազնիւ ու յարգի պարապմունք էր համարվում երկրագործութիւնը:

Մարդիկ տեսնելով, որ ձեռքով հողը մշակելը մի ահագին չարչարանք է՝ սկսան գիւտել զանազան գործիքների օգնութեան: Նոքա ակօսներ էին փորում սուր փայտով, կամ եզան եղջիւրներով, կամ կողերով, ինչպէս որ մինչև այժմ էլ անում են մի քանի վայրենի ազգեր: Վերջապէս, իհարկէ երկար ժամանակից յետոյ, սովորեցան արօր ու գութան շինել:

Նկատուեցաւ, որ երաշտութեան ժամանակ բոյսերը թառամում էին, իսկ անձրեւից յետոյ զուարթանում: Այլև տեսան, որ գետերի հեղեղմունքից մնացած տիղմը պարարտացնում է հողը: Այս օրինակից երկրագործը սովորեց երկիրը ջրել ու պարարտացնել:

Առաջին անգամ մարդիկ ձեռքով էին կորզում հատիկները, հասկերի միջից, բայց այս շատ շուտով ձանձրացրեց նոցա. ուստի սկսան կամ փայտերով ծեծել և կամ անասուններին կոխատել տալ: Ստացած հատիկներն առաջ երկանքի մէջ էին աղում, մինչև որ սովորեցին շինել ջրաղացներ, հողմաղացներ և վերջին ժամանակներումս շոգիաղացներ:

Երկրագործը պէտք է հաստատակեաց լինէր: Նա իւր ցանքը պէտք է պահպանէր, յետոյ հնձէր. այս պատճառով պէտք է որ նա

իւր խրճիթը շինէր արտի մօտ։ Ամբողջ ցերեկը նա աշխատում էր և երեկոյեան քրտինքն երեսին դառնում էր խրճիթը։ Այսպէս, մի քանի արտի տէրեր շինում էին իրանց խրճիթները մէկ մէկից մօտիկ, որ հարկաւոր ժամանակը միմեանց օգնեն։ Այսպիսի խրճիթներից կազմըվում էին գիւղեր, իսկ սոցանից էլ փոքր առ փոքր յառաջ էին գալիս քաղաքներ։ Այսպէս զանազան ընդունակութեանց տէր մարդիկ իրար մօտ գալով՝ փոխադարձաբար օգնում էին միմեանց և ով մի գիւտ էր անում՝ ամենքի մէջ տարածվում էր այդ գիւտը։

Սկզբում ամբողջ երկիրն ընդհանուր մարդկութեան բաժինն էր. բայց իւրաքանչիւր մարդ իւր մշակած հողի կտորը իւր սեփականութիւնն էր համարում և շրջապատում էր նորան ցանկով կամ խրամով։ Սակայն ամեն մարդ էլ տեսնում էր, որ մենակ ցանելով կարելի չէ բոյսերն աճեցնել, այլ դորա համար կարևոր են անձրև ու արև։ Կարկուտը կարող էր մի րոպէում նորա արտերը փչացնել և յոյսերը ոչնչացնել։ Ուստի երկրագործը և իւր ընտանիքը երկիւղածութեամբ դառնում էին Ամենաբարձրեալի գթութեանը, խնդրելով նորա երկնային օրհնութիւնը։ Հին մարդիկ իրանց դաշտերի առաջին ընտիր բերքերը պատարագ էին մատուցանում Արարչին։

5.

ԱՌԱՋԻՆ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԻՄՆՈՒԻԼԸ.

Երկրագործութեան շնորհիւ մարդիկ սովորեցին հաստատաբնակ կեանք վարել. առանձին ցիրուցան ընտանիք միանում կազմում էին մի ահագին գերդաստան, և մասամբ իրանց ընդհանուր ապահովութեան համար, մասամբ ընկերական կեանքի քաղցրութիւնները վայելելու համար՝ սկսան որքան կարելի է միմեանց մօտիկ շինել իրանց բնակարանները։ Այսպիսի բնակարանների միութիւնից կազմվում էին գիւղեր, աւաններ և քաղաքներ, և այսպիսով շատ մարդիկ բնակվում էին իրար հետ միատեղ։ Ժամանակ

առ ժամանակ նոցա մէջ պատահում էին վէճեր, անբաւականութիւններ, թշնամութիւններ, որովհետև թէպէտ ամեն մարդու խիղճն էլ կըվկայէր, թէ ինչ ապօրինի բան է գործել, բայց ո՛չ ամեն ոք լսում էր իւր խղճի ձայնին։ Այս պատճառով կարևոր եղաւ որոշել հասարակութեան իւրաքանչիւր անդամի իրաւունքերն ու պարտաւորութիւնները, որ ամեն մարդու կեանքն ու սեպհականութիւնը պաշտպանուած լինի սորա-նորա կամայականութիւնից։ Բայց որպէս զի ամենքն էլ պահպանէին սահմանած կանոնները՝ մի անձն պէտքէ լինէր, որ իւր իշխանութեամբն ու ազդեցութեամբը կարողանար օրինազանց մարդկանց կարգի բերել։ Դորա համար էլ կառավարիչներ էին ընտրում իրանց միջից փորձուած ու խելօք մարդկանցից մէկին։ Ահա այստեղից և այսպէս սկիզբն առան տէրութիւններն ու կառավարութիւնները։

Տէրութեան սկիզբը գերդաստանի մէջ պէտքէ որոնել. դա էլ, կարելի է ասել, մի փոքր տէրութիւն է։ Հայրը՝ իւր տան տէրը, թագաւորն է. նա՛ է կառավարում ամբողջ գերդաստանը։ Նորան ամենքը պատւում, սիրում ու հնազանդում են։ Նորա ազդեցութիւնը տարածվում է իւր բոլոր ազգատոհմի վերայ, որդիների, թոռների և սոցա ընտանեաց վերայ։ Իսկ եթէ այսպիսի առանձին ազգատոհմերի թիւը շատանում էր՝ միանում մի ցեղ էին կազմում. և ով որ ամենից զօրեղը, ամենից խելօքն էր՝ նորան ընդհանուր ցեղապետ էին ճանաչում։ Սորա տեղն անցնում էր մեծ որդին, որ պահում պահպանում էր հարանց սովորութիւններն ու ծէսերը։ Ամեն մարդ նորան էր դիմում խորհրդի, օգնութեան կամ գանգատի։ Ամբողջ ցեղի համար նա և՛ հայր էր, և՛ դատաւոր, և՛ օրէնսդիր, և՛ քուրմ. իսկ թշնամի ցեղերի դէմ կռուելիս՝ և՛ զօրավար։

Հասարակական գործերի մասին խորհրդածելու համար՝ ընտանեաց մեծերը հաւաքվում էին իրանց ցեղապետի մօտ. միասին քննում կշռադատում էին ամենայն ինչ և այնպէս վճռում։

Այսպիսի կառավարութիւնը կոչվում է ցեղապետական կամ աւելի լաւ՝ նահապետական։ Մեր առաջին նահապետը

Հայկն էր Քրիստոսից 2300 տարի առաջ. Արամ, Զարմայր— սոքա էլ նահապետներ էին մինչև Պարոյրը, որ առաջին թագաւորն եղաւ մեր ազգի մէջ:

Այդ նահապետական տէրութիւններն սկզբներում շատ մանր ու բազմաթիւ էին. յետոյ դոցանից մէկը միւսի հետ յօժարակամ կամ բռնի միանալով՝ յառաջացան աւելի մեծ տէրութիւններ: Տէրութեան գլուխն այլևս չէր կարող առաջուան իրաւունքներով կառավարել. նա պէտք է գործելու աւելի ընդարձակ միջոցներ ունենար, և որպէս զի կարողանար միմիայն տէրութեան գործերով զբաղուիլ, պէտք է ազատ լինէր ամեն տեսակ կողմնակի հոգսերից: Այս պատճառով ժողովուրդը հասցնում էր թագաւորին այն ամեն միջոցները, որ կարևոր էին. տալիս էր նորան հարուստ ընծաներ: Վերջը այս յօժարակամ ընծայաբերութիւններից յառաջացան կանոնաւոր հարկեր, որ այսօր էլ ամեն մի տէրութեան մէջ վճարում են թագաւորին, որ նա գործ դնէ ժողովրդի բարեկեցութեան վերա:

Տէրութեան սահմաններն ընդարձակուելով՝ գործերը բարդվում շատանում էին. այնպէս որ մենակ թագաւորը չէր կարողանում այլևս հոգալ և հարկադրուած էր լինում իրան համար օգնականներ հրաւիրել. սոքա պէտք է լինէին ազնիւ, փորձուած ու հաւատարիմ մարդիկ: Սոքա էին կարգադրութիւններ անում թագաւորի փոխարէն, երբ նա բացակայ էր լինում. ժողովուրդը սոցա պատւում ու հնազանդում էր, ինչպէս թագաւորին: Ժողովրդի սէրն ու յարգանքը ո՛չ միայն թագաւորն էր վայելում, այլ և իւր ընտանիքը. նորա մեռնելուց յետոյ իշխանութիւնն անցնում էր իրեց որդուն:

Այսպիսի տէրութեան մէջ քաղաքացիների մէջ աւելի սերտ յարաբերութիւններ էին հաստատվում: Ամեն մարդ հանգիստ ու ապահով պարապում էր իւր գործով. մէկը պարապում էր միմիայն երկրագործութեամբ, միւսը երկրագործական գործիքներ պատրաստելով, երրորդը հագուստեղէն կարելով և այլն. մի խօսքով իւրաքանչիւր ոք իրան համար որոշ մի պարապմունք ունէր. այն ինչ

թագաւորն էլ, ինչպէս մի սիրող հայր հոգս էր տանում իւր հպատակների բարեաց համար:

Սակայն այսպիսի թագաւորութեանց մէջ էլ հանգստութիւնն ու խաղաղութիւնը չէին կարողանում մշտատև լինիլ: Դրացի թափառական ազգերը նախանձում էին նոցա բարեկեցութեան ու երջանկութեան վերայ և կատաղութեամբ յարձակվում էին խաղաղ ժողովրդի վերա իրանց պետերի առաջնորդութեամբ: Այս բանի մէջ նշանաւոր էին մանաւանդ թափառական որսորդներն ու հովիւները: Ս. գրքի մէջ Նեբրովթի մասին ասած է, թէ նա առաջին հզօր թագաւորն էր աշխարհի վերայ, որովհետև հմուտ որսկան էր և հիմնեց Բաբիլոնի թագաւորութիւնը: Այս այն Նեբրովդն է, որի ամբարտաւան բռնութեանը չհնազանդեցաւ մեր նախահայր Հայկը, պատերազմեց նորա դէմ և սպանեց նորան:

Տիրապետողները նուաճած երկրում դառնում էին առանձին իրաւունքի և արտօնութեան տէր. իսկ նուաճուածները թէպէտ և չէին զրկվում հողից, բայց պարտաւորվում էին նշանաւոր հարկ տալ և առհասարակ կախումն ունէին նոցանից: Նոքա իրաւունք չունէին հասարակական գործերի մէջ խառնուիլ և հենց որ մի փոքր հակառակէին տիրապետողների կամքին, իսկոյն ծանր աշխատութեանց կամ ստրկութեան տակ էին ընկնում: Հին ժամանակները շատ յաճախ էին պատահում այսպիսի յարձակումներ ու նուաճումներ:

6.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐԸ.

Մարդիկ երբ չափազանց բազմացան՝ իրանց սկզբնական բնակութեան տեղերում էլ չէին կարող տեղաւորուիլ. նոքա ցրուեցան տարածուեցան աշխարհիս զանազան կողմերը, պէս պէս կլիմաների տակ և պէս պէս հողերի վերայ: Ամեն տեղ տարածուած մարդիկ միմեանցից որոշվում էին ինչպէս բնութեամբ ու կենցաղավարութեամբ, այնպէս էլ մարմնի կազմուածքով ու գոյնով. այս պատ-

ճառով բոլոր մարդկային ազգը բաժանվում է զանազան ցեղերի կամ տեսակների: Իրար նման մարդիկը խումբ խումբ բաժանելով՝ որոշածեն գլխաւորապէս չորս տեսակներ կամ ց ե ղ ե ր:

1) Ս պ ի տ ա կ ցեղ, որ ուրիշ կերպ կոչվում է Կ ո վ կ ա ս ե ա ն. սա շատ հին ժամանակներից սկսած բնակվում էր Արևմտեան Ասիայի և Եւրոպայի մէջ. իսկ այժմ ցրուած է ամբողջ երկրագնդի վերայ, բացի Արևելեան Ասիայից և Ներքին Աֆրիկայից:

2) Դ ե ղ ի ն ցեղ, որ վաղ ժամանակներից ի վեր բնակվում է Արևելեան Ասիայում:

3) Կ ա ր մ ի ր ցեղ, որի բնակութեան տեղը թէ առաջ թէ հիմայ Ամերիկան էր:

4) Ս և ցեղ, որ Աֆրիկայի և Աւստրալիայի բնիկ ազգերն են:

Թէպէտ և Ընդհանուր Պատմութեան պարտականութիւնն է բոլոր այս ցեղերի պատմական կեանքի հետ մեզ ծանօթացնել, բայց սոցանից միմիայն Սպիտակ ցեղին պատկանող ազգերն են շարունակ զարգացել ու քաղաքակրթուել և այժմ էլ անդադար յառաջադիմութիւն են անում քաղաքակրթութեան մէջ. ուրեմն ամենից աւելի նոցա անցեալ կեանքը կարող է պատմութեան նիւթ դառնալ: Ճշմարիտ է, Դեղին ցեղին պատկանող մի երևելի ազգ էլ (Չինացիք) շատ վաղ ժամանակներում հասաւ բարձր քաղաքակրթութեան, բայց յետոյ դորա վերայ էլ կանգ առաւ մնաց, մինչև այսօր. վարելով փակ ու անշարժ կեանք:

Սպիտակ ցեղը բաժանվում է մի քանի շառաւիղների.

Ա) Ք ո ւ շ ա ն ք, որոնք այսպէս կոչվում են Քամի որդի Քուշի անուամբ. սոքա սպիտակ ու սև ցեղերի միջին ցեղն են կազմում: Քուշանք ըստ աւանդութեան եկան Բակտրիայից և նոցանից ոմանք անցան Օքսուս և Յաքսարտէս գետերի եզերքը. այլ ոմանք գնացին Փոքր Ասիա. մէկ մասը Հինդ գետի ընթացքով մտաւ Հնդկաստան և բնակուեցաւ Դեկանի մէջ. միւս մասն էլ Պարսկաստանով և Արաբիայով անցաւ Բաբ-էլ Մանդէբ նեղուցը և բնակութիւն դրաւ Աֆրիկայում, վերին Նեղոսի ափերում: Մէկ

ուրիշ մասն էլ հաստատուեցաւ Միջերկրական ծովի եզերքում, ուր նոքա կոչվում էին Քանանացիք (Փիւնիկեցիք):

Բ) Սպիտակ ցեղի երկրորդ մեծ շառաւիղը կազմում են Ս ե մ ե ա ն ք, որ այսպէս կոչվում են իրանց աւանդական նախահօր՝ Սեմի՝ անուամբ: Սոքա թէև Քուշաններից յետոյ երևելի եղան քաղաքակրթութեան մէջ, սակայն շատ մեծ նշանակութիւն ունեցան և մեծ դեր խաղացին պատմութեան մէջ: Հրէայք, Արաբացիք, Ասորեստանցիք՝ Սեմական ազգեր են:

Գ) Ա ր ի ք կամ Հ ն դ կ ա — ե ւ ր ո պ ա կ ա ն շառաւիղ (Յաբեթեանք). սոքա ներկայացնում են Սպիտակ ցեղի ամենաբարձր և ամենակատարեալ նախատիպը: Արիական ազգերը թէև ամենից ուշ երևեցան Պատմութեան ասպարիզում, բայց ամենից առաջ անցան քաղաքակրթութեան մէջ և տարածուելով աշխարհիս զանազան մասերում՝ ամեն տեղ սփռեցին իրանց քաղաքակրթութիւնը: Արիական հին ազգերն են. Հայերը, Պարսիկները, Մեդացիք, Հնդիկները, Պարթևացիք, Յոյները, Հռոմայեցիք ևայլն:

Դ) Սպիտակ ցեղի մէկ հատուածն էլ բնակութիւն հաստատեց Ասիայի և յետոյ Եւրոպայի հիւսիսում: Այս մասը Սպիտակ և Դեղին ցեղերի միջին շառաւիղն է և կոչվում է Թ ո ւ ր ա ն կամ Տ ա ն ե ր ա ն և կամ Ա ն ա ր ի ք: Կարծում են, որ մետաղների ու գրերի առաջին գործադրութիւնը սոքա են սկսել:

Այժմ կըսկսենք ծանօթանալ քաղաքակրթութեան մէջ յայտնի առանձին առանձին ազգերի պատմութեան հետ: Այդ կողմից ամենահին ազգը, որքան յայտնի է մինչև հիմա, ճանաչվում են Ե գ ի պ տ ա ց ի ք:

Ը.

ԵԳԻՊՏՈՍ

1. ԵՐԿՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Եգիպտոսը գտնվում է Աֆրիկայի արևելահիւսիսային կողմում և շրջապատած է Միջերկրական ծովով, Ապառաժոտ Արաբիայով, կարմիր ծովով, Եթովպիայով և Լիբիական անապատով: Եգիպտոսի բոլոր երկարութեամբ անցնում է Նեղոս գետը, որից կախուած է երկրի պտղաբերութիւնը: Այստեղ անձրևներ չեն գալիս, և առանց Նեղոսի բարերար հեղեղմանց ամբողջ Եգիպտոսն էլ այնպիսի մի ամայի անապատ կլինէր, ինչպէս իւր դրացի Լիբիան: Երբ Ապրիլ ամսին Աֆրիկայի հարաւում, ուր որ գտընվում են Նեղոսի ակունքը, պարբերական անձրևներ են գալիս և Եթովպիայի լերանց վերայ ձիւնը հալվում է գետի ջուրը օրէցօր առատանում է և վերջապէս Օգոստոս ամսին դուրս է գալիս ափերից և բոլոր գետեզրեայ հովիտը մինչև Միջերկրական ծովի ափը ծածկում է ջրով. այդ ժամանակուանից մինչև Հոկտեմբեր ամիսը Եգիպտոսը նմանում է մի ամբողջ լճի, որի միջից քաղաքները դուրս են երևում կղզիների պէս: Մարդիկ շրջելու համար հարկադրուած են լինում նաւակներ նստել: Այս միջոցին բոլոր Եգիպտոսում ցնծութիւն է տիրում. ժողովուրդը գոհ է լինում իւր աստուածներից և զոհեր է մատուցանում: Սորա պատճառն այն է, որ ջրով ծածկուած տեղերում նստում է մի շերտ պարարտ ու պտղաբեր տիղմ, բնականապէս մշակելով հողը, այսպիսով ցանքերն առանց մեծ աշխատութեան այնպիսի առատ հունձեն տալիս, որպիսին ուրիշ երկիրներում հողը լաւապէս մշակել-

ով էլ չէ ստացվում: Եգիպտոսը հին դարերից սկսած մինչև այսօր էլ շրջակայ երկիրների համար հացի շտեմարան է:

Այսպիսի պտղաբերութեան պատճառով Նեղոսի երկու ափերն էլ լիքն էին քաղաքներով ու գիւղերով: Գետեզերքից հեռու տեղերը ջուր էր հասուցանվում արհեստական ջրանցքներով, որոնց մէջ Յովսէփի ջրանցքըն առաջին տեղն էր բռնում. սա մինչև 40 մղոն երկանութիւն ունէր: Այսպէս ահա Նեղոսի շնորհիւ Եգիպտոսը ամբերրի անապատից դարձել է աշխարհիս ամենապտղատու երկիրներից մինը: Իզուր չէ, որ հին ժամանակները Եգիպտոսն անուանում էին «Պ ա ր գ և Ն ե ղ ո ս ի»:

Հին Եգիպտոսը Նեղոսի ընթացքն ՚ի վայր երեք մասերի էր բաժանվում. ա) Վերին Եգիպտոս կամ Թեբայիս. սորա մայրաքաղաքն էր Թեբէ, որ բազմաթիւ դարպասներ ունենալու պատճառով կոչվում էր „Հարիւրդռնեան“: Այդ քաղաքի մեծամեծ աւերակները մինչև այսօր էլ կան Լուկսոր և Կորնակ գիւղերի մօտ: բ) Միջին Եգիպտոս՝ Մէմֆիս մայրաքաղաքով: Այս մասի մէջ գտնվում են բազմաթիւ բուրգեր, թագաւորական շիրիմներ, հռչակաւոր լաբիւրինթոսը և Մէօրիսեան լիճը, որ շինել տուաւ Մէօրիս թագաւորը: գ) Ստորին Եգիպտոս, որի մայրաքաղաքն էր Հելիոպօլիս. սա գտնվում էր Նեղոսի վերայ՝ Դելտայի սկսուելու տեղում, այսինքն բերանին մօտիկ այն մասում, ուր որ նա երկու առաջքների բաժանուելով՝ մէջ տեղը գոյացնում է մի եռանկիւնի ցամաք՝ յունաց դ ե լ՚տ ա տառի նմանութեամբ: Ծովի ափից մի մղոն հեռու գտնվում էր փարոս կղզեակը, որ յետոյ եգիպտացիք միացրին ցամաքի հետ և նորա վերայ շինեցին մի բարձր լապտեր: Այս լապտերը կղզու անուամբ փարոս էր կոչվում. նա ծառայում էր ծովագնացներին իբրև ուղեցոյց վերադառնալու ժամանակ և հին աշխարհի հրաշալիքներից մինն էր:

2. ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ՄԵՀԵՆԱԿԱՆ ԳՐԵՐԸ.

Սկզբներում որևիցէ առարկայի մասին հասկացողութիւն տա-

լու համար ուրիշ հնար չգիտէին բացի նորա պատկերը ձեւակերպելուց. այսպէս՝ նկարած առիւծը կընշանակէր իսկական առիւծ. նկարած աչքը—իսկական աչք ևայլն: Բայց որովհետեւ դորա համար շատ ժամանակ, շատ տեղ ու չարչարանք էր պէտք, ուստի մտածեցին ամբողջ առարկայի տեղ նորա մի որեւ է որոշիչ մասը նկարել. օրինակի համար, մարդու գլուխը կընշանակէր ամբողջ մարդ. պաշարողական սանդուղքը—քաղաքի պաշարումն, երկու ձեռք՝ մէկում վահան միւսում նետ—պատերազմ, ևայլն: Այս կերպով յօրինուեցան զանազան ն շ ա ն ա գ ր ե ր փոքրիկ պատկերներից բաղկացած:

Բայց բնութեան մէջ այնպիսի առարկաներ էլ կան, որ բոլորովին աննիւթ ու անձեւ են և ապա ուրեմն չեն էլ կարող նկարուիլ. օրինակ, քաջութիւն, արթնութիւն, ոյժ, աշխատասիրութիւն ևայլն: Սակայն կարիքը հարկադրեց մարդկանց նորա համար էլ հնարք գտնել. նոքա դիտում էին թէ առարկայի մէջ որ յատկութիւնն է ամենից աւելի աչքի ընկնողը: Օրինակի համար, տեսնում էին որ առիւծը նշանաւոր է իր քաջութեամբ. այս պատճառով նկարած առիւծը բացի իսկական առիւծ նշանակելուց՝ քաջութիւն էլ էր նշանակում. նկարած եզը—ոյժ. մեղուն—աշխատասիրութիւն. բայց աչքը—զգաստութիւն. աչքերը փակած ու պառկած մարդը—ննջ և կամ մահ: Շատ անգամ մի պատկեր ամբողջ միտք էր արտայայտում: Երբ առաջին անգամ Սպանացիք մտան Մեքսիկա, ծովեզերքի բնակիչները կամեցան իրանց թագաւորին տեղեկութիւն տալ եկւոր հիւրերի մասին, և նկարեցին Սպանացիներին իրանց զէնքերով, նոյնպէս և նաւը. թագաւորը պատկերն ստանալուն պէս հասկացաւ գործի էութիւնը:

Բայց եթէ բնութեան մէջ այնպիսի առարկայ չկար, որ ձեւակերպէր իրանց ցանկացած մտաւոր առարկան՝ այն ժամանակ նոքա գործէին ածում ուրիշ կամայական նշաններ: Այսպիսի նշաններ բացի եգիպտացիներից ուրիշ հին ազգերն էլ էին գործ ածում: Հայոց հին գրքերի մէջ այդպիսի նշանագրերից միքանիսը կարելի է տեսնել:

Շատ բնական է, որ այս օրինակ պայմանական նշանագրերը մեծ դժուարութիւններ էին յառաջացնում. մէկը բացատրում էր մի կերպ, միւսը մի ուրիշ տեսակ: Եգիպտոսում այդ գրերը հասկանալի էին միայն քուրմերին. ուրիշ մարդիկ իրաւունք չունէին սովորել. այս պատճառով էլ նոքա կոչվում են մ ե հ ե ն ա կ ա ն գ ր ե ր, կամ ս ր բ ա գ ր ե ր: Այսպիսի սրբագրեր մինչև այսօր էլ մնացած են զանազան շիրիմների, կոթողների, պապերուսի կտորների վերայ: Շատ երկար ժամանակ ոչ ոք չէր կարողանում բանալ այդ մեռեալ նշանների գաղտնիքը. բայց վերջին ժամանակներս ուսումնական մարդկանց անխոնջ ջանքերի շնորհիւ հնարաւոր է եղել փոքր ի շատէ ջոկել այդ գրերը: Այս բանի մէջ շատ օգնեց Ռօզետտայի մէջ գտնուած քարը երեքլեզուեան արձանագրով, որ ունէր նոյն բովանդակութիւնը—յունարէն գրերով, սրբագրերով և Եգիպտացւոց ժողովրդական լեզուով: Քարը ներկայումս գտնվում է բրիտանական թանգարանում:

(5841) 1064-2013

3. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ.

Աշխարհիս վերայ ոչ մի ազգ չէ թողել այնպիսի հսկայական ճարտարապետական յիշատակարաններ, ինչպէս Եգիպտացիք: Արեւելեան ժայռոտ լեռները պատուական նիւթ էին տալիս շինութեանց համար. որձաքար, մարմարիոն, պորփիւր անպակաս էին միշտ: Եգիպտացի թագաւորներն օգուտ քաղելով այս նիւթերից՝ կառուցանում էին այն հոյակապ շինուածները, որ մինչև այսօր էլ զմայլեցնում են տեսնողին: Սոցանից մի մասը դեռ հիմայ էլ կանգուն կենում է որպէս վկայ Եգիպտացւոց ճարտարապետական ճաշակին և աշխատասիրութեանը: Բացի մեծաշէն տաճարներից, որոնցից մնացել են լոկ աւերակները, ուշադրութեան արժանի են հետեւեալ յիշատակարանները.

ա) Գ ե ր ե զ մ ա ն ա տ ն ե ր կամ շ ի ր ի մ ն ե ր: Սոքա շինուած են Լիբիական լերանց մէջ, առաւելապէս Թեբէ քաղաքի մօտ, անթիւ անհամար ոլորապտոյտ ստորերկրեայ անցքերով: Ս

քա ունին նախագաւիթներ, ներքին սենեակներ ու վերնայարկեր, այս բոլոր մասերը միմեանց հետ հաղորդակցութիւն ունին անցքերով կամ սանդուղքներով: Շիրիմների պատերը ծածկուած են սրբագրերով և շատ անգամ զարդարուածեն քանդակներով կամ նկարներով: Նկարագրուածներն այնքան լաւ են պահուել, որ մարդ կասկածում է նոցա հնութեան վերայ:

բ) Կոթողներ, որ քառանկիւնի և սրածայր սիւներ են՝ 50—108 ոտնաչափ բարձրութեամբ և 5—25 ոտ. լայնութեամբ: Զնայելով այսպիսի մեծութեան՝ նոքա մի-մի հատ քարից են շինուած, և առաւելապէս ամենապինտ որձաքարից: Բոլորն էլ լաւապէս հարթած են և սրբագրերով գրոտած: Այդ ահագին քարերը բերվում էին Արաբական լեռներից Նեղոսի հեղեղման ժամանակ. իսկ գետից դուրս՝ տեղ էին հասցնում արհեստական ջրանցքներով: Ինչքան ժամանակ, ինչքան հազարաւոր մարդկանց չարչարանք և ինչքան ծախքեր էին հարկաւոր սորա համար: Կոթողները կանգնեցնում էին հրապարակներում, տաճարների ու պալատների առաջ, և երբեմն պարտէզներում որև է նշանաւոր անցքի յիշատակի համար: Հռովմէական կայսրների ժամանակ կոթողներից շատերը տեղափոխուեցան Հռովմ: Բայց բարբարոս Վանդալները Հռովմի աւերման ժամանակ այդ կոթողներն էլ կործանեցին: 1584 թ. պապ Սիքստոս Ե-ի հրամանով նոցանից չորս հատն իրանց տեղերը դրուեցան, սորա համար չորս տարի աշխատում էին 1200 մարդ և 160 ձի ամենաբարդ մեքենաների օգնութեամբ: Կ. Պօլսում էլ այժմ մի քանի կոթողներ կան: Վերջապէս 1834 թ. Լուքսոր գիւղից Փարիզ բերուեցաւ մի կոթող 75 ոտ. բարձրութեամբ, որի համար մի առանձին յատուկ նաւ էր շինած:

գ) Բուրգեր. Արդէն հին ժամանակներից սկսած բուրգերը դասվում են աշխարհիս հրաշալեաց կարգում: Նոքա քառասուն հատ են՝ հինգ խումբերի բաժանուած և գտնւում են Միջին Եգիպտոսում, Նեղոսի ձախակողմում: Նոքա մեծ քառանկիւնի շինուածքներ են, որոնց մէջը մի քանի սենեակներ ու անցքեր կան: Նոցա խարիսխը լայն է, իսկ գագաթը սրածայր, երբեմն էլ փոքր

ինչ տափարակ: Նոցա բարձրութիւնը հասնում է 20—450 ոտնաչափի: Նոքա շինած են ահագին կրաքարեայ սալերից. մի քանիսը դրսի երեսից պատած են որձաքարով կամ մարմարիոնով: Ամենից մեծ ու հսկայական բուրգերը Քէոպս ու Քեֆրէն թագաւորների շինել տուածներն են Մեմփիս քաղաքից դէպի արևելահիւսիս. սոցա բարձրութիւնը սկզբում 480 ոտն. էր, իսկ այժմ՝ գագաթը քանդուելու պատճառով 450 ոտնաչափ է միայն: Պատմում են որ հարիւր հազարաւոր մարդիկ մինչև քսան տարի աշխատել են այդ բուրգերի վերայ:

Այս հսկայամարմին շինուածքների նշանակութիւնը երկար ժամանակ ո՛չ ոք չէր հասկանում. մինը կարծում էր թէ հացի շտեմարաններ են. միւսը ջրամբար էր համարում նոցա. այլ ոմանք կարծում էին, որ նոքա շինուած են բոլորովին առանց մի նշանակութեան, լոկ նորա համար, որ ժողովրդին չարչարեն ու զսպեն: Բայց այժմ որովհետև բուրգերի ներսակողմի շինուածքները լաւ քննած են, պարզապէս յայտնի է, որ նոքա թագաւորների շիրիմներ են:

Եգիպտացիք հաւատում էին հոգւոյ անմահութեանը և կարծում էին թէ մեռնելուց յետոյ հոգին արքայութեան մէջ դարձեալ գոյութիւն կունենայ և մարմնից անբաժան կըլինի, եթէ մարմինն անապական մնայ: Իսկ եթէ դիակը նեխէր ու քայքայուէր՝ հոգին այլևս չէր կարող մեռելոց երանելի արքայութիւնը մտնել: Այս է պատճառը, որ մեռեալների համար այնքան փառաւոր շիրիմներ էին շինում և նոցա մարմինները պաշտպանում էին այնքան զգուշութեամբ ու խնամքով:

Իւրաքանչիւր եգիպտացի դեռ ևս կենդանութեան ժամանակը գերեզմանի հոգս էր անում ինչպէս իրան, այնպէս էլ իւր մերձաւորների համար: Գերեզմանները շինվում էին Լիբիական ժայռոտ քերծերի մէջ, և ոչինչ չէր խնայվում, որ նոքա լաւապէս զարդարուած լինէին: Ննջեցեալի մարմինը քայքայուելուց պահպանելու համար՝ զմռսում էին նորան: Զմռսելու համար ննջեցեալի բոլոր փորոտիքը դուրս էին հանում և ներսը լուանում էին

գինով. այսպէս մաքրելուց յետոյ մարմինը լցնում էին անուշահոտ խնկեղէնով, կարում էին և 70 օր դնում էին աղի մէջ: Սորանից յետոյ ամբողջ մարմինը փաթաթում էին բարակ երիզներով, երեսը գաճ էին քսում, գաճի վերայ էլ նկարագրում: Վերջապէս դիակը դնում էին զարդարուն շիրիմների մէջ: Այսպէս զմռսում էին նշանաւոր մարդկանց. հասարակ մարդկանց աւելի պարզ կերպով էին զմռսում: Այս զմռսած մարմինները կոչվում են մ ու մ ի ա ն ե ր. հազարաւոր այդպիսի մումիաներ կան մինչեւ այսօր՝ ամբողջ և չապականուած:

Եգիպտացւոց հաւատով, հանգուցեալը, թաղման հանդէսը կատարելուց յետոյ իսկոյն ընկնում էր Անդունդը, ուր որ Օզիրիսը մի ահագին դահլիճի մէջ գահի վերայ բազմած, արդարութեան կշեռքը ձեռքին բռնած՝ դատում է մեռելներին 42 քաջքերի գործակցութեամբ: Ով որ այս դատաստանով արդարանում է, երանելեաց արքայութիւնն է ընկնում. իսկ ով յանցաւոր է գտնվում՝ դատապարտվում է հոգու մաքրութեան համար թափառելու: Այս վճռից շատ սարսափում էին Եգիպտացիք, որովհետեւ հոգին մաքրուելու համար, պէտք է թափառէր անասունների մարմնի մէջ, մինչեւ որ 3000 տարուց յետոյ նորէն վերադառնար մարդու մարմնի մէջ: Մէկ սովորութիւն էլ կար, որ 42 դատաւորներ, հանգուցեալի դիակը շիրիմ մէջ դնելուց առաջ, կըլսէին ժողովրդի դատավճիռը նորա մասին. եթէ արդարացնող ձայները շատ եղան կը վճռէին գերեզմանի մէջ դնել, իսկ եթէ ո՛չ չէին թոյլ տալ պատուաւոր թաղման արժանացնել նորան: Երբեմն այսպիսի նախատական վճռի ենթարկվում էին թագաւորներն անգամ իրանց չարագործութեանց պատճառով:

գ) Լ ա բ ի ւ ր ի ն թ ո ս: Այս վիթխարի շինուածը գտնվում էր Միջին Եգիպտոսում Մէօրիսեան լճից մօտիկ. սա բաղկացած էր 12 պալատներից, որոնցից վեցը դէպի հիւսիս, մէկը դէպի հարաւ: Սորա մէջ երեք հազար սենեակներ կային, 1500 գետնի տակ, այդքան էլ գետնի երեսին: Այդ հոյակապ շինութիւնը թէ դրսից և թէ ներսից ծածկուած էր փառահեղ քանդակներով և

նկարչական զարդերով: Այժմ միմիայն նորա աւերակներն են մնում:

4. ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ.

Բոլոր Եգիպտացիք դասերի էին բաժանվում: Քուրմերն էին, որ պատճառ եղան այս սովորութեանը: Նոքա մեծ ազդեցութիւն ու յարգանք ունէին ժողովրդի աչքում և զանազան արտօնութիւններ էին վայելում. այդպիսի կարգադրութեամբ քուրմերն ուզում էին իրանց նշանակութիւնը պահպանել: Մի դասի պատկանող անձը ոչ մի կերպով իրաւունք չունէր փոխել իւր դասը. հովուի որդին պէտք է մնար հովիւ, երկրագործինը՝ երկրագործ եւայլն: Դասերի թիւն առաջ վեց էր, յետոյ եօթն դարձաւ: Ամենայարգի դասը կազմում էին քուրմերը. նոքա էին թագաւորների դաստիարակներն ու խորհրդականները. նոքա էին ժողովրդի դատաւորները, և դատում էին իրանց սեպհական օրէնքներով. նոքա նշմարելով աստղերի շարժմունքը՝ որոշում էին ժամանակները. վերջապէս միայն նոքա ունէին իրաւունք գիտութիւններով ու ճարտարութիւններով պարապելու: Նոքա բնութեան զօրութեանց վերայ էլ հասկացողութիւն ունէին. այս բանը երեւում է նորանից, որ եգիպտական քուրմերը կեղծ հրաշքներ էին տալիս Մովսիսի առաջեւ:

Քուրմերից յետոյ յարգելի դասը կազմում էին զ ի ն ու ո ր ա կ ա ն ն ե ր ը. սոքա մշտապէս վարձուած չէին և ռոճիկ չէին ստանում, այլ ինչպէս ազատ քաղաքացիք շահում էին իրանց հողից: Մնացած դասերն էին երկրագործները, արհեստաւորները, վաճառականները, նաւագործները և հովիւները. սոքա ո՛չ այն իրաւունքներն ունէին, ո՛չ այն նշանակութիւնը, ինչոր առաջինները: Հողի սեպհականութիւն նոյնպէս չունէին, որովհետեւ բոլոր հողերը բաժանուած էին թագաւորի, քուրմերի, և զինուորականների մէջ, իսկ նոքա միմիայն վարձով ու ծառայութեամբ կարող էին օգտուել հողերից: Ամենից արհամարուածը հովիւների դասն էր: Այսպիսի արհամարհանքի պատճառը, երեւի, այնէ, որ Քրիստոսից

2100 տարի առաջ Հիւքսոսները, հովիւ իշխանները, արեւելահիւսիսից եկան եւ մի քանի հարիւր տարի տիրեցին Եգիպտոսին բռնութեամբ ու խստութեամբ։ Շատ կարելի է, թէ Իսրայէլացիք էլ, իբրեւ խաշնարած ժողովուրդ, հենց այդ պատճառով էին այնքան նեղութիւններ կրում Եգիպտացիներից։

5. ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԿՐՕՆԸ.

Եգիպտացիք շատ կրօնասէր էին. նոքա սրբութեամբ պաշտում էին շատ աստուածներ։ Եգիպտացւոց գլխաւոր աստուածներն էին Ոսիրիս՝ արեւու աստուածը եւ Իսիս՝ լուսնի աստուածուհին. սոցանից առաջինը ունէր բարձրագոյն արարչական զօրութիւն, իսկ երկրորդը-սննդական զօրութիւն. սոցա հետ միասին եգիպտացիք մոլորակներ էլ էին պաշտում։ Նոքա տաճարներ էին կանգնեցնում մինչեւ անգամ Տիփոնին, որ մի հեղձուցիչ քամի է եւ այժմ կոչվում է Շամուին։ Նորան համարում էին հայր ամենայն չարեաց եւ աշխատում էին զոհաբերութիւններով սիրտը մեղմացնել։ Բարեբեր եւ կենսատու Նեղոսն էլ ոչ միայն իբրեւ նուիրական, հայր ու պաշտպան էր համարվում, այլեւ պաշտվում էր իբրեւ աստուած. Եգիպտացիք կարծում էին, թէ ինքն Ամմոնը, Եգիպտացւոց Արամազդն է, որ Նեղոսի կերպարանքն առած կեանք է շնորհում Եգիպտոսին։

Եգիպտացիք պաշտում էին զանազան անասունների եւս, որոց մէջ, իբրեւ, կարծում էին թէ ուրիշ բարձրագոյն աստուածութեանց զօրութիւններ կան։ Ամեն մի շատ վնասակար, կամ շատ օգտակար կենդանու պաշտում էին նոքա։ Օգտակարներին պաշտում էին՝ իրանց շնորհակալութիւնները յայտնելու համար, իսկ վնասակարներին՝ երկիւղից։ Մի քանի կենդանիների մեծ հոգատարութեամբ պահում ու խնամում էին նոյն իսկ տաճարների մէջ, եւ երբ նոքա մեռնում էին՝ մարմինները զմռսելով պահպանում էին փառաւորապէս։ Այսպէս օրինակ, Եգիպտացիք պաշտում էին

Իբիս կոչուած թռչնին, որովհետեւ նա փչացնում էր օձերին եւ դաշտից դուրս եկող ուրիշ զեռուններին։ Նոքա պաշտում էին Կրոկոդիլոսին երկիւղից ստիպուած. սա մի ահագին 20 ոտնաչափ երկայնութեամբ կենդանի է մողէսների ցեղից եւ իւր թիկունքի բոլոր երկարութեամբ ծածկուած է թեփկոտ անթափանցելի մորթով։ Նորա ոտները թէեւ կարճ են, բայց կայծակի արագութեամբ յարձակվում է իւր որսի վերայ. երկար պոչովը վայր է ձգում մարդուն եւ շատ անգամ խորտակում է նաւակները։ Փարաւոնեան մուկը (իխնեւմօն) նոյնպէս պաշտվում էր, որովհետեւ փչացնում էր վնասակար սողուններին ու կրոկոդիլոսի հաւկիթները, որ այդ կենդանին ածում է աւազի մէջ։ Աւելի շատ յարգանք էին տալիս կատուներին. նոցա համար շքեղ անկողին էին ձգում փափուկ բարձերով ու թանգագին վերմակներով. նոցա կերակրում էին ոսկեղէն ու արծաթեղէն անօթների մէջ եւ շատ համեղ կերակուրներով։ Եթէ տանը հրդեհ պատահէր՝ առաջ կատուներին էին ազատում եւ ապա երեխաներին։ Եթէ մի ոք, թէ կուզ պատահմամբ, սպանէր կատուին՝ մահու պատիժ կստանէր։

Բայց ամենից աւելի Եգիպտացիք պաշտում էին սրբազան եզը, որին անուանում էին Ապիս. սա համարվում էր երկրագործութեան նշանակ, իսկ երկրագործութեան վերայ էր հաստատուած բոլոր Եգիպտոսի քաղաքական կեանքը։ Սրբազան եզը պէտք է ամբողջապէս սեւ լինէր եւ միմիայն ճակատի վերայ ունենար մի քառանկիւնի ճերմակ պիսակ, կամ հաւասար կէսը սեւ լինէր, կէսը սպիտակ։ Նորա մեհեանը գտնվում էր Մեմֆիսի մէջ. նորան ծառայում էին քուրմերը եւ ծունկ չոքած էին կերակուր տալիս։ Երբ մեռնում էր այս եղջերաւոր աստուածը՝ բոլոր Եգիպտոսը սուգ էր պահում, մինչեւ որ մի նոր Ապիս գտնուէր։ Գտնուեցաւ թէ չէ՝ ամբողջ ժողովուրդը մեծ բերկրանքով ու հանդիսաւոր արարողութիւններով ընդունում տանում էր նորան իւր մեհեանը։ Նորա առաջեւից գնում էին զօրականներն, իսկ երկու կողմից զարդարուած երեխաները երգերով գովաբանում էին նորան։ Այսպէս՝ ուրախալից տօնը մի ամբողջ շաբաթ էր տեւում։

6. ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ.

Եգիպտոսի հնագոյն պատմութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ կան։ Եգիպտացիք բոլորովին առանձին կեանք էին վարում և ոչ մի ազգի հետ ոչինչ յարաբերութիւն չունէին։ Նորա երկիրն օտար ազգերի համար երկար ժամանակ փակ էր. այս պատճառով էլ ստոյգ տեղեկութիւններ շատ քիչ են նորա մասին։ Հին ժամանակներում (3000—2100 տարի Քր. յռջ.) Եգիպտոսը բաղկացած էր մի քանի մանր տէրութիւններից, որոնցից ամէն մէկն ունէր իւր առանձին թագաւորը։ Եգիպտոսի պատմութեան մէջ յիշուող ամենահին տէրութիւնը Միջին Եգիպտոսումն էր, որի կենտրոնը Մեմփիս քաղաքն էր։ Այս քաղաքի հիմնադիրը համարվում է Մենէս թագաւորը։ Մեմփիսի մօտակայքում գտնուող ամենաբարձր բուրգերը շինել են տուել երկու եղբարք՝ Քէոպս և Քեփրէն և առաջինի որդին՝ Միկերին։ Այն ինչ Ստորին Եգիպտոսում ծաղկում էր Մեմփիսի թագաւորութիւնը՝ Վերին Եգիպտոսումն էլ կազմուել էր մի ուրիշ թագաւորութիւն, որի կենտրոնն էր Թեբէ։ Մի ժամանակ այդ երկու տէրութիւնները միացան և Մեմփիսը դարձաւ ընդհանուր մայրաքաղաք։ Այդ միջոցին էր թագաւորում Մէօրիսը, որ շինել տուեց հռչակաւոր Մէօրիսեան լիճը. սորա նշանակութիւնն այնէր, որ Նեղոսը չափազանց հեղեղուած ժամանակ՝ աւելորդ ջուրն այնտեղ հաւաքուի ջրանցքների միջնորդութեամբ. իսկ երաշտութեան ժամանակ՝ այնտեղից դուրս թողնուի դաշտերը ոռոգելու համար։

Մօտ 2100 տարի Քր. յռջ. արեւելահիւսիսից, մասամբ Արաբիայից, յանկարծակի Եգիպտոս թափուեցան թափառական խաշնարածները, որ կոչվում էին Հիքսոսներ (հովիւներ) և նուաճեցին համարեա բոլոր Եգիպտոսը, ուր մեծ խստութիւններով ու բռնութիւններով տիրապետեցին հարիւրաւոր տարիներ, մինչեւ որ Եգիպտացիք վերջապէս ապստամբեցան ու հալածեցին նոցա 1650 թ. ։ Հիքսոսների լուծը թօթափելուց յետոյ

Եգիպտոսը վերականգնեցաւ և սկսաւ ծաղկել. նորա կենտրոնատեղին դարձաւ Թեբէ քաղաքը, ուր որ նոր փարաւոնները կանգնեցրին հոյակապ շէնքեր։

Բայց Եգիպտոսի համար ամենափառաւոր շրջանը Սեսոստրիսի թագաւորութիւնն էր (Ռամսէս բ. Մերամուն)։ Փթակ, Եգիպտացւոց արարիչ աստուածը, յայտնել էր Սեսոստրիսի հօրը, թէ քո որդիդ պէտքէ տիրապետէ աշխարհին։ Հայրն էլ հրամայեց որ նոյն օրը ծնած բոլոր տղաներին ժողովեն, որոնց Սեսոստրիսին սննդակից ու ընկեր շինեց և մէկ տեղ զինուորութեան էր կրթում, որպէս զի մի ժամանակ դառնան նորա համար ամենահաւատարիմ զօրավարներ ու ծառաներ։ Սոցա թիւը հասաւ մինչև 1700-ի։ Երբ որ մեծացաւ՝ հայրը զօրք տուաւ նորան որ Արաբիա արշաւէ։ Սեսոստրիս իւր ընկերներով յաջողութեամբ նուաճեց Արաբացիներին, որ մինչ այն ժամանակ դեռ չէին՝ յաղթուել։ Դարձաւ չդարձաւ՝ հայրն ուղարկեց նորան արեւմուտք՝ Լիբիայի վերայ, և թէպէտ նա դեռ պատանի էր՝ Լիբիայի մեծ մասն էլ նուաճեց։ Այս յաջողութիւններից խրախուսուած՝ նա մտքում դրաւ բոլոր աշխարհը տիրել։ Նախ երկիրը կարգաւորեց, գաւառների բաժանեց, կառավարիչներ նշանակեց, և ինքն ահագին զօրք գումարելով մեծամեծ արշաւանքներ արաւ՝ առաջ Եթովպիայի վերայ, որտեղից մեծ հարկ էր առնում, և յետոյ Ասիայի, ուր մինչեւ Գանգէս գետը հասաւ, միւս կողմից էլ մինչեւ Դօն գետը։ Մի նաւատորմիղ էլ կազմեց 400 նաւից բաղկացած և ուղարկեց Միջերկրական ու կարմիր ծովերի մէջ, նոյնպէս և Հնդկական ովկիանոսը։ Այս նաւատորմիղը շատ տեղեր նուաճեց ծովեզերքում։ Միմիայն Եւրոպան դիմադրեց նորա արշաւանքներին, և համարեա թէ նորա բոլոր զօրքերը ջարդուեցան այնտեղ։ Սեսոստրիսն ամեն տեղ կոթող էր կանգնեցնում ՚ի յիշատակ իւր յաղթութեան։ Խումբ խումբ մարդիկ գերի էր ուղարկում Եգիպտոս, գերի ընկած թագաւորներին նա լծում էր իւր կառքի մէջ։ Մի անգամ այդ թագաւորներից մէկըն անթարթ աչքով նայում էր անուի վերայ. Սեսոստրիս հարցրեց այս բանի պատճառը, նա էլ պատաս-

խանեց. «Ո՛վ թագաւոր, անուի դարձուածները յիշեցնում են ինձ բաղդի փոփոխութիւնը: Ինչ որ ցածրումն էր՝ վեր է բարձրանում, ինչ վերեւումն էր՝ ցած է իջնում. Նոյնն է պատահում թագաւորների հետ էլ. ով այսօր գահի վերայ էր նստած՝ էգուց ստրուկ է դառնում»: Այս խօսքերից մեղմացաւ Սեսոստրիս և այնու հետեւ այլեւս թագաւորներին չէր լծում իւր կառքի մէջ:

Քրիստոսից 750 տարի յառաջ Եթովպացիք զօրանալով իրանց Սաբակոն թագաւորի առաջնորդութեամբ արշաւեցին Եգիպտոս և յիսուն տարի շարունակ տիրապետեցին այնտեղ: Սոցա լուծը թոթափելուց յետոյ տասն երկու իշխաններ տէրութիւնը ձեռք առին և բաժանեցին տասներկու առանձին մասերի. Նոցա տիրապետութեան ժամանակը կոչվում է Երկոտասանից պետութիւն: Նոքա իրանց մէջ մշտնջենական դաշն կապեցին ամբողջ Եգիպտոսի մէջ հանդարտութիւն պահպանելու և ՚ի նշան համաձայնութեան և բարեկամութեան շինել տուին արդէն մեզ ծանօթ լաբիւրինթոսը:

Սակայն այս մշտնջենական դաշն շատ կարճատեւ եղաւ: Արդէն կառավարութեան սկզբում նոքա սկսեցին կասկածել միմեանց վերայ պատգամախօսի մի գուշակութեան առթիւ, որ ասել էր, թէ տասներկու թագաւորներից մէկը, նա, որ պղնձեայ գաւաթով գինի կը զոհաբերէ տաճարի մէջ, պէտք է տիրէ ամբողջ Եգիպտոսին: Մի անգամ, մի տօն օր, նոքա ըստ սովորութեան ժողովուեցան տաճարներից մէկը զոհաբերութիւն անելու համար: Այս անգամ սխալ կարգադրութեամբ պատրաստուած էին միայն տասնումէկ ոսկեայ գաւաթներ: Փսամետիքոս, որ տասներկու թագաւորներից մինն էր, մնաց առանց գաւաթի, և երբ քրմապետը մօտեցաւ նորա մօտ գինի ածելու՝ նա շտապով իւր պղնձեայ սաղաւարտը հանեց ու գինին այնտեղ ածեց: Միւս թագաւորներն իսկոյն մտաբերեցին պատգամը, գրգռուեցան նորա դէմ և ընդհանուր ուժով քշեցին նորան Նեղոսի ստորին ճահճուտը: Փսամետիքոս նեղի ընկնելով պատգամ հարցրեց. քրմապետն ասաց, որ նորա փրկութիւնը պէտք է լինի պղնձեայ մարդկանց ձեռքով:

Թագաւորը հանաք էր կարծում և յուսահատութեամբ տուն դարձաւ: Բայց մի քանի ժամանակից յետոյ նորան յայտնեցին, որ ծովի ափը մի տեսակ մարդիկ են դուրս եկել, անծանօթ կերպարանքով, ոտից գլուխ պղնձով ծածկուած: Այդ՝ յոյն ծովահէնք էին պղնձեայ զրահներով: Փսամետիքոս զանազան խոստմունքներով գրաւեց այդ մարդկանց և նոցա օգնութեամբ յաղթեց իւր հակառակորդներին: Պատգամախօսի գուշակութիւնը կատարուեցաւ և Փսամետիքոս միապետ դարձաւ Եգիպտոսի մէջ: Սորանից յետոյ Եգիպտոսը համարեա կերպարանափոխ եղաւ: Մինչեւ այդ ժամանակը նա ամեն օտար ազգերի համար փակ էր, իսկ այժմ ամենքի համար, մանաւանդ Յունաց համար, բացուեցաւ: Փսամետիքոս իրան օգնող Յոյներին հողեր տուաւ Նեղոսի առաջքի վերայ բնակութեան համար: Եգիպտացիք փոքր առ փոքր սկսան ծանօթանալ օտար ազգերի հետ, առուտուր անել, և այսպիսով աւելի զարգանալ: Յունարէն լեզուն սովորելու համար Եգիպտացի տղաներ որոշեց թարգմանիչներ լինելու համար:

Փսամետիքոսի յաջորդն եղաւ իւր որդին Նեքաւով, որ հօրն սկսած գործերը մեծ եռանդով յառաջ տարաւ: Վաճառականութիւնն ու ծովագնացութիւնը խրախուսելու համար նա փորձ արաւ Միջերկրական ու Կարմիր ծովերը ջրանցքով միացնել, բայց տեսնելով որ այս մտադրութիւնը գլուխ չեկաւ՝ Փիւնիկեցի ծովագնացներից մի խումբ կազմեց և Աֆրիկայի շուրջը նաւարկել տուաւ, որ երկու տարի տեւեց: Նա շարունակեց իւր հօր աշխարհակալութիւնը. նուաճեց Հրէաստանն ու Ասորիքը, բայց Նաբուգոդոնոսորը նորա յաղթութեանց առաջը կալաւ և յետ մղեց (605 Թ.): Նեքաւովից յետոյ Ապրիէս և մանաւանդ Ամասիս՝ փառաւոր ու խոհեմ թագաւորութեամբ Եգիպտոսի վաճառականութիւնն ու ծովային զօրութիւնը մեծացրին: Երկիրը ներքին բարեկարգութեան մէջ մտաւ. գեղեցիկ շէնքերով զարդարուեցաւ ու ծաղկեցաւ: Բայց Եգիպտոսի այս փառքն երկարատեւ չեղաւ: Նոյն միջոցին Պարսից Կամբիւս թագաւորը մեծ պատրաստութեամբ Եգիպտոս արշաւեց: Ամասիսի որդին Փսամմենիտ աշխատե-

ցաւ դիմադրել նորան, բայց մատնութեամբ յաղթուեցաւ ու Մեմֆիս փախաւ։ Այնտեղ էլ չկարողացաւ ազատ մնալ. գերի ընկաւ Կամբիւսի ձեռքը (525) և այսպիսով բոլոր Եգիպտոսն ընկաւ Պարսից տաժանելի լծի տակ. մինչև որ 331 Թ, Աղէքսանդր Մակեդոնացին նուաճեց բոլոր այդ երկրները։ Աղէքսանդրի մահուանից յետոյ Եգիպտոսը բաժին ընկաւ Պտղոմէոս զօրավարին, որ վերստին հիմնեց այդ տեղ մի անկախ թագաւորութիւն։ Իվերջոյ 30 Թ. Քր. յառաջ. Եգիպտոսը դարձաւ Հռովմէական նահանգ։

Բ.

ՓԻՒՆԻԿԻԱ.

1.

Հրէաստանին դրացի, Միջերկրական ծովի արեւելեան ափում, բնակվում էին փիւնիկեցիք կամ, ինչպէս սոքա կոչվում են սուրբ գրոց մէջ, Քանանացիք։ Նոցա երկիրը տարածվում էր միմիայն 30 մղոն երկարութեամբ և 5 մղոն լայնութեամբ։ Մնացեալ Ասիայից փիւնիկեան բաժանվում էր Լիբանանու սարաշարքով։ Նա քարքարուտ և անպտուղ մի երկիր էր. այդ տեղ երկրագործութեամբ կամ խաշնարածութեամբ չէր կարելի պարապել։ Բայց մօտակայ ծովը պարունակում էր իւր մէջ անթիւ անհամար ձկներ. այս բանը նկատեցին եզերաբնակ փիւնիկեցիք. նոքա սկսան պարապել ձկնորսութեամբ, փոքր առ փոքր սովորեցան նաւեր շինել և շրջել ծովի վերայ։ Սկզբներում նոքա ծովային աւազակութիւն էլ էին անում. յետոյ սկսան գաղթականութիւններ հիմնել և պարապել առեւտրով։ Այսպիսով նոքա դարձան հին աշխարհի ամենայաջողակ առեւտրականները։

Սկզբնական առեւտուրը կատարվում էր ապրանքների փոխանակութեամբ. այն ժամանակ փողի մասին հասկացողութիւն չունէին. ով որ աւելորդ մի ապրանք ունէր՝ կըտար և կ՚առնէր իրան պէտքականը։ Ապրանքներն էլ որոշ գին չունէին, այլ իւրաքանչիւր ոք ըստ հաճոյից էր գնահատում։ Այպէս են առուտուր անում դեռ այժմ էլ Ամերիկայի վայրենի ազգերը։ Բայց այս տեսակ առուտուրը չէր կարող մշտատեւ լինել, որովհետեւ մէկի

աւելորդ ապրանքն ուրիշի համար կարող էր պէտքական չլինիլ։ Ահա այս պատճառով մարդիկ պարտաւորեցան գործածել այնպիսի հազուագիւտ ու թանգագին առարկաներ, որ ամենքի համար ընդունելի լինէին և իրանց արժէքը չկորցնէին։ Սկզբում այդպիսի առարկաներ էին, ինչպէս հիմայ էլ միքանի վայրենի ազգերի մէջ, թանգագին փայտը, գեղեցիկ խխունջները, կամ մինչև անգամ ընտիր պտուղները, օրինակ՝ արմաւը եայլն։ Բայց այս էլ չէր կարող նպատակայարմար լինիլ,—փայտը կըփտէր, խխունջը կըջարդուէր, պտուղը կըփչանար։

Վերջի ժամանակները մարդիկ սովորեցան մետաղները հալել․ նոքա նկատեցին, որ մետաղները դիմացկան են․ մաս մաս կարող են բաժանուիլ, հեշտ է նոցա մուն ածել, և սիրուն ու փայլուն են, մանաւանդ ոսկին ու արծաթը։ Ահա, մետաղները շատ յարմար էին մարդկանց նպատակին․ նոքա ամեն մարդու աչքում էլ գին կունենան և ուրեմն ամեն մարդ էլ նոցանով կըփոխէ իւր ապրանքը։ Սկզբներում մետաղները գործէին ածում կտոր կտոր, ծանրութեանը նայելով․ յետոյ մտածեցին միաչափ դրամներ կտրել և որպէս զի ամեն ոք նոցա գինն իմանայ՝ վրաները դրոշմում էին նոյն կտորի արժէքը։ Վերջապէս այնպէս սովորութիւն ընկաւ, որ ամեն տէրութիւն հրատարակած դրամների վերայ իւր դրոշմը կնքում էր, որ ճանաչուէր ումը լինիլը։ Այսպէս է փողի գործածութեան սկիզբն ու պատճառը։

Փողի գործածութեամբ հնարաւոր եղաւ առևտրական յարաբերութիւններ սկսել հեռաւոր մարդկանց ու ազգերի հետ ևս։ Այն ժամանակները ճանապարհորդների ապահովութեան վերայ շատ քիչ էին մտածում․ ուստի և առևտրականները միայնակ չէին վստահանում հեռաւոր տեղեր գնալ, անցնելով շատ անգամ վայրենի ու աւազակ ազգերի միջից․ նոքա ճանապարհորդում էին կ ա ր ա ւ ա ն ն ե ր ո վ։ Այսպէս են անում այսօր էլ Ասիայի և Աֆրիկայի մի քանի կողմերում։ Այսպիսի փոխադարձ յարաբերութիւններով մարդիկ իրար տեսնում, իրարից սովորում էին, օր աւուր աւելի էին զարգանում։

2.

Իրանց ապրանքը որքան կարելի է շատ ծախելու համար՝ վաճառականներն ընտրում էին այնպիսի օրեր, երբ ժողովուրդը խումբ խումբ հաւաքվում էր մի որոշ տեղ։ Այս լինում էր սովորաբար տօն օրերը, երբ բազմաթիւ կրօնասէր մարդիկ զանազան կողմերից այցելում էին այս կամ այն սրբազան տաճարը՝ զոհաբերութեան և երկրպագութեան համար։ Այսպիսով տաճարի մօտ ահագին բազմութիւն էր ժողովվում։ Վաճառականներն էլ երկայնաձիգ կարաւաններով բերում էին այդ տեղ իրանց ապրանքներն ուղտերին բեռնած։ Բոլոր անցքերն ու ճանապարհները բռնում էին շար 'իշար խանութներ՝ ազգի ազգի վաճառքներով։ Վաճառականների մէջ ամենից ճարպիկն անկասկած փիւնիկեցիքն էին, նոքա շատ յաճախ միևնոյն ապրանքից մի քանի անգամ արդիւնք էին հանում, որովհետև մի տեղ ձեռք բերած վաճառքը տանում ծախում էին մի ուրիշ տեղ աւելի օգտով, այնտեղինն էլ դարձեալ մի ուրիշ տեղ եայլն։ Նաւագնացութեան մէջ հմուտ լինելով՝ փիւնիկեցիք շատ հեռաւոր երկիրների հետ ևս առուտուր ունէին։

Արաբիայից նոքա դուրս էին տանում անուշահոտ խնկեղէնք, որ այն ժամանակն էլ շատ գործ էին ածում հեթանոսական մեհեանների մէջ, Արաբիայումն էին գնում նոյնպէս Հնդկաստանից ու Եթովպիայից բերուած նիւթերը․—ներկափայտ, ոսկի և թանգագին քարեր․ Հայաստանից--երկաթ, պտուղներ և ձիանք․ Բաբելոնից և Պարսկաստանից—զարդարանքի առարկաներ և գինի, Եգիպտոսից բրդեայ գործուածներ և ցորեն․ Պաղեստինայից հաց, իւղ և գինի․ Սպանիայից—արծաթ․ Բրիտանիայից—կլայեկ․ Գերմանական ծովի եզերքից--սաթ․ եայլն։ Այսպէս ահա փիւնիկեցիք իրանց առևտուրը տարածել էին այն ժամանակուան բոլոր յայտնի երկրներում։ Ամենից արդիւնաբեր տեղերը Սպանիան ու Արաբիան էին, որ տեղ նոքա հաւաքում էին մեծ քանակութեամբ թանկագին նիւթեր, փոխանակելով նոցա ամենահասարակ իրեղէններով։

3.

Առանց ծովագնացութեան փիւնիկեցւոց վաճառականութիւնը երբէք այդքան չէր ընդարձակուիլ: Ծովագնացութեան մէջն էլ նոքա փոքր առ փոքր վարժուեցան: Առաջ նոցա նաւերը բաղկացած էին հասարակ մեծ գերաններից, որ շատ հեշտ էր ձեռք բերել Լիբանանու մօտակայ անտառից: Այդպիսի մակուկի վերայ անկարելի էր յարմարութեամբ տեղաւորուիլ և ծանրութիւն բառնալ. նոքա հարկադրուեցան հետզհետէ մեծ նաւակներ շինել, նոցա մէջ կայմեր տնկել, առագաստներ կապել: Բայց մինչև որ նաւագնացութեան արհեստը կատարելագործուեցաւ, քանի՜ քանի՛ անբաղդ փորձեր եղան. քանի՜ քանի՛ զոհեր կուլ գնացին կատաղի ծովի խորքը, մինչև որ մարդիկ հնարք գտան իրանց ծովային ճանապարհորդութիւնն ապահովելու: Առաջին մակոյկը շինելուց յետոյ՝ ինչքան մեծ հսկայական քայլ է արել մարդս, որ սովորել է այժմեան մեծ զինուորական նաւերը շինել: Այդ նաւը, որ պարունակում է իւր մէջ շատ անգամ մինչ հարիւր թնդանօթ և հազարից աւելի մարդ, արագապէս սահում է ծովի երեսով. նորան չեն կարող արգելել ոչ հողմերը, ոչ եղանակի վատութիւնը: Մէկ ղեկավար լինի բաւական է, որ մի ակնթարթում շրջէ նորան որ կողմ ուզենայ, կարծես մի գիւթական գաւազանի շարժմամբ: Ընկիրթ ազգերն առաջին անգամ այսպիսի մի նաւ որ տեսան, կարծում էին թէ մի ամբողջ քաղաք տեղից պոկ եկած լողում է ծովի վերայ. նորա վերայ տնկուած կայմերը աշտարակներ էին համարում: Սմանք էլ խորին երկիւղածութեամբ երեսների վերայ ընկնելով՝ երկրպագում էին նորան, ինչպէս մի նոր աստուածութեան: Երբ որ առաջին անգամ եւրոպական շոգենաւը մօտեցաւ Նոր Հոլլանդիայի ափերին՝ տեղացի վայրենիներն այնպէս վախեցան, որ իրար գլուխ ջարդելով սկսան փախչել. նոքա կարծում էին թէ մի վիթխարի ծովային հրէշ է, որ իւր դուրս ցցած ու լայնաբաց բերանից ժայթքում է թանձր սև զանգուած, որ բոլոր երկինքը խաւարով պատէ:

Մարդիկ առաջին անգամ, անկասկած, չէին վստահանալ լայնատարած ծովի երեսին հեռու տեղեր գնալ, այլ նոքա եզերքին մօտիկ սահմանումն էին շրջում միայն: Նոքա շատ անգամ թռչուններ էին վերցնում հետները, որ եթէ մրրիկ պատահի և ալիքն առնեն հեռացնեն իրանց, թռչունը բաց թողնեն ու նկատեն նորա թռիչքը: Նոքա մտածում էին, որ թռչունները բնազդեցաբար պէտքէ դէպի հայրենիք թռչին և ուրեմն ճանապարհ ցոյց կըտան իրանց: Սկզբում նաւորդները միայն ցերեկն էին նաւում, վախենալով որ մի գուցէ մութ գիշերով մոլորուին կամ խութերի ու ծանծաղուտքի հանդիպին:

Առաջին անգամ փիւնիկեցիք սկսան ծովագնացութիւն անել. նոքա այնպէս հմտացան այդ գործին, որ ազատաբար նաւում էին թէ՛ ցերեկ, թէ՛ գիշեր. արևն ու աստղերը նոցա համար ուղեցոյց էին: Նաւաշինութեան համար ատաղձն էլ պատրաստի էր Լիբանանու մօտիկ անտառում: Միջերկրական ծովը նոցա նաւագնացութեան համար ընդարձակ ասպարէզ էր: Սակայն որքան էլ անվեհեր նաւորդներ լինէին փիւնիկեցիք, բայց մինչև կողմնացուցի գործածութիւնը նաւագնացութիւնը չէր կարող կատարեալ լինել. ամպամած, մառայլոտ եղանակին նոքա չէին կարող ափերից հեռանալ: Կողմնացուցի գիւտը բաւականին ուշ եղաւ. և ո՞վ կ'մտածէր, որ մի փոքրիկ կտոր անշունչ ու սև երկաթ աւելի լաւ որոշէր երկնքի կողմերը, քան թէ բանական մարդը, և ծովագնացութեան մէջ այնքան մեծ ծառայութիւն մատուցանէր մարդուն:

Կողմնացուցի գործածութեան մասին Եւրոպացիք առաջին անգամ տեղեկացան Արաբացիներից մօտ 1000 թուականին, երբ խաչակիրներն արշաւում էին Երուսաղէմ փրկչի գերեզմանը մահմեդականներից խլելու համար: Նորան կատարելագործեցին Վենետիկեցիք 1300 թ. : Այդ ժամանակուանից ՚ի վեր վաճառականութիւնն ու ծովագնացութիւնը հետզհետէ կատարելագործուեցան և ընդարձակուեցան: Այնպիսի ճանապարհներ, ծովեր ու ցամաքներ գտնուեցան, որոնց մասին ո՛չ ոք տեղեկութիւն չունէր. և այս՝ մի փոքրիկ մագնիսացուցած երկաթեայ սլաքի շնորհիւ, որի

մէկ ծայրը միշտ դէպի հիւսիս է նայում, միւսը դէպի հարաւ։

4.

Արդէն իմացանք, որ Փիւնիկեցիք հեռաւոր երկրների հետ առևտուր ունէին։ Բայց որպէս զի հարկադրուած չլինէին ամեն անգամ Փիւնիկիա վերադառնալ՝ ապրանքներ տանել բերելու համար, նոքա հարկաւոր համարեցին իրանց ճանապարհի վերայ յարմարաւոր կենտրոնատեղերում իջևաններ շինել, մասամբ իբրև շտեմարան, մասամբ նաւերը կարկատելու տեղ, բայց մանաւանդ այդ տեղերում ևս վաճառականութիւն սկսելու և հաստատելու համար։ Օտար երկրում հիմնած այդպիսի բնակութիւնը կոչվում է Գաղթականութիւն։ Փիւնիկեցի նաւագնացների առաջին կայանը, կասկած չկայ որ Կիպրոսն էր, ուր պղնձի հանք գտան։ Դորանից յետոյ Կրետէ կղզին, որի եղերքը կաւճեայ ժայռեր են։ Այստեղից նոքա դարձան դէպի փոքր Ասիա և դիմացի կղզիները, ուր որ նոյնպէս հիմնեցին իրանց գաղթականութիւնները։ Վերջը նոքա իրանց ուշքը դարձրին Աֆրիկայի հիւսիսային ափերի վերայ։ Այնտեղ, ուր այժմ գտնվում են Թունիսը, Ալժիրը և Տրիպօլիսը՝ նոքա բազմաթիւ գաղթականութիւններ հիմնեցին, որոնցից ամենանշանաւորն էր Կարթագէնը կամ Կարքեդոնը։ Այս գաղթականութիւնն այնքան զօրացաւ, որ վերջը կազմում էր մի ահագին հզօր տէրութիւն թէ վաճառականութեամբ, թէ ծովային զօրութեամբ։ Կարթագէնի դէմուդէմը գտնվում են Սիկիլիա և Սարդինիա կղզիները. Փիւնիկեցիք այդ տեղ էլ գաղթականութիւն հաստատեցին և առուտուր սկսեցին տեղացի ժողովրդի հետ։

Բայց ամենաշահաւէտ առուտուրը կատարում էին Սպանիացւոց հետ։ Առաջին անգամ նոքա այդ երկիրը գալով՝ զմայլեցան տեսնելով որ ոսկին, արծաթը և ուրիշ թանկագին մետաղները թափուած են գետնի վերայ և տեղացիք չէին հասկանում նոցա յարգը։ Թէ որքան մետաղներ ժողովեցին այդ տեղից Փիւնիկեցիք՝ նորանից կարելի է իմանալ, որ նոքա իրանց բոլոր երկաթեայ, փայտեայ և քարեայ կարասիքը փոխեցին ոսկու և արծաթի։ Բնակիչ-

ները փոխում էին այդ ազնիւ մետաղները ամենաչնչին իրեղէնների հետ։ Փիւնիկեցիք իրանց գլխաւոր գաղթականութիւնները հիմնեցին Սպանիայի հարաւում. Կալ՛պէ, Գադէս, Մալագա ևայլն.— սոքա նշանաւոր քաղաքներն էին։

Այն ժամանակները կարծում էին, որ Հերակլեան սիւները, այժմեան Ջիբրալտարի նեղուցի երկու եղերքը, երկրի արևմտեան ծայրն են։ Փիւնիկեցիք առաջինը ցոյց տուին այդ աւանդութեան սխալ լինիլը. նոքա նեղուցն անցնելով՝ աւելի հիւսիս անցան, տարածելով և իրանց առևտուրը։ Բայց նոքա չէին ուզում, որ բացի իրանցից ուրիշներն էլ մտնեն Ատլանտեան ովկիանոսը, որպէս զի իրանց դէմ մրցող չունենան. այդ նպատակով նոքա սուտ լուրեր տարածեցին, թէ Հերակլեան սիւներից այն կողմը ծովն այնպէս թանձր է, որ նաւը երբէք չէ կարող յառաջ գնալ. թէ ծովի երեսին զարհուրելի հրէշներ են երևում, ևայլն։ Բայց չնայելով այսպիսի խորամանկ միջոցներին՝ Փիւնիկեցի նաւորդներից մէկը մի օր նկատեց, որ մի հռովմայեցի նաւ հետևում է նորան. նա խորամանկութեամբ ուղղեց իւր նաւը դէպի ծանծաղուտքը, ուր թէ իւր և թէ հռովմայեցու նաւը տակ նստան։ Փիւնիկեցին յետոյ ազատեց իւր նաւը, իսկ հռովմայեցին յայտնի չէ թէ ինչ եղաւ։ Փիւնիկեցի նաւորդը իւր վստահ անձնուիրութեանը համար Գադէսի հասարակական գանձարանից մեծ դրամական պարգև ստացաւ։

Փիւնիկեցիք յառաջ գնացին մինչև Բրիտանիա, որտեղից, ինչպէս մեզ յայտնի է, կլայեկ էին բերում, իսկ Գերմանական ծովի եղերքից—դեղին սաթ, որ այն ժամանակ ոսկու պէս թանգ էր։ Այսպէս ահա, Փիւնիկիական նաւերը թանգագին ապրանքներով բեռնաւորուած շրջագայում էին բոլոր այն ժամանակուան յայտնի ծովերի վերայ։

5.

Փիւնիկեցւոց վաճառականութեան նիւթերը միմիայն օտար երկիրներից բերածները չէին. նոքա իրանց երկրի յատուկ արդիւնք-

ներովն էլ էին տուտուր անում։ Փիւնիկիական քաղաքներում ձեռակերտական արդիւնահանութիւնը շատ ծաղկած էր։ Նոցա բազմաթիւ գործարանների մէջ առաջին տեղը բռնում էին ներկարանները, ուր ներկում էին ծիրանի (պայծառ կարմիր) գունով։ Փիւնիկեցիք իրա՛նք գտան այդ ներկը։—Մէկ անգամ ծովի եզերքում, Տիւրոս քաղաքի մօտ, մէկ հովիւ նկատեց, որ իւր շան գունչը կարմրած է. կարծեց որ նա վիրաւորուած է. մի շորի կտոր առաւ շան գունչը սրբեց, բայց ո՛չ ինչ վէրք չգտաւ, իսկ շորի կտորը ներկուեցաւ պայծառ կարմիր գունով, հովուի հետաքրքրութիւնը շարժեցաւ. նա սկսաւ հետեւել շանը, և տեսաւ որ նորա գունչը ներկվում է մի տեսակ ծովային որդներից, որոնց խածոտելով ուտում էր նա։ Փիւնիկեցիք այդ որդներից այնպիսի գեղեցիկ ներկ էին պատրաստում, որ նորանով ներկվում էին այն ժամանակուան թագաւորների ու իշխանների ծիրանիքն ու բեհեզեայ զգեստները։

Այդպիսի մի անակնկալ դէպքով էլ ապակին գտնուեցաւ։ Մի անգամ փիւնիկեցի վաճառականները ճանապարհ գնալիս վայր իջան ծովի ափում՝ մի տեղ հանգստանալու և ուզեցան մի քիչ ուտելիք պատրաստել։ Բայց որովհետեւ այն տեղ քար չկար՝ ուստի նոքա կրակարան շինեցին աւազի վերայ իրանց բեռներից մի երկու կտոր բորակ դրին քարի տեղ և սկսան կերակուր եփել։ Սաստիկ տաքութիւնից բորակը հալուեցաւ խառնուեցաւ աւազի և մոխրի հետ և գոյացրեց մի տեսակ թափանցիկ հեղանիւթ, որ սառաւ թէ չէ՛ ապակի դարձաւ։ Փիւնիկեցիք ապշեցան այս տեսնելով։ Մի քանի անգամ էլ փորձեր արին և կատարեալ ապակի ստացան։ Ապակուց շինում էին զանազան զարդեր, ուլունքներ, որ գնահատվում էին ազնիւ քարերի պէս թանգ։ Այն ժամանակ ո՛չ մի թագաւոր չկար, որ կարողանար մի ապարանք շինել ապակեայ լուսամուտներով։

Փիւնիկեցւոց վերաբերում են դարձեալ շատ գիւտեր։ Օրինակի համար այդ աշխատասէր ազգի գիւտն են համարում թուաբանութիւնը, որ նոցա համար շատ կարեւոր էր հաշուարարութեան

ժամանակ։ Փիւնիկեցիք ճարտարապետութեան մէջն էլ զարգացած էին, այս երեւում է Սողոմոնի փառահեղ տաճարի շինութիւնից, որ փիւնիկեցի ճարտարապետները գլուխ բերին՝ իրանց Հիրամ թագաւորի ժամանակ և Սողոմոնի խնդրանքով։

6.

Փիւնիկեցւոց ժրաջանութեան շնորհիւ՝ նոցա անպտուղ ու խղճուկ երկիրը մի չքնաղ ու զուարճալի պարտէզ դարձաւ։ Չորս ժամ ճանապարհ գնայիր՝ մի քաղաք կը տեսնէիր։ Սակայն չնայելով իւր փոքրիկ տարածութեանը՝ Փիւնիկիան մի ամբողջ պետութիւն չէր կազմում։ Համարեա իւրաքանչիւր քաղաք իւր նահանգով՝ իւր առանձին թագաւորն ունէր. կամ թէ չէ՛ ունէր իւր անկախ կառավարութիւնը, որի մէջ դրացի քաղաքները խառնուելու իրաւունք չունէին։ Գլխաւոր քաղաքներն էին Տիւրոս, Սիդոն և Արադոս։ Սոքա իրանց մէջ նիզակակցութիւն էին կազմած. ընդհանուր խորհրդակցութիւնները կատարվում էին մի առանձին քաղաքում, որ նոքա 'իմիասին էին շինել և որի համար Տրիպոլիս էր կոչվում, այսինքն եռաքաղաք։ Սկզբում Սիդոնն ամենից մեծ ու նշանաւոր քաղաքն էր. բայց վերջը Տիւրոսը յառաջ անցաւ և վաճառականութեան կենտրոն դարձաւ։

Տիւրոսը բարձրագոյն պայծառութեան հասաւ Հիրամ թագաւորի ժամանակ, որ սերտ բարեկամութիւն ունէր Դաւթի և Սողոմոնի հետ և որ վերջինիս տաճարը շինելու համար նիւթ և ճարտարապետներ մատակարարեց։ Ամեն տեղ եռում էր կեանքը։ Մի տեղ ծածանվում էին առագաստները, միւս տեղ թնդում ոստայնի անիւները, ամենայն ուրեք շարժումն, ամենայն ուրեք աշխատանք էր երեւում։ Փիւնիկիայի վերայ կարելի էր նայել իբր համաշխարհային վաճառանոցի վերայ։

Սակայն ափսո՜ս որ այդ խաղաղասէր ու արդիւնաւոր ազգը գրգռեց իւր պատերազմասէր դրացիների նախանձը և աշխարհակալութեան սէրը։ Նորա անկումն արդէն գուշակել էին Եսայի և Եզեկիէլ մարգարէքը. «Ողբացէ՛ք, ո՛վ Թարսիսի նաւեր, վասն զի

ձեր զօրութիւնը կորաւ։—Ի՞նչ քաղաք կար Տիւրոսի նման, որ ծովի մէջ բնաջինջ եղաւ։ Քանի որ քո վաճառքներդ գալիս էր ծովից, շատ ազգերի կշտացնում էիր, շատ ապրանքներովդ ու առուտուրովդ երկրի թագաւորներին հարստացնում էիր։ Ջրերի խորութեան մէջ ծովերից խորտակուած ժամանակդ՝ վաճառականութիւնդ ու բոլոր բազմութիւնդ քո մէջդ անկան»։

Բաբելոնի թագաւոր Նաբուքոդոնոսորը, մօտ 600 տարի Քր. յառաջ. արշաւեց փիւնիկիայի վերայ ահագին զօրքով։ Սիդոնը յաղթուեցաւ առանց դժուարութեան, իսկ Տիւրոսը՝ ամբողջ 13 տարի ընդդիմադրեց Նաբուքոդոնոսորին, և երբ վերջապէս անձնատուր եղաւ, բռնաւորը քաղաքի մէջ մարդ չգտաւ, վասն զի ժողովուրդը քաղաքից դուրս էր եկել և դիմացի կղզու վերայ շինել էր նոր Տիւրոսը, որ իւր փառահեղութեամբ կարելի է թէ հնիցն էլ գերազանց էր։ Սա դարձաւ առաջին վաճառաշահ քաղաքն աշխարհի վերայ։ Երբ 332 թուականին Աղէքսանդր Մակեդոնացին մտաւ փիւնիկիա, բոլոր քաղաքները հպատակեցան, բայց Տիւրոս դռները փակեց նորա առաջև։ Մակեդոնացիք ամբարտակ շինեցին մինչև կղզին և քաղաքը պաշարեցին. այսուամենայնիւ Տիւրոս մեծ քաջութեամբ ամբողջ եօթն ամիս պատուաւոր դիմակալութիւն արաւ իւր անկախութիւնը պահելու համար։ Սակայն չկարողացաւ դիմանալ և վերջապէս Աղէքսանդրի ձեռքն ընկաւ։ Բնակիչներից 6000 մարդ սպանուեցան և 2000 գերի վաճառուեցան։ Մի փոքրիկ մասը միայն ազատուելով՝ պատսպարան գտաւ Կարթագէնում։ Այսպէս անկաւ գոռոզն Տիւրոս։ Աղէքսանդր նորա փոխարէն շինել տուեց Ստորին Եգիպտոսում, Նեղոսի առաջքի վերայ նոր քաղաք, որ ասուեցաւ Աղէքսանդրիա, ուր որ դորանից յետոյ սկսաւ կենտրոնանալ հին աշխարհի վաճառականութիւնը։

Գ.

ԲԱԲԵԼԱՍՏԱՆ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆ.

1.

Հայկական լերանց վերայ սկիզբն են առնում երկու մեծ գետեր—Տիգրիս և Եփրատ. սոքա թափւում են Պարսից ծոցը և դեռ բերանը չհասած՝ միանում են իրար հետ։ Այդ գետերի ստորին հովիտը հին ժամանակն ասւում էր Սեննէար կամ Բաբելոն։ Այստեղ էլ, Եգիպտոսի նման, սակաւ էր անձրևում և երկրի պտղաբերութիւնը շատ կախումն ունէր գետերից։ Հենց որ Հայկական լերանց վերայ ձիւները հալւում էին՝ երկու գետերն էլ վարարում հեղեղւում էին, առատութիւն սփռելով բոլոր դաշտի վերայ։ Արհեստական լճեր, ջրանցքներ, ամբարտակներ տարածուած էին ամեն տեղ։ Բնութեան բարերար ներգործութիւնը և մարդու հնարագիտութիւնն իրար հետ միացած՝ Բաբելոնը դարձրել էին մի արգասալից երկիր։

Բաբելացւոց հին պատմութեան մասին շատ քիչ բան գիտենք. այս յայտնի է, որ Բաբելաստանի թագաւորութիւնը հիմնեց Տիտանեան Բէլը կամ Նեբրովդը։ Սա քաջ և ամբարտաւան մարդ էր. ուզում էր բոլոր ազգերին տիրել, և մինչև անգամ պահանջում էր, որ իրան իբրև աստուած պաշտեն։ Բայց այն ժամանակուան հսկաներից մինը Հայկ անունով, որ մեր նախահայրն էր, չուզեցաւ հնազանդել Բէլին և պատերազմի մէջ սպանեց նորան։ Դորանից յետոյ Բէլի տոհմը թագաւորեց Բաբելաստանում մինչև 1500 թուականը Քր. յառաջ։ Այդ ժամանակուանից յետոյ

էլ մօտ 250 տարի Արաբացի Թագաւորներ իշխեցին երկրին, մինչև որ Ասորեստանի Նինոս Թագաւորը զօրանալով տիրեց նորան:

Քաջ և պատերազմասէր Նինոս հեշտութեամբ նուաճեց Բաբելոնը: Այդ տեղից ուզում էր Հայաստան անցնել, բայց վստահ չլինելով թէ կարող է յաղթել Հայոց նահապետ քաջ Արամին՝ բարեկամացաւ նորա հետ, իրան նիզակակից արաւ և ուղարկեց նորան ընծայ մարգարտահիւս վարսակալ: Նինոս մտաւ Մարաստան և ձեռքի տակն առաւ: Իւր յաջողակ արշաւանքներից վերադառնալով՝ Նինոս մտածեց իրան արժանի մի քաղաք շինել և աթոռն այնտեղ հաստատել: Այս բանի համար յարմար տեսաւ Տիգրիսի ափում գտնուող մի փոքրիկ քաղաք՝ Նինուէն. իւր հազարաւոր հպատակների (գերիների) օգնութեամբ մեծացրեց, նորոգեց ու յաղթ պարիսպներով պատեց այս քաղաքը, որի շրջագիծը 12 մղոն էր: Յովնան մարգարէի ասելով՝ Նինուէի մէջ 20000 այնպիսի մանուկներ կային, որոնք ձախ ձեռքն աջից չէին կարող որոշել: Ուրեմն որքա՞ն հասակաւոր բնակիչներ կային այդտեղ: Այդ ահագին քաղաքից այժմ լոկ աւերակներն են մնացած՝ հիմիկուան Մոսուլ քաղաքին մօտիկ: 1845 թուականից սկսած յիշեալ աւերակները բացվում են և հազար ու մի թանգագին իրեղէններ են գտնվում, որոնք հասկացողութիւն են տալիս հին Ասորեստանեայց զօրութեան, փառքի, սովորութեանց և հաւատի մասին: Դորանից յետոյ Նինոս անհամար զօրքով գնաց Բակտրիացւոց վերայ և Բակտրա ամուր քաղաքը պաշարեց: Այստեղ նա ծանօթացաւ Շամիրամ անունով մի խելացի կնոջ հետ: Սորա մասին այնպիսի զրոյց կար, իբր թէ նա մի դիցուհու դուստր է, որ ծննդեան օրից նետուել է սարի վերայ, որպէս զի քաղցած մեռնի, բայց աղաւնիքը խղճալով նորա վերայ՝ ամեն օր կերակուր են բերել նորա համար և իրանց թևերի տակ տաքացրել նորան: Այս զարմանալի կինը հնարքներ սովորեցրեց Նինոսին պաշարած քաղաքն առնելու: Շամիրամի նախագիծը յաջողեցաւ. Նինոս տիրեց Բակտրային, իսկ Շամիրամին իւր իմաստութեան ու գեղեցկութեան համար, կին առաւ իրան:

2.

Նինոսի մահուանից յետոյ թագաւորեց Շամիրամը՝ իբրև խնամակալուհի իւր որդի Նինուասին, որ դեռևս մանուկ էր: Այս մեծագործ կինը կամենում էր գերազանցել իւր ամուսնոյն թէ՛ քաղաքաշինութեամբ և թէ՛ աշխարհակալութեամբ: Նինոսը շինել էր Նինուէն. սա էլ շինեց Բաբելոնը և զարդարեց նորան այնպիսի փառահեղութեամբ, որի նկարագրութիւնն անհաւատալի է թւում: Բաբելոնը շինուած էր քառանկիւնի ձևով, և շրջապատը 14 ժամի ճանապարհ էր: Նորա երկնաբերձ աշտարականման պարիսպներն այնքան լայն էին, որ վեց սայլակ կողքէ կողք կարող էին վրայովն անցնել: Պարսպի իւրաքանչիւր կողմից 25 պղնձեայ դարպասներ կային: Քաղաքի մէջտեղով հոսում էր Եփրատը, որի ափերով նոյնպէս երկարաձիգ պարիսպներ էին շինած: Պալատների մօտ պատուական պարտէզներ էին՝ անուշահոտ ծաղիկներով և ստուերախիտ ծառերով լի. այս պարտէզները կարծես դիւթական զօրութեամբ կախուած էին օդի մէջ, և կոչվում էին Շամիրամի կախեալ պարտէզներ: Կամրջի արևելեան կողմում շինած էր Բէլի (Բահաղ'ի) աշտարակը, որի բարձրութիւնը քիչ էր մնում ամպերին հասնէր: Սորա վերայ գտնվում էր Բահաղ'ի արեւաստուծոյ, մեհեանը, որի գագաթում դրուած էր և նորա արձանը: Այդ աշտարակը 600 ոտնաչափ բարձրութիւն ունէր: Նորա աւերակների բեկորներն այժմ էլ ցոյց են տալիս թէ ինչքա՛ն հսկայագործ պէտք է եղած լինի այդ շէնքը: Բայց ոչ միայն Բաբելոնում, այլ ուր Շամիրամ ոտք էր դնում՝ ցանկանում էր նոր փառահեղ պալատներ ու նոր քաղաքներ շինել: Հայաստանի մէջ էլ նոյնն արաւ: — Երբ Շամիրամի դէմ տուած պատերազմի մէջ մեռաւ Արայ Գեղեցիկը՝ Հայաստանը դարձաւ Ասորեստանին հարկատու, և այնուհետև այդ վայելչասէր թագուհին տարուան մի մասը Հայաստանումն էր անցկացնում: Նա տեսնելով Հայոց երկրի գեղեցկութիւնն՝ ասում էր. «Պարտ է մեզ այսպիսի բարեխառն օդերի, մաքուր ջրերի, ծաղկաւէտ դաշտերի մէջ մի քաղաք և արքու-

նիք շինել՝ տարուան չորրորդ մասն ամենայն բարեվայելչութեամբ անցուցանելու համար»: Նա զանազան տեղեր պտտելուց յետոյ Վանայ լճի արեւելեան ափում մի բացագոյն հովտաձեւ ձորակ ընտրեց, անհամար արհեստաւորներ և գործաւորներ բերել տուաւ Ասորեստանից և շինել տուաւ փառահեղ ու վայելչագարդ մի քաղաք, որ իւր անուամբ Շ ա մ ի ր ա մ ա կ ե ր տ կոչուեցաւ, բայց յետոյ Հայոց Վան թագաւորի անուամբ Վան փոխուեցաւ: Քաղաքի մէջ, ժայռերի ու պարիսպների վերայ շատ արձանագրներ թողեց սեպաձեւ գրերով կամ բևեռագրերով, որ մինչև այսօր էլ կան: Վերջին ժամանակներս ուսումնականները հազիւ հազ հնար են գտել կարդալ այդ գրերը, որ Հայաստանի մէջ շատ տեղեն պատահում:

Շամիրամը ցանկանում էր պատերազմական գործերի մէջ ևս հռչակուիլ: Նա անհամար զօրք ժողովեց և նոցա օգնութեամբ արագապէս տիրեց շրջակայ երկիրներին. Ասորեստանի սահմաններն ընդարձակելով Միջերկրական ծովից մինչև Հինդ գետը, Սև ծովից մինչև Արաբական ծոցը: Շամիրամը փափագում էր անշուշտ Հնդկաստանն էլ նուաճել, որ յայտնի էր իբրև ամենամեծ և ամենահարուստ երկիր: Այնտեղ էլ արշաւեց: Բայց Հնդկաստան մտաւ թէ չէ՝ ապշեցաւ մնաց. նորա առաջ դուրս եկաւ հնդկական ահագին զօրքը, որի առաջին շարքը բաղկացած էր սպառազինած փղերից. սոքա իրանց կնճիթներով ջարդում էին և ոտներով կոխատում ամենայն ինչ, որ հանդիպում էր իրանց ճանապարհին: Ասորեստանեայց հեծելազունդն առաջինը յետ փախաւ այդ վիթխարի մարտիկները տեսնելիս, նորա օրինակին հետևեց և հետևակ գունդը: Սակայն Ասիայի վեհ տիրապետուհին չէր ուզում զիջանել Հնդկաստանին: Որովհետև փղեր չէր կարող գտնել՝ նա այսպիսի խորամանկութիւն մտածեց, հրամայեց մի քանի հազար գոմէշ մորթել և սոցա կաշին անցկացնել ուղտերի վերայ այնպէս որ նոքա փղերի նմանին: Այսպիսի կեղծ փղերից կազմելով իւր զօրքի առաջին շարքերը՝ Շամիրամ երկրորդ անգամ յարձակուեցաւ Հնդկաց վերայ. բայց իզուր. Հնդկացիք շուտով հասկացան

բանի էութիւնը, դարձեալ կատաղաբար թափուեցան Ասորեստանցւոց վերայ, ուղտերը խրտնելով յետ փախան ցիրուցան և ահագին շփոթ յարուցին զօրքի մէջ: Հնդիկները մեծ կոտորած տուին: Շամիրամը քիչ մնաց որ գերի ընկնէր, և վիրաւորուած ու ամօթահար յետ դարձաւ Բաբիլոն իւր զօրքի մնացորդի հետ:

Շատ չանցաւ՝ նոյն իսկ Ասորեստանցիք ապստամբեցան նորանից: Երբ այս լուրն առաւ Շամիրամ՝ սենեկում նստած իւր զարդերովն էր պարապած. նա այնպէս հերարձակ դուրս թռաւ և դիմեց դէպի ապստամբ ամբոխը: Նորա վայելչահասակ կազմուածքը, խիստ հայեացքը, ազդու ճարտարախօսութիւնը և զարմանալի անվեհերութիւնը ներգործեցին ապստամբների վերա. նոքա հանդարտեցան ու ցրուեցան: Յիշատակ այս անցքի՝ մի արձան կանգնեցին, որ պատկերացնում էր Շամիրամին նոյն իսկ դրութեամբ, որպիսով նա ներկայացել էր յուզուած ամբոխին:

Շամիրամ դորանից յետոյ Ասորեստանի կառավարութիւնը յանձնեց Զրադաշտ մոգին, իսկ ինքը վայելչութեամբ ապրում էր Շամիրամակերտում: Մինչ այս մինչ այն Նինուաս մեծացաւ և կամենալով տէրութիւնն իւր ձեռքն առնուլ՝ Զրադաշտի հետ ապստամբեց Շամիրամի դէմ և նորան սպանեց: Ոմանց ասելով՝ նա յօժարակամ՝ որդւոյն յանձնեց թագաւորութիւնը, իսկ ինքն անյայտացաւ աշխարհից: Ասորեստանցիք կարծում էին թէ նա աղաւնի դարձաւ և երկինք թռաւ:

3.

Նինուասը հանգիստ կեանք էր սիրում, ուստի իւր բոլոր կեանքն անցուց զուարճութեանց ու շռայլութեանց մէջ և անտես արաւ տէրութեան գործերը: Նոյնպիսի անհոգութեամբ թագաւորեցին և նորա յաջորդների մեծ մասը՝ թւով 27: Նոքա առհասարակ զեղխ ու անառակ կեանք էին վարում: Բայց սոցա ամենքին իւր անկարգութիւններով գերազանցեց Ս ա ր դ ա ն ա պ ա լ ը, մօտ 860 թուականին Քր. յառաջ:

Սարդանապալի զեղխութիւնն այն աստիճան էր, որ նա աւե-

լորդ ծանրութիւն համարելով իրան համար տէրութեան կառավարութիւնը՝ բոլոր հոգսերը յանձնել էր պանդղան կուսակալներին, իսկ ինքը կանանց ընկերութեան մէջ էր ժամանակն անց կացնում, երբեմն օգնում էր նոցա ձախարակ մանելու կամ ուրիշ կանացի պարապմանց մէջ. նա շատ անգամ կանացի հագուստով զարդարվում էր և երեսը սնգոյր էր քսում: Մարաց Վարբակէս կուսակալը տեսնելով նորա այսպիսի անարգ արարմունքը՝ խօսք մէկ արաւ Հայոց կուսակալ Պարոյրի և Բաբելաստանի կուսակալ Բելեսիսի հետ, որ ապստամբին այդ անարժան թագաւորի դէմ և անկախութիւն ձեռք բերեն: Այս լուրն առնելով կնարարոյ ու թոյլ Սարդանապալ՝ յանկարծակի արթնացաւ. ձեռաց զօրք կազմեց ու յարձակուեցաւ Վարբակէսի վերայ և յաղթեց նորան, քանի որ նա մենակ էր և ուժը չէր հաւաքել: Թագաւորն այնքան ուրախացաւ այս անակնկալ յաղթութեան վերայ, որ սկսեց մեծամեծ խրախճաններ կազմել ու անհոգ նստել: Միաբանեալներն օգուտ քաղեցին այս հանգամանքից և յարձակուեցան քաղաքի վերայ. նոցա բաղդից այդ միջոցին Տիգրիս գետն էլ գարնանային ջրերից վարարել ափերովն էր անցել, այնպէս որ Նինուէի պարսպի մի մասն էլ քանդեց: Սարդանապալը սարսափելի տագնապի մէջ մնալով՝ ահագին խարոյկ վառեց և իւր բոլոր ընտանիքովն ու գանձերովը մէջն ընկաւ այրուեցաւ (855):

Սարդանապալի մահուամբ կործանուեցաւ Ասորեստանի Պետութիւնը և սորա տեղ յառաջացան Նոր Ասորեստանեայց, Նոր Բաբելական և Մարաց իշխանութիւնները: Հայաստանն էլ կազմեց անկախ թագաւորութիւն և Պարոյրն եղաւ Հայոց առաջին թագաւորը:

Գ.

ՄԱՐՔ ԵՒ ՊԱՐՍԻԿՔ.

1.

Մ ա ր ա ս տ ա ն ը (կամ Մադայ) շատ հին ժամանակներից յայտնի էր իբրև անկախ տէրութիւն. նա գտնվում էր Ասորեստանեայց, Հայոց, Վրկանայ, Պարթևաց և Պարսից աշխարհների մէջ տեղը: Մարք վարժ պատերազմողներ լինելով՝ շուտով զօրացան և Բաբելական պետութեանը տիրեցին: Այսուամենայնիւ իրանք էլ նուաճուեցան Ասորեստանցիներից և նոցա վերին իշխանութեան տակը մնացին, մինչև որ Վարբակէս իշխանը Հայոց և ուրիշ մերձաւոր ազգերի օգնութեամբ յարձակուեցաւ թուլամորթ Սարդանապալի վերայ և Ասորեստանի Պետութիւնը կործանեց: Սակայն մի քանի ժամանակից յետոյ երկրի մէջ անկարգութիւն և խռովութիւն ընկաւ: Արտաքին թշնամիների յարձակմունքը մէկ կողմից, հպատակ ազգերի ապստամբութիւնը միւս կողմից՝ սաստիկ նեղ վիճակի մէջ ձգեցին Մարաստանը: Այդ միջոցին (710) Դ ի ո վ կ՝ Վարբակէսի հինգերորդ յաջորդը, ճարտարութեամբ բոլոր Մարաց ցեղերը միացրուց և երկիրը կարգ ու կանոնի տակ դրաւ: Նա իրան շրջապատեց անձնապահ նիզակակիրներով և հրամայեց որ ոչ ոք, բացի իւր մարդկանցից, իրան մօտ չերթայ. ում հետ որ գործ ունէր՝ ծառաների միջնորդութեամբն էր խօսում: Նա մայրաքաղաք շինեց Ե կ բ ա տ ա ն ը (այժմեան Համադանը), որի մէջ տեղը կառուցած էր թագաւորական մեծաշէն պալատը: Այս պալատը շրջապատած էր երեք տակ պարսպով՝ եօթնգունեան ատամներով և հեռու տեղից փայլփայլում էր մի դիւթական ամրոցի նման:

Դիովկ 52 տարի թագաւորելով՝ բարեկարգեց Մարաստանը և վայելեց իր ազգի յարգանքը։ Նորա որդին Փրաւորտ՝ նուաճեց նաև Պարսկաստանը և Նինուէի դէմ կռուի մէջ մեռաւ։ Նորա յաջորդն էլ Կիաքսարն էր, որ խուժադուժ Սկիւթացիների արշաւանքն արգելեց և մեծ դժուարութեամբ դուրս վռնտեց դէպի իրանց հայրենիքը՝ Կովկասեան լերանց հիւսիսային կողմը։ Կիաքսարը Սկիւթացիների ճնշմանից ազատուելով՝ դաշն կապեց Բաբելոնի Նաբուպոլասար թագաւորի հետ (606), Նինուէի պետութիւնը կործանեց և նորա հիւսիսային մասն ինքը ժառանգեց։

Կիաքսարի յաջորդը Աժդահակն էր, որի թագաւորութեան ժամանակ Մարաստանը Պարսից ձեռքն ընկաւ, որոնք Կիւրոսի առաջնորդութեամբ ոչ միայն անկախութիւն ստացան, այլ և շրջակայ ազգերին տիրեցին։

2.

Պարսկաստանը գտնվում էր Հայաստանից դէպի արևելք. Նա հիւսիսային մասում ծածկուած էր լեռներով ու արօտալից ձորերով. հարաւում գրեթէ մերկ ու աւազոտ անապատ էր, իսկ միջին մասում արգաւանդ դաշտեր էին՝ զանազան քնքոյշ պտուղներով ու ծաղիկներով լի։ Այս պատճառով երկրի բնակիչներն էլ բաժանվում էին զանազան ցեղերի, որոնցից ոմանք հաստատակեաց էին և պարապում էին երկրագործութեամբ պտղաբեր հովիտներում, այլ ոմանք իրանց խաշինքն առած թափառում էին սարերի և արօտատեղների վերայ։ Պարսիկները յայտնի էին իբրև դիմացկուն, կռուասէր ու ազատասէր մարդիկ։ Նոցա կրօնը Զրադաշտական էր։ Զրադաշտը մէկ մոգ էր, մօտ 600 տարի Քր. յառաջ, որ եղաւ Պարսից, ինչպէս և առհասարակ Արեաց, կրօնի հիմնադիրը։ Նորա ուսմունքը բովանդակվում են Զենդավեստեան կոչուած գրքերի մէջ։ Այդ ուսմունքով՝ բոլոր տիեզերքը բաժանվում է երկու թագաւորութեանց, բարի և չար, լուսաւոր և խաւար, մաքուր և արատաւոր. դոցա համար երկու ներկայացուցիչներ կան՝ Որմիզդ և Արհմն։ Ամենայն բան, ինչ որ բարի է Որմզդից են

յառաջ եկել, և ինչ որ չար՝ Արհմնից. յաջողութիւն, տէրութիւն, փառք, պատիւ, առողջութիւն, գեղեցկութիւն, երկայնակեցութիւն.—բարուց են ստեղծուած, իսկ սոցա հակառակը՝ չարից։ Թէ Որմիզդ և թէ Արհմն՝ իրանց ձեռքի տակ ունէին ոգիներ, առաջինը բարի՝ և կոչվում են Յամշասպանդներ, երկրորդինը չար՝ և կոչվում են Դևեր. առաջինններն աշխատում են առաքինութեան, ճշմարտութէան և մաքրութեան շաւղի վերայ պահել մարդկանց. իսկ վերջինները դորա հակառակ, ջանք են անում յանցանքն ու ամբարշտութիւնը տարածել։ Ամեն մի հաւատացեալի պարտականութիւնն է Արհմնի իշխանութիւնը ոչնչացնել բարի գործերով և աղօթքով, որ գնայ Որմզդի լուսաւոր բնակարանը և ոչ Արհմնի անդնդային խաւարը։ Ժամանակ պիտի գայ, որ բարու և չարի մէջ կատարուող այս կռիւը պիտի վերջանայ մէկ փրկչի ձեռքով։—Որմիզդը տների մէջ չէ բնակվում, այլ ամեն տեղ է. ուստի և Պարսիկները մեհեաններ չէին շինում, այլ լերանց գլխին էին աղօթում ու զոհեր մատուցանում։ Որմզդի ներկայացուցիչը Արևն էր և նմանութիւնը՝ կրակը։ Դորա համար Պարսիկները Զրադաշտի կրօնը աղճատելով՝ արևապաշտ ու կրակապաշտ եղան։ Օրէնքով արգելուած էր կրակն սպանել, այսինքն հանգցնել, այլ մոգերի ձեռքով միշտ պէտք է վառ պահուէին ատրուշանների մէջ։

Պարսիկները Մարաց իշխանութեան տակ կառավարվում էին իրանց ազգակից իշխաններով, որ Աքեմենեանց ազնուական տոհմից էին։ Այն տոհմից էր և Կիւրոսը, Պարսկական պետութեան հիմնարկուն։

3.

Հին ժամանակներում հռչակաւոր մարդկանց ծննդեան ու կրթութեան վերաբերութեամբ շատ բանաստեղծական ու զարդարուն զրոյցներ էին պատմում. այսպէս է և Կիւրոսի ծագման պատմութիւնը։

Մարաց վերջին թագաւոր Աժդահակը մի դուստր ունէր՝

Մանդանա անուամբ: Մի անգամ Աժդահակն երազ տեսաւ, որ իբր թէ Մանդանայի գրկից մի ծառ էր բուսել, որ իւր լայնատարած ճղներով հովանաւորում էր ամբողջ Ասիան: Երազահան մոգերը մեկնեցին, թէ Մանդանան մի որդի պիտի ծնի, որ պէտքէ նուաճէ բոլոր Ասիան: Աժդահակը սարսափեցաւ, և վախենալով թէ մի՛ գուցէ իրօք կատարուի այդ գուշակութիւնը՝ ամուսնացրեց դստերը մի խաղաղասէր ու հանդարտ պարսկի հետ, որի անունն էր Կամբիա: Մի տարուց յետոյ Մանդանան որդի ունեցաւ և անուանեցին Կիւրոս, որ կնշանակէր լուսափայլ արեգակ: Աժդահակը՝ որովհետև շատ բռնութեամբ էր կառավարում և գիտէր որ դորա համար իրան չէին կարող սիրել՝ սաստիկ երկիւղի ու կասկածների մէջ էր. այսպիսի մտատանջութեան մէջ զարմանալի չէ որ նա մէկը քան զմիւսն աւելի ահալից երազներ էր տեսնում: Մի անգամ դարձեալ մի չարագուշակ երազ տեսաւ դստեր վերաբերութեամբ: Նա իսկոյն հրամայեց բերել իւր մօտ Կեւրոսին և յանձնեց իւր իշխաններից մէկին՝ Արպակէսին, որ մի կերպով նորա գլուխը ուտէ: Արպակէսն առաւ տարաւ երեխային, բայց բարեսիրտ լինելով դառն արտասուք էր թափում և չէր ուզում մեռցնել անմեղ մանկանը: Այս միջոցին մի հովիւ պատահեցաւ նորան: Արպակէս նորան յանձնեց տղային և յայտնեց թագաւորի հրամանը: Սակայն հովիւն էլ անսիրտ մարդ չէր. նա տուն տարաւ գեղեցիկ մանկանը և որդեգրեց իրան, մանաւանդ որ իւր միակ որդին էլ նոյն հասակում նոր էր վախճանել: Կիւրոսին հագցրին մեռած մանկան շորերը և պահում էին իրանց հարազատ որդու պէս: Երեք օր անցած՝ հովիւը գնաց քաղաք Արպակէսին յայտնեց, որ մանուկն արդէն սպանուած է: Նա էլ հաւատարիմ մարդիկ ուղարկեց որ ստուգեն և թաղեն անբաղդ տղայի մարմինը:

Իւր նոր ծնողների խնամքով Կիւրոսը մեծացաւ և դարձաւ մի զուարթ ու վառվռուն տղայ: Ուրախ դառնուկի պէս խաղում ու խայտում էր նա կանաչ դաշտերում: Ո՞վ կարող էր մտածել, թէ այդ կայտառ մանուկը՝ հովուի հագուստով Ասիայի տիրապետը պիտի դառնայ: Բոլոր ընկերակիցները սիրում էին նորան իւր

ուրախ բարքի ու սրամտութեան համար:

Մէկ անգամ խաղի մէջ երեխաները թագաւոր ընտրեցին Կիւրոսին. սա պահանջում էր որ ամէնքը լսեն իւր հրամանները, բայց տղաներից մէկը, որ մի նշանաւոր Մար իշխանի որդի էր, չհնազանդեցաւ Կիւրոսին և նորա պատուէրը չկատարեց: Կիւրոսը լուռ ու հանդարտ փայտն առաւ ու մէկ լաւ ծեծեց նորան: Տղան արտասուք թափելով տուն վազեց և հօրը պատմեց այդ անցքի մասին: Իշխանն իսկոյն գնաց թագաւորի մօտ և պահանջում էր, որ հովուի որդին արժանաւոր պատիժ ստանայ իւր աններելի յանդգնութեան համար:

Աժդահակը զայրացաւ և բերել տուաւ հովուին ու որդուն: «Դու ինչպէս համարձակուեցար ձեռք բարձրացնել իմ ընտիր պաշտօնակալիս որդու վերայ», հարցրեց Աժդահակը խոշորադէմ հայեացքով:—«Թագաւո՛րն ապրած կենայ, պատասխանեց Կիւրոս հանդարտութեամբ ու վստահութեամբ. իմ վարմունքը շատ արդար է: Ընկերներս խաղի մէջ ինձ թագաւոր էին ընտրել և բոլոր հրամաններս կատարում էին. իսկ քո իշխանիդ որդին ինձ հակառակում էր և չէր հնազանդվում. ես էլ ինչպէս թագաւոր պատժեցի նորան: Հիմայ՝ թէ որ պատժի արժանի եմ՝ պատժիր. ես քո ձեռքիդ եմ»:

Կիւրոսն այս խօսքերը խօսելիս՝ Աժդահակն անդադար նայում էր նորան: Տղայի ճարտարութիւնը, վայելուչ կազմուածքը, Մանդանային նմանութիւնը, հասակը—այս ամէնը կասկած յարուցին Աժդահակի մտքում, թէ այդ մանուկը պէտքէ որ իւր թոռը լինի: «Ո՞րտեղից է քեզ այս մանուկը», զայրացած հարցրեց նա հովուին: Խեղճ հովիւը շփոթուելով ամենայն ինչ ասաց յայտնապէս: Աժդահակը սաստիկ բարկացաւ Արպակէսի վերայ և հրամայեց կանչել նորան: Նա եկաւ. Աժդահակը կեղծ քաղցրութեամբ հարցրեց նորան. Ասա ինձ, սիրելի Արպակէս, կատարեցի՞ր արդեօք իմ հրամանը Մանդանայի որդու վերաբերմամբ: Արպակէսը տեսնելով այնտեղ կանգնած հովուին և մանկանը՝ հասկացաւ որ գաղտնիքը բացուել է, և ահաբեկուած պատմեց ճշմարիտը, Աժդա-

հակն իւր զայրոյթը թագցրեց և այնպէս ցոյց տուաւ, իբր թէ շատ ուրախ է թոռան ազատուելուն համար։ Նա հրամայեց ճաշկերոյթ պատրաստել. Արպակէսին էլ հրաւիրեց ճաշի և պատուիրեց, որ իւր տղային ուղարկէ թոռան հետ խաղալու։

Թշուառ Արպակէսը շատ ուրախացաւ գործի այդպիսի բարեյաջող ելքի համար. ներկայացաւ ճաշին և ճաշակում էր մեծ ախորժակով։ Երբ նա ուտում էր խորոված վերջին կտորը՝ Աժդահակը հարցրեց նորան. «Ի՛նչպէս է դուր գալիս քեզ այդ խորովածը»։ «Չափազանց համեղ է», պատասխանեց Արպակէսը։ «Գիտե՞ս հապա, թէ այդ ի՞նչ միս է, ասաց չարաժպիտ դէմքով Աժդահակը։ Այս խուրջում ծառաները մի զամբիւղ բերին ծածկած. ծածկոցը վերցրին և Արպակէս տեսաւ նորա մէջ իր խղճուկ որդեկի գլուխը, ձեռքերն ու ոտքերը։ Տարաբաղդ հայրը կայծակնահարի պէս ապշեցաւ մնաց այս զարհուրելի տեսարանի վերայ. բայց չէր համարձակւում ձայն հանել գազանաբարոյ բռնաւորի առաջեւ. սակայն նա մտքումն ուխտեց վրէժխնդիր լինելու։

Աժդահակն այլևս անհանգիստ չէր լինում Կիւրոսի մասին. երազահան քուրմերը մեկնեցին, թէ «Նա արդէն թագաւոր եղաւ մանկանց վերայ, այլևս երկիւղ չկայ, նա երկրորդ անգամ չէ կարող թագաւոր դառնալ»։ Աժդահակն իրան մօտ կանչեց Կիւրոսին և ասաց. «Որդեա՛կ իմ, չարագուշակ երազներից խաբուած՝ ես անարդարութիւն արի քո դէմ. բայց այժմ հոգւով ուրախ եմ, որ դու ազատուած ես։ Ես քեզ կուղարկեմ Պարսկաստան. այնտեղ են քո հարազատ ծնողներդ. անշուշտ նոքա շատ կուրախանան քո դարձի համար»։

Կիւրոսն ուղարկուեցաւ իրանց տուն. այստեղ ստէպ ստէպ պատմում էր իր գլխի անցքերի և իր բարի խնամատարների մասին, որոնց անունը միշտ գոհութեամբ էր յիշում։ Մի քանի ժամանակից յետոյ Աժդահակ դարձեալ իրան մօտ հրաւիրեց Կիւրոսին և իր մօրը։ Կիւրոսը Պարսկաստանում արդէն ընտելացել էր պատերազմասէր Պարսից խիստ ու պարզ կեանքին. ուստի նա շատ զարմացաւ, երբ տեսաւ Աժդահակի պալատում շքեղութիւն,

քնքուշութիւն, անուշահոտ նիւթեր ևայլն։ Սենեկի մէջ նա տեսաւ Աժդահակին, որ զարդարուած ու սնգուրուած՝ հերերին էր սպասում։ Կիւրոսը նորա պարանոցովն ընկաւ և գոչեց. «Ի՛նչ սիրուն է իմ պապս»։—Մի՞թէ քո հօրից գեղեցիկ է, ժպտալով հարցրեց մայրը։ «Պարսիկների մէջ ամենից գեղեցիկը հայրս է, պատասխանեց Կիւրոս, իսկ Մարաց մէջ՝ պապիցս սիրունատես ոչ ոք չկայ»։ Թագաւորին դուր եկաւ այս պատասխանը. նա շատ ընծաներ տուաւ Կիւրոսին և միշտ իրան հետ ճաշի էր նստեցնում։ Մի անգամ ճաշի վերայ Կիւրոս նկատելով բազմատեսակ կերակուրներն ասաց. «Սիրելի՛ պապ, ի՛նչ մեծ չարչարանք է քեզ համար, եթէ այս բոլոր կերակուրների համը պարտաւոր ես տեսնել»։ Աժդահակ ծիծաղը չէր կարողանում բռնել այս պարզամիտ նկատողութեան վերայ։ «Մի՞թէ այսպէս լաւ չէ, քան Պարսկաստանումն էր» հարցրեց նա Կիւրոսին։ «Չգիտեմ, պատասխանեց նա, բայց այնտեղ մենք հեշտ ու շուտ էինք կշտանում. մի կտոր հաց էր, մի կտոր միս՝ պրծանք գնաց»։—Մի անգամ էլ Կիւրոս գաւաթն առաւ և խնդրեց որ մատռուակի տեղ ինքը գինի բաժանէ։ Նորան թոյլ տուին. նա գաւաթը լցրեց և տուաւ թագաւորին։ «Ինչի՞ առաջ ինքդ չես համը տեսնում, հարցրեց Աժդահակ. չէ՞ որ այդ՝ մատռուակի պարտականութիւնն է»։—Աստուած մի՛ արասցէ, ասաց Կիւրոս, ես կարծում եմ թոյն կայ նորա մէջ. անցեալ օրը չէ՞ր, որ երբ խմել էինք, ոչ մէկդ չգիտէիք թէ ինչ էիք անում։ Երգ, խօսք, ծիծաղ՝ իրար էին խառնուել, աղմուկն աշխարհս կալել էր. էլ մեծ ու պստիկ չկար. դու մոռացել էիր, թէ թագաւոր ես, ուրիշները չէին մտածում, թէ ստորագրեալ են»։ —Մի՛թէ քո հայրը երբէք չի հարբում, հարցրեց Աժդահակը։ «Երբէք»։—Հապա ի՞նչ է անում։ «Նա միայն ծարաւն է յագեցնում»։

Կիւրոսի այսպիսի սրամտութիւնները շատ սիրելի էին թւում Աժդահակին։ Նա ընծաներ էր տալիս թոռին, որսի էր տանում հետը և առհասարակ աշխատում էր ամեն կերպ զուարճութիւնների մէջ պահել նորան։ Այն ինչ Արպակէս նկատում էր այս

ամէնը, մտքումն ուրախանում էր և լուռ էր մնում:

4.

Վերջապէս Կիւրոսի ծնողները ձանձրացան առանց իրանց որդուն և շատ խնդրեցին, որ տուն դառնայ: Նա վերադարձաւ Պարսկաստան և շուտով հռչակուեցաւ իբրև քաջ ու խելացի մարդ: Կիւրոս Վարպակէսի դրդմամբ պատրաստւում էր մի կերպով ազատել իւր հայրենիքը Մարաց իշխանութեան տակից: Այս նպատակի համար նա ծածուկ բարեկամացաւ ու դաշն կապեց Հայոց թագաւոր Տիգրանի հետ: Աժդահակ այս մասին զանազան վայրիվերոյ համբաւներ լսելով՝ տանջւում էր կասկածների տակ, և իւր խորհրդակիցների հետ հնարք էր մտածում, թէ ինչպէս կարողանայ քանդել այդ պարսկի և «բազմախուրաւոր հայկազնի» (Տիգրանի) սիրոյ կապը: Այսպիսի խորհրդների շփոթման մէջ նա մի սարսափելի երազ տեսաւ, որ աւելի մեծացրեց նորա երկիւղը Տիգրանի կողմից: Աժդահակը նորան իւր կողմը գրաւելու համար՝ շտապեց նորա քոյր Տիգրանուհուն իրան կին առնել: Մինչ այս մինչ այն Կիւրոս բաւականին նշանակութիւն էր ստացել Պարսկաստանում: Մի անգամ էլ նա մի նապաստակ ստացաւ Վարպակէսից. ընծայ բերող ծառան ասաց, որ զննէ նապաստակի փորոտիքը: Կիւրոսը զննելով մի նամակ գտաւ այնտեղ, որով Վարպակէսը յայտնում էր, թէ յարմար ժամանակ է Պարսիկներին ապստամբեցնելու և իւր կողմից էլ օգնութիւն էր խոստանում: Կիւրոսն խելոյն նախագիծ կազմեց իւր անելիքի համար. ժողովեց իւր ազգակիցներին, նամակը ցոյց տուաւ և ասաց. «այս նամակով Աժդահակն ինձ իշխան է կարգել ձեզ վերայ. ուստի ես հրամայում եմ ձեզ, որ մի մի գերանդի առած առաւօտեան կանուխ ինձ մօտ գաք»: Միւս օրը Պարսիկներն եկան. Կիւրոս նոցա ուղարկեց մի մեծ խոպանացած դաշտ և հրամայեց, որ մինչև երեկոյ անպատճառ մաքրեն դաշտի փուշն ու տատասկը: Այս մի տաժանելի աշխատանք էր: Երբ որ երեկոյեան դարձան՝ Կիւրոս պատուիրեց, որ միւս օրն էլ գան, բայց փոքր ինչ ուշ և մաքուր

հագնուած ու զարդարուած: Միւս օրն եկան, և Կիւրոս նոցա հետ միասին գնաց մի կանաչազարդ հովիտ, ուր որ նորա հրամանով սփռած էին սեղաններ՝ ամենատեսակ պտուղներով, գիներով ու կերակրեղէնով լի: Պարսիկները փառաւորապէս վայելեցին ճաշը: Այն ժամանակ Կիւրոս հարցրեց նոցա. «հապա՛, ուղիղն ասացէք, տղերք, ո՞ր օրն էր ձեզ աւելի հաճելի, երեկուա՞ն, թէ այսօրուան»:— «Ի՜նչ զարմանալի հարցմունք է, աղաղակեցին ամէնքը. երեկ մենք ստրուկ էինք, իսկ այսօր ազատ»: «Թէ որ կուզէք միշտ ազատ լինիլ,» շարունակեց Կիւրոս, «էլ ինչի էք սպասում, թօթափեցէք Մարաց լուծը՝ և ազատ կըլինիք. հետևեցէք ինձ. մեզ հետ կըլինի փառք և յաղթութիւն:

Պարսիկները վաղուց էին զզուած Մարաց բռնութիւնից. նոքա ուրախացան Կիւրոսի առաջարկութեան վերայ, ապստամբեցան Աժդահակից և Կիւրոսին իրանց թագաւոր հրատարակեցին: Այս լսելով՝ Աժդահակը զայրացաւ և Վարպակէսին մեծ զօրքով ուղարկեց նորա դէմ: Վարպակէսն էլ հենց այդ էր ուզում. նա չէր մոռացել Աժդահակի անգութ վարմունքն իւր որդու հետ և յարմար դէպքի էր սպասում վրէժխնդիր լինելու. ուստի իւր բոլոր զօրքովն անցաւ Կիւրոսի կողմը: Այն ժամանակ Աժդահակը մոլեգնեցաւ. հրամայեց սպանել իւր երազը ծուռ մեկնող խաբեբայ մոգերին և կարգադրեց նոր զօրք ժողովելու: Նա կամենալով զրկել Կիւրոսին պաշտպանութիւնից՝ մտածեց նենգութեամբ իրան մօտ կանչել Տիգրանին և սպանել. սակայն նորա խարդախութիւնը Տիգրանուհու ձեռքով առաջուց յայտնուած լինելով՝ գլուխ չեկաւ: Ճարահատեալ միայնակ անցաւ զօրքի գլուխը և դիմեց դաշնակիցների վերայ: Ճակատամարտն եղաւ Պարսից հնագոյն մայրաքաղաքի Փասարգադի մօտ (558 թ. Քր. յառաջ): Աժդահակն սպանուեցաւ պատերազմի մէջ Տիգրանի ձեռքով: Պարսիկները Կիւրոսի շնորհիւ ազատուեցան Մարաց լծից և տիրող դարձան. իսկ Տիգրանը գերի առաւ Աժդահակի կին Անոյշին իւր ընտանիքով և 10000 մարցիք տարաւ Հայաստան ու բնակեցրեց Արարատի ստորոտում,

5.

Կիւրոսի հետագայ կեանքը գրեթէ անընդհատաբար պատերազմների մէջ անցաւ. այս պատերազմները բոլորն էլ յաջող անցան նորա համար: Նա իւր բազմաթիւ զօրքով, որ ըստ մեծի մասին ձիաւորներ էին, անցնում էր երկրից երկիր, ոտնատակ էր տալիս քաղաքներ ու երկիրներ և ամեն տեղ նուաճուած ազգերին ստիպում էր խառնուիլ իւր խաժամուժ ամբոխի հետ: Նորա արշաւանքները նմանում էին մի սաստիկ հեղեղի, որ առաջն արած քշում էր ինչ որ հանդիպէր: Բայց երբ որ նա այդպէս ահարկու յարձակմամբ յառաջանում էր դէպի Արևմտեան Ասիա՝ Լիւդիայի թագաւոր Կրէսոսը մտածեց արգելել նորա փառասիրական արշաւանքը, և այս նպատակով դաշնակցեց դրացի մանր իշխանութեանց հետ: Նորա տէրութիւնը փոքր Ասիայումն էր և տարածվում էր մինչև Ալիս գետը: Նա անհուն հարստութիւն ունէր և համարում էր իրա՛ն ամենաերջանիկ մարդն աշխարհիս վերայ: Մի անգամ նորա մայրաքաղաքը՝ Սարդիս՝ եկաւ Աթենացի իմաստուն Սողոնը: Պէտքէ ասել, որ Կրէսոսը սիրում էր շրջապատել իրան ուսումնական և առհասարակ հռչակաւոր մարդկանցով և վարվում էր նոցա հետ շատ քաղցրութեամբ: Կրէսոս ցոյց տուաւ Սողոնին իւր բոլոր գանձերն ու հարստութիւնը, որ լսէ նորա կարծիքը իւր բաղդաւորութեան մասին: «Դու այդպէս շատ տեղեր ես ճանապարհորդել, ասաց նորան Կրէսոս, շատ բան ես տեսել ու լսել, ուղի՛ղն ասա, ինձնից աւելի երջանիկ մարդ տեսած կա՞ս մի տեղ»:—Ինչպէ՛ս չէ, հանդարտութեամբ պատասխանեց Սողոն, Աթէնքի մէջ մի քաղաքացի կար Թէլլ անուամբ, որ նախանձելի երջանկութիւն էր վայելում»: Կրէսոս դժկամակեցաւ, որ իմաստունը մի հասարակ քաղաքացու՝ մեծ թագաւորից գերադանց էր համարում. նորից հարցրեց. «Ի՞նչ էր նորա երջանկութիւնը»:
—Նորա առաքինութիւնները, պատասխանեց իմաստունը. նա յայտնի էր իւր ազնուութեամբն ու արդարութեամբը. միշտ օգնում էր մերձաւորներին, սփոփում էր նոցա վշտերը, բարի խորհուրդ-

ներ էր տալիս, և այսպիսի վարքովն արժանացել էր իւր հայրենակիցների սիրոյն ու յարգանքին: Նա չափաւոր ու պարզ կեանք էր վարում և միշտ ուրախ ու բաւական էր. նա կրթում էր իւր որդիներին ու թոռներին. նորա երջանկութիւնը պսակուեցաւ իւր ազնիւ մահով, որովհետև նա զառամեալ հասակի մէջ՝ մեռաւ զէնքը ձեռին՝ պատերազմի դաշտում, կռուելով 'ի պատիւ և 'ի փառս իւր հայրենեաց: Աթենացիք նորա անմոռանալի յիշատակի համար արձան կանգնեցրին»,—Իսկ Թէլլից յետո՞յ ում ես համարում ամենաերջանիկը մահկանացուների մէջ, հարցրեց Կրէսոս:—Արգիւացի երկու եղբայրների՝ Կլէոբիսին ու Բիթոնին, պատասխանեց Սողոն. նոքա հարուստ և ուժեղ երիտասարդներ էին. հասարակական խաղերի մէջ վարժ էին և մի անգամ յաղթող հանդիսանալով ձիթենի պսակներ ստացան: Բայց մանաւանդ յայտնի էին իրանց զառամեալ մօր վերայ ունեցած քնքոյշ սիրովը: Մի անգամ սա ցանկացաւ գնալ տաճար, ուր որ պէտքէ մի տօնի հանդէս կատարուէր: Կառքը լծելու համար եզները շատ ուշացան. ուստի երկու եղբայրները լծուեցան կառքի մէջ և մօրը տարին տաճարը: Ժողովուրդը հիացաւ այս տեսարանի վերայ. տղամարդիկ գովաբանում էին նոցա ուժն ու առողջութիւնը, իսկ կանայք երանի էին տալիս նոցա մօրը, որ այնպիսի զաւակներ ունի: Գորովալից մայրը ներս մտաւ տաճարը, ծունկ չոքեց աստուածուհու առաջև և արցունքն աչքերին մաղթում էր որդւոց համար բարձրագոյն երջանկութիւն: Եւ ի՞նչ...... հանդիսի վերջը երկու եղբայրներին կալաւ մի խորին ննջ, և նոքա այլևս չզարթեցան: Աստուածները կամեցան ցոյց տալ, թէ մարդուս համար ամենամեծ բարիքը մահն է: Յոյները նոցա վերայ երկու արձան կանգնեցրին 'ի յիշատակ նոցա հոգեշարժ գործի և փառաւոր մահուան»:

«Ինչպէս, զարմացմամբ բացագանչեց Կրէսոսը, մի՞թէ իմ բաղդաւորութիւնն այնքան չնչին է երևում քո աչքում, որ հասարակ քաղաքացիների հետ էլ չես ուզում ինձ հաւասարեցնել»:
«Ով տէր, պատասխանեց Սողոն, դու ինձ խնդրեցիր բացայայտ խօսել քեզ հետ. թո՛յլ տուր ինձ պարտքս կատարել և համբերու-

թեամբ լսիր ասածներս: Մարդու կեանքն այնքան պատահարների է ենթակայ, որ մեզանից ոչ ոք չի կարող իմանալ թէ ինչ կպատահի իրան ոչ թէ մի տարի, այլ մինչև անգամ մի քանի ժամ յետոյ: Այս րոպէիս ինչ կասկած որ դու հարուստ ես և բազմաթիւ մարդիկ կան քո հրամանի տակ, բայց երջանիկ կարող եմ համարել քեզ այն ժամանակ միայն, երբ լսեմ, որ կեանքդ բարեյաջող վերջ է ունեցել: Հաւատա ինձ, թագաւոր, որ աշխարհիս գործերը պսակվում են միայն իրանց անփորձ վախճանով. քանի՜ քանի մարդիկ սկսում են հարստութեամբ ու պատւով և վերջացնում զարհուրելի խեղճութեամբ ու թշուառութեամբ, կամ դորա հակառակը»: Այս ասաց Սողոն ու հեռացաւ:

Կրէսոսը Սողոնին մի օտարոտի մարդ համարեց. նա մտածում էր, որ իմաստուն մարդը չի կարող այդպիսի թիւր հասկացողութիւն ունենալ երկրային թագաւորութեան վերայ: Սակայն շատ շուտով նա պէտքէ անձնական դառն փորձով համոզուէր Սողոնի ասածի ճշմարտութեանը: Նորա որդիներից մէկը որսի ժամանակ անակնկալ կերպով սպանուեցաւ իւր ընկերի նետից. այս որդին էր նորա միակ յոյսը, որովհետև նորանից մեծը համր էր: Բայց այս դեռ սկիզբն էր փորձանքի:

Պարսից թագաւոր՝ Կիւրոսի անընդհատ յառաջխաղացութիւնը սպառնում էր նորան: Նա մեծ զօրք ժողովեց. բայց պատերազմ սկսելուց առաջ կամեցաւ աստուածների կամքը հարցնել այդ մասին: Պատգամաւոր ուղարկեց Դելփեան տաճարը *) առատ ընծաներով:—Պատգամախօսն այսպէս պատասխանեց. «Եթէ Կրէսոսն անցնի Ալիս գետը՝ մի մեծ թագաւորութիւն կկործանէ»:

Լիւդիայի թագաւորը բերկրեցաւ այս պատգամի վերայ. նա չսպասեց մինչև անգամ իւր նիզակակիցներին. Ալիսն անցաւ և սկսաւ աւերել Կապադովկիան: Այստեղ նորան ընդառաջեց Կիւրոսը: Բորբոքեցաւ արիւնահեղ պատերազմ: Յաղթութիւնն անցնում էր փոփոխակի կամ մէկ կամ միւս կողմն. վերջապէս գիշե-

*) Ապօղ'ոնի տաճարը՝ Յունաստանի փովկիս գաւառի Դելֆիս քաղաքում.

րային մթութիւնը վախճան տուաւ մարտին: Կրէսոս վերադարձաւ Սարդիս՝ իւր մայրաքաղաքը և արձակեց իւր յոգնած զօրքը, և միտք ունէր հետևեալ տարուան համար առաւել հզօր մի գունդ կազմել:

Բայց Կիւրոսն աւելի վճռական եղաւ. նա գնաց Կրէսոսի յետևից և հենց նա Սարդիս մտաւ թէ չէ՝ ինքն էլ բանակեց քաղաքի դռների առաջ: Կրէսոսն ապշեցաւ մնաց նորա վստահութեան վերայ. բայց ժամանակը սուղ էր. նա նորէն կարգաւորեց զօրքն ինչպէս կարող էր և դուրս ելաւ թշնամու դէմ: Լիւդացիք յաղթուեցան, մայրաքաղաքն էլ կարճատև ընդդիմադրութիւնից յետոյ յանձնուեցաւ կատաղի թշնամեաց, որոնք գազանի պէս ներս խուժեցին: Չէր խնայվում ոչ ծերի ոչ տղայի կեանքը: Պարսիկ զօրականներից մէկը մինչև անգամ հասաւ Կրէսոսի յետևից և յարձակուեցաւ վրան որ սպանէր. արդէն սուրը պսպղաց անբաղդ թագաւորի գլխին. մի վայրկեան ևս՝ և նորա գլուխը պէտքէ թռչէր. բայց այդ րոպէին Կրէսոսի համր որդին ներկայ էր. երկիւղից ու կսկծից նորա լեզուի կապանքները քանդուեցան, և նա աղաղակեց. «ինչ ես անում, անօրէն. չե՞ս տեսնում որ առաջիդ Կրէսոսն է, աշխարհի տէրը»: Զօրականի ձեռքերը թուլացան. նա սուրը ցած թողեց. Կրէսոսի կեանքն ազատուեցաւ թշնամու ձեռից: Այնու ամենայնիւ նա գերի ընկաւ Կիւրոսի ձեռքը: Այս վերջինս հրամայեց այրել նորան փայտակոյտի վերայ: Իսկոյն խարոյկ շինեցին, և ողորմելի Կրէսոսին ոտն ու ձեռքը կապոտած՝ վրան դրին: Բայց հենց որ սկսան վառել խարոյկը՝ Կրէսոսը մտաբերեց յոյն իմաստնի խօսքերը և դառնութեամբ բացագանչեց. «Ո՛հ, Սողոն, Սողոն»:

Կիւրոսը լսելով այս բացագանչութիւնը՝ հետաքրքրուեցաւ իմանալ, թէ ո՞ւմ անունն էր կանչում Լիւդիայի թագաւորը: Կրէսոսը իւր տեսութիւնն ու խօսակցութիւնը Սո՛ղոնի հետ և մեծ ցաւ յայտնեց, որ մի անգամ էլ չի յաջողում տեսնել Աթենացի իմաստնին, որին առաջ չէր հասկացել ինքը:

Կիւրոսի սիրտը շարժեցաւ: Նա մտածեց որ ինքն էլ մարդ

է և ապա ուրեմն բաղդն իրանից էլ կարող է երեսը շրջել. այս պատճառով շնորհեց Կրէսոսին կեանքը, առաւ իւր պալատի մէջ և իրան բարեկամ ու խորհրդական արաւ։ Այսպէս ազատուած Կրէսոսն ուղարկեց Դելփեան քուրմերի մօտ այն շղթաները, որոնցով կապկապած էր ինքը խարոյկի վերայ և պատուիրեց հարցնել, թէ ինչու նոքա իւր առատ պարգևների փոխարէն այնպիսի սուտ պատգամով խաբեցին իրան։ Քուրմերը պատասխանեցին, որ իրանց մտքովն էլ չէ անցել խաբել, և որ պատգամախօսի գուշակութիւնը կատարուել է ճշտիւ, ըստ որում՝ յիրաւի մի ահագին թագաւորութիւն կործանուել է. իսկ թէ որը պէտք է կործանուէր, Պարսի՞ց թագաւորութիւնը թէ Լիւդացւոցը—այդ մասին ոչինչ չէր ասուած պատգամի մէջ։

6.

Կրէսոսի պարտութեան համբաւը սարսափեցրեց Ասիայի բնակիչներին. մանաւանդ փոքր Ասիայի Յոյներին։ Առաջուց Կիւրոսն առաջարկել էր նոցա բարեկամական դաշն, բայց նոքա գոռոզութեամբ մերժել էին։ Այժմ նոքա ինքեանք էին առաջարկում, իսկ Կիւրոսը, յայտնի բանէ, չէր ընդունում, և 'ի պատասխանի նոցա առաջարկութեան հետևեալ առակն ասաց. «Մի ձկնորս ծովի ափում նստած երկար ժամանակ ածում էր իւր սրինգը, կանչելով ձկներին որ դուրս գան պար գան, բայց որքան ածում էր՝ դուրս չէին գալիս։ Վերջապէս զայրացաւ, ուռկանն առաւ ծովը նետեց ու բռնոտեց նոցա։ Ձկները դուրս թափուեցան ցամաքի վերայ ու սկսեցին ոստոստել յակամայից։ «Ահա այդպէս, ասաց ձկնորսը, ինչու չէիք ուզում պարել իմ սրնգի ձայնով, երբ հրաւիրում էի»։ Փոքր Ասիայի նուաճումն Կիւրոս յանձնեց Վարբակէսին, ինքը գնաց Բաբելոնի վերայ։ Որքան չարչարուեցաւ՝ չկարողացաւ այդ ամուր քաղաքն առնել. վերջապէս խորամանկութիւն բանեցրեց։ Մի տօն օր, երբ բոլոր քաղաքն ուրախութեան ու կեր ու խումի մէջ էր, Եփրատ գետի մօտ մի մեծ փոս փորել տուաւ, ջուրը նորա մէջը դարձրեց և գետի ծանծաղացած հունով ներս մտաւ քա-

ղաքը։ Այսպէս՝ Կիւրոսի ձեռքն ընկաւ Բաբելոնի թագաւորութիւնն էլ (538)։

Բաբելոնի անկմամբ նորան հպատակող ազգերն էլ Արեաց ձեռքն անցան, ոմանք կամաւ և ոմանք զէնքով։ Կամաւ միացածներին թող տուաւ, որ առաջուան պէս կառավարուին, իսկ զէնքով նուաճուածների վերայ նոր կուսակալներ դրաւ. այսու ամենայնիւ ոչ մէկ ազգի վերայ էլ հարկ չդրաւ, այլ միայն պարգևներ էր ընդունում նոցանից։

Թէև Պարսից պետութիւնն այժմ տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Հնդ գետը և Պարսից ծոցից մինչև Կասպից ծովը, բայց Կիւրոսի անսահման փառասիրութիւնը սորանով չէր յագենում։ Նա կամեցաւ տիրապետել և այն ազատ ազգերին, որ բնակվում էին Միջին Ասիայի հիւսիսային կողմում։ Սոցանից աւելի քաջ և պատերազմասէր էին Մասագեթացիք՝ Հաքսարտէս գետից մինչև Կասպից ծովը։ Կիւրոս իւր արշաւանքն ուղղեց նոցա վերայ, բայց յաջողութիւն չունեցաւ, որովհետև Մասագեթացիք իրանց Թամիրիսա թագուհւոյ ոգևորուելով՝ յուսահատաբար ընդդիմադրեցին Պարսից զօրքին. ինքը Կիւրոս պատերազմի մէջ վիրաւորուեցաւ և յետոյ մեռաւ 70 տարեկան հասակում։ Նորա մարմինը ոսկի դագաղի մէջ պահվում էր Փասարգադի թագաւորական շիրիմներում, ուր Պարսից մոգերը ցոյց տուին այդ մարմինը Աղէքսանդր Մակեդոնացուն։

7.

ԿԱՄԲԻՒՍ. (529—522 թ. Քր. յառաջ)։

Կամբիւս ժառանգեց ոչ միայն իւր հօր գահը, այլև պատերազմական ոգին։ Հայրը նուաճել էր Ասիան, որդին էլ կամեցաւ տիրել Աֆրիկային։ Բազմաթիւ զօրք գումարեց և արշաւեց Եգիպտոսի վերայ։ Եգիպտական զօրքը Փսամմենիտ փարաւոնի առաջ-

նորդութեամբ նորա հանդէպըն ելաւ և Պելուսիոնի մօտ ճակատ կազմեց։ Մարտը վերջացաւ 'ի վնաս Եգիպտացւոց, որոնք ջարդուելով փախան պատերազմի դաշտից։ Փսամմենիս յետ քաշուեցաւ ու ամրացաւ Մեմփիս քաղաքի մէջ։

Պատմումեն, որ Կամբիւսն այդ յաղթութիւնը տարաւ շատ զարմանալի մի հնարքով. գիտենալով, որ կատուները Եգիպտացւոց համար սրբազան կենդանիներ են, նա հրամայեց իւր զօրքի առաջին շարքերին ձեռքները կատուներ առնել, որպիսով Եգիպտացիք չէին համարձակվում նետ ձգել իրանց թշնամեաց վերայ, որ մի՛ գուցէ սպանէին իրանց համար սրբազան կատուներին. այն ինչ Պարսիկները կոտորում էին նոցա անխնայաբար։

Կամբիւս դեսպաններ ուղարկեց Մեմփիս և պահանջեց որ անձնատուր լինին. իսկ Փսամմենիս հրամայեց սպանել Պարսից դեսպաններին։ Կամբիւս զայրացած յառաջ մղեց զօրքերը Մեմփիսի վերայ և կարճատև պատերազմից յետոյ առաւ քաղաքը։ Փսամմենիս իւր բոլոր ընտանիքով և շատ Եգիպտացի իշխաններ գերի ընկան Կամբիւսի ձեռքը։ Գազանաբարոյ Կամբիւսը կամենալով վրէժխնդիր լինել իւր դեսպանների սպանման համար՝ պատրաստեց իւր բարձրաստիճան կալանաւորների համար ամենադաժան տանջանքներ։ Ամենից առաջ Կամբիւս հրամայեց, որ թագաւորի դուստրը միւս Եգիպտացի իշխանաց օրիորդների հետ, գերու շորեր հագած՝ սափորներով ջուր կրեն Պարսից զօրքի համար։ Խղճալի աղջիկները լալիս էին. նոցա հայրերը նոյնպէս արտասվում էին. միայն Փսամմենիսը լուռ և առանց արտասուքի տանում էր այդ կսկիծը. նա նստած էր մռայլ թախծութեան մէջ և աչքերը գետին խոնարհած։ Դորանից յետոյ չարաբաղդ թագաւորն ականատես եղաւ առաւել զարհուրելի տեսարանի. երկու հազար ազնուատոհմ Եգիպտացի երիտասարդներ, որոց մէջ էր և թագաւորի միակ որդին, շրջապատուած Պարսիկ զօրականներով՝ իրանց ծնողների աչքի առաջից տարվում էին գլխատման տեղը. նոցանից իւրաքանչիւրի պարանոցին պարան էր կապած և բերանը սանձ ձգած։ Վշտալի ծնողները նորից արցունք թափեցին. նորից սուգ բարձին որդւոց կորստեան վերայ. բայց դարձեալ միայն Փսամմե-

նիսը՝ արտասուքը ցամաքած նստած էր տխրադին ու ձայն չէր հանում։ Այս միջոցին երևեցաւ մի ծերունի, որ երբեմն հարուստ մարդ էր և Փսամմենիսի զրոյցընկերը, իսկ այժմ իւր կեանքի վերջին օրերում, անտուն անտէր, հարկադրուած էր ողորմութիւն խնդրել իւր հայրենիքի թշնամիներից։ Խեղճ թագաւորը նորան տեսաւ թէ չէ սիրտը շարժեցաւ, չկարողացաւ արտասուքը պահել և քանի մի անգամ կանչեց իւր հին բարեկամի անունը։ Կամբիւս շատ զարմացաւ այս բանի վերայ, գերի թագաւորը, որ մի կաթիլ արտասուք չթափեց իւր զաւակների թշուառութիւնը տեսնելիս, այնքան կարեկցեց մի օտար ծերունու վշտերին. նա ցանկացաւ իմանալ դորա պատճառը։ «Զարմանալի ոչինչ չկայ» ասաց Փսամմենիսը ցաւագին, «իմ տարաբաղդ բարեկամիս վիճակը ողբալու համար ես դեռ ունիմ արտասուք. իսկ իմ սեպհական ցաւն այնքան մեծ է, որը թեթևացնելու համար արտասուքս չէին կարող հերիքանալ»։ Այս պատասխանը Կամբիւսի սիրտը շարժեց. նա իսկոյն մարդ ուղարկեց ազատել արքայորդուն գլխատմանից. բայց տարաբաղդաբար արդէն ուշ էր։ Կալանաւորած թագաւորին Կամբիւս սկզբում պատւով պահում էր իւր մօտ, բայց յետոյ կասկածելով որ նա Եգիպտացիներին գրգռում է իւր դէմ հրամայեց մեռցնել նորան։ Այսպէս անցաւ գոռոզ փարաւոնների դարաւոր գահը, և Եգիպտոսը իւր հինօրեայ յիշատակարաններով դարձաւ պարսկական մի նահանգ 525 թ. Ք. ր. յառաջ։

Եգիպտոսում գտած յաջողութիւնից ոգևորուած՝ Կամբիւս ուզեց բոլոր Աֆրիկային տիրել։ Նոանց երկրի հանգամանքն իմանալու մի բանակ կազմեց 30,000 մարդուց և ուղարկեց Ամոնի գաղթականութեան վերայ, ուր գտնվում էր և Արամազդի տաճարը. իսկ ինքը մնացած զօրքերի գլուխն անցած Եթովպիա արշաւեց։ Բայց առաջին բանակը համարեա ամբողջապէս ոչնչացաւ, զոհ գնալով անապատի վառվռուն աւազին. իւր զօրքի էլ մեծագոյն մասը, ամենևին Եթովպիա չհասած, նոյնպէս խորտակուեցաւ սարսափելի սովից ու ծարաւից տանջուելով։ Կամբիւս հարկադրուեցաւ խայտառակութեամբ յետ դառնալ Մեմփիս. այդ միջոցին

Եգիպտացիք գտած լինելով մի նոր Ապիս՝ մեծ հանդիսով և ուրախութիւններով տանում էին նորան տաճարը: Կամբիւս կարծելով թէ քաղաքի բնակիչներն իրան ձախորդութեանն համար են ուրախութիւն անում՝ կատաղութեամբ հրամայեց ժողովրդի բազմութիւնը ցիրուցան անել և քուրմերին ծեծել. իսկ խեղճ Ապիսին ինքն իւր ձեռքով սպանեց:

Կամբիւս վշտերն սփոփելու համար անձնատուր եղաւ գինարբեցութեան, որպիսով բազմապատկեցաւ նորա գազանային մոլեգնութիւնը: Մի անգամ խմած ժամանակը հարցրեց իւր իշխան Պրեքսասպին, թէ ինչ՞ է կարծում նորա մասին ժողովուրդը: «Տէր արքայ, պատասխանեց միամտաբար իշխանը, նոքա քեզ շատ գովում են, բայց կարծում են որ մի քիչ սէր ունիս գինու հետ»:— «Այ՛ բան, գոչեց թագաւորը բարկութեամբ, ուրեմն նոքա կարծում են թէ երբեմն խելքս կորցնում եմ: Լաւ, մենք այս րոպէս կտեսնենք, թէ ինչքան ուղիղ է նոցա կարծիքը: Տեսնում ես՞ այնտեղ քո որդուն. եթէ որ ես նետս ուղղակի դիպցնեմ նորա սրտին, ուրեմն պարսիկները սխալվում են իմ մասին»: Այս որ ասաց՝ աղեղը լարեց և արձակեց նետը. խղճուկ մանուկը վայր ընկաւ մեռած. Կամբիւս ուղղակի սրտին էր խփել: «Այժմ ինչ կասես Պրեքսասպ, վայրենի խնդութեամբ հարցրեց գազանը, տեսնե՞ս ես ինձ նման հմուտ նետաձիգ»:—Չեմ տեսել, պատասխանեց իշխանն արտասուքը բռնելով, աստուած ինքն էլ այդպէս ուղիղ չէր կարող խփել»:

Կամբիւսի չարասիրտ կատաղութիւնից իւր ազգականներն էլ չէին կարողանում ազատուիլ: Նա մի եղբայր ունէր Սմերդիս անունով. Եգիպտոս գնալուց առաջ անհիմն կասկածներով հրամայել էր սպանել նորան. իսկ երբ իւր քոյրերից մէկը ողբում էր եղբօր մահուան վերայ՝ նորան էլ ոտնատակ տալով մեռցրեց: Նա շատ անգամ յիմարաբար մտածում էր զուարճանալ անմեղ մարդկանց չարաչար մահուամբը: Այսպէս նա մի անգամ եօթն ազնուատոհմ պարսիկների՝ կենդանւոյն թաղել տուաւ հողի մէջ գլխիվայր: Այսպիսի գազանական արարմունքի համար Կամբիւսի հպա-

տակներն ատելով ատում էին նորան: Մարացի մոգերից մէկը, օգուտ քաղելով այս հանգամանքից, ձևացաւ իբրև Սմերդիս, որ իբր թէ ազատուել էր սպանիչների ձեռքից, և բազմաթիւ կուսակիցների օգնութեամբ Պարսից գահն ելաւ: Կամբիւսն իմանալով այս՝ աճապարեց Շօշ հասնել. բայց տեղ չհասած ճանապարհին ձիուց վայր ընկաւ և յանկարծակի վիրաւորուելով ՚ի մահ իւր սեպհական սրովը՝ մեռաւ անժառանգ:

8.

ԴԱՐԵՀ Ա. (521—485).

Կեղծ Սմերդիսը չկարողացաւ երկար վայելել իւր յափշտակած գահը: Նորա խաբեբայութիւնը յայտնուեցաւ: Եօթն Պարսիկ իշխաններ խորհուրդ կազմեցին, ծածուկ յարձակուեցան նորա վերայ և ոչ միայն գահավէժ արին, այլև սպանեցին նորան: Այսպէս տէրութիւնն ազատեցին ինքնակոչ բռնաւորից և մտածելով ապահովել երկիրը Մարաց մոգերի ազդեցութիւնից, խորհուրդ արին, թէ ում ընտրեն թագաւոր: Այս խնդիրը բաւականին դժուար էր, վճռել, ուստի համաձայնեցան աստուածների կամքը հարցնել: Որոշեցին որ եօթն հոգին գնան քաղաքից դուրս և ի միասին ձիավարեն արևածագին, (արևը նոցա մեծ աստուածութիւնն էր), և ում ձին որ՞ առաջինը խրխնջայ արևի դիմացը՝ նա լինի թագաւոր: Դարեհ Վշտասպեանի ձիապանի խորամանկութեամբ՝ նորա ձին ամենից առաջ խրխնջաց: Այդ իսկ միջոցին կայծակը փայլատակեց և որոտմունք եղաւ, որ Պարսից մէջ բարեգուշակ երևոյթներ էին: Դարեհի ընկերակիցներն իսկոյն ձիերից իջան, Դարեհին շնորհաւորեցին ու երկրպագութիւն արին:

Դարեհ, իւր ազդեցութիւնը զօրացնելու համար՝ Կիւրոսի երկու դուստրները կնութեան առաւ իրան և հենց սկզբից վճռական միջոցներ գործ դրաւ ապստամբ ու գոռոզ իշխանների դէմ:

Արդէն Կամբիւսի ու Կեղծ Սմերդիսի ժամանակ տէրութեան մէջ շատացել էին անկարգութիւններն ու չարագործութիւնները. Նոր թագաւորն առաջ առաջ աշխատեց բարեկարգել երկրի ներքին բարեկարգութիւնը: Նա բոլոր պետութիւնը բաժանեց քսան նահանգների՝ իւրաքանչիւրին իւր միջոցներին համաձայն հարկ նշանակելով. զինուորական իշխանութիւնն էլ բաժանեց քաղաքականից, որպիսով ամեն մի նահանգի մէջ երկու իշխանաւորներ կային՝ զինուորական և քաղաքական: Դարեհ ճանապարհներ շինել տուաւ և հեշտացրեց նահանգների հաղորդակցութիւնը մայրաքաղաքի հետ, որ տարուան եղանակին նայելով կամ Էկբատանն էր լինում կամ Շօշը, և կամ Բաբելոնը:

Դարեհի թագաւորութեան երրորդ տարին Բաբելոնն ապստամբեցաւ և կուզէր ազատ լինել: Բաբելացիք ամրացան քաղաքի մէջ և դարպասները փակեցին. մինչև անգամ պաշարները շուտ չսպառելու համար՝ կանանցից շատերին սպանեցին: Դարեհ ժամանակ չկորցնելով՝ զօրքը ժողովեց ու անձամբ գնաց պաշարեց Բաբելոնը: Ամբողջ տարի ու կէս չարչարուեցաւ քաղաքն առնելու համար, բայց բոլոր հնարներն իզուր անցան: Երբ այսպէս անյաջողութեան վերայ մտածելով տրտում տխուր նստած էր Դարեհ՝ նորա մօտ եկաւ իւր սիրելի Զօպիրոս իշխանը քիթն ու ականջները կտրած և գլուխը գերծած: Թագաւորը վերթռաւ տեղից ու աղաղակեց. «Ո՞վ է համարձակուել այսպէս այլանդակել իմ հաւատարիմ ծառային»:—«Ես ինքս», պատասխանեց Զօպիրոսն անտրտունջ, ես յոյս ունիմ այս կերպով առնել քաղաքը, որ իւր կամակոր ընդդիմադրութեամբ այդքան յուսահատեցնում է քեզ: Այսպիսի դրութեամբ, ինչպէս տեսնում ես ինձ, ես կերթամ Բաբելոն, բնակիչներին կհաւատացնեմ, որ փախել եմ քո անլուր բռնութեան երեսից և միջոց կըխնդրեմ վրէժխնդիր լինելու: Նոքա հաւատալով մի փոքրիկ գունդ կտան ինձ, որի հետ մի քանի անգամ յաջողակ արշաւանքներ կանեմ բերդից դուրս, իսկ դու քո կողմից ուղարկիր հազար հոգի ամենավատ զօրք. ես կջարդեմ նոցա. մի քանի օրից յետոյ դարձեալ երկու հազար, և վերջապէս էլի մի

չորս հազար վատթարներից: Դորանից յետոյ Բաբելացիք անշուշտ հաւատ կընծայեն ինձ և զօրապետ կընշանակեն: Այս արին թէ չէ ես գիտեմ արդէն ինչ կանեմ»: Իւր թագաւորին այսպէս ծանուցանելուց յետոյ՝ Զօպիրոս արիւնլուայ փախստականի պէս քաղաքը վազեց և շատ ճարտարութեամբ գլուխ տարաւ իւր կազմած նախագիծը: Պարսիկները տիրեցին քաղաքին և խիստ ջարդ տուին Բաբելացի զօրքին: Դարեհ Զօպիրոսի անօրինակ անձնազոհութեան համար նշանակեց նորան Բաբելոնի կառավարիչ և ահագին մուտքեր կապեց. բայց շատ ցաւում էր իւր սիրելի իշխանին այնպէս անշնորհքացած տեսնելիս. «լաւ էր Բաբելոնի պէս քսան քաղաքից զրկուէի, ասում էր յաճախ Դարեհ, քան իմ մտերիմ ծառային այդպէս այլանդակուած տեսնէի»: Սակայն Բաբելոնին էլ հեշտ չնստաւ իւր ապստամբութիւնը.—3000 քաղաքացիք խաչուեցան. բնակիչների մեծ մասը գերի տարուեցան և քաղաքի հաստահիմն պարիսպը շատ տեղ հիմնայատակ քանդուեցաւ:

Դարեհ տէրութեան մէջ ներքին բարեկարգութիւն մտցնելով՝ մտածեց ընդարձակել նորա սահմանները և աչքը ձգեց Եւրոպայի վերայ: Իւր ձեռքի տակ գտնուող ազգերից ահագին զօրք գումարեց՝ մինչ 700,000. անցաւ Թրակիոյ Բոսֆորը (Կ. Պօլսոյ նեղուցը) և արշաւանքն ուղղեց Սկիւթացւոց վերայ, որոնք բնակվում էին Դանուբ ու Դոն գետերի մէջտեղը, և շատ անգամ հիւսիսից յարձակուելով անհանգիստ էին անում Պարսկաստանի սահմանները: Փոքր Ասիայի Յոյներին իրանց նաւատորմիղով առաջ ուղարկեց և պատուիրեց, որ Դանուբ գետի վերայ կամուրջ ձգեն սպասեն իրան: Կամուրջը շինուեցաւ. Պարսից զօրքն անցաւ գետը: Դարեհ այդ ժամանակ մի թոկ վերցրեց 60 հանգոյց շինեց վերան, տուաւ Յոյներին, յանձնեց նոցա կամրջի պահպանութիւնը և ասաց. «հենց որ այստեղից յառաջ կերթամ Սկիւթացւոց վերայ՝ դուք օրէնը մի հանգոյց բացարէք, եթէ բոլոր հանգոյցները բանաք, իսկ ես դեռ ես վերադարձած չլինիմ՝ գնացէք ձեր տները. բայց մինչև այն ժամանակ պահպանեցէք կամուրջը»:

Սկիւթացիք չէին կռւում Պարսիկների հետ. նոքա յետ էին

քաշվում դէպի իրանց ճահճուտ ու ամայի երկրի խորքերը, և այսպիսով ներս գրաւեցին Դարեհին: Դարեհ դեսպաններ ուղարկեց Սկիւթացւոց Թագաւորին, որ կամ պատերազմէ իրան հետ և կամ հող ու ջուր ուղարկէ հնազանդութեան նշան: Բայց Սկիւթացին նորան ուղարկեց գորտ, մուկ, թռչուն և նետեր, որ այս նշանակութիւնն ունէր, թէ եթէ դուք Պարսիկներդ օդը չթռչէք թռչունների պէս, գետնի տակը չմտնէք մկների պէս, ճահիճները չմտնէք գորտերի պէս՝ պիտի խորտակուէք այս նետերից:

Շատ չանցաւ՝ Սկիւթացւոց զօրքն էլ երևեցաւ: Դարեհը յաղթուելով յետ փախաւ: Վաթսուն օր արդէն անց էր կացել: Աթենացի Միլտիադէսը կամուրջը պահպանող Յոյներին ասաց. «Այժմ, ով Յոյներ, ժամանակն է, որ դուք թօթափէք Պարսից լուծը. կտրեցէք կամուրջը՝ և բռնաւորի զօրութիւնը կոչնչանայ»: Բայց մի ուրիշ Յոյն, Միլետացի Հիստէասը, ընդդիմացաւ Միլտիադէսի խորհրդին, նա յոյս ունէր վաստակել Դարեհի շնորհը: Այսպէս ահա, կամուրջը մնաց և փախչող Պարսիկներն ազատուեցան:

Դարեհը վարձատրեց Հիստէասի հաւատարմութիւնը և ընծայեց նորան մի կտոր հող Թրակիայի մէջ Ստրիմոն գետի մօտ: Սակայն կարճ ժամանակից յետոյ նախանձորդները կասկածելի արին նորան Դարեհի առաջև: Հիստէաս Շօշ կանչուեցաւ իբր բարեկամ և խորհրդական Թագաւորի պալատում. բայց իրօք նա կալանաւոր էր այնտեղ. ուստի մտքումը դրաւ վրէժխնդիր լինել:

Հիստէասից յետոյ Միլետի կառավարիչ նշանակուած էր նորա փեսայ Արիստագորասը: Սա խօսք մէկ արաւ Հիստէասի հետ, և յարմար դէպքի էին սպասում փոքր Ասիայի Յունաց ազատութիւնը վերականգնելու համար: Շուտով պատահեցաւ այդպիսի մի դէպք: Հիստէասն ուզում էր իմաց տալ Արիստագորասին, բայց չգիտէր ինչպէս անէր, որ գաղտնի խորհուրդը չյայտնուէր: Վերջապէս հնարքը գտաւ. նա գերծեց իւր ծառայի գլուխը, այնտեղ գրեց հարկաւոր նշանները և սպասեց մինչև մազերը բուսնելը: Այն ժամանակ ուղարկեց ծառային Արիստագորասի մօտ, խնդրելով որ գերծէ նորա գլուխն ու զննէ: Արիստագորաս շու-

տով յորդորեց Ասիայի Յոյներին, որ Պարսից անարգ լուծը թօթափեն. իսկ ինքն անձամբ Յունաստան գնաց օգնութիւն խնդրելու համար: Առաջ առաջ նա գնաց Սպարտա: Սպարտայի քաղաքացիք իրանց երկուքին Թագաւորների հետ ժողովի մէջ նստած խորհրդածում էին. Արիստագորասն սկսաւ իւր խնդիրն արտայայտել մի երկար ու ճոռոմաբան ճառով: Սպարտացիք, որ սիրում էին կարճ խօսել, շատ անհամբերութեամբ էին լսում նորան. վերջապէս Կլէոմէն Թագաւորը կարճ կտրեց հարցնելով. «Ծովի ափից մինչև Շօշ ո՞րքան ճանապարհ է»: Արիստագորասը միամտութեամբ պատասխանեց. «Երեք ամիս կըքաշի»:— «Ով Միլետացի բարեկամ, պատասխանեց Թագաւորը զայրացմամբ, հեռացի՛ր մեր քաղաքից արևը մտնելուց առաջ»: Բայց Արիստագորասը պուկ չէր գալիս Թագաւորից. նա տրտում տխուր հետևում էր նորան և գնաց մինչև անգամ նորա տունը. այստեղ տեսաւ որ կանգնած է Թագաւորը, մօտն էլ իւր ութ տարեկան դուստրը և սկսաւ նորից թախանձել. իսկ Թագաւորը մերժում էր: Արիստագորասը վերջապէս փող առաջարկեց նորան, Կլէոմէնը դարձեալ անդրդուելի մնաց: Արիստագորաս գումարն աւելացրեց մինչ յիսուն տաղանդի (մօտ 60,000 մանէթի). այն ժամանակ փոքրիկ աղջիկն ասաց հօրը. «Հայրի՛կ հեռանանք այստեղից, թէ չէ այս օտարականը կը կաշառէ քեզ»: Կլէոմէնը հետևեց դստեր խորհրդին, և Արիստագորաս հարկադրուած էր թողնել Սպարտան.

Նա գնաց Աթէնք, և այստեղ աւելի յաջողութիւն գտաւ: Բոլոր Աթենացիք առանց այդ էլ զայրացած էին Պարսից գոռոզ Թագաւորի վերայ, որ ուզում էր դարձեալ Աթէնքին տէր կարգել աքսորուած բռնաւորին՝ Հիպպիասին: Նոքա Արիստագորասին քսան նաւ տուին, որոնց հետ վերադարձաւ նա Ասիա. այդտեղ արդէն ապստամբել էին Յոնիացիք: Նոքա առանց մեծ դժուարութեան Լիդիայի հին մայրաքաղաքը (Սարդիս) մտան ու այրեցին: Այս կատաղեցրեց Պարսիկներին. նոքա յարձակուեցան Յոյների վերայ և Միլետ գեղեցիկ քաղաքը կրակի մատնեցին: Այս անբաղդութեան մէջ Յոնիացիք և Աթէնացիք իրար վերայ էին ձգում

մեղքը․ նոցա մէջ երկպառակութիւն ծագեցաւ, և Աթէնացիք վերադարձան յետ։ Յոնիացիք նորէն նուաճուեցան, իսկ ապստամբութեան գլխաւոր ղեկավարները, Հիստէաս ու Արիստագորաս, սպանուեցան․ (500)։

Հատուած երկրորդ․

Ա․

ՅՈՒՆԱՍՏԱՆ․

1.

Յունաստանը մի վերին աստիճանի նշանաւոր երկիր է, թէ իւր բնութեամբ թէ պատմութեամբ։ Այդ երկրի մէջ ամեն մի քայլ զարթեցնում է մարդու մտքի մէջ մի որևէ փառաւոր յիշատակ․ կամ մի հերոսի քաջագործութիւն, կամ մի ճարտարապետի տաղանդ, կամ մի բանաստեղծի յափշտակիչ երևակայութիւն։

Հին Յունաստանը տարածութեամբ գրեթէ հաւասար էր այժմեան Յունաստանին։ Երեք կողմից ծովով շրջապատած ու խորշակաւորուած՝ նա իւր աշխարհագրական դրութեամբն ամենայաջող ու յարմար յանգամանքներ ունէր ուրիշ աշխարհների հետ հաղորդակցելու։ Արևելքից ու հարաւից նա շրջապատուած է Եգէյեան ծովով, Արևմուտքից Յոնիական ծովով․ միայն հիւսիսային կողմից կպած է ցամաք հողի հետ, որտեղ երկարաձգվում են Կամբունեան և Կերաւնեան լեռները։ Երկիրը լեռնային է, բայց բերրի ու ծաղկաւէտ, նա սքանչելի վայրեր ունի՝ ականակիտ գետակներով ու վտակներով ոռոգուած։ Օդը քաղցր է, երկինքը պայծառ ու զուարթ։ Յունաստանի բնակիչները նոյնչափ ևս ուրախ ու գեղեցիկ էին, որչափ նոցա երկիրը։

Հին Յունաստանը բնութիւնից երեք մասերի էր բաժանուած․ Հիւսիսային Յունաստան, Միջին Յունաստան կամ Հելլադա և Հարաւային Յունաստան կամ Պելոպոննէս թերակղզին։

1) Հիւսիսային Յունաստանը բաղկանում էր երկու նահանգներից. Թեսսալիա և Եպիրոս. սոքա իրարից բաժանվում են Պինդոսի լերանց շղթայով։ Թեսսալիայի մէջ գտնվում էր Ոլիմպոս լեառն, որի վերայ Յոյների կարծիքով բնակվում էին նոցա աստուածները և ժամանակ առ ժամանակ իջնելով լերան գագաթից՝ զբօսնում էին հովտում։ Եպիրոսի մէջ նշանաւոր էր Դոդոնա սրբազան քաղաքը, որ Յունաց ամենահին պատգամատեղին էր։ Այս երկու նահանգներն էլ բաժանուած էին մանր իշխանութեանց։

2) Հելլադան պարունակում էր ութ տէրութիւններ. (Ատտիկա, Մեգարա, Բէովտիա, Փովկիս, Լոկրիս, Դորիս, Ետոլիա, և Ակառնանիա)։ Սոցանից Ատտիկայի մէջն էր Աթէնք հռչակաւոր քաղաքը. Փովկիսի մէջ՝ Դելփիս սրբազան քաղաքը, Պառնաս լերան ստորոտում, որտեղ գտնվում էր Ապոլլոնի պատգամախօսը։

3) Պելոպոննէս նոյնպէս ութ նահանգների էր բաժանուած։ (Արկադիա, Լակոնիա, Մեսսենիա, Ելիս, Աքէա, Սիկիոն, Կորինթիա, Արգոլիս)։ Սոցանից Ելիսի մէջն էր Ոլիմպիա աւանը, որի մօտ կատարվում էին ոլիմպեան կոչուած համբաւաւոր խաղերը։

Յունաստանը շրջապատած է բազմաթիւ կղզիներով, որոց բնակիչները նոյնպէս Յոյներ էին։ (Նոցանից նշանաւորներն են.— Արեւմտեան կողմում Յոնիական ծովի մէջ՝ Կորկիրա (Կորֆու), Զակինթոս, Իթակա, Կեֆալոնիա և Կիւթերիա։ Արեւելեան կողմում, Եգէյեան ծովում Եւբէա, Կիկլադեան (շրջանաւոր) և Սպորադեան (ցրուած)։ Առանձնապէս գրուած են Կրետէ և Կիպրոս)։

Յոյները շատ տեղեր հիմնեցին գաղթականութիւններ։ Ոչ մի ազգ այնքան գաղթականութիւններ չի ունեցել, ինչքան Յոյները։ Գաղթականութեան պատճառը կամ բնակիչների բազմութիւնն էր լինում, կամ կառավարութեան դէմ ունեցած անբաւականութիւնը, կամ ներքին խռովութիւնները և կամ վաճառականական նպատակ։ Սկզբում Յոյն գաղթականներով լցուեցան փոքր Ասիայի եզերքը և դիմացի կղզիները. այդ տեղ բարեյաջող կլիմայի, հողի և տեղադրութեան շնորհիւ, Յոյները շուտով հարստացան ու ծաղկեցան։ Դորանից յետոյ Յոյն գաղթականութիւնները փոքր առ փոքր տարածուեցան Սև ծովի, Արքիպելագոսի և Միջերկրական ծովի նշանաւոր ափերում։ Բոլոր այդ գաղթականութիւններն այնու-

ամենայնիւ մշտական հաղորդակցութիւն ու յարաբերութիւններ ունէին իրանց հայրենիքի հետ։

2.

ՀԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Հնագոյն ժամանակներում Յոյները մի ազգային ամբողջութիւն չէին կազմում։ Յունաստանի բնակիչները բազմաթիւ ցեղեր էին՝ այլ և այլ ժամանակներում գաղթած Ասիայից, որ մարդկութեան օրրանն է։ Նկաւոր ցեղերը սկզբներում հասարակական և ընկերական կեանք չէին վարում։ Նախանձ, կռիւ, գողութիւն, ներքին պատերազմներ՝ անպակաս էին նոցա միջից։

Յունաստանի առաջին բնակիչները համարվում են Պելասգներ. սոքա ցրուած էին ոչ միայն բոլոր Յունաստանի մէջ, այլև Իտալիայի եզերքում և փոքր Ասիայում։ Պելասգները բիրտ ու անկիրթ ժողովուրդ էին։ Նոքա պարապում էին երկրագործութեամբ ու խաշնարածութեամբ, ուստի և բնակութեան տեղ էին ընտրում՝ պտղաբեր դաշտերն ու գետեզերքը։ Նոքա քարեայ շինուածներ ու բերդեր էին կանգնում, որոնցից մի քանիսը մինչև այսօր էլ կարելի է տեսնել նոցա բնակած տեղերում։ Պելասգաց կրօնը պարզ կրօն էր, նոքա Արեաց պէս պաշտում էին իրանց աստուածները բացարձակ բնութեան մէջ։ Նոցա գլխաւոր աստուածութիւնը Զևսն էր (Արամազդ), որ նոցա կարծիքով բնակվում էր Դոդոնայում, ուր որ քրմերը յայտնում էին նորա պատգամները և գուշակութիւններ էին անում՝ դիտելով թռչունների սաւառնումը, ծառերի սօսափիւնը և աղբիւրների կարկաչիւնը։

Ժամանակ անցնելով Պելասգացի անունը Հելլէն անուան փոխուեցաւ, և Յունաստանի բոլոր բնակիչներն այսպէս էին կոչվում։ Հելլէնացիք իրանց նախահայր համարում էին Դևկալիոնի որդի Հելլէնին։ Դևկալիոնը Յունաց Նոյ նահապետն է. Յոյները կարծում էին որ նա իւր որդիներով ու թոռներով ազատուել է Թեսսալիայի ջրհեղեղից։ Յոյների կարծիքով՝ Հելլէնի երկու որդիներից—Էոլից և Դորից, և երկու թոռներից—Յոնից և Աքէյից, առաջացել են Յունական գլխաւոր ցեղերը—Էոլիանք, Դորէա-

ցիք, Յոնիացիք և Աքէյանք։ Վերջին երկուքն առաւել նշանաւոր ցեղերն էին։ Դորէյեան ցեղի ներկայացուցիչը Ս պ ա ր տ ա ն էր, Յոնիական ցեղերը—Ա թ է ն ք ը։

Հին աւանդութիւններից երևում է, որ Յունաստանի մէջ գաղթական եկւորներ էլ են եղել՝ կրթութեամբ Յոյներից աւելի բարձր։ Նոքա ըստ մեծի մասին փոքր Ասիայից ու Եգիպտոսից էին եկել և մեծ ազդեցութիւն են ունեցել Յոյների կեանքի վերայ։ Ամենից երևելիքն են. 1) Կ ե կ ր ո պ ս Եգիպտացին, որ հիմնարկեց Աթէնքը. 2) Կ ա դ մ ո ս՝ փիւնիկեայի արքայորդին, որ հիմնարկեց Թեբէն. 3) Դանաոս՝ որ եկաւ Եգիպտոսից և բնակութիւն հաստատեց Արգոլիսի մէջ. 4) Պ ե լ ո պ ս՝ մի Լիւդիացի իշխանազն, որ բնակութեան տեղ ընտրեց Յունաստանի հարաւային թերակղզին, որև նորա անուամբ Պելոպոննէս կոչուեցաւ։ Սոքա են համարվում և յունական մանր իշխանութեանց հիմնարկուները։

3.

ԴԻՒՑԱԶԱՆՑ ԴԱՐ. (1300—1000 Քր. յառաջ).

Վաղ ժամանակներից Յունաստանի մէջ զարթեցաւ քաջագործութեանց սէրը և փառք վաստակելու ցանկութիւնը. այս պատճառով էլ ոյժը, անվեհերութիւնը, ճարպիկութիւնը՝ մեծ արժանաւորութիւն էին համարվում. ամենաթանգագին գանձը զէնքն էր։ Կնանիքն ու աղջկունքը տանը նստած գործում էին, իսկ այր մարդիկ պարապում էին խաղերով, կամ թափառում էին սարից սար, ձորից ձոր, որ երկիրը մաքրեն վայրենի գազաններից, սարսափելի աւազակներից, թունաւոր օձերից եայլն։ Բոլոր երկիրը դեռ շատ խոպան ու վայրենի էր. մեծ չարչարանք էր հարկաւոր բնութեան վնասակար արգելքներին յաղթելու համար։ Ով որ իրան մեծ ուժով, խելքով, անձնազոհութեամբ՝ ժողովրդին ծառայութիւններ էր անում, նորան դ ի ւ ց ա զ ն էին համարում, այսինքն աստուածների ազգից, որովհետև չէին հաւատում, թէ հասարակ մահկանացուները նորա արածները կարողանան անել։ Ամենից երևելի դիւցազն Հերկուլէսն է. աւանդութիւնը նորա մասին շատ զարմանալի քաջագործութիւններ է պատմում, որոնք բոլորն էլ ցոյց են տալիս, թէ նա չափազանց աշխատել է երկիրը աւազակներից ու վնասակար գազաններից մաքրելու համար։ Ասում էին որ Զևս աստուծոյ որդին է՝ մի աշխարհացի կնոջից. Հերա աստուածուհին, Զևսի կինը նորան ատելով՝ դեռ օրօրոցում եղած ժամանակը երկու օձ ուղարկեց, որ Հերկուլէսին թունաւորեն, բայց նա երկու ձեռքով բռնեց խեղդեց օձերին։ Զևս աստուածը կամենում էր, որ Հերկուլէսն անմահ լինի - դորա համար պէտք էր, որ նա Հերայի կաթից ուտի. բայց Հերան նախանձից չէր ուզում։ Մի օր էլ Հերայի քնած ժամանակն աստուածների պատգամաւոր Հերմէսն իջաւ երկիր Հերկուլեսին տարաւ երկինք և դրաւ Հերայի կուրծքին որ կաթ ծծի։ Այդ տղան յանկարծ պինդ կծեց Հերայի ծիծը. Հերան քնից վեր թռաւ, ծիծը դուրս պրծաւ տղայի բերանից և կաթը շատրուանի պէս ցայք տուեց երկնքի երեսով։ Այս է պատճառը, որ երկնքի վերայի երկայն ու պայծառ շերտը կոչվում է Ծ ի ր կ ա թ ի ն. (իսկ Հայերը դորան ասում են «Հետք յարդգողի» կամ «Դարմանգողի ճանապարհ»)։ Հերկուլէսը դեռ մանուկ ժամանակ մի ձիթենի պուկ տուեց, նորանից մի ահագին ցուպ շինեց, որով մի առիւծ սպանեց և այդ առիւծի մորթին հանելով իրան համար վերարկու շինեց։—Բացի Հերկուլէսից նշանաւոր էին էլի Թեսէոս, Պերսէաս, Յասոնն եայլն։

ԱՐԳՈՆԱՒՈՐԴԱՑ ԱՐՇԱՒԱՆՔ։ Քրիստոսի ծննդից մօտ 1200 տարի յառաջ՝ Թեսալիայի իշխան Յասոնը քաջագոյն և անուանի երիտասարդների հետ միասին ուղևորուեցաւ դէպի Կող'քիս, որ Սև ծովի արևելեան ափումն է։ Նոքա գնում էին ձեռք բերելու ո ս կ ե գ ե ղ մ ն։—Այս ոսկեգեղմի մասին առասպելը պատմում է, որ Բէովտիայի թագաւորի որդիքը—Փռիւքսոս և Հելլէ, իրանց խորթ և անգութ մօրից ազատուելու համար նստան ոսկեգեղմ ոչխարի վերայ և փախան։ Դարդանէլլի նեղուցից անցկենալու ժամանակ Հելլէ քոյրն ընկաւ ծովը խեղդուեցաւ, դորա համար էլ այն տեղը կոչուեցաւ Հ ե լ լ ե ս պ ո ն տ ո ս. իսկ Փռիւքսոս եղբայրն հասաւ Կող'քիս. այնտեղ ոչխարը զոհեց Արէս

աստուծոյն, իսկ ոսկեգեղմը ընծայեց Այէտէս թագաւորին, սա էլ Արէսին նուիրած անտառի մէջ կախեց և մօտը մի հրացայտ վիշապ ու շատ հսկաներ պահապան դրաւ: Յասոն, և իւր ընկերակիցները, որոնց մէջ գտնվում էին Յունաստանի երևելի դիւցազները—Հերկուլէս, Թեսէոս, Կաստոր, նաև Որփէոս երգիչն, մտան Արգո կոչուած նաւը և զանազան դժուարութիւնների յաղթելով՝ վերջապէս Կոլքիս հասան: Այդ տեղ Յասոն Այէտէսի դուստր Մեդէայի օգնութեամբ և հնարագիտութեամբ կարողացաւ ամէն վտանգների յաղթել և ոսկեգեղմը ստանալ: Դիւցազներն իրանց թանկագին կողոպուտով վերադարձան Յունաստան, և այս բաղդախնդիր ծովագնացութիւնը կոչուեցաւ Արգոնաւորդաց արշաւանք՝ նաւի անուամբ:

Շատ քաջագործ արշաւանքներ ունեցան Յոյն դիւցազները, բայց ամենից նշանաւորն էր Տրովական պատերազմը:

4.

ՏՐՈՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1200 թ. Ք.ր. յառաջ).

Տրովական պատերազմի պատմութիւնը զարդարուած է գեղեցիկ առասպելներով: Օրինակի համար այդ պատերազմի սկզբնապատճառը հետևեալն է համարվում:—

Թեսսալիայի թագաւոր Պելէասը տօնում էր իւր հարսանիքը ծովու աստուածուհի Թետիդայի հետ. հանդէսին հրաւիրուած էին բոլոր աստուածներն ու աստուածուհիքը, բացի Էրիս խռովութեան աստուածուհուց. ամէնքն էլ վախենում էին, թէ մի գուցէ նա իւր սովորութեան պէս վէճ ու խռովութիւն յարուցանէ ուրախութեան հանդիսի մէջ: Էրիսը մտածեց վրէժ հանել: Ջերմաջերմ ուրախութեան միջոցին՝ նա դուռը բաց արաւ և գետնի վերայով մի ոսկեայ խնձոր գլորեց այսպիսի վերնագրով. «ամենագեղեցկուհուն»: Աստուածուհիք երբ տեսան խնձորն ու վերնագիրը նոցա մէջ սաստիկ վէճ ծագեցաւ. ամեն մէկը պնդում էր թէ ինքն է ամենագեղեցկուհին: Իսկ ամենից աւելի խնձորին արժանի էին

համարում իրանց՝ Հերան, երկնքի թագուհին և Զևսի կինը, Պալլաս—Աթենաս, իմաստութեան աստուածուհին և Աֆրոդիտէն, սիրոյ աստուածուհին: Վէճը դադարեցնելու համար՝ Զևսը հրամայեց աստուածների պատգամաւոր Հերմէսին տանել նոցա Տրովայի արքայորդու, գեղեցիկ Պարիսի մօտ, որ վճռէ նոցա վէճը: Գեղեցիկ արքայորդին այդ միջոցին արածեցնում էր իւր հօր հօտերն Իդա լերան վերայ: Աստուածուհիք ներկայացան նորան և յայտնեցին իրանց վէճի պատճառը: Իւրաքանչիւր ոք աշխատում էր իրան գրաւել Պարիսին զանազան խոստումներով: Հերան խոստացաւ նորան բոլոր աշխարհի տէր շինել. Աթենասը խոստացաւ ճոխացնել նորան իմաստութեամբ բոլոր մարդկանց մէջ. իսկ Աֆրոդիտէն երդուեցաւ հասուցանել նորան աշխարհիս ամենագեղեցիկ կնոջը——Հեղինէին:

Պարիսը Աֆրոդիտէին ամենագեղեցիկն անուանեց և ոսկեայ խնձորը նորան տուաւ: Դորանից յետոյ Աֆրոդիտէն առաջնորդեց Պարիսին Սպարտա, ուր գնաց նա իբրև դեսպան: Նա հիւր եղաւ Մենելաոս թագաւորի տանը, որնոր ամուսնացած էր Հեղինէի վերայ: Մի օր Մենելաոսի բացակայութեան միջոցին՝ Պարիսը չյարգելով նորա հիւրընկալութիւնը՝ յափշտակեց նորա կինը և գանձերն ու փախաւ Տրովադա:

Յունաց բոլոր թագաւորներն ու իշխանները երդուեցան վրէժխնդիր լինելու Տրովացւոց և պատրաստուեցան արշաւելու նոցա վերայ: Նոքա ամէնքը հաւաքուեցան Բէովտիայի ափում Աւլիս նաւահանգիստը. Մենելաոս և իւր եղբայր Ագամեմնոն՝ Միկենայի թագաւորը՝ իւրեանց զօրքով. անվախ Դիոմեդ Արգոսացին, Այաքս Սալամինացին և Այաքս Լոկրիսացին, Պատրոկլէս Թեսսալիացին և այլ շատերը: Ամենից անուանի ու քաջ մարտիկն Աքիլլէս էր՝ Թեսսալիայից, որին ճարպիկութեան և անվեհերութեան պատճառով առիւծի էին նմանեցնում: Բայց հմտութեամբ և իմաստութեամբ ոչոքչէր կարող հաւասարուել ոչ Ոդիսևսի հետ, որ Իթակայի թագաւորն էր և ոչ Միսսենիացի Նեստորի հետ: Հաւաքուած յոյների թիւը հասնում էր հարիւր հազարի, իսկ նաւերի

թիւը մինչ հազար երկու հարիւրի: Ամենքը միաբերան Ագամեմնոնին իրանց առաջնորդ ընտրեցին. նա Յունաստանի ամենահզօր թագաւորն էր: Սակայն մի հակառակ քամի սաստիկ արգելք էր լինում նոցա յառաջ գնալու: Յոյները կարծում էին, որ այս բանը աստուածների տհաճութիւնիցն է. ուստի կանչեցին Կալխաս քուրմին և խորհուրդ հարցրին թէ ինչով աստուածների սիրտը գութ գցեն: Քուրմը պատասխանեց. «Միմիայն Իփիգենիայի, Ագամեմնոնի դստեր արիւնով, որ պէտքէ զոհուի Արտեմիսին»: Այս նորա համար էր պահանջվում, որ Ագամեմնոն որսի ժամանակ սպանել էր Արտեմիսին նուիրուած մի եղնիկ: Ամենքը սառեցան մնացին, չգիտէին ինչ անեն: Վերջոյ Ոդիսևս համոզեց Իփիգենիայի ծնողներին. և նա երբ պէտքէ զոհուէր՝ Արտեմիս անյայտացրեց նորան ամպերի մէջ. իսկ նորա տեղը աստուածուհին մի եղնիկ էր թողել, որին զոհեցին թէ չէ՝ իսկոյն յաջողակ հողմը փչեց. նաւատորմիղը ճանապարհ ընկաւ և անվտանգ հասաւ Տրովադայի ծովեզերքը: Տրովադան ամուր քաղաք էր շրջապատած բարձր պարիսպներով և աշտարակներով. նորա մէջ կանգնած էր Տրովական բազմաթիւ զօրքը, որի առաջնորդն էր Պրիամոսի երէց որդին Հեկտոր, որ քաջութեամբն ու ազնուութեամբ ոչ մի Յոյնից պակաս չէր: Տրովադացիք իրանց հետ դաշնակիցներ էլ ունէին: Հայոց Զարմայր նահապետն ևս նոցա թւումն էր:

Տրովադայի պաշարումն ամբողջ տասն տարի տևեց: Պաշարների պակասութեան պատճառով յունական զօրքը չէր կարող ներգործել ընդհանուր ուժով. այլ նա բաժան բաժան էր եղած. մի մասը շարունակ պէտքէ թափառէր սար ու ձոր ուտելիք գտնելու: Հակառակի պէս նոցա մէջ անհամաձայնութիւններ էլ պատահեցան. օրինակի համար Աքիլլէսն Ագամեմնոնի հետ կռուեց և էլ չէր կամենում մասնակցել և մինչև անգամ ուրախանում էր Յունաց անյաջողութեանց վերայ: Բայց երբ նորա ամենասիրելի ընկերը՝ Պատրոկլ'էս սպանուեցաւ Հեկտորից՝ զայրացաւ և իբրև կատաղած առիւծ դուրս եկաւ պատերազմի դաշտը. նա անխնայ մեռցնում էր ամեն դէմն եկողին. սակայն բոլոր նորա թափած արիւնը չէր կշ-

տացնում նորա ծարաւը: Նա որոնում էր Հեկտորին: Վերջապէս եկաւ նա, Պատրոկլ'էսի սպանողը, և սկսեցին մենամարտել: Որքան էլ քաջ էր Հեկտորը, բայց տեսնելով Աքիլլէսի զարհուրելի կատաղութիւնը՝ վախեցաւ և սկսեց փախչել: Բայց նորից սիրտ առաւ դարձաւ: Սարսափելի կռիւ սկսուեցաւ երկու հերոսների մէջ. երկար ժամանակ ոչ ոք չէր յաղթում. վերջապէս Աքիլլէսն իւր նիզակը խրեց Հեկտորի կոկորդը. նա հոգին տուեց: Մեռնելու ժամանակ Հեկտորը խնդրեց, որ իւր մարմինը չանպատուէ նա, քարշ տալով ասպարիզի մէջ. բայց Աքիլլէս ոչինչ գութ չունեցաւ դէպ իւր բարեկամի սպանիչը: Հեկտորի մարմինը նա կապեց իւր կառքի յետևից և մտրակելով ամեհի ձիանցը՝ քարշ տուեց բոլոր բանակի առաջև և յետոյ բաց ձգեց արիւնաշաղախ, որ գազաններն ու թռչունները ուտեն: Այս ողբալի տեսարանը կատարվում էր Տրովացւոց աչքի առաջ. նոքա լաց ու սուգ բարձին. բայց չէին կարող օգնել: Ծերունի Պրիամոսի սիրտը կտոր կտոր էր լինում:

Սորանից յետոյ Աքիլլէսը հանդիսով թաղեց Պատրոկլէսի մարմինը և ի յիշատակ նորա փառաւոր խաղեր սարքեց, ինչպէս որ սովորութիւն էր: Այսուամենայնիւ նորա սիրտը չէր հանդարտում. տխրութիւնից քունը չէր տանում: Մէկ գիշեր էլ տեղից վեր թռաւ, ձիանքը լծեց և Հեկտորի մարմինը երեք անգամ քարշ ածեց իւր ընկերի գերեզմանի շուրջը: Այն ինչ Պրիամոս ողբալով սիրելի որդու մահը՝ անմխիթար սգում էր և նորա համար, որ Հեկտորը մնում էր առանց պատուաւոր թաղման: Վերջապէս անճարացած վեր առաւ նա թանկագին ընծաներ և գիշերանց գնաց Աքիլլէսի վրանը. սա դեռ ևս նստած էր սեղանի մօտ և գլուխն արմունկին յեցած՝ մտածում էր: Գլուխը բարձրացրեց հերոսը, մռայլադէմ հայեացքով նայեց ծերունու վերայ, Պրիամոս յակտմայիցս դողաց, ընկաւ Աքիլլէսի ոտները և համբուրելով նորա ձեռքը ասում էր. «Ես չեմ կարող այլևս որդուս կեանքը խնդրել. տուր ինձ գոնէ նորա մարմինը: Տանը լալիս են կինը, մայրը, եղբարքը, իսկ ես, նորա հայրը, ընկածեմ ահա քո ոտները: Դու էլ ծերունի հայր ունիս. երևակայիր, որ նա լինէր նեղ վիճակի

մէջ և անօգնական, մի երիտասարդի առաջ չոքած. յիշիր Նորան և խղճա ինձ: Տես՛, ես համբուրում եմ այն ձեռքը որ սպանել է որդուս»: Այսպէս ասաց ծերունին և արտասուքը հեղեղուեցան աչքերից:

Պրիամոսի խօսքերն ու արտասուքը սաստիկ շարժեցին Աքիլլէսի սիրտը. Նա վերկացրեց ծերունուն և աշխատում էր մխիթարել Նորան: Յետոյ հրամայեց լուանալ ու մաքրել Հեկտորի մարմինը, ծածկեց Նորան ծիրանիով. անձամբ դրաւ կառքի վերայ և խոստացաւ Նաև պատերազմը դադարեցնել տասնու մէկ օր, որ Տրովադացիք կարողանան թաղել Հեկտորին պատուով ու հանդեսով:

Նշանակած ժամանակամիջոցից յետոյ կռիւը վերանորոգուեցաւ: Աքիլլէսն սպանուեցաւ Պարիսի Նետից: Յոյներն արդէն յուսահատուել ու սպառուել էին երկարատև պաշարմանից. Նոցանից շատերը ցանկանում էին վերադառնալ հայրենիք: Բայց Նոքա ուզում էին վերջին հնարքն էլ գործ դնել:—Ոդիսևսի խորհրդով Նոքա մի մեծ փայտեղէն ձի շինեցին, որի մէջ թագնուեցան երեսուն հերոսներ և ինքը Ոդիսևսը: Յետոյ Յոյները իրանց յուսահատած ձևացնելով՝ վրաններն այրեցին ու Նաւ Նստան հեռացան: Յունաց հեռանալը տեսնելով Տրովադացիք դուրս եկան քաղաքից և թափուեցան Նայելու կորստաբեր ձիու վերայ:

Այն միջոցին հովիւները մի Յոյն գերի բերին, որ բռնուել էր ծովի ափում, եղեգնուտի մէջ: Տրովադացիք ուրախացան և ստիպեցին Յոյնին, որ յայտնէ թէ այդ ինչ ձի է: Նենգաւոր Յոյնն էլ դորան էր սպասում. ողբում սուտանց հեկեկում էր. ամենաթշուառ մարդ էր համարում իրան և ոչ մի կերպով չէր ուզում գաղտնիքը յայտնել: «Ո՛չ, գոչում էր Նա, ինձ սպանեցէք, բայց ես չեմ կարող ասել այդ»: Այսպիսով աւելի էին հետաքրքրվում Տրովադացիք և պահանջում էին անշուշտ ասել գաղտնիքը: Վերջապէս Յոյնը զիջաւ: «Դուք գիտէք որ, ասաց Նա, Յոյներն այժմ վերադառնում են. այս ձին շինած են՝ նուէր ձեր քաղաքի պաշտպան աստուածուհուն, որին վշտացրել են Ոդիսևսն ու Դիոմէդը. Նպատակն է աստուածուհու սիրտը փափկացնել, որպէս զի

կարողանան անվտանգ Նաւել մինչ հայրենիք: Եթէ կարողանաք այս ձին անվնաս Ներս տանել ձեր քաղաքի մէջ, այն ժամանակ, քրմի բացատրութեան համեմատ, դուք անյաղթելի կըլինիք և կըտիրէք դրացի երկիրներին: Բայց այս իմանալով՝ Յոյներն այնքան ահագին են շինել ձին, որ չկարողանաք Ներս տանել»: Տրովադացիք հաւատացին խորամանկ Յոյնին՝ ձին դրին անիւների վերայ, դարպասի գլուխը քանդեցին և թոկերով քաշ տուին տարան Ներս ու կանգնեցրին աստուածուհու տաճարի առաջև: Բայց որքան ուրախալի էր ցերեկը, այնքան սարսափելի եղաւ գիշերը: Երբ բոլոր բնակիչները հանգիստ ու միամիտ քնած էին՝ գերի Յոյնը բացարաւ ձիու դուռը, և Նորանից դուրս եկան սպառազինուած մարդիկը, վազեցին քաղաքի դռները, պահնակներին սպանեցին և Ներս թողեցին դարանի մտած Յոյներին: Նոքա ջահերն առաջ սկսան կրակ տալ զանազան տեղերից բոլոր քաղաքը: Տրովադացիք հասկացան դաւաճանութիւնը, բայց ուշ էր: Ամեն մի փողոցում և ամեն մի տան մէջ յուսահատ զարհուրելի կռիւ էր: Ամբողջ քաղաքի մէջ բորբոքեցաւ բոցը: Ինչ որ պրծնում էր թշնամու սրից՝ կրակին էր զոհ դառնում: Միայն մի քանի մարդ ազատուեցաւ, որոց թւումն էր և բարեպաշտ Ենէասը: Սա էլ տեսնելով որ արդէն ամենայն ինչ կորած է և որ իւր տան մէջն էլ ընկել էր կրակը՝ շալակեց իւր զառամեալ հօրն՝ Անքիսէսին, բռնեց իւր որդի Ասքանիոսի ձեռքից և քաղաքից դուրս գնաց: Երկար շրջագայութիւնից յետոյ՝ վերջապէս Նա պատսպարուեցաւ Իտալիայում և հիմք դրաւ Հռովմի ապագայ Պետութեան: Իսկ չարաբաղդ Պրիամոսը կնոջ և որդւոց հետ թագ էր կացել պալատական մեհենի մէջ և փրկութիւն էր հայցում աստուածներին: Կարծում էր, որ այդ տեղ վտանգից ազատ էր. Բայց իզո՜ւր: Յոյները Ներս թափուեցան և սրախողխող կոտորեցին Նորան իւր որդւոց հետ միասին. իսկ կնոջն ու դստրներին գերի տարան: Հեղինէն դարձուցին Մենելաւոսին. իսկ բոլոր քաղաքը տակն ու վրայ կործանեցին:

Սակայն յաղթողներն էլ ըստ մեծի մասին յաջող վախճան չու-

նեցան։ Ոմանք մրրիկների ու աղէկտութեան հանդիպելով՝ չկարողացան իրանց հայրենիքը հասնիլ. ոմանք հասնելուց յետոյ սպանուեցան իրանց անհաւատարիմ կանանց ձեռքով, ինչպէս Ագամեմնոն. այլ ոմանք երկար ժամանակ շատ վտանգների մէջ թափառելուց յետոյ թէև հասան հայրենիք, բայց իրանց տունը տեղը յափշտակուած գտան և ստիպուեցան զէնքով յետ առնել, ինչպէս Ոդիսևս։

Սորա տունը իւր ծերունի հայրը՝ Լաէրտաս, որդին՝ Տելեմաք, և հաւատարիմ ու ազնիւ կինը՝ Պենելոպան՝ շատ նեղութեան մէջ էին անկրթ հարսնախօսների ձեռքից։ Նոցանից իւրաքանչիւրը կամենում էր կին առնել Պենելոպային, բայց նա հաւատարիմ համբերութեամբ սպասում էր իւր ամուսնու գալստեան և ամեն օր մի մի պատճառով յետաձգում էր վերջնական խօսքը։ Զոր օրինակ. նա իւր ձեռքին մի հիւսուածք ունէր. ասում էր երբ այս հիւսուածքն աւարտեմ մէկնու մէկից կընտրեմ. բայց որպէս զի խօսք չտայ նոցանից ո՛չ ոքի՝ ինչ որ ցերեկը հիւսում էր՝ գիշերը քանդում էր որ երբէք չաւարտուի—Վերջապէս տասն տարի ծովի երեսին կերպ կերպ նեղութիւններ ու թշուառութիւններ կրելուց յետոյ՝ Ոդիսևս եկաւ տուն հասաւ և հալածեց անկոչ հիւրերին։

Տրովական պատերազմը Յունաց վերայ մեծ ազդեցութիւն արաւ։ Բանաստեղծները նորա հերոսութեանց ու արկածների պատմութիւնը զարդարեցին գեղեցիկ երգերով, որոնք հարիւրաւոր տարիներ բերանէ բերան երգվում էին։ Ամենից ընդարձակ երգած է Յունաց անմահ բանաստեղծը՝ Հոմերոս՝ կենդանի, վառվռուն ու յափշտակիչ խօսքերով։ Նորա երգերն ամեն ժամանակ երգվում էին մեծի ու պստիկի առաջև. յիշեցնում էին նախնեաց դիւցազնութիւնը, մահից չվախենալը, բարեկամական սէրը, հաւատարմութիւնը, նոցա իմաստութիւնն ու խորամանկութիւնը, կռիւ և յաղթող երիտասարդների ծերերին տուած յարգանքը, դիւցազանց օտարականներին ցոյց տուած հիւրասիրութիւնը, և այլն։ Այս երգերից Յոյները սովորում էին որ մէկ ազգ են և որ ամենքը միասին ինչ են արել և ինչ կարող են անել։ Հոմերոսի գիրքը Յունաց համար մէկ նուիրական մատեան էր։ Հոմերոսի երգերը երկու գրքի մէջ են. մէկում նկարագրուած է Տրովադայի մօտ հերոսնե-

րի մենամարտութիւնը, միւսում՝ Ոդիսևսի տասնամեայ արկածները ծովի վերայ։

5.

ԴՈՐԻԱՑԻՈՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (մօտ. 1100 Թ. Քր. յառաջ.)

Տրովական պատերազմից յետոյ դեռ ևս երկիրը կարգի տակ չմտած՝ նորանոր խռովութիւններ ու անկարգութիւններ բարձրացան Յունաստանի մէջ։ Նոր Յունաստան եկած ազգերը ճնշեցին փախցրին հին բնակիչներին. սոքա էլ յարձակուեցան ուրիշ իրանցից տկար ժողովուրդների վերայ և հարկադրեցին նոցա գաղթել այլ տեղեր։

Այս տեղափոխութիւնն ամենից առաջ սկսուեցաւ Եպիրոս նահանգում։ Այստեղ բնակուող Թեսսալիացիք Պինդոս լեռան անցան և իրանց բնակած տեղը Թեսսալիա կոչեցին. իսկ այդ տեղի բնակիչ Եոլացիք մտան Բէովտիա և տեղացիներին դուրս քշեցին։ Ոլիմպոսի վերայ բնակուող Դորիացիք տեղի տալով նոր եկուորների առաջ՝ յետ քաշուեցան և բնակութիւն հաստատեցին Պառնաս և Ետա լեռանց մէջ տեղը։ Այսպիսի գաղթականութիւնները բաւականին երկար տեւեցին։ Նոցանից ամենանշանաւորն է Դորիացւոց Պելոպոննէս գաղթելը, կամ Հերակլեանց վերադարձը, վասն զի այս գաղթականութեան առաջնորդները Հերակլէսի սերնդից էին համարվում։

1104 Թ. մօտիկ մի խումբ Դորիացիք Պառնասի լեռնոտից իջնելով՝ արշաւեցին դէպի արևմուտք ու դէպի հարաւ։ Նոքա տիրեցին համարեա ամբողջ Պելոպոննէսին։ Յոնիացիք նոցանից նեղուելով փախան Ատտիկէ իրանց ցեղակիցների մօտ։ Դորիացիք հետևեցին նոցա, և Մեգարիսն առնելով՝ Աթէնքի վերայ գնացին։ Դելֆեան պատգամախօսը յաղթութիւն խոստացաւ այն կողմին, որ կողմի թագաւորն առաջ կըմեռնի։ Այս պատգամը լսածին պէս Աթենացւոց թագաւոր Կոդրոսը հայրենիքն ազատելու համար՝ վճռեց իւր անձը զոհել. նա շորերը փոխեց, իբրև հասարակ զինուոր գնաց թշնամու բանակը, դիտմամբ կռիւ բացարաւ ու սպա-

նուեցաւ: Աթենացիք այս իմանալով դեսպան ուղարկեցին և Թագաւորի մարմինը խնդրեցին: Դորիացիք զարհուրելով այս չարագուշակ պատահմունքից՝ վհատեցան և Աթէնքի սահմաններից հեռացան:

Այս խռովութեանց ժամանակ շատ Յոյներ հայրենիքից ելան և զանազան տեղեր գաղթականութիւններ հիմնեցին, որոնցից երևելիքն էին փոքր Ասիայի ափերում: Իսկ Յունաստանի մէջ կազմուեցան բազմաթիւ մանր իշխանութիւններ:

6.

ՅՈՒՆԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔԸ.

Թէև Յոյները բաժանուած էին մանր մանր իրարից անկախ տէրութեանց, բայց բացի ընդհանուր լեզուից, բացի միանման սովորութիւններից, ունէին ուրիշ ընդհանուր կապեր էլ, որոնցով պահպանվում էր նոցա միութիւնը. այս կապերն էին-կրօնըն առհասարակ և պատգամին հաւատալը մանաւորապէս, ամֆիկտիոնեան ժողովները և հասարակական խաղերը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐՕՆ. Յոյները մէկ Աստուած չէին ճանաչում, այլ հաւատում էին բազմաթիւ աստուածների և աստուածուհիների, որոնք ներկայացնում էին շրջակայ բնութեան օգտակար կամ վնասակար զօրութիւնները: Իրանց վեհ զգացմունքով ամեն մի վսեմական ու ազդու երևոյթի մէջ աստուածային ներգործութիւն էին ճանաչում. մարդուս կեանքի, փոթորկի թնդման, հողմերի հնչման, ջրերի կարկաչման մէջ նոքա նկատում էին աստուածային զօրութեան ներկայութիւնը: Նոքա աստուածները մարդու կերպարանքով ու բնութեամբ էին երևակայում, միայն թէ կատարելագոյն յատկութիւններով: Ով որ առաքինութեան ճանապարհով կ՚երթար՝ սիրելի կըլինէր նոցա իսկ ով յանցաւոր կըլինէր՝ պատիժ կ՚ստանար: Աստուածների համար տաճարներ էին շինվում, որոց մէջ ծառայում էին քուրմերը. նոքա մեկնում էին կրօնի օրէնքները, յայտնում էին ժողովրդին աստուածների կամքը և

մեծ յարգանք էին վայելում ժողովրդի մէջ: Յոյները հաւատացնում էին, որ մեռնելուց յետոյ հատուցումն է լինում մարդկանց իրանց գործերին համեմատ: Բարի մարդկանց ստուերները, նոցա կարծիքով, շրջում էին Ե լ ի ւ ս ե ա ն դ ա շ տ ու մ՝ անպատմելի երանութեան մէջ. իսկ չարերի ստուերները մնում էին Տ ա ր տ ա ր ո ս ի մէջ, որ մի վշտալից անդունդ էր՝ մշտնջենական չարչարանքներով լի:

Յունական աստուածները համարւում մի մեծ գերդաստանի անդամներն էին:—Ամենից գլխաւորն էր Ո ւ ր ա ն ո ս ը կամ Երկինքը, որից ծագել է ամենայն ինչ: Նորա որդին Ք ր ո ն ո ս (որ նշանակն է ամենակերիչ ժամանակը), ըստ աւանդութեան, կուլ տուաւ իւր որդիներին. սոցանից խորամանկութեամբ ազատուեցաւ Զ և ս ը և սկսաւ թագաւորել Ոլիմպոս լերան վերայ. նա վարում էր աստուածների և մարդկանց գործերը: Նորանից բարձր էր միայն Ֆ ա թ ու մ ը կամ օրհասը, որպէս անողոքելի կարևորութիւն: Զևսի կին Հ ե ր ա ն չար նախանձոտ և կռւազար էր: Ծովերի աստուածը Պ ո ս ի դ ո ն ն էր. պատերազմի աստուածը՝ Ա ր է ս ը: Հ ե ր մ է ս ը պատգամաւոր և միջնորդ էր աստուածների և մարդկանց մէջ. նա էր լոյսը երկինք հանում, մարդկանց կեանքի մէջ մտցնում և ստուերների թագաւորութիւնը տանում: Յոյները նորան երևակայում էին ձեռքին մունետիկի գաւազան և կրունկների վերայ թևեր: Երկրի պտղաբերութիւն տուողը և հովանաւորողը՝ Դ ե մ ե տ ր ն էր: Ա պ ո լ լ ո ն ը՝ լուսոյ և արեգակի աստուածն էր, միևնոյն ժամանակ գեղարւեստի ներկայացուցիչը: Պ ա լ լ ա ս-Ա թ ե ն ա ս ը, որ զինուորուած դուրս էր եկել Զևսի գլխից, գիտութեանց և ճարտարութեանց աստուածուհին էր և քաղաքների պաշտպանը. և այլն և այլն:

Այսպէս Յոյները բոլոր բնութիւնը ներկայացնում էին իրանց՝ կենդանի և բարձրագոյն արարածներով լի: Իւրաքանչիւր շարժումն նոցա համար որև է աստուածութեան մի ակնարկութիւն էր:

Աստուածները յայտնում էին մարդկանց իրանց կամքը երկնքի կամ երկրի վերայ ցոյց տուած նշաններով, բայց առաւելապէս պատգամներով:—

2) ՊԱՏԳԱՄ. Յոյներն ուրիշ հին ազգերի նման պարզմտութեամբ հաւատում էին թէ աստուածները ժամանակ առ ժամանակ ցած են գալիս և իրանց կամքը յայտնում քրմերի միջնոր-

գութեամբ։ Ամեն անգամ, երբ մարդիկ իրանց խելքով չէին կարող մի հաստատուն վճիռ տալ կեանքի նշանաւոր դէպքերում՝ գնում էին մեհեանները՝ աստուածների խորհուրդը հարցնելու. այստեղ զանազան զօհաբերութիւններով աշխատում էին նախապէս նոցա համակրութիւնը գրաւել, աչքը քաղցրացնել։ Աստուածներն էլ քրմերի բերանով յայտնում էին իրանց կամքը, որ պատգամ էր կոչվում։ Օրէնսդիրները, զօրապետները, թագաւորները յարգում էին պատգամները, բայց շատ անգամ օգուտ էին քաղում նոցանից իրանց անձնական նպատակներին հասնելու համար. նոքա շատ անգամ կաշառում էին պատգամախօսին, որ իրանց համար ձեռնտու պատասխաններ տար։

Յունաստանի մէջ շատ կային այդպիսի նուիրական պատգամատեղեր, բայց ամենից հինը էր Զևսի տաճարը Դոդոնայի մէջ Եպիրոս նահանգում։ Աւանդութիւնն ասում է, թէ մի սև աղաւնի Եգիպտոսից եկած էր այդ տեղ և բարձր կաղնու վերայից մարդու ձայնով յայտնած Զևսի կամքը, թէ նա ընտրում է այդ տեղը իւր գուշակութեանց համար։ Ամենից հռչակաւոր պատգամատեղը Դելփիումն էր, Միջին Յունաստանում, Պառնասի ստորոտում։ Այդ լեռան էջքի վերայ մի ճեղքուածք կար, որտեղից մի տեսակ հեղձուցիչ ու թմրեցուցիչ գոլորշի էր ելնում։ Յոյները կարծում էին թէ Ապոլլոնն այդ տեղն իրան համար պատգամատեղի է ընտրել։ Ճեղքուածքի վերայ տաճար շինուեցաւ և սա այնչափ համբաւ ստացաւ, որ ամեն կողմից Յոյներն այնտեղ էին գնում խորհուրդ հարցնելու, տանելով իրանց հետ մեծամեծ պարգեներ։ Պատգամն այսպէս կ՚իմացուէր. — Պ ի ւ թ ի ա ն — քրմուհին — դափնիներով պսակուած նստում էր ճեղքուածքի վերայ դրուած ոսկեղէն եռոտանու վերայ. կարճ ժամանակից յետոյ նա ինք զինքը կորցնում էր գոլորշու զօրութիւնից, սկսում էր դողալ, երեսի գոյնն այլայլվում էր, բերանը փրփրում էր, մազերը քաշմփուշ էին լինում, և այսպիսի սարսափելի դրութեան մէջ՝ սկսում էր կցկտուր խօսքեր արտաբերել։ Քրմերը զգուշութեամբ այս խօսքերը նշանակելով և նոցանից գուշակութիւններ կազմելով՝ հարց-

նողին էին տալիս։ Շատ անգամ այս գուշակութիւններն ուղիղ էին լինում, որովհետև խորամանկ քրմերն առաջուց գործի հանգամանքներին լաւ տեղեկանում էին, ուստի և հաւանական պատասխաններ էին տալիս. իսկ կասկածելի պարագաներում իրանք էլ երկդիմի պատասխաններ էին տալիս, ինչպէս օրինակ Կրէսոսի համար արած գուշակութիւնը։

3) ԱՄՖԻԿՏԻՈՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ մեծ կապ ունէր կրօնի հետ։ Շատ հին ժամանակներից Յոյն դրացի տէրութիւնները դաշն էին կապում իրար հետ կրօնական տօնախմբութիւններ կատարելու և տաճարները պաշտպանելու համար։ Այս նպատակով կազմուած ժողովները կոչվում էին ա մ ֆ ի կ տ ի ո ն ե ա ն կամ դ ր ա ց ե ա ց։ Նշանաւոր ժողովները կատարվում էին Կլաւրէա կղզու վերայ՝ Պոսիդոնի տաճարի մօտ և Դելոս կղզու վերայ ի պատիւ Ապոլլոնի. բայց ամենաերևելի ժողովները գումարվում էին Դել՛փիում։ Այս դաշնակցութեանը մասնակից էին տասներկու տէրութիւններ։ Նոցա պատգամաւորները սովորաբար տարին երկու անգամ էին ժողովվում, գարունքին՝ Դելփիում, իսկ աշունքին՝ Թերմոպիլէյում, միջոցներ էին մտածում Ապոլլոնի տաճարը վայելչապէս պահպանելու համար, վարձատրում էին նորա պաշտպաններին և պատժում արհամարհողներին։ Դելփիի մէջ, իբրև սրբազան և անմերձենալի տեղում, պահվում էին դաշնակից տէրութեանց գանձերը։

4) ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ։ Վաղ ժամանակներում, երբ որ մարդու գլխաւոր արժանաւորութիւնը նորա մարմնական ոյժն էր համարվում՝ Յոյները նշանակած էին այնպիսի հրապարակական հանդէսներ, որտեղ փորձում էին իրանց ոյժն ու ճարպիկութիւնը։ Այս խաղերը կատարվում էին կամ ի պատիւ աստուածների և կամ ի յիշատակ մեռեալների, ինչպէս օրինակ Աքիլլեսն արաւ Պատրոկլէսի յիշատակը յարգելու համար։ Հանդէսներն ըստ մեծի մասին լինում էին այս կամ այն նուիրական տեղում։ Իւրաքանչիւր հանդիսի սկզբում և վախճանում աստուածներին զոհ էին մատուցանում։

Պելոպոնէսի արեւմտեան մասում, Էլիս նահանգում, գեղադարդ Պենէաս գետակի եզերքում, հին ժամանակներից մէկ անտառ կար։ Այս անտառի կողքին գտնվում էր Ոլիմպիա դաշտը, որ նուիրած էր Զեւսին։ Իւրաքանչիւր չորս տարուց յետոյ յուլիս ամսին կատարվում էր այդ հանդէսը, ուր կարող էր մասնակցել ամեն մի ազատ և պատուաւոր Յոյն։ Այս միջոցին բոլոր թշնամական գործողութիւնները դադարում էին, ամենախիստ ոսոխներն անգամ բարեկանում էին խաղերի մէջ։ Այստեղ Յոյները շատ փոխադարձ օգուտներ էին քաղում, խորհում էին իրանց աշխարհի բարելաւութեան միջոցների վերայ, խելք խելքի էին տալիս և առհասարակ մտքերի փոխանակութիւն էր լինում. ուստի Ոլիմպիական խաղերն այնպէս մեծ նուիրականութիւն ունէին ամբողջ Յոյն ազգի աչքում, որ բոլոր Էլիսեան նահանգը համարվում էր ամենայն Յունաց ընդհանուր գանձարանը, որ ամենատեսակ խռովութեանց ու կռիւների ժամանակն անգամ խաղաղ ու անձեռնմխելի էր մնում։

Խաղերը հինգ օր էին տեւում և գլխաւորաբար մարմնամարժական, ըմբշական ու ասպետական մրցութիւններ էին, ինչպէս՝ վազել, ոստնել, ձի նստել, կառք քշել ևայլն։ Խաղերին ներկայ էին լինում անթիւ հանդիսականներ, որոնք աղմկալից աղաղակներով գովաբանում էին յաղթողներին։ Վերջում ընծաներ էին բաժանվում. յաղթողն ստանում էր ձիթենու պսակ. քաջութեան վարձատրութեանը համար նուիրուած այդ պարզ ընծան աւելի թանգ էր գնահատվում, քան թագաւորական պսակի թագը. ձիթենու պսակը փառքն էր ոչ միայն նորան ստացողի, այլև նորա բոլոր գերդաստանի և նորա հայրենեաց, որ մեծաշուք հանդիսով ընդունում էր յաղթողին, նշանակում էր ի պատիւ նորա նոր խաղեր և պահում նորան հասարակաց հաշուով։ Հռոդոսի քաղաքացի Դիագորասը, տեսնելով որ իւր երկու որդիքն էլ յաղթող եղան՝ մեռաւ ուրախութիւնից. նոյն ժամայն բոլոր հանդիսականները գոչեցին. «Մեռի՛ր, Դիագորաս, քեզ այլևս ոչինչ չի մնում ցանկալ»։

Սակայն տօնախմբութիւնները միմիայն մարմնի վարժութիւն-

ներով չէին սահմանափակվում։ Այստեղ հրաւիրվում էին նաև բանաստեղծներ, պերճախօսներ, ճարտարապետներ և պատմաբաններ, որոնք աշխատում էին մէկը միւսին գերազանցել իրանց տաղանդով. այսպիսով կատարվում էր և մտաւոր մրցութիւն։ Էսքիլէս, Սոֆոկլէս, Եւրիպիդէս, ականաւոր ողբերգուները արմաւենի պսակներ ստացան իրանց շարադրութեանց համար։ Հերոդոտս պատմաբանը նոյնպէս կարդացել է Ոլիմպիական խաղերի ժամանակ իւր հռչակաւոր շարադրութեան առանձին հատուածները։

Ոլիմպիական խաղերն այնքան մեծ նշանակութիւն ունէին Յունաց մէջ, որ նոքա իրանց տարեթիւը այդ խաղերովն էին հաշւում։ Մէկ խաղից մինչև միւսի միջոցը, որ չորս տարի էր, համարվում էր մէկ Ոլիմպիադ։ Առաջին Ոլիմպիադն սկսվում է 776 թուականից։

Բացի Ոլիմպիականից կատարվում էին և Պիւթիական խաղերը՝ ի պատիւ Ապոլոնի. Իսթմեան—ի պատիւ Պոսիդոնի և Նեմէական— ի պատիւ Զեւսի։

Թեբացի բանաստեղծ Պինդարոս (522—422) շատ գրաւիչ կերպով երգած է յիշեալ խաղերի մէջ հռչակուած հերոսներին։

Բ.

ՍՊԱՐՏԱ

1.

Պելոպոնէսում, Եւրոտաս գետի շքեղազարդ եզերքում շինուած էր Սպարտա հին քաղաքը, որ ոչ պարիսպ ունէր, ոչ դարպասներ. դա Լակոնիայի մայրաքաղաքն էր։ Երբ որ Դորիացիք Պելոպոնէսը բաժանեցին՝ Լակոնիան ընկաւ երկուորեակ եղբայրներին՝ Պրոկլէսին ու Եւրիսթենէսին. այդ ժամանակուանից իվեր Սպարտայի մէջ սովորաբար երկու թագաւորներ էին իշխում, մէկը Պրոկլէսի ցեղից, միւսը Եւրիսթենէսի։ Տիրող Դորիացիք

համարւում էին բուն Սպարտացիք, որոնք և ժողովրդի ազնուական դասն էին կազմում։ Բացի դորանից երկու դաս բնակիչներ էլ կային. 1) Պ ե ր ի և ք ն ե ր, (շրջակայքի բնակիչները) որ երկրի նախկին բնակիչներն էին և յօժարակամ հնազանդուել էին Դորիացւոց իշխանութեանը. սոքա Սպարտայի շրջակայքում հողեր ունէին, թէպէտ և հարկ էին տալիս, զինուորական ծառայութիւն էին անում և երկրի վարչութեան մէջ ոչինչ ձայն չունէին։ 2) Հ ե լ ո տ ն ե ր (Հելոս քաղաքի բնակիչները), որոնք ընդդիմադրել էին Դորիացիներին և նուաճուած էին զէնքի զօրութեամբ միայն. նոքա ստրուկ էին և պարտաւոր էին մշակել հասարակաց հողերը։ Յանդուգն Սպարտացիք խլել էին նոցա ազատութեան հետ և նոցա հողերը։

Սակայն կարճ ժամանակում Սպարտայի մէջ խռովութիւններ վերկացան. բանն այնտեղ հասաւ, որ արիւնահեղ պատերազմներ էլ եղան, որոնց մէջ մեռաւ մինչև անգամ թագաւորներից մէկը։ Մի քանի ճարպիկ ազնուականներ յափշտակել էին հասարակական հողերը, այն ինչ ժողովրդի ամենամեծ մասը չքաւորութեան մէջ տանջվում էր։ Այս պատճառով զրկուած ու հարստահարուած ժողովուրդը ստէպ ստէպ գլուխ էր բարձրացնում ազնուականների ինքնիշխանութեան դէմ։ Հաստատ օրէնքներ չկային. ամեն մարդ ըստ հաճոյից էր վարվում. թագաւորի իրաւունքները յարգող չկար։ Այսպիսի ցաւալի դրութեան մէջ՝ Սպարտացիք զգացին որոշ օրէնքներ ունենալու կարիքը. այդ օրէնքները սահմանող էր հարկաւոր։ Նոքա դիմեցին Լիկուրգոսին, որ արդարասէր ու մեծ խելքի տէր մարդ էր և լաւ անուն ունէր իւր հայրենակիցների մէջ։

2.

ԼԻԿՈՒՐԳՈՍ ԵՒ ԻՒՐ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ. (880).

Լիկուրգոս թագաւորական ցեղից էր. ներքին գժտութեանց ժամանակ նա հայրենիքը թողեց և ճանապարհորդեց մի քանի հեռ-

ռաւոր երկիրներ։ Նա բաւականին մնաց Կրետէ կղզում, ուր որ ուսումնասիրեց հին օրէնսդիր Մինոսի կարգադրութիւնները. այցելեց Եգիպտոս և փոքր Ասիայի շատ տէրութիւնները։ Շատ կարելի է նա դեռ կըշարունակէր ճանապարհորդել այլև այլ ազգերի վարքն ու բարքն ուսումնասիրելու համար, եթէ հայրենակիցները չաղաչէին նորան վերադառնալ։ Նա դարձաւ։ Լիկուրգոս առաջուց էլ ցանկութիւն ունէր բարեկարգութիւն մտցնել իւր հայրենիքում. այժմ զանազան տէրութիւններ ման եկած և կարգեր տեսած՝ լաւ զգում էր, որ Սպարտայի մէջ մեծամեծ փոփոխութիւններ կան անելու։

Գործի աւելի յաջողութեան համար Լիկուրգոս գնաց Դելփիս, Ապոլլոնի տաճարը, պատգամախօսի կարծիքն իմանալու համար։ Նա զոհ մատոյց, և երբ տաճարի շէմքից ոտքը ներս էր դնում՝ Պիւթիան յետագայ խօսքերն ասաց.

«Ո՛վ Լիկուրգոս, դու գալիս ես իմ օրհնեալ տաճարը՝ Զևսից ու բոլոր երկնայիններից սիրուած։ Ինքս ինձ հարցնում եմ. ինչպէս ողջունեմ քեզ, իբրև աստուծո՞յ, թէ իբրև մարդու. բայց մտածում եմ, որ դու աւելի աստուած ես քան թէ մարդ, ո՛վ Լիկուրգոս»։

Միևնոյն ժամանակը Պիւթիան յայտնեց, որ Ապոլլոնը հաւան է բոլոր նորա մտադրութեանց ու սահմանելի օրէնքներին՝ հայրենիքը բարեկարգելու համար։

Ամենից առաջ Լիկուրգոս կարգի դրաւ տէրութեան կառավարութիւնը։ Երկու թագաւորները դարձեալ մնացին իրանց իշխանութեան մէջ—որդւոց որդի. բայց նոցա իրաւունքը սահմանափակ էր. նոքա միշտ պէտքէ խորհրդակցէին Ծ ե ր ա կ ո ւ տ ի հետ։ Ծերակոյտը բաղկանում էր երեսուն անդամից.—երկու թագաւորները և 28 հոգի փորձառու և պատկառելի ծերեր. այս ծերերին ազգն էր ընտրում մի անգամ ընդ միշտ մինչև նոցա մահը. նոքա գոնէ վաթսնամեայ պէտքէ լինէին։ Մինչև այդ ժամանակ թագաւորներն ու ժողովուրդը մշտական խռովութեանց մէջ էին. երկիրը տառապում էր երկու կուսակցութեանց մէջ. ծերակոյտն այդ

երկու մրցող զօրութեանց հսկողն ու չափաւորիչը դարձաւ՝ ամէն մէկին իւր սահմանի մէջ պահելով: Ծերակոյտն իրաւունք ունէր միայն նոր օրէնքներ առաջարկել ժողովրդին. բայց ժողովուրդը կարող էր ընդունել կամ մերժել: Բացի ծերակուտից ժողովուրդն ընտրում էր հինգ հոգի Էփորոսներ ևս, որոնք պարտաւոր էին հսկել ազգի բարքի վերայ: Նոքա իբրև ժողովրդի երեսփոխաններ բացարձակ իշխանութիւն ունէին նաև թագաւորների ու ծերակուտի վերայ հսկելու, այլև յանցաւորներին դատելու ու պատժելու:

Լիկուրգոսի երկրորդ և ամենավստահ կարգադրութիւնն էր հողերի և անշարժ կայքերի բաժանումն: Այն ժամանակ տէրութեան մէջ կայքերի անհաւասարութիւնը շատ մեծ էր. հարստութիւնը դիզուած էր միայն շատ քիչ մարդկանց ձեռքում, այն ինչ երկիրը ծանրաբեռնուած էր բազմաթիւ աղքատներով ու տնանկներով: Սրանք թաղուած էին զեղխութեան մէջ, այլ ոմանք տառապում էին զարհուրելի չքաւորութիւնից: Այսպիսի չարիքը բառնալու մտքով Լիկուրգոս համոզեց իւր հայրենակիցներին բոլոր անշարժ կայքերը դարձնել ընդհանուր սեփականութիւն, և յետոյ նորից բաժանել ամենքի վերայ հաւասարապէս: Սպարտայի շրջակայ հողերը 900 մեծ բաժին արուեցան--և տրուեցան Սպարտացիներին. իսկ մնացածը 30000 փոքր կտոր արուեցաւ և բաժանուեցաւ Լակեդեմոնացւոց: Այս բաժինները պէտք է ժառանգական լինէին և ոչ ոք իրաւունք չունէր իրան բաժինը ծախելու կամ ուրիշինը գնելու: Հելոտներն, իբրև գերի, ոչինչ չստացան:

Մի անգամ Լիկուրգոս անցնում էր արտերի մօտով և տեսաւ արտերի մէջ նոր հնձած գարին շար ի շար հաւասարաչափ կոյտերով դիզած, նա ասաց ժպտալով. «Կարելի է մտածել որ ամբողջ Լակոնիան պատկանում է նոր բաժանուած բազմաթիւ եղբարց»:

Այսքանը հերիք չէր: Կատարեալ հաւասարութեան համար Լիկուրգոս մտածում էր բաժանել շարժական կայքերն էլ: Բայց ոսկեղէնն ու արծաթեղէնը կարող էին թագցնել, և ով կըհամաձայնէր այդպիսի թանգագին իրեղէններն ուրիշի տալ. այս պատճառով Լիկուրգոս ոսկեայ ու արծաթեայ դրամի փոխանակ սահմանեց երկաթեայ դրամի գործածութիւնը. դա շատ ծանր էր լինում, այնպէս որ 250 մանեթի չափ գումարը՝ մի մեծ սենեակ էր հարկաւոր որ մէջը տեղաւորուէր. և որքա՛ն դժուար էր հետը մանածել այդ փողը: Ոսկու և արծաթի գործածութիւնը վերանալով՝ վերացան և շատ աւելորդ արհեստներ, գողութիւնը, խաբէութիւնը: Օտարները դադարեցան Սպարտացւոց հետ առուտուր անելու. շռայլութեան նիւթեր չէին մտնում Սպարտա. ոչ ոք ցանկութիւն չունէր նոցա երկաթի դրամի հետ փոխել իւր ապրանքը:

Շռայլութիւնն իսպառ վերացնելու համար Լիկուրգոսը կարգեց հասարական սեղան. ոչ ոք, մինչև անգամ թագաւորները, իրաւունք չունէին տանը ճաշելու: Օրուան որոշ ժամանակը իւրաքանչիւր ոք պէտք է գար հրապարակը, ուրտեղ սարքած էին սեղանները: Ամեն սեղանի 14 հոգի կընստէին: Ամեն մի անդամ պարտաւոր էր ամսէնը մի անգամ հասուցանել հասարակական սեղանին որոշուած չափով գարի, ալիւր, գինի, պանիր, թուզ և մի քանի դրամ բանջարեղէնի համար: Բացի սորանից ամեն զոհաբեր իւր զոհի մի մասը տալիս էր հասարակական սեղանին և ամեն որսորդ—իւր որսի մի մասը: Սպարտացւոց սիրելի կերակուրն էր հռչակաւոր Սև ապուրը, որ պատրաստվում էր խողի մսից, արիւնից, քացախից և աղից:

Մի թագաւոր շատ լսած լինելով այդ ապուրի համբաւը, մի Սպարտացի խոհարար կանչեց, որ իրան համար եփէ. նա պատրաստեց, բայց թագաւորին ամենևին դուր չեկաւ ապուրը: «Ես գիտէի, որ այդպէս կըլինի, ասաց խոհարարը, մեր ապուրը համեղ կըթուի միայն նորան, ով որ լաւ գործած և ապա քաղցած կըլինի»:

Հասարակական սեղանի վերայ շատ անգամ մանկանց էլ էին բերում, որ այնտեղ մեծերից սովորէին կարգ, հանդարտութիւն, սրախօսութիւն, խելացի խորհուրդներ ևայլն: Ոչ ոք չպէտք է լսած խօսքերն ու խորհուրդները գնար տարածէր. ամենից ծերը դռանը ցոյց կըտար ներկայ եղողներին ու կ'ասէր. «ոչ մի խօսք այս դռ-

նից դուրս չպիտի անցնի»։

Լիկուրգոս ցանկանում էր, որ իւրաքանչիւր Սպարտացի ճարպիկ ու պնդակազմ լինի. այսպէս էին պահանջում հանգամանքները։ Սպարտացիք իբրև մի զինուորուած բանակ մտել նուաճել էին Պելոպոնէսը. ուրեմն նոքա միայն զէնքի զօրով կարող էին իրանց իշխանութիւնը հաստատել այստեղ։ Նոքա պէտք է միշտ պատրաստ լինէին տեղացի բնակիչների կողմից յարձակման համար։ Այս պատճառով նոցա կեանքը պէտք է զինուորականի կեանք լինէր։ Ո՛չ մի Սպարտացի չէր պարապում երկրագործութեամբ կամ ուրիշ ազատ արհեստներով. այս թողնուած էր Հելոտներին, որոնք տէրութեան սեպհականութիւնն էին համարվում։ Նոքա մշակում էին հողը, ապրելով խղճալի խրճիթների մէջ. շատ անգամ պատերազմ էին գնում իրանց տէրերի հետ նոցա ծառայելու համար։ Հելոտների վիճակն առհասարակ ողորմելի էր. նոցա հետ շատ անգթութեամբ էին վարվում, երևի նորա համար, որ երբէք չզօրանան և իրանց տէրերի դէմ չապստամբեն։ Սպարտայի պատանիներին թոյլ էր տրվում Հելոտներին սպանել, ինչպէս գազանների։

Սպարտացու բոլոր կեանքն զինուորութեան մէջ էր անցնում. ո՛չ մի աշխատանք, ո՛չ մի վտանգ նորա համար ծանր չէր, երբ հայրենիքը ապահով չէր լինում։ Օրուան մեծ մասը նա անց էր կացնում մարմնական վարժութեանց մէջ, թեթև հագուստով, կիսամերկ, որպէս զի անդամներն ազատ լինին։ Սպարտացիք պարտական էին որսով էլ պարապել։ Պատերազմը նոցա համար ուրախութիւն էր. երգով, երաժշտութեամբ, կարմիր հագած՝ գնում էին պատերազմ, իբրև հարսանեաց հանդէս. նոցա նշանաբանն այս էր—յ ա ղ թ ո ւ թ ի ւ ն կ ա մ մ ա հ։ Վա՛յ էր փախչողի համար. ամէն մարդ նորան արհամարհում էր։ Փախչողի մայրն անգամ սուգ կըմնէր, տանից չէր դուրս գալ, որ ուրիշ մայրերի աչքին չերևայ. նորա համար ամօթ էր, որ երկչոտ որդի ունենար։—Մի անգամ մէկ Սպարտացի երիտասարդ պատերազմի դաշտից փախել տուն էր վազել. նա շնչասպառ պատմեց, որ ընկերները մեռան այնտեղ. մայրը աղիւսն առաւ որդու վերայ արձակեց և դուրս արաւ. «Թշուառական, ասաց, դու

բօթաբե՞ր ես եկել իմ գլխին»։ Մէկ մայր որդուն պատերազմ ուղարկելիս տուաւ նորան մի վահան և ասաց. «վահանը ձեռի՛դ կամ վահանիդ վերա՛յ». այսինքն կամ պիտի յաղթես, կամ թէ քաջութեամբ պիտի մեռնես և քեզ վահանիդ վերայ բերեն։ Մէկ Սպարտացի կին լսելով թէ որդին մեռաւ պատերազմում՝ իսկոյն հարցրեց. «իբրև յաղթո՞ղ մեռաւ որդեօք». երբ ասացին՝ այո՛, պատասխանեց. «նորա համար էլ ծնայ նորան, որ մեռնի հայրենեաց համար»։ Մէկ մօր յայտնեցին թէ որդին մեռաւ կռուի մէջ. գոչեց. «եղբօրը կանչեցէք տեղը կանգնի»։

Քաջ պատերազմող լինելու համար Սպարտացին պէտք է սովոր լինէր ամէն չարքաշութեանց դիմանալու. այս բանին վարժվում էին մանկութենէ։ Տէրութիւնը պէտք է բաղկանար միմիայն առողջ և ուժեղ անդամներից. ըստ այսմ իւրաքանչիւր նորածին մանկան զննում էին թէ առողջակազմ է արդեօք։ Տկար և պակասաւոր երեխային դուրս էին ձգում։ Առողջ երեխաները վերադարձնվում էին ծնողներին. նոցա մօտ մնում էին մինչև 7 տարին։ Մանկանց կրթութիւնը միայն մարմնական վարժութեանց մէջ էր կայանում. նոքա միշտ կիսամերկ էին լինում. քնում էին կոշտ եղեգնեայ յարդի վերայ։ Եօթն տարին լրանալուց յետոյ նոքա պատկանում էին տէրութեան և նոցա վերայ խիստ հսկողութիւն էր լինում։ Նոցա սովորեցնում էին դիմանալ քաղցի և ծարաւի, ցրտի և արևի, մինչև անգամ ֆիզիքական ցաւերի։ Տարին մի անգամ նոցա մտրակով ծեծում էին Դիանայի սեղանի առաջ ծնողաց ներկայութեամբ, որոնք համոզում էին նոցա անտրտունջ դիմանալ ցաւին։ Այս դէպքում լաց լինելը մեծ ամօթ էր համարվում, այնպէս որ երբեմն մանկունք ծեծի տակ մեռնում էին առանց ձայն հանելու։ Նոքա պէտք է մեծերին յարգէին։ Մեծերի ներկայութեամբ չպէտք է խօսէին, մինչև որ բան չհարցնէին։ Իսկ եթէ կըհարցնէին՝ պէտք է իսկոյն պատասխան տային՝ կարճ և հասկանալի խօսքերով։ Այստեղից սովորութիւն ընկաւ համառօտ և ազդու խօսել. այդպիսի ոճը մինչև այսօր էլ կոչվում է լ ա կ ո ն ա կ ա ն, այսինքն Լակոնիացիների ոճով։

Մինչև անգամ աղջիկներն էլ պարապում էին մարմնական վարժութիւններով: Գիտութիւններն ու արհեստները գին չունէին Սպարտայում: Ամբողջ քաղաքը մի զինուորական բանակի էր նման, ուր ազնուական Դորիացիները միշտ պատրաստ էին պատերազմի ելնելու:

Լիկուրգոսի օրէնքները բարիքներ տուին ազգին, բայց դժգոհներ էլ կային. հարուստները գոհ չէին նորա կարգաւորութիւններով. նոքա ատում էին Լիկուրգոսին և վշտացնում: Մի անգամ մէկ քանի հոգի սկսան քարկոծ անել նորան. նա փախչում էր հրապարակից, որ տաճարի մէջ պաշտպանութիւն գտնի, բայց հալածողներից մինը, Ալքանդր, որ մի դիւրաբորբոք երիտասարդ էր, առաջը կտրեց և փայտով խփեց աչքը հանեց: Լիկուրգոս կանգ առաւ, ոչինչ չխօսեց և միայն ցոյց տուաւ քաղաքացիներին իւր արիւնաշաղախ երեսն ու հանած աչքը: Նոքա իսկոյն զղջացին, ամաչեցան Ալքանդրին նորա ձեռքը մատնեցին և մինչև տուն ուղեկից եղան: Լիկուրգոս բաւականացաւ այդ զղջումով. Ալքանդրին իւր մօտ առաւ. ահաբեկ ու ամօթահար կանգնել էր նա Լիկուրգոսի առաջև: Բայց Լիկուրգոս ոչինչ կոպիտ բան չասաց նորան. միայն իւր տանը պահեց, որ ծառայէ իրան: Ալքանդր խղճահարուած էր. նորա բոլոր հրամանները կատարում էր սրբութեամբ: Ամեն օր Լիկուրգոսի մօտ գտնուելով և վկայ լինելով նորա վարմանց՝ սովորեցաւ յարգել այդ երևելի մարդու հեզութիւնը, ներողամտութիւնը, խոստակեցութիւնն ու անխոնջ գործունէութիւնը. սրտի խորքում մտերմացաւ նորան և ամեն տեղ գովասանում էր նորան: Ահա ինչպէս վրէժ հանեց Լիկուրգոս. այն վատաբարոյ և կռուարար երիտասարդին առաքինի մարդ դարձրեց:

Լիկուրգոս օրէնքները հաստատելուց յետոյ՝ հայրենիքը թողեց, գնաց ճանապարհորդելու. դուրս գալուց առաջ իւր քաղաքացիներին երդուեցրեց, որ մինչև իւր վերադարձը ոչինչ փոփոխութիւն չանեն և ճշտութեամբ կատարեն օրէնքները: Ամենքը երդուեցան: Լիկուրգոս հեռացաւ և այլևս չվերադարձաւ հայրենիք: Յայտնի չէ թէ ուր և ինչպէս մեռաւ նա:

Չորս դար շարունակ Սպարտացիք պահեցին Լիկուրգոսի օրէնքները և այդքան միջոց առաջինն էին Յունական տէրութեանց մէջ:

3.

ՄԵՍՍԵՆԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.

Լակոնիայից դէպի արևմուտք գտնվում էր Մեսսենան, Պելոպոնէսի ամենապտղաբեր գաւառը: Բարեբեր դաշտերով շրջապատած՝ խաղաղասէր Մեսսենացիք երջանիկ կեանք էին վարում: Սակայն նոցա բարօրութիւնը գրգռեց պատերազմասէր Սպարտացւոց նախանձը: Այդ ժամանակուանից Մեսսենացիք պէտք էր բարեւ մնաս ասէին իրանց բաղդաւոր վիճակին: Թերևս ոչ մի ազգ այնքան փառաւոր քաջագործութիւններից ու անձնազոհութիւններից յետոյ չէր ենթարկուել ճակատագրի այնպիսի խիստ հարուածներին: Սպարտացւոց ու Մեսսենացւոց մէջ յարաբերութիւնները հետզհետէ ծանրացան: Սպարտացիք մի առիթ էին խնդրում Մեսսենայի վերայ յարձակուելու համար:

Երկու տէրութեանց սահմանում կար Արտեմիս աստուածուհու տաճարը, որ ընդհանուր էր երկուքի համար: Սպարտացիք մի անգամ գանգատում էին, թէ այստեղ Մեսսենացիք վշտացուցել էին մի քանի Սպարտացի աղջիկներ և սպանել էին Տելեկլոս թագաւորին, որ կամեցել էր պաշտպանել նոցա: Իսկ Մեսսենացիք ուրանում էին այս ամէնը, ասելով որ Տելեկլոս Սպարտացի երիտասարդների հետ միասին կանացի զգեստով զինուած եկած էր տաճարը, նոյն իսկ տօնի ժամանակ Մեսսենացի մեծամեծներին սպանելու համար: Այս փոխադարձ գանգատներին եղած ժամանակ՝ մի Սպարտացի մի Մեսսենացի ազնուականի ոչխարները կողոպտեց և նորա որդուն սպանեց: Մեսսենացին հատուցում պահանջեց և երբ չգտաւ՝ կատաղութիւնից սկսեց մեռցնել ամեն դիմացն եկող Սպարտացու: Այստեղից խռովութիւնն աւելի ծանրացաւ, և Սպարտացիք երդուեցան, որ մինչև Մեսսենան չնուաճեն՝ զէնքը չթողուն:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ (730—710. Քր. ծն. յառ.):

Սպարտացիք առանց յառաջագոյն պատերազմ յայտնելու մէկ գի-

չէր յանկարծ յարձակուեցան սահմանակից Ամֆէա քաղաքի վերայ և բնակիչների մեծ մասը սրի անցուցին: Սակայն Մեսսենացիք չվհատեցան: Արիստոդէմի առաջնորդութեամբ նոքա շարունակ քսան տարի հերոսաբար ընդդիմադրեցին: Պատերազմների ժամանակ Մեսսենացիք ամրացան Իթոմէ բերդի մէջ: Այստեղից մարդ ուղարկեցին Դելֆեան տաճարը պատգամ հարցընելու: Պատգամախօսը այսպէս ասաց.

«Օրհասը մի կոյս է պահանջում եգիպտեան ցեղից.
«Տուր նորան անդնդոց աստուածներին, և կազատես Իթոմէն»:

Այն ժամանակ Արիստոդէմն իւր ձեռքով զոհեց իւր դստերը: Մեսսենացիք քաջալերուեցան. Սպարտացիք լքան: Արիստոդէմը թագաւոր ընտրուեցաւ և իւր դաշնակիցների օգնութեամբ չարաչար յաղթեց Սպարտացիներին Իթոմէ բերդի մօտ:

Սակայն յաղթութեան ուրախութիւնը երկար չտևեց: Պատերազմների քսաներորդ տարին Սպարտացիք պատգամ հարցրին Դելֆիսի տաճարում. այսպիսի պատգամ եղաւ.

«Ով առաջինը դնէ Զևսի սեղանի շուրջը, Իթոմէի մէջ,
«Թւով տասն անգամ տասն եռոտանիներ,
«Աստուած նորան կտայ զինուորական փառքով Մեսսենայի
արտերը»:

Այս պատգամը լսելով մի Սպարտացի հարիւր հատ կաւէ եռոտանի շինեց և ծպտեալ շորերով մտաւ Իթոմէ, Զևսի տաճարում շարեց և վերադարձաւ: Մեսսենացիք իմացան այս և շփոթեցան: Բացի դորանից ուրիշ շատ չարագուշակ նշաններ էլ էին երևում. օրինակի համար. Արտեմիսի արձանի վերայ կախած վահանը վայր էր ընկել. շները հաւաքվում և միասին ոռնում էին ամբողջ գիշերներով. զոհելի ոչխարները այնպէս սաստկութեամբ հարում էին սեղանը, որ շնչասպառ վայր էին ընկնում, ևայլն: Ամենից աւելի զարհուրելի էր Արիստոդէմի երազը. Նորան երևեցաւ իւր դուստրը սևազգեստ, որ ցոյց էր տալիս իւր պատառած կուրծքը. նա վայր ածեց ամէնը ինչ որ կար զոհարանի վերայ. հանեց հօր վերայից սպառազինութիւնը, պսակեց նորան ոսկեայ

թագով և ծածկեց սպիտակ քօղով: Արիստոդէմը սորանից եզրակացնելով որ մօտ է իւր վախճանը լքաւ. մտածեց որ այլևս չի կարող հայրենիքն ազատել և ինք զինքն սպանեց դստեր գերեզմանի վերայ, հաւատալով պատգամախօսին, որ յաջողութիւն էր խոստանում այդպիսի զոհաբերութեան համար:

Սակայն Իթոմէն առնուեցաւ: Մեսսենացիք կորցրին իրանց ազատութիւնը. ոմանք հեռացան հայրենիքից. մնացածները հարկադրուեցան կրել Սպարտական ծանր լուծը: Նոքա պէտքէ իրանց բերքերի կէս մասը Սպարտա ուղարկէին և սգոյ զգեստ հագնէին Սպարտացի թագաւորների մահուան համար: Սպարտացիք երգիծանքով երգում էին նոցա վերայ.

«Իշերի պէս բեռնաւորած՝ կրում են նոքա անտանելի ծանրութիւնը
«Եւ ողբալի գերութեան մէջ տալիս են հրամայողներին
«Իրանց չարչարանքի արդեանց կէս մասը»:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ. (645—630): Վաթսուն ութ տարի կրեցին Մեսսենացիք այդ դառն լուծը: Բայց 645 թ. նոքա ապստամբեցան Արիստոմէն քաջ թագաւորի առաջնորդութեամբ: Յաղթութիւնը փոփոխակի մէկ կամ միւս կողմն էր անցնում. Սպարտացիք յուսահատուել էին, բայց նոցա ոգևորում էր Աթենացի բանաստեղծ Տիրտէոս իւր գեղեցիկ երգերով: Մեսսենացւոց դաշնակիցների մեծ մասը Սպարտացւոց հետ միացան. սակայն Արիստոմէն չվհատեցաւ: Շարունակ տասնըմէկ տարի Մեսսենացի հերոսը պաշտպանեց Իրա ամուր բերդը. վերջապէս դաւաճանութեամբ առնուեցաւ Իրան: Մինչ վերջին շունչը կռուելուց յետոյ, երբ տեսաւ որ այլևս հնար չկայ ընդդիմանալու, Արիստոմէն ժողովեց մնացած քաղաքացիներին, որոնք կանանց, երեխաներին և ծերերին մէջ առին, և սրերն ու վահանները ցած թողած, ահարկու յուսահատութեամբ եկան անցան թշնամեաց միջից: Սպարտացիք չյանդգնեցան դիպչել նոցա: Այսպէս թողին Մեսսենացիք իրանց հայրենիքը, որտեղ այլևս չէին կարող վայելել թանգագին ազատութիւնը. նաւ նստան ու գնացին նոր հայրենիք որոնելու: Նոցանից շատերը դուրս եկան Սիկիլիա կղզին,

այնտեղ բնակութիւն հաստատեցին և քաղաք հիմնեցին, որ կոչուեցաւ Մեսսենա։

Արիստոմենը վերջը գնաց Հռոդոս կղզին, որտեղ և մեռաւ։ Հռոդոսի բնակիչները փառաւոր արձան կանգնեցին նորան՝ իշատակը յարգելու համար։

Գ.

ԱԹԷՆՔ.

1.

Հին ժամանակներից Աթէնքը կառավարվում էր թագաւորներով՝ երբեմն լաւ, երբեմն վատ, ինչպէս և ուրիշ տեղեր։ Վերջին թագաւորը Կոդրոսն էր։ Մի անգամ երբ Աթենացւոց և Դորիացւոց մէջ պատերազմ կար, պատգամախօսը յայտնեց, որ մէկ թագաւոր և նորա դիմացի զօրքը մահուան են դատապարտուած։ Այս լսելով Կոդրոս հասարակ զինուորի շորեր հագաւ որ չճանաչուի և յարձակուեցաւ Դորիացւոց զօրքի վերայ. նոքա չճանաչելով սպանեցին Կոդրոսին։ Երբ իմացան որ սպանուողը Աթենացւոց թագաւորն էր Դորիացիք պատգամը կատարուելու երկիւղից յուսահատեցան և փախան։ Այսպէս Կոդրոսի անձնազոհութեամբ Աթէնքն յաղթեց։ Աթէնացիք նորանից յետոյ չկամեցան նոր թագաւոր ընտրել, որովհետև Կոդրոսից յետոյ ոչ ոքին արժանի չէին համարում թագաւորութեան։ Այս պատճառով նոքա ոչնչացրին միապետութիւնը և հաստատեցին հանրապետութիւն։ Երկիրը պէտք է ժողովրդից ընտրուած արքոն կառավարէր, և ինչան երախտագիտութեան առաջին արքոն ընտրեցին Կոդրոսի որդի Մեդոնին։ Նա կառավարեց մինչև մահ. յետոյ վճռեցին արքոն ընտրել 10 տարի ժամանակով միայն. հուսկ յետոյ սկսեցին ընտրել ամեն տարի ինն արքոն (682)։ Արքոններն ազնուականների միջից էին ընտրվում։ Նոցա իշխանութիւնը սահմանափակ էր և պարտաւոր էին հաշիւ տալ իրանց կառավարչական գործերի մէջ։ Սակայն արքոններն էր, որ ազնուատոհմեր էին, ձեռք ձգելով բոլոր պաշտօնները՝ սկսան ճնշել և հարստահարել ստորին ժողովրդեան։ Գրաւոր օրէնքներ չկային, որ նոցա իշխանութեան չափը որոշուէր։ Բայց ժողովուրդը շատ չհամբերեց. անբաւականութիւններ ու խռովութիւններ ծագեցան։ Այն ժամանակ Դրակոն արքոնը գրաւոր օրէնքներ նշանակեց (624), բայց այս օրէնքները կարճ ժամանակից յետոյ մերժուեցան՝ չափազանց խստութեան պատճառով, որովհետև ամեն հասարակ բանի համար մահուան պատիժ էր որոշած, այնպէս որ ասում էին, թէ Դրակոնի օրէնքներն արիւնով են գրած։ Աթէնքը վտանգի մէջ էր. ներքին երկպառակութիւններն աւելանում էին. մէկ իմաստուն կառավարիչ էր պէտք, որ փրկէր հայրենիքը։ Այսպիսի մարդ Աթէնքի մէջ միայն Սողոնն էր, որին և դիմեց ժողովուրդը նոր օրէնքներ սահմանելու համար։

2.

ՍՈՂՈՆԻ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ—594.

Սողոն Կոդրոսի ցեղից էր. նորա հայրը մարդասիրական ու բարեգործական գործերի մէջ սպառել էր իւր կարողութիւնը, ուստի և չկարողացաւ որդուն մեծ ուսում տալ. բայց Սողոն իւր յատուկ աշխատութեամբ հետևեց ուսման և իմաստասէր եղաւ, նա բանաստեղծական ձիրք էլ ունէր։ Սալամինացի առման և նուիրական պատերազմի յաջողութեան պատճառով ժողովուրդը շատ յարգում էր նորան։

Սալամինա կղզին Աթէնքի դիմացն է և նորա վաճառականութեան համար շատ հարկաւոր էր, Մեգարացիք այս կղզին յափշտակել էին։ Աթենացւոց բոլոր փորձերն իզուր եղան կղզին յետ առնելու համար. նոքա ձանձրացան և որոշեցին, որ նոր պատերազմի խորհուրդ տուողն անգամ մահուամբ պիտի պատժուի։ Բայց հայրենասէր Սողոն այս վճիռը նախատական համարեց։ Նա մի ոգելից ոտանաւոր շարադրեց, անգիր սերտեց. յետոյ ինք զինքը

խելագար ձեւացնելով՝ յիմարական հագուստով դուրս եկաւ հրապարակը և իւր բանաստեղծութեամբ ժողովրդին յորդորեց նորէն մի փորձ անելու։ Աթենացիք վճիռը փոխեցին. պատերազմի առաջնորդն ինքը Սողոնը եղաւ, և Սալամինան առնուեցաւ։

Իսկ Նուիրական պատերազմը Կիւռացւոց դէմ եղաւ. դոքա Դելփիս գնացող վաճառականներին կողոպտում էին և մինչև անգամ յարձակուեցան Ապոլլոնի տաճարի վերայ աւարի առան։ Սողոն Ամփիկտիոնեան ատենին յորդորեց Կիւռացւոց պատժել. ինքը զօրքի գլուխն անցաւ, քաղաքը կործանեց, երկիրն էլ տաճարին ընծայեց։ Այս քաջագործութեանց համար ժողովրդի սէրն ևս առաւել շատացաւ Սողոնի վերայ։

Ամենից առաջ Սողոն ժողովրդի ծանր պարտքերը թեթևացրեց և փողի գինը բարձրացնելով՝ պարտքի վճարումը հեշտացրեց. (75 դահեկանը 100 դահեկան պիտի արժենար)։ Այլևս առաջուան պէս պարտապանները գերի չէին դառնում իրանց պարտատիրոջը, երբ չէին կարողանում վճարել ծանր պարտքերը։ Մեծամեծների տիրող զօրութիւնը ոչնչացնելու համար՝ Սողոն բոլոր քաղաքացիներն իրաւունք տուաւ տէրութեան գործերի մէջ մասնակցել։ Ազգին վերաբերեալ բոլոր նշանաւոր խնդիրներն անշուշտ պէտք է ազգային ժողովի մէջ վճռուէին։ Ամեն Աթենացի 20 տարեկանից վեր իրաւունք ունէր ներկայանալ ժողով և իւր ձայնը տալ, Ամեն վճիռ ձայների բազմութեամբ պէտք է վճռուէր։

Սորանից յետոյ Սողոն ազգը բաժանեց չորս դասերի՝ ըստ իւրեանց կարողութեան, որոյ համեմատ և առանձին պարտաւորութիւններ դրուեցան իւրաքանչիւրի վերայ, Առաջին երեք դասերին պատկանող քաղաքացիք իրաւունք ունէին պետական պաշտօններ ստանալ և պարտաւոր էին ծանր սպառազինութեամբ պատերազմ գնալ։ Չորրորդ դասը բաղկանում էր չունևոր քաղաքացիներից, որոնք պատերազմի ժամանակ թեթև զէնք էին կրում. սոքա թէև մասնակցում էին ազգային ժողովին, բայց ընտրուելու իրաւունք չունէին։

Կառավարութիւնը յանձնուեցաւ Գերագոյն խորհրդին, որ

բաղկացած էր 400 անդամներից. սոքա միամեայ ժամանակով ընտրվում էին առաջին երեք դասերից։ Բարձրագոյն իշխանութիւնը 9 արքոնների ձեռքն էր, որ միայն առաջին դասից պէտք է ընտրուէին։

Տէրութեան գործերի, ժողովրդի բարուց և մանկանց կրթութեան ընդհանուր հսկողութիւնը Սողոն յանձնեց Արիսպագոս կոչուած ատենին, որի անդամները կ՚ընտրուէին իրանց պաշտօնն ազնուութեամբ կատարած արքոններից։ Ծանր յանցանքների վճիռը նոյնպէս Արիստագոս ատենում կըտրուէր։ Իսկ հասարակ դատերի համար ազգային ժողովն ընտրում էր 6000 երդուեալ դատաւոր տարէնը մի անգամ։

Սողոն մեծ հոգ տարաւ մանկանց դաստիարակութեան համար ևս։ Նա պաշտպան էր գիտութեանց և ճարտարութեանց։ Նա հաստատել տուաւ առանձին վարժարաններ (գիմնազիոններ), ուր Աթենացիք վարժում էին ոչ միայն իրանց մարմնական ոյժերը, այլև մտաւոր ընդունակութիւնները։ Ուսման գլխաւոր առարկաներն էին փիլիսոփայութիւն ու ճարտասանութիւն, առանց որոց դժուար էր բարձրագոյն պաշտօններ ստանալ։

Աթէնքի մէջ քաղաքացին լոկ զինուոր չէր, ինչպէս Սպարտայում, այլ նա պարտաւոր էր պարապել գիտութիւններով ու գեղարհեստներով ևս Աթենացի երիտասարդը պէտք է աշխատէր գողտրիկ և ախորժալուր ոճերով արտայայտել իւր մտքերը, որպէս զի կարողանար ապագայում ազգային ժողովի մէջ ազդու պերճախօսութեամբ գրաւել իւր քաղաքացիների մտքերը։ Երաժշտութիւնն այնչափ յարգի էր, որ Աթենացիք յանդիմանում էին հռչակաւոր Թեմիստոկլէսին քնարածութիւն չիմանալու համար. Սոկրատէսը ծերութեան հասակում նոր սկսաւ սովորել սրինգ ածել։

Սողոնի գեղեցիկ մարդասիրական օրէնքների զօրութեամբ Աթէնքի մէջ ծաղկեցաւ հասարակական գործունեայ կեանք. ծուլութիւնը սաստիկ հալածուած էր. արհեստ չիմացողը պատուաւոր քաղաքացի չէր համարվում, մտաւոր ընդունակութիւնները մշակվում ու զօրանում էին։ Այսպէս՝ Սողոնը Աթէնքի փառաւոր յառաջադիմութեան հիմքը դրեց։

Սողոն կամենալով, որ իւր օրէնսդրութիւնը հիմնաւորուի Աթէնքի մէջ՝ քաղաքացիներին երդուեցրեց, որ տասն տարի անփոփոխ պահեն նորան. իսկ ինքն դուրս եկաւ ճանապարհորդելու Կրետէ, Փոքր Ասիա և Եգիպտոս: Լիդիայում նա այցելեց Կրեսոսին:

3.

ՊԻՍԻՍՏՐԱՏ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՔ (560)

1) Սողոնի ամենայն մտադրութիւնները թերի մնացին: Նորա բացակայութեան ժամանակ հին կողմնակցութեանց խռովութիւնները նորից բարձրացան: Ռամիկները նոր ստացած իրաւունքներով չափից դուրս գոռոզացել, իսկ ազնուականները կորուսած իրաւունքների վերայ չափից դուրս գրգռուել էին: Այսպէս ահա կուսակցութիւնները բարձրացան և հին կռիւները վերանորոգեցին: Պիսիստրատ, Սողոնի ազգականը և ժողովրդի սիրելին, այս դժգոհութիւններից օգուտ քաղելու համար ռամիկների կողմը բռնեց և աշխատում էր նորա ձեռքով բոլոր իշխանութիւնը իւր ձեռքն առնուլ: Նա մի վայելչակազմ տղամարդ էր, քաղցրաբարոյ, մեծահոգի և հաճելի. իւր հեզութեամբ և մանաւանդ հարստութեամբ յափշտակել էր ռամիկ ժողովրդի սիրտը: Նա մի անգամ ինքզինքը վիրաւորեց և ասաց, որ ազնուականները վիրաւորեցին՝ ժողովրդին պաշտպան լինելուն համար: Ռամիկները նորա համար 50 հոգի թիկնապահ նշանակեցին. յետոյ Պիսիստրատ հետզհետէ նոցա թիւն աւելացրեց, մինչև որ նոցա օգնութեամբ միջնաբերդին տիրեց և Աթէնքի բռնաւորն եղաւ: Այս ամէնը կատարուեցաւ դեռ ևս Սողոնի կենդանութեան ժամանակ. խեղճ ծերունին շատ ջանքեր ու անձնազոհութիւն արաւ Պիսիստրատի փառասիրական ձեռնարկութեան առաջն առնելու, բայց չյաջողեցաւ: Նա վշտալի սրտով Աթէնքից հեռացաւ գնաց Կիպրոս, ուր և մեռաւ:

Սակայն Պիսիստրատ Աթէնքի անսահման միապետը դառնալով՝ հայրենիքի բարեաց համար աշխատեց. նա ջանք էր անում՝ որ Աթէնքը Յունաստանի ամենազօրեղ և ամենալուսաւոր տէրութիւնը

դառնայ: Սողոնի սահմանադրութիւնն անփոփոխ պահեց. քաղաքը զարդարեց հոյակապ շինուածներով. երևելի ուսումնականներ ու ճարտարապետներ բերել տուաւ. ժողովեց Հոմերոսի քերթուածները և հիմնարկեց Աթէնքի մէջ հասարակական գրադարան: Նա իւր ժամանակի ամենալուսաւորեալ մարդկանցից մէկն էր և տրած բարեկարգութիւններով փառաւորեց հայրենիքը (527):

2) Պիսիստրատին յաջորդեցին իւր երկու որդիքը՝ Հիպպիաս և Հիպարքոս: Սոքա սկզբում իրանց հօր պէս իմաստութեամբ և քաղցրութեամբ էին կառավարում. բայց յետոյ փոխեցին իրանց ընթացքը՝ բռնութիւններ անելով: Շատ մարդիկ փափագեցան նախկին ազատութեան, և մի աննշան դէպք պատճառ եղաւ կառավարիչների անկման:

Աթէնքի մէջ երկու երիտասարդ կային՝ իրար շատ մտերիմ բարեկամներ—Հարմոդիոս և Արիստոգիտոն: Մի անգամ Հիպարքոս շատ վշտացրեց Հարմոդիոսի քրոջը մի հասարակաց տօնի ժամանակ: Երկու ընկերները վճռեցին ազատել քաղաքը բռնաւորների ձեռքից: Առաջին զոհը պէտք է Հիպարքոս լինէր: Մի հասարակաց հանդէսի ժամանակ խռովութեան միջով դաւադիրներն առաջ անցան և սպանեցին նորան դաշունով: Սակայն ինքը Հարմոդիոսն էլ իրարանցման ժամանակ սպանուեցաւ. իսկ Արիստոգիտոն բռնուեցաւ: Երբ նորան հարցուփորձ արին իւր դաւակիցների մասին՝ վեհանձն լինելու համար Հիպպիասի լաւագոյն բարեկամներին իրան դաւակից անուանեց, որոնք իսկոյն բռնուեցան և սպանուեցան: «Էլի ո՞ւմ ես ճանաչում», հարցրեց նորան Հիպպիաս: «Քեզնից էլ ուրիշ չեմ ճանաչում, որ մահուան արժանի լինէր», պատասխանեց Արիստոգիտոն: Դորանից յետոյ Հիպպիասին յայտնեցին որ մի կին կայ Լէենա անուամբ, որ ճանաչում է բոլոր դաւակիցներին: Նորան բերին և սկսան անգթօրէն չարչարել որ յայտնէ նոցա անունները: Լէենան գաղտնիքը չյայտնելու համար կծեց կտրեց իւր լեզուն և դուրս թքեց բռնաւորի երեսին: Աթէնացիք չկարողացան այլ ևս դիմանալ Հիպպիասի կասկածոտ վարմանը և բռնութեանցը: Նոքա կաշառեցին

Դելփեան քուրմերին, որոնք պատգամ հանեցին, թէ Սպարտայի Կլէոմէն թագաւորը պէտք է ազատէ Աթէնքը։ Այդպէս էլ եղաւ, Կլէոմէնի առաջնորդութեամբ Աթենացիք աքսորեցին Հիպպիասին 510 թուականին։ Նա գնաց Պարսից թագաւոր Դարեհի մօտ և շարունակ գրգռում էր նորան պատերազմ բանալու Աթենացւոց դէմ։ Իսկ Աթէնացիք շատ բերկրեցան, որ ձեռք բերին իրանց ազատութիւնը, և 'ի նշան երախտագիտութեան Հարմոդիոսի ու Արիստոգիտոնի համար արձան կանգնեցրին։ Ի յիշատակ Լիէնայի քաջագործութեան ևս արձան շինեցին, որ ներկայացնում էր մի մատակ առիւծ՝ լեզուն կտրած։

3) Այդ ժամանակ կառավարութեան գլուխն անցաւ Կլիսթենէս ազնուականը, և իշխանութիւնն ապահովացնելու համար կատարեալ ռամկապետութիւն մտցրեց. չորս դասակարգերի զանազանութիւնը վերցրեց, ժողովուրդը 10 ցեղ բաժանեց և արքոնների խորհրդականների թիւը 500-ի հասցրեց (ամեն ցեղից յիսնական)։ Նա որպէս զի մէկը չկարողանայ բռնակալութիւն անել՝ հաստատեց խեցեկոյտ վճռի օրէնքը, որով ամեն քաղաքացի կասկածելի անձի անունը կգրէր, և եթէ խեցիների թիւը 6000 ից անցնէր՝ այն անձը հայրենիքից կաքսորուէր, ամենաշատը 10 տարի ժամանակով։ Սակայն աքսորուածը չէր զրկվում ոչ իւր պատուից, ոչ ունեցուածքից, այլ առժամանակ միայն հեռացնվում էր, որ իւր ազդեցութիւնը ժողովրդի վերայ դէպի չարը չգործածնէր։

Աթէնքը վերստին սկսաւ բարձրանալ և փառաւորուել։ Այս՝ չափազանց գրգռեց Սպարտացւոց նախանձը. նոքա ամեն կերպ աշխատում էին որ Աթէնքը վայր ձգեն իւր բարձրութիւնից և իրանց դաշնակիցներին յորդորում էին, որ միանան ընդհանուր ուժով Հիպպիասին վերահաստատելու իւր իշխանութեան մէջ. բայց նոքա զզուանօք մերժեցին այս առաջարկութիւնը։ Այսուամենայնիւ Աթէնքի և Սպարտայի մէջ զարհուրելի ներքին պատերազմ պէտք է ծագէր, թէ որ մի աւելի զարհուրելի վտանգ չսպառնար ամբողջ Յունաստանին։

Գ.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ.

1.

Դարեհ թագաւորը բարկութեամբ լցուած՝ ուզում էր պատժել Աթենացւոց, որոնց գոյութեան մասին անգամ տեղեկութիւն չունէր առաջուց, վասն զի նոքա օգնութիւն էին տուել փոքր Ասիայի Յոյներին։ Այս բանի համար նորան շարունակ գրգռում էր աքսորուած Հիպպիասը, այնպէս որ Դարեհ ամեն օր աղօթքի մէջ խնդրում էր աստուածներից զօրութիւն Աթենացիներին վրէժխնդիր լինելու համար, և մի ծառայ էր կարգել, որ ամեն ճաշի ժամանակ կրկնէ. «Տէր, յիշիր Աթենացիներին»։

ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔ. Դարեհ 493 թ. բազմաթիւ զօրք ու զօրեղ նաւատորմիղ տուաւ իւր փեսայ Մարդոնիոսին և ուղարկեց ընդդէմ Աթէնքի։ Բայց նաւատորմիղը խորտակուեցաւ ալեկոծութիւնից Աթոս հրուանդանի մօտ, իսկ ցամաքային զօրքը չարաչար ջարդուեցաւ Թրակիայի ժողովրդից։ Մարդոնիոս ամօթահար յետ դարձաւ մի Յոյնի երես անգամ չտեսած։

Դարեհ այս անյաջողութեամբ աւելի զայրացաւ և աւելի մեծ պատրաստութիւն տեսաւ։ Բայց մտածելով որ կարելի է Յոյները հնազանդեն իրան առանց կռուի, դեսպաններ ուղարկեց Յունաց զանազան երկիրները և սպառնալիքներով հող ու ջուր պահանջեց 'ի նշան հնազանդութեան։ Շատ քաղաքներ և կղզիների մեծ մասը հպատակեցան երկիւղից. բայց Աթէնքի ու Սպարտայի մէջ այնպէս բարկացան այս յանդուգն առաջարկութեան վերայ, որ հակառակ միջազգային իրաւանց՝ Պարսից դեսպաններին ձգեցին ջրհորների մէջ, ասելով, «Ահա՛ ձեզ հող և ջուր, որքան կուզէք առէք»։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔ (490)։ Դարեհի զայրոյթն էլ չէր կարելի զսպել։ Նա կանչեց իւր ընտիր զօրավարներին՝ Դատին ու Արտափեռնին, և ասաց. «Գնացէք Յունաստան, գերի առէք բոլոր Աթենացւոց և բերէք ինձ մօտ»։ Իսկոյն կազմու-

եցաւ նաւատորմիղը. 200,000 հոգուց բաղկացած զօրքը Հիպպիասի ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Յունաստան. Հետները վերցրին անթիւ շղթաներ՝ գերիները կապելու համար և մարմարիոնեայ սիւն՝ Աթէնքի աւերակների մէջ կանգնելու համար ՚ի յիշատակ յաղթութեան. այնքան վստահ էին Պարսիկներն իրանց զօրութեան վերայ:

Բոլոր կղզիներըն առանց դիմադարձութեան անձնատուր եղան այս ահաւոր բանակին. միայն Եւբէա կղզու վերայ Երետրիա քաղաքն ընդդիմացաւ, սակայն սա էլ մատնութեամբ առնուեցաւ, հիմնայատակ քանդուեցաւ և բոլոր բնակիչները շղթայակապ գերի տարուեցան: Աթենացիք օգնութիւն ուզեցին դրացիներից, բայց ոչ ոք չհամաձայնեցաւ. միայն Պղատէացիք 1000 հոգի ուղարկեցին, իսկ Սպարտացիք պատասխանեցին, թէ իրանց օրէնքներին համաձայն՝ մինչև լուսնի լրումն չեն կարող պատերազմի ելնել: Պարսից բազմութեան հետ համեմատելով՝ Աթենացիք մի բուռն մարդիկ էին, ընդ ամէնը 10,000, բայց նոքա ամէնքն էլ պատրաստ էին մեռնել հայրենիքի համար, այսուամենայնիւ Աթենացւոց կորուստըն անխուսափելի էր երևում: Թշնամիք բանակեցան Մարաթոնեան դաշտի վերայ:

2.

ՄԱՐԱԹՈՆԻ ՃԱԿԱՏԸ (490).

Պարսից ահաւելի զօրակոյտը տեսան թէ չէ Աթենացիք ուզում էին յետ փախչել, բայց Միլտիադէս զօրավարը քաջալերեց նոցա և նշան տուեց յարձակման: Մարտն ահարկու էր. Աթենացիք կատաղաբար վրայ ընկան, շփոթեցին Պարսից շարքերը և զարհուրելի ջարդ տուին նոցա: Պարսիկներն սկսան փախչել իրանց նաւերը. յաղթողները հալածեցին նոցա և 7 նաւ այրեցին: Պարսիկները վերջապէս մտածեցին պտոյտ տալ Աթէնքի վերայ գնալ, բայց արթուն Միլտիադէսն իմանալով նոցա խորհուրդը՝ կանխեց, յառաջ հասաւ և ամօթով յետ դարձրեց նոցա: Ամբողջ Պարսկական բանակը բոլոր պաշարներով ու բերած շղթաներով Յունաց

ձեռքն ընկաւ: Երբ Յոյները տակաւին Պարսից յետևն ընկած քշում էին, մի Աթենացի, արեան ու փոշու մէջ կորած՝ թռաւ հասաւ Աթէնք, որ յաղթութեան լուրը տայ. «ցնծացէք, ով քաղաքակիցք, մենք յաղթեցինք», ասէր ու շնչասպառ ընկնելը մէկ եղաւ: Պատերազմից յետոյ Աթենացիք մեծ հանդիսով ընդունեցին Միլտիադէսին և նորա յիշատակը անմահացնելու համար մի մեծ պատկեր նկարել տուին, որ ներկայացնում էր Միլտիադէսին իւր զօրքը քաջալերելիս:

Պարսիկներին Յունաստանից փախցնելուց յետոյ՝ Միլտիադէս նաւատորմիղով գնաց նուաճուած կղզիները յետ առնելու: Մի քանի կղզի առաւ, բայց Պարոս կղզու մօտ վէրք ստանալով յետ քաշուեցաւ: Այս բանը առիթ եղաւ նորա փառքին նախանձող թշնամիների համար լուր տարածել, իբր թէ նա կաշառուել էր Պարսիկներից, և թէ ձգտում էր միապետութիւն ձեռք բերելու: Թեթևամիտ և ապերախտ ժողովուրդը հաւատաց այս ամբաստանութեանը և իր ազատչին դատապարտեց 50 տաղանդ տուգանքի, և որովհետև նա չէր կարող այս գումարը վճարել, ուստի բանտը դրուեցաւ և այնտեղ մեռաւ վէրքի ցաւից:

3.

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔ ԿՍԵՐՔՍԷՍԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ.

Դարեհ երբ որ իւր երկրորդ բանակի յաղթուելն էլ լսեց՝ աւելի կատաղելով սկսաւ մեծ պատրաստութիւններ տեսնել, որպէս զի այն մի բուռն ժողովուրդն անձամբ գնայ ջնջէ երկրի երեսից. երեք տարի շարունակ պատրաստւում էր նա, բայց դիտաւորութիւնը գլուխ չբերած՝ մեռաւ յանկարծակի: Նորան յաջորդեց իւր որդին Կսերքսէս, որ շարունակեց հօր գործը, և այնքան վստահ էր կատարեալ յաղթութեան վերայ, որ պարծենալով ասում էր, թէ էլ հարկաւորութիւն չկայ Ատտիկայի թուզ գնել, շուտով կերթան և իրան տեղը կքաղեն: Նա մտադիր էր Յունաստանից յետոյ նուաճել բոլոր Եւրոպան և կուզէր որ երբէք արևը մայր

չմտնի Պարսից տէրութեան վերայ: Այսպիսի խորհրդներով մեծամեծ պատրաստութիւններ տեսաւ, և իւր դրացի բազմաթիւ ազգերը պէտքէ օգնէին նորան: Ամբողջ Ասիան շարժուած էր. ամեն կողմերից զօրագնդեր էին հաւաքվում և նոցա թիւը միլիոնի կէսից շատ աւելի էր: Նաւատորմիղը նոյնպէս ահարկու էր. 1200 պատերազմական նաւեր ունէին, 3000 էլ վաճառականական: Ինքը Քսերքսէսը զօրքի առաջնորդն էր:

Արշաւանքն սկսուեցաւ 480 Թ. դարնանը: Քսերքսէս Հելլեսպոնտոսի վերայ նաւակամուրջ շինել տուաւ, բայց մրրիկը քանդեց նորան: Անմիտ զայրութով կրակուած նա հրամայեց գլխատել վարպետներին, շղթաներով կապկապել ծովի ալիքները և հարիւր հարուած տալ անհնազանդ ջրին՝ այսպէս ասելով. «Դու, աղի ջուր, այս պատիժն ստանում ես քո տէր Քսերքսէսից, որին առանց պատճառի նեղացրիր: Այսուամենայնիւ, չար ծով, ուզես չուզես, նա պիտի անցնի քո վերայով»: Նոր կամուրջ կապեցին և զօրքը պատրաստուեցաւ անցնելու: Առաւօտեան կանուխ արևածագին զոհեր մատուցին ծովին, կամուրջի վերայ կնդրուկ ծխեցին և ձիթենու ոստեր սփռեցին. բոլոր զօրքը ծունր դրաւ արևի առաջ, և Քսերքսէսն ոսկի գաւաթից ընծայաբերութիւն անելով ծովին յաջողութիւն խնդրեց աստուածներից. յետոյ գաւաթն ու սուրը ձգեց ծովի մէջ և նշան տուեց անցնելու: Գոռոզութեամբ նայում էր նա իւր մօտովն անցնող բազմաթիւ ու բազմացեղ զօրքերին:

Բարբարոսները մտան Թրակիա. ներս հեղեղուեցան մինչև հիւսիսային Յունաստան. ոչոքի մտքովն էլ չէր անցնում ընդդիմանալու. ամեն կողմից հող ու ջուր էին ուղարկում նորան: Բոլոր նուաճուած ազգերը պարտաւոր էին միանալ յաղթողի հետ: Սակայն Աթենացիք ու Սպարտացիք չէին լքանում: Այնտեղ կային հեռատես մարդիկ, որոնք առաջուց հասկանալով, որ Պարսիկները չպէտքէ մոռանան Մարաթոնի նախատինքը և անպատճառ պէտքէ վրէժխնդիր լինեն, հարկաւոր պատրաստութիւնները տեսած էին արդէն:

4.

ԹԵՐՄՈՊԻԼԷԻ ԿՌԻՒԸ: ԼԵՒՈՆԻԴԱՍ.

Պարսիկները յառաջ էին ընթանում, նոքա անարգել կերպով հասան մինչև Թերմոպիլէ կիրճը, որտեղից պէտքէր Յունաստանի սիրտը մտնել: Այս նեղ կիրճը պահպանում էր Սպարտայի թագաւոր Լեոնիդաս 300 Սպարտացիներով և սակաւաթիւ դաշնակից զօրքով: Քսերքսէս լսելով որ այդ մի ափ մարդիկն ուղարկուած են իւր անհամար զօրքի առաջը խափանելու՝ ծիծաղեցաւ: Նա դեսպան ուղարկեց Լեոնիդասի մօտ, որ զէնքը ուղարկի: «Թող գայ տանի», պատասխանեց քաջ Լեոնիդասը: Երբ յայտնեցին թէ թշնամին այնքան շատ է, որ եթէ մի մի նետ ձգեն, արևի լոյսը կըխափանեն՝ մի Սպարտացի ասաց. «Աւելի՛ լաւ, մենք էլ շուաքի տակ կըկռուինք»:

Քսերքսէս մնացել էր ապշած. նա չէր հասկանում թէ ինչպէս այդ չնչին գունդը յանդգնում էր դիմադրել իրան. նա չորս օր էլի մտածելու ժամանակ տուաւ Յոյներին: Չորս օրից յետոյ սկսաւ յարձակուիլ: Բայց Յոյները կանգնած էին ամուր պարսպի նման, ձախ ձեռքերին վահան, իսկ աջին նիզակ: Պարսիկները վրայ ընկան, բայց յետ մղուեցան: Քսերքսէս յառաջ անցրեց մատեան քաջամարտիկ գունդը. սա էլ բան չշինեց: Այսպիսի անյաջողութիւններից գրգռուած՝ նա յաճախ ցած էր իջնում իւր աթոռից և ծեծելով յառաջ էր քշում իւր խուժադուժ զօրքը, բայց իզո՜ւր. Լեոնիդասն իւր տեղը կանգնած էր և կռւում էր կատաղութեամբ: Պարսից զօրքն արդէն յուսահատուած էր. այդ միջոցին մի Յոյն մատնիչ կաշառք առնելով ցոյց տուաւ Քսերքսէսին մէկ ծածուկ լեռնային ճանապարհ: Քսան հազար Պարսիկներ անցան այնտեղով և յարձակուեցան Լեոնիդասի վերայ թիկունքից: Այն ժամանակ Յոյների համար այլևս փրկութիւն չկար: Որպէս զի քաղաքակիցների կեանքը անօգուտ տեղը կորստի չմատնէ Լեոնիդաս բոլոր դաշնակից զօրքը յետ ուղարկեց հայրենիքը պաշտպանելու. ինքը մնաց միայն իւր Սպարտացի նուիրական գնդով: (700 հոգի

Թեսպիացիք նոյնպէս չկամեցան յետ գնալ և մնացին նորա հետ։) Պատերազմից առաջ Լէոնիդասը թագաւորական զգեստը հագած՝ զոհ մատոյց աստուածներին. իւր 300 ընկերակիցների հետ վճռեցին թանգ ծախել իրանց կեանքը։ Նոքա անասելի քաջութեամբ թշնամեաց վերայ ընկան, մեծ ջարդ տուին պարսիկներին. անկանողների թւում կային և Քսերքսէսի երկու եղբարքը։ Սպարտացիներից մէկը, Եւրիտոս, սաստիկ աչքացաւի պատճառով կուրացել էր բանակից. Երբ լսեց որ Պարսիկներն անցել են լեռը՝ զէնքը ձեռքն առաւ խնդրեց որ իրան պատերազմի տեղը տանեն։ Տեղ հասաւ թէ չէ՝ թշնամեաց վերայ յարձակուեցաւ և սպանուեցաւ։ Կռիւը բորբոքուած էր։ Յոյների նիզակները կոտրուեցան և հարկադրուած էին կարճլիկ սրերով կռուել ճակատ առ ճակատ։ Տարաբաղդաբար շուտով ընկաւ Լէոնիդաս իւր գնդի առաջին շարքում. այն ժամանակ նորա գլխի շուրջը սարսափելի կերպով սաստկացաւ կռիւը. Յոյներն անթիւ կոտորած արին, բայց և իւրեանք մինչև վերջին մարդը մեռան դիւցազնաբար։ Ոչ մի յաղթութիւն այնքան պարծանք չէ բերել յաղթողներին, որքան այս պարտութիւնը Լէոնիդասին և իւր ընկերներին։ Յունաստանը նոցա յիշատակի համար մի արձան կանգնեց այսպիսի վերնագրով.

«Ով անցուորական, երբ որ գնաս Սպարտա, պատմիր, որ մենք անկանք այստեղ, կատարելով մեր պարտքը դէպի հայրենիքը»։

Մի որձաքարեայ առիւծ օտարականին ցոյց է տալիս Թերմոպիլէի կիրճում այն տեղն, ուր ընկաւ Լէոնիդաս։

5.

ՍԱԼԱՄԻՆԵԱՅԻ ԾՈՎԱՄԱՐՏԸ (480).
ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ.

Պարսից զօրքը հեղեղեց Հելլադան, կործանելով գիւղեր ու քաղաքներ. ոչինչ չկար նորան խոչընդոտ։ Երբ Պարսիկները մօտեցան Աթէնքին՝ Սպարտացիք լաւ համարեցին միւս Յոյներին թողուլ իրանց բաղդին, իսկ իրանք գնալ Պելոպոնէսը միայն

պաշտպանել։ Աթէնացիք յուսահատ դրութեան մէջ էին։ Այսպիսի նեղ հանգամանքում փրկիչ հանդիսացաւ Թեմիստոկլէս։

Թեմիստոկլէս նոյն իսկ մանկութեան ժամանակ զարմանալի սրամտութիւն ու վստահութիւն էր ցոյց տալիս։ Նա չէր սիրում մանկական խաղերը, և պարապում էր դատական ճառեր յօրինելով, զանազան գանգատներ էր հնարում, իւր ընկերակիցներին մեղադրում էր կամ պաշտպանում։ Մի անգամ ուսուցիչն ասաց նորան. «ով տղայ, քեզանից միջակ մարդ չի դուրս գալ. դու պէտքէ կամ շատ լաւ լինիս, կամ շատ վատ»։ Նա ձգտում չունէր սովորելու այն բանը, ինչ որ առանձին հարկաւորութիւն չունէր կեանքի մէջ. օրինակ երաժշտութիւնից ոչինչ չգիտէր։ Երբ միանգամ նորան մեղադրում էին այս բանի համար, ասաց. «Ես չեմ կարողանում քնարածել, բայց վստահ եմ, որ կարող եմ ճարտարութեամբ ծառայել տէրութեան փառքի ու մեծութեան համար։ Նորա ուշքն ու միտքը զինուորական գործի, տէրութիւնը կառավարելու վերայ էր։ Նորա սիրտը հալ ու մաշ էր լինում փառքի հասնելու փափագով։ Նորան շատ անգամ տեսնում էին տրտում տխուր, մտածութեանց մէջ ընկղմած։ Մի անգամ հարցրին այդպիսի տխրութեան պատճառը. նա պատասխանեց. «Միլտիադէսի յաղթութեան յիշատակը հանգիստ չէ տալիս ինձ»։

Մարաթոնի յաղթութիւնից յետոյ Յոյները կարծում էին, որ Պարսիկներն այլևս չեն համարձակուիլ պատերազմել իրանց դէմ. միայն Թեմիստոկլէսն էր, որ պարզ տեսնում էր այդ կարծիքի սխալ լինիլը։ Նա գիտէր որ Մարաթոնի պարտութեամբ Պարսիկներն աւելի պիտի գրգռուէին և ուրեմն ահեղ պատերազմը դեռ առաջն էր։

Երբ Միլտիադէսի մահուանից յետոյ Աթէնքի կառավարութիւնը Թեմիստոկլէսի ձեռքն անցաւ՝ համոզեց Աթէնացիներին պատրաստութիւններ տեսնելու, և որովհետև իւր հայրենիքի ապագայ զօրութիւնն ու փառքը միայն ուժեղ նաւատորմղի մէջն էր տեսնում, այս պատճառով Լաւրիոնի արծաթահանքի բոլոր արդիւնքը նշանակեց նաւեր շինելու համար. նա յաղթեց իւր հակա-

ակորդներին, աշխատեց միաբանել Յունական թշնամի տէրութիւնները՝ ի սէր հայրենի ազատութեան:

Երբ որ Պարսից նաւատորմիղը մօտեցել էր Սալամինային և Յոյների վիճակը շատ տագնապի մէջ էր՝ խորհուրդ հարցրին Դելֆեան պատգամախօսին. բայց կարծես ինքն Ապոլլոնը մնացել էր տարակուսած. պատգամախօսը մութ ու անորոշ պատասխան տուաւ, թէ «Աթէնքը պէտք է պաշտպանուի փայտեայ պարսպի յետեւ»: Զանազան մարդիկ զանազան կերպ էին բացատրում պատգամը: Այստեղ Թեմիստոկլէս սկսաւ հաւատացնել ժողովրդին, թէ պատգամի մտքով փայտեայ պարիսպ ասելով՝ նաւերը պիտի հասկանանք, և սոքա պէտք է լինին մեր փրկութեան միակ միջոցը: Աթենացիք հետեւեցան Թեմիստոկլէսի խորհրդին, թողին իրանց տներն ու կալուածքը և զինուորուած մտան նաւերը ազատութիւնը պաշտպանելու համար. ոչ ծերերի աղաչանքը, ոչ մանկանց արտասուքը չկարողացան յետ պահել նոցա որոշումից: Զէնք առնելու զօրութիւն չունեցողները տեղափոխուեցան մօտակայ ծովեզերքն ու կղզիները:

Աթէնքի դէմը, Սալամինա կղզու մօտ, սպասում էր Թեմիստոկլէս 380 նաւերով թշնամու յարձակմանը: Ամբողջ ծովը, աչքը կտրածի չափ տարածութեամբ բռնել էր Պարսից նաւատորմիղը: Յոյներն ահարեկ եղան, ինչպէս և Մարաթոնում. նոցա բոլոր դաշնակիցները գլուխ առին քաշուեցան. Սպարտացիք խորհուրդ արին միայն Պելոպոննէսը պաշտպանելու, որովհետև այլևս Ատտիկայի ազատութեան յոյս չկար՝ Աթէնքն առնուելուց յետոյ: Յոյների փոքրոգութիւնը յուսահատեցնում էր Թեմիստոկլէսին. իզուր էր աշխատում քաջալերական խօսքերով յետ պահել նոցա, վերջը մտածեց խորամանկութիւն բանեցնել: Գաղտուկ իւր ծառայի ձեռքով մի նամակ ուղարկեց Կսերքսէսին, որի մէջ գրել էր. «Մեծ արքայ, ես քո բարեկամն եմ և ուզում եմ քեզ մօտ պաշտօնի մտնել. Յոյները մտադիր են գալոց գիշերը փախչել ծովածոցից. նոցա առաջը փակիր՝ և կոտորես նոցա բոլոր նաւատորմիղին»: Կսերքսէս հետեւեց Թեմիստոկլէսի խորհրդին. Յոյները շրջապա-

տած էին. այժմ կամայ ակամայ պէտք է մնային և կռուէին մինչև արեան վերջին կաթիլը:

Կռիւը հանդարտ էր. Պարսիկները կասկած չունէին իրանց յաղթութեան վերայ. նոքա յարձակուեցան Յոյների վերայ, բայց յանկարծ մի քամի բարձրացաւ և նոցա նաւերը հեռացրեց միմեանցից: Թեմիստոկլէսն օգուտ քաղելով հանգամանքից՝ թեթև նաւերով շրջապատեց Պարսից ծանր նաւերը: Սահաշունչ ու կատաղի կռիւ բարձրացաւ. վերջապէս Յոյները գերազանցեցին: Օդը լցուեցաւ մեռանող Պարսիկների լաց ու կոծով և Յոյների ուրախալից աղաղակներով: Մարտի ժամանակ Կսերքսէս փառաւորապէս բազմած էր գահի վերայ, Ատտիկայի ծովեզերքում. նորա մօտ երկու քարտուղարներ կային, որ պէտք է Պարսից զօրքի յաղթութիւնները ստորագրէին. երբ տեսաւ իւր զօրքի չարաչար պարտութիւնն՝ ամօթահար շտապեց Ասիա փախչել: Թեմիստոկլէս աւելի շուտով Յունաստանից նորան հեռացնելու համար՝ մի ուրիշ խորամանկութիւն գործ դրաւ. մարդ ուղարկեց Կսերքսէսի մօտ, թէ Յոյները ուզում են Հելլեսպոնտոսի կամուրջը քանդել: Փախստականը մէկ նաւակի վերայ շտապեց, որ կամուրջն անցնէ:

Սորանից յետոյ Թեմիստոկլէսը Յունաց սիրելի դիւցազը դարձաւ: Սպարտացիք իրանց քաղաքը հրաւիրեցին նորան, ձիթենի պսակով զարդարեցին նորա գլուխը և մի փառաւոր կառք ընծայեցին, որի մէջ նստած և 300 Սպարտացի երիտասարդներով շրջապատած՝ Աթէնք դարձաւ: Մի քանի ժամանակից յետոյ Յոյները ժողովուել էին Ոլիմպիական խաղերի համար. այդ տեղ ամբողջ ժողովուրդը ցնծութեամբ ողջունեց Թեմիստոկլէսին. այսպիսի պատուից շարժուած՝ նա ասաց. «Այժմ ես վարձատրուած եմ իմ բոլոր աշխատանացս համար:

6.

ՊԼԱՏԷԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (479). ԱՐԻՍՏԻԴԷՍ ԵՒ ՊԱՒՍԱՆԻԱՍ.

Կսերքսէս Յունաստանից քաշուելով իւր զօրապետ Մարդո-

նիոսին մեծագումար զօրքով թողեց Յունաստանում, որ մի անգամ էլ փորձէ զէնքի բաղդը: Մարդոնիոս կեղծաւորութեամբ առաջարկեց Աթենացիներին բարեկամութեան դաշն կապել, խոստանալով վերանորոգել իրանց քանդած Աթէնքը: «Մեր մէջ ոչինչ դաշնակցութիւն չի լինել, քանի որ արեգակը կայ երկնքում», պատասխանեցին քաջ Աթենացիք: Մարդոնիոս չարացած՝ յարձակուեցաւ Աթէնքի վերայ և վերջնական կերպով կործանեց թշուառ քաղաքը: Այնտեղից դարձաւ Բէովտիա և բանակ դրաւ Պլատէայի մօտ: Սպարտացիք Պաւսանիասի առաջնորդութեամբ և Աթենացիք Արիստիդէսի այդտեղ վրայ հասան. արիւնահեղ պատերազմ բացուեցաւ, որի մէջ Պարսից ցամաքային զօրքն իսպառ ոչնչացաւ: Ամբողջ բանակն աւար մնաց Յոյներին: Միևնոյն օրը Յոյները մի փառաւոր յաղթութիւն էլ փոքր Ասիայի ափերում ունեցան, խորտակելով Պարսից նաւատորմիղն:

Մինչև Պարսից պատերազմների վերջը՝ միացեալ Յունաց գերիշխանութիւնը (հեգեմոնիա) միշտ Սպարտացւոց ձեռքն էր. բայց վերջին յաղթութեանց ժամանակ Սպարտացւոց Պաւսանիաս թագաւորի ամբարտաւան վարմանց պատճառով՝ բոլոր դաշնակիցները մէկիկ մէկիկ յետ քաշուեցան Սպարտայից և գերիշխանութիւնը կամ Սպարապետութիւնը յանձնեցին Աթէնքին, որ իւր ծովային զօրութեան մեծութեամբն աւելի կարող էր պաշտպանել Յունաստանը:

Աթենացիք թէ տէրութեան և թէ ընդհանուր հայրենիքի նշանաւոր գործերը յանձնեցին ազնիւ ու իմաստուն Արիստիդէսին: Ամէնքն էլ նորան անուանում էին «Արդար». նա իւր բոլոր ջանքերը գործ դրաւ Աթէնքի զօրութիւնն ու Յունաստանի ազատութիւնը հաստատելու համար: Նորա առաջարկութեամբ դաշնակիցները վճռեցին ամէն տարի որոշ չափով տուրք վճարել՝ ընդհանուր ծախքերի համար: Այնքան մեծ հաւատարմութիւն ունէր Արիստիդէս, որ ոչ միայն ընդհանուր գանձարանի կառավարութիւնը (Դէլ՛ոս կղզու վերայ, Ապոլ՛լ՛ոնի տաճարում) յանձնած էր նորան, այլև նորա կարգադրութեանն էր թողած դաշնակից տէրութեանց

վճարելի տուրքը սահմանել: Մի անգամ դատարանի առաջև նա պէտքէ մի Աթենացու մեղադրէր. դատաւորներն այնքան վստահ էին նորա արդարութեան վերայ, որ ուզում էին առանց մեղադրուածին լսելու՝ դատապարտել նորան: Այն ժամանակ Արիստիդէս միջնորդեց, որ չզրկեն դատապարտուածին իրան պաշտպանելու իրաւունքից:

Մի անգամ Թեմիստոկլէս ազգային ժողովի մէջ յայտնեց, որ մի բան է մտածել Աթենացւոց համար շատ օգտակար, բայց չի կարող ամենքի առաջ ասել, և խնդրեց որ մի արժանաւոր անձն ընտրեն, որին նա յայտնէ իւր առաջարկութիւնը: Ժողովուրդն ընտրեց Արիստիդէսին: Թեմիստոկլէս յայտնեց՝ որ հեշտութեամբ կարելի էր այրել Սպարտացւոց նաւատորմիղը և ոչնչացնել նոցա ծովային զօրութիւնը: Արիստիդէս ժողովին յայտարարեց թէ՝ իրաւ է, Թեմիստոկլէսի առաջարկութիւնը մեծ շահ ունի Աթէնքին, բայց գործը արդար գործ չէ: Աթէնացիք անկասկած լինելով նորա արդարամտութեան վերայ՝ մինչև անգամ հետամուտ չեղան իմանալու Թեմիստոկլէսի առաջարկութեան ինչ լինելը, և գործը մնաց անկատար:

Սակայն Արիստիդէսն էլ թշնամիներ ունեցաւ: Թեմիստոկլէս իւր ձգտումներին անարգել հետևելու համար՝ շատերին իւր կողմը գրաւեց Արիստիդէսին խեցեկուտի վճռով հայրենիքից աքսորելու համար: Այս Պարսկական պատերազմներից առաջ էր: Ինքն Արիստիդէսն էլ ներկայ էր այն ժողովին, ուր նորա աքսորը վճռուեցաւ: Մի գիւղացի եկաւ նորա մօտ և խնդրեց խեցու վերայ գրել Արիստիդէսի անունը: Արիստիդէս նորան հարցրեց. «Միթէ նորանից մի վնաս տեսել ես, որ աքսորման ձայն ես տալիս նորա մասին»:—Ո՛չ, պատասխանեց գիւղացին ես նորան չեմ էլ ճանաչում, միայն զայրոյթս գալիս է, երբ ամէնքը նորան ա ր դ ա ր են անուանում»: Արիստիդէս իւր անունը խեցու վերայ գրեց տուաւ գիւղացուն: Քաղաքից հեռանալու ժամանակ՝ նա ձեռքերը վերվերցրեց և աղաչեց աստուածներին՝ այնպիսի օրերի չհասցնել Աթենացւոց, որ հարկադրուած լինին յիշել Արիստիդէսին: (Պար-

ռեց պատերազմների ժամանակ նա յետ կանչուեցաւ աքսորից)։

Ազնուութեամբ կատարելով իւր վերայ դրած ծանր պարտականութիւնները՝ արդարամիտ Արիստիդէսը մեռաւ վերջին աղքատութեան մէջ, այնպէս որ իւր թաղման համար էլ փող չթողեց։ Սակայն քաղաքակիցներն այս անգամ երախտագէտ գտնուեցան. նորա թաղման ծախքը վճարեցին հասարակական գանձարանից, և աղջկանցը դաստիարակեցին տէրութեան հաշուով։

Ն.

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻՆ ՀԱԼԱԾԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ.

Այնքան մրրկալից անցքերից յետոյ Յոյները մի քանի ժամանակ հանգիստ վայելեցին. Ատտիկայի բնակիչները փոքր առ փոքր վերադարձան հայրենիք։ Աւերակների միջից վերականգնուեցաւ Աթէնքն առաւել գեղեցիկ և առաւել փառահեղ։ Թեմիստոկլէսի խորհրդով քաղաքն սկսան պատել լայն ու բարձր պարսպով։ Սպարտացիք, որ սաստիկ նախանձում էին Աթէնքի բարձրանալու վերայ՝ շատ անհանգիստ եղան. նոցա քաղաքը Լիկուրգոսի օրէնքով պարիսպ չպիտի ունենար։ Նոքա դեսպան ուղարկեցին Աթէնք հարցնելու, թէ ինչ նպատակով են պարսպում քաղաքը, քանի որ նոր յարձակման ժամանակ այդ պարիսպը կարող է պատսպարան դառնալ թշնամեաց համար։ Բայց Թեմիստոկլէս լաւ հասկանալով բարեհոգի դրացիների խորհուրդը՝ խորամանկութեան դէմ խորամանկութիւն բանեցրեց. նա երկարաձգեց բանակցութիւնը դեսպանների հետ, միևնոյն ժամանակ հրամայեց, որ գիշեր ցերեկ անդադար աշխատեն պարիսպը վերջացնելու։ Ծեր և տղայ, այր և կին գործում էին եռանդով։ Երբ պարիսպը վերջանալու մօտ էր՝ ինքն անձամբ գնաց Սպարտա, խնդրեց որ մի քանի հասկացող քաղաքացիք գնան Աթէնք այդ առթիւ խորհրդակցելու։ Բայց ծածուկ նամակ գրեց Աթէնք որ Սպարտացի դեսպաններին պահեն մինչև

իւր վերադարձը։ Երբ արդէն վերջացել էր պարիսպը՝ Թեմիստոկլէս գնաց Սպարտացւոց ազգային ժողովը և յայտնեց որ Աթէնքն ամրացրել են գիտութեամբ, որովհետև այդ բանն օգուտ են համարել հայրենիքի բարեաց համար և ոչ ոքի պարտական չեն հաշիւ տալու այդ մասին։ Շատ զայրացան Սպարտացիք. բայց Թեմիստոկլէսին չէին կարող վնաս հասցնել, վասն զի իրանց դեսպանները դեռ Աթէնքումն էին։

Թեմիստոկլէսն աշխատում էր նաւատորմիղը զօրացնելով Աթէնքը բոլոր Յոյն տէրութիւններից բարձրացնել։ Այս նպատակով նա շինեց Պ ի ւ թ է ո ն գեղեցիկ նաւահանգիստը և որոշեց որ Աթէնքը տարէնը 20 հատ նոր նաւ շինի։ Բայց չնայելով Թեմիստոկլէսի մեծամեծ ծառայութեանցը՝ նա էլ դատապարտուեցաւ հայրենակիցներից։ Սորա պատճառը Պաւսանիաս էր։

Պաւսանիաս երբ դաշնակցաց նաւատորմղի գլուխն անցած գնաց Բիւզանդիոնն տիրեց, կարճ ժամանակից յետոյ շռայլութեան մէջ ընկաւ. գեղխ կեանք վարեց, սկսաւ թագուն յարաբերութիւն անել Պարսից հետ. Պարսիկ գերիներին բաց թողեց և շատ ամբարտաւանութեամբ վարուեցաւ Յոյն դաշնակիցների հետ, և այս պատճառով նոքա Սպարտացւոց սպարապետութիւնը մերժեցին։ Սպարտացիք կանչեցին Պաւսանիասին և դատի ենթարկեցին։ Նա երկու անգամ փախաւ. վերջապէս մեղադրեցին նորան մատնութեան մէջ, որովհետև թղթերը բռնել էին և վճռեցին բանտ դնել. բայց նա փախաւ Աթէնասի տաճարը մտաւ։ Յունաց հասկացողութեամբ տաճարի մէջ չէր կարելի ձեռք տալ նորան. այս պատճառով Սպարտացիք տաճարի դռները քար շարեցին կալան, որ գնայ քաղցած մեռնի, և առաջին քար դնողը իւր մայրն եղաւ։

Որպէս զի նախատինքը մենակ իրանց վրայ չլինի՝ Սպարտացիք առ նախանձու Թեմիստոկլէսին էլ Պաւսանիասի մատնութեան գործակից ամբաստանեցին։ Աթենացիք նորան աքսոր վճռեցին։ Նա փախաւ Ասիա, Պարսից Արտաշէս թագաւորի մօտ, որ շատ քաղցրութեամբ ընդունեց նորան և առանձին եկամուտ նշանակեց նորա համար. այս անում էր՝ որպէս զի նորա օգնութեամբ նու-

աճէր Յունաստանը։ Մի քանի ժամանակից յետոյ Արտաշէս յիրաւի առաջարկեց Թեմիստոկլէսին ահագին զօրքով գնալ Աթէնքի վերայ։ Մի կողմից հայրենիքի սէրը, միւս կողմից երախտագիտութեան զգացմունքը դէպի իւր բարերարը՝ տանջում էին նորա սիրտը. վերջապէս նա աւելի բարւոք համարեց մեռնել, և թոյն խմեց մեռաւ։ Մագնէսիա քաղաքում հոյակապ արձան կանգնեցին այդ երևելի Աթենացու համար, իսկ նորա հողեղէն նշխարները, ինչպէս ինքը ցանկացել էր, բերուեցան իւր սիրելի, բայց ապերախտ հայրենիքը։

Զ.

ԱԹԷՆՔԻ ԾԱՂԿՈՒՄԸ ՊԵՐԻԿԼԷՍԻ ԺԱՄԱՆԱԿ
(468—429).

Թեմիստոկլէսից յետոյ Աթէնքի կառավարութիւնը Միլտիադէսի որդի Կիմոնի և Կսանտիպպոսի որդի Պերիկլէսի ձեռքն անցաւ։ Կիմոն ազնուապետական կուսակցութեանն էր պատկանում, իսկ Պերիկլէս՝ ժողովրդական։ Սակայն կարճ ժամանակից յետոյ կառավարութիւնը միայն Պերիկլէսի ձեռքն ամփոփուեցաւ, որովհետև Կիմոն դատապարտուեցաւ աքսորման։

Սորա պատճառը երրորդ Մեսսենական պատերազմն էր. Մեսսենացիք և Հիլոտները Սպարտայում պատահած զարհուրելի երկրաշարժից օգուտ քաղելով՝ ապստամբեցան Սպարտական լծի դէմ. Սպարտացիք նեղի ընկան և օգնութիւն խնդրեցին Աթէնքից. Կիմոն ազգային ժողովին համոզեց օգնելու Սպարտային և ինքն Աթենական զօրքով գնաց Իթոմէն պաշարելու. Սակայն Սպարտացիք շատ վշտացրին Աթէնացի զօրքին իրանց կոպիտ, երախտամոռ և ամբարտաւան վարմունքով. Կիմոն հարկադրուած էր ամօթահար յետ դառնալ. Այս հանգամանքից գրգռուած Աթենացիք Պերիկլէսի առաջարկութեամբ տասնամեայ աքսոր վճռեցին Կիմոնին. Կառավարութեան ղեկն այսպիսով միայն Պերիկլէսի ձեռքն անցաւ.

Պերիկլէս ամբողջ 40 տարի կառավարեց երկիրը, իբրև ան-

հակառակելի ճարտասան և հմուտ պետական մարդ։ Այս մեծագոյն մարդու ժամանակ Աթէնքը ոչ միայն արտաքին զօրութեամբ փառաւորուեցաւ, այլև գիտութիւններով ու ճարտարութիւններով ծաղկեցաւ։ Նորա կառավարութեան ժամանակ Աթէնքն այնպէս շքեղացաւ, որ Յունաստանի բոլոր քաղաքների թագուհին էր համարվում։ Հոյակապ տաճարները, վարժարանները, թէատրոնները և ուրիշ հասարակական շինութիւնները փառահեղութեամբ զարդարուեցան։ Միջնաբերդը ճարտարապետական շինուածների հանդիսարան դարձաւ։ Քաղաքի հիւսիսային մասում բարձր թմբի վերայ շինած էին բազմաթիւ լայն ու գեղեցիկ սանդուղներ։ Միւս կողմը երևում էր մեծ հրաշակերտ դարպասը մարմարեայ սիւներով և հինգ անցքերով։ Ձախ կողմում գտնվում էր յաղթութեան աստուածուհու մարմարաշէն տաճարը, աջ կողմումն էր գեղաշուք զբօսարանը, որի պատերը ներսի երեսից զարդարած էին լաւագոյն ճարտարապետների պատկերներով։ Քաղաքից դուրս մեծ պարսպապատ հրապարակը միջնաբերդի հետ միացնում էր Նախադրունքը (Պրոպիլէ)։ Միջնաբերդի բարձրագոյն գագաթում կանգնուած էր քաղաքի պաշտպան աստուածուհու՝ Աթենասի պղնձեայ սպառազինած արձանը աւելի քան մարդաչափ բարձրութեամբ։ Սունիական հրուանդանից, քաղաքից 5 մղոնաչափ հեռու, արդէն կարելի էր ճանաչել նորան՝ ձեռքի նիզակից և փայլուն սաղաւարտից։ Բոլոր շքեղազարդ տաճարներից աւելի զարմանալին Աթենասի տաճարն էր։ Կարելի էր մտածել, որ Աթենացիք իրանց պաշտպան աստուածուհուն երախտագիտութիւն ցոյց տալու համար անխնայ շռայլել էին ամենայն ինչ։ Տաճարի շուրջը շինած էր ընդարձակ կամարակապ սրահ բարձր մարմարոնեայ սիւների վերայ։ Այս սրահի մէջ դրած էր Կսերքսէսի, գահաւորակը, որի վերայ նստած էր նա Սալամինայի պատերազմի ժամանակ։ Տաճարի մէջ կանգնած էր նոյն աստուածուհու արձանը 30 ոտնաչափ բարձրութեամբ, զրահաւորուած, սաղաւարտը գլխին, վահանը և նիզակը ձեռին։ Երբ հռչակաւոր ճարտարապետ Ֆիդիաս խորհուրդ էր անում ազգային ժողովի մէջ այդ արձանի վերաբերմամբ՝ նկատեց որ եթէ

ոսկուց շինեն՝ թէև շատ գեղեցիկ կլինի, բայց շատ թանգ կընստի, լաւ է մարմարիոնից շինել: «Ո՛չ, ո՛չ, աղաղակեց ժողովուրդը, ոսկուց ու փղոսկրից շինիր, թող թանգ լինի»: Փիդիաս արձանը շինեց փղոսկրից՝ իսկ վերարկուն ոսկուց:

Պերիկլէսի ժամանակ նկարչութիւնն էլ վերին աստիճանի կատարելութեան հասաւ: Երևելի նկարիչներն էին Զևքսիս և Պարհասիոս: Սոքա մի անգամ գրազ եկան, տեսնեն ով աւելի լաւ կընկարէ: Զևքսիս մի ողկոյզ նկարեց այնքան բնական, որ թռչունները գալիս կտցահարում էին նորան: Պարհասիոս բերաւ իւր նկարը քօղով ծածկած: «Քօղը վերցրու տեսնենք», ասաց Զևքսիս: Պարհասիոս ծիծաղեցաւ, որովհետև հենց քօղն էր նորա նկարը: Այսպէս, մէկը թռչուններին խաբեց, միւսը իւր ժամանակի ամենաերևելի նկարչին:

Յունաց քաղաքներից ոչ մէկը չէր կարող համեմատուել Աթէնքի հետ. սա Յունաստանի արևն էր, որի լուսաւոր ճառագայթները տարածվում էին դէպի ամեն կողմ: Աթէնքը համարվում էր բոլոր գիտնականների ու ճարտարապետների ժողովատեղին, ուր նոքա պաշտպանութիւն ու խրախոյս էին գտնում իրանց տաղանդին: Քաղաքի ամեն մի անկիւնում առաւօտեանից մինչ երեկոյ եռում էր կեանք և գործունէութիւն:

Պատանիքն ու հասակաւոր անձինք վարժվում էին այդտեղ հասարակական խաղերի մէջ. ոմանք հաւաքվում էին հասարակաց սրահները իմաստունների դասերը լսելու համար. այլ ոմանք իրանց զգացմունքները կրթում էին թէատրոնի մէջ: Ով որ կարողութիւն չունէր՝ գանձարանից փող էր ստանում, որ կարողանայ ժողովների ու թէատրոնների ներկայ գտնուիլ: Համարեա ամեն օր թէատրոնական ներկայացումներ էին տրւում. ներկայացումը վերջացնելուց յետոյ հանդիսականները հրապարակաւ յայտնում էին, թէ ո՛ր թատերգութիւնը լաւ էր շարադրած, կամ ո՛ր դերասանը լաւ խաղաց: Հաւանութիւն գտնողներն ստանում էին պսակներ և նոցա անունները փորագրվում էին սիւների վերայ:

Քաղաքի մէջ երեք վարժարաններ (գիմնազիոններ) կային:

Սոքա առ հասարակ գտնվում էին մեծ պարտիզի մէջ՝ ծառերով և թփերով շրջապատած: Այստեղ գալիս էր ամեն ոք, ով կցանկար: Ծերերը խօսակցում էին երիտասարդների հետ բարի և գեղեցիկ նիւթերի մասին, այն ամենի մասին, ինչով որ մանկան հոգին կզարգանայ: Սրահների մէջ լողանում էին. լողարանների շուրջը շինած էին զանազան վարժութեանց տեղեր: Այսպիսով Աթենացիք կրթում էին միանգամայն իրանց մարմինը և հոգին:

Որոշ օրերով ժողովուրդը հաւաքվում էր հրապարակը խորհրդակցութեան համար, ուր նոքա յափշտակվում՝ զմայլվում էին հռետորի տաղանդի վերայ: Ամբողջ օրը նաւահանգիստը չէր դատարկվում. շարունակ վաճառքներ էին ներս բերում, կամ դուրս ուղարկում:

Այսպէս ծաղկեցրեց Պերիկլէս Աթէնքը և փառաւորութեան կատարը հասցրեց: Նա դաշնակցաց գանձարանը Դելոս կղզուց փոխադրեց Աթէնք. հազարաւոր կղզիք ու քաղաքներ պարտաւոր էին հասոյթ տալ Աթէնքին՝ իրանց պաշտպանութեան համար: Այս փողերը, նոյնպէս և Պարսիկներից խլած հարստութիւնները Պերիկլէս գործադրում էր քաղաքը զարդարելու և գիտնականներին ու ճարտարապետներին հովանաւորելու համար:

Իւր պարզ, օրինակելի վարքով, մանաւանդ իւր ազդու պերճախօսութեամբ, Պերիկլէս գրաւել էր քաղաքակիցների սիրտն ու հոգին: Նորա բոլոր խորհուրդներն ու առաջարկութիւնները կատարվում էին. ում նա մեղադրէր՝ դատապարտուած էր, ում պաշտպանէր՝ ազատուած: «Որոտ ու կայծակ է նորա լեզուի մէջ» ասում էին Աթենացիք և Ոլիմպիացի էին անուանում նորան: Մի անգամ երբ նա ժողովի մէջ ճառ ասաց՝ պատերազմի դաշտում մեռածների ազգականներին մխիթարելու համար, բոլոր ժողովականների սիրտն այնպէս շարժուեցաւ նորա խօսքերից, որ մինչև անգամ մեռածների մայրերը շնորհակալութեան արտասուքով մօտեցան նորան և պսակեցին ծաղիկներով:

Այս մեծահամբաւ անձի կառավարութեան տակ Աթէնքն

այնպէս ծաղկեցաւ ու բարձրացաւ, որ իրաւամբ Պերիկլեան շրջանը կոչվում է Աթէնքի Ոսկեդարը:

Ե.

ՊԵԼՈՊՈՆՆԷՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (431—404).

1.

Աթէնք և Սպարտա միմեանց ախոյեան.

Հետզհետէ Աթենացիք հպարտացան իրանց յառաջադիմութեամբ: Նոքա դաշնակիցների հետ վարվում էին իբրև հպատակների հետ, ճնշում էին նոցա, կամայականօրէն աւելորդ տուրքեր էին առնում և իրանց օգտին գործ ածում, ոչ ոքի հաշիւ չտալով այդ մասին: Դաշնակից Յոյները ցաւօք սրտի տեսնելով, որ Աթենացիք դէպի չարն են գործ ածում իրանց գերիշխանութեան իրաւունքը՝ սկսան ատել նոցա, և այս ատելութիւնը քանի գնաց աւելացաւ: Ամենից շատ Սպարտայի համար էր անտանելի Աթենացւոց սպարապետութիւնը, ուստի անբաւական տէրութեանց գլուխն անցած՝ ամէն կերպ գրգռում էր նոցա ընդդէմ Աթէնքի: Այսպիսի հանգամանքների մէջ միայն մի առիթ էր պակաս բարեկամական կապերը կտրտելու համար, և այս առիթը չյապաղեց. հրդեհը բարձրացաւ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲՆ 431. Եպիրոսի ծովեզրում գտնվում էր Եպիդամնոս քաղաքը, որ Կորկիւրացւոց գաղթականութիւնն էր. Յունաց միւս քաղաքների պէս այստեղ էլ անկարգութիւններ ու կուսակցութիւններ կային, որոց պատճառով ազնուապետականներից շատերը աքսորուած էին քաղաքից. Աքսորուածները վրէժխնդիր լինելու համար դրացի Իլլիրիացւոց հետ յարձակուեցան Եպիդամնոսի վերայ. Սա էլ նեղի ընկած օգնութիւն խնդրեց Կորկիւրայից, բայց բացասութիւն ստացաւ. Եպիդամնացիք դիմեցին Կորնթոս քաղաքի օգնութեանը, որ ուղարկեց նոցա զօրք և նաւատորմիղ. Դորանից ծագեցաւ պատերազմ Կորնթոսի և Կորկիւրայի մէջ. երկուքն էլ Յունաստանի զօրեղագոյն տէրութեանց պաշտպանութիւնը խնդրեցին. Կորնթոսին պաշտպան հանդիսացաւ Սպարտան, իսկ Կորկիւրային—Աթէնքը. Այսպէս

սկսուեցաւ Պելոպոննէսեան քսանութօթնամեայ պատերազմը, որ սպառեց ոչնչացրեց Յունաստանի բոլոր ոյժերը.

Գրեթէ Յունաց բոլոր տէրութիւնները մասնակից էին այս կռուի մէջ. բայց մեծ մասը կուսակից էր Սպարտային, որ կարծում էին թէ իրանց ազատիչը պիտի լինի: Աթենացիք յոյսները դրել էին իրանց ամուր պարիսպների, հզօր նաւատորմղի և հարուստ գանձարանի վերայ: Ընհասարակ ազնուապետական կուսակցութիւնները Սպարտայի կողմն էին բռնում, ռամկապետականները—Աթենքի կողմը:

Առաջին տասն տարին ոչինչ նշանաւոր հետեանք չյառաջացաւ պատերազմների համար: Սպարտացիք ամեն տարի յարձակվում աւերում էին Աթենացւոց երկիրները. իսկ Աթենացիք իրանց նաւերի վերայ անդադար յարձակվում էին Սպարտայի և նորա դաշնակիցների ծովափնեայ երկիրները:

ԺԱՆՏԱԽՏ ԱԹԷՆՔՈՒՄ. ՊԵՐԻԿԼԷՍԻ ՄԱՀԸ.

Պատերազմների պատճառով անհամար բազմութիւն էր լցուել Աթէնքի մէջ: Պատերազմի երկրորդ տարին ժանտախտ ընկաւ քաղաքի մէջ և տարածուեցաւ ամբողջ Ատտիկայում. բազմաթիւ անձինք զոհ գնացին այդ ցաւին: Այն ժամանակուայ ամենաերեւելի բժիշկ Հիպպոկրատէս, որ կանչուած էր Կոս կղզուց, իւր բոլոր ճարտարութեամբ ոչինչ չկարողացաւ անել: Սկզբում Աթենացիք աղաչում էին աստուածներին և ողորմութիւն էին հայցում. բայց երբ նոցանից էլ օգնութիւն չգտան, փոխանակ համբերութեամբ տանելու իրանց թշուառութիւնը՝ անձնատուր եղան յանդուգն ու անսանձ մոլութեանց: Ժողովուրդն այլեւս օրէնքները չէր յարգում: Ամեն մարդ մահն առաջը տեսնելով՝ ցանկանում էր մինչև կեանքի վերջին րոպէն զուարճութեամբ ու վայելչութեամբ անցկացնել: Այլեւս ոչինչ սրբութիւն չկար: Այսպիսի ողորմելի դրութեան մէջ Աթենացիք սկսան մեղադրել Պերիկլէսին, իբր թէ նա էր պատճառն այդքան չարիքների. նորանից խլեցին զօրավարութեան իրաւունքը և մինչև անգամ տուգանքի ենթարկեցին: Այսպէս, այս մեծ մարդն էլ Աթենացւոց թեթեւամտութեան ու անհաստատու

թեան երեսից չմնաց զերծ. նոցա ապերախտութեան հարուածը միայն նա չկրեց. նորա ամենամտերիմ բարեկամ Փիդիաս էլ ամբաստանուելով իբր թէ Աթենասի արձանի համար գործածած ոսկու մի մասն յափշտակել էր՝ բանտը գրուեցաւ, որտեղ և մեռաւ:

Սակայն Աթենացի թեթեւամիտ ժողովուրդը շուտով տեսաւ, թէ ինչ մեծ ապերախտութիւն էր իւր արածը և թէ ինչպէս Պերիկլէս կառավարութեան մէջ անփոխարինելի էր՝ տուաւ նորան վերստին առաջուան իշխանութիւնը: Բայց դորանից յետոյ երկար չապրեց Պերիկլէս. Աթէնքի ձախորդ վիճակը, իւր սիրելի կնոջ և զաւակների ժանտախտին զոհուելը՝ նորա սիրտը կոտրեց և հոգին թուլացրեց: Ժանտախտը նորան էլ հասաւ: Մահուան անկողնի մէջ նորան շրջապատել էին քաղաքացիք և կարծելով թէ իրանց չի լսում՝ յիշում էին նորա քաջագործութիւնները, փառաբանում էին նորա հոգու մեծութիւնը ու առաքինութիւնը: Պերիկլէս այս ամենը լսում էր, և ասաց նոցա. «Դուք պատմում էք միայն այն բաները, որոնց մէջ բաղդը մասնակից էր ինձ հետ և որոնք շատ ուրիշներն էլ ունեցել են. բայց մոռանում էք, որ իմ պատճառով ոչ մի Աթենացի երբէք չի հարկադրուել սգոյ զգեստ հագնել»:—Մեռաւ այդ մեծ մարդը (429). մեռաւ նորա հետ և Աթէնքի բոլոր փառաշեղութիւնը:

Պերիկլէսի մահուանից յետոյ կառավարութիւնն անսանձ ռամկի ձեռքն անցաւ, որին թէև մինչ բարձրագոյն իշխանութիւն էր հասցրել Պերիկլէս, բայց միշտ չափ ու սահմանի մէջ էր պահում: Հիմա ով որ բարձր գոռար գոչէր՝ նորանն էր կառավարութիւնը: Այսպէս էր խաղախորդ Կլէոնը, որ Պերիկլէսի տեղն անցաւ: Նա համոզում էր ժողովրդին խստախիստ պատժել անջատուած քաղաքներն ու կղզիները: Զօրքը յանձնուեցաւ նորան: Կլէոն Ամֆիպօլիսի մօտ արիւնահեղ ճակատամարտ տուաւ Սպարտացւոց դէմ, և թէպէտ Սպարտացիք էլ մեծ կորուստ ունեցան, մինչև անգամ նոցա զօրապետը մեռաւ պատերազմի մէջ, բայց ինքը Կլէոնը նոյնպէս յաղթուեցաւ և սպանուեցաւ: Նորան յաջորդեց Նիկիաս, որ աշխատեց երկու կողմին էլ ցոյց տալ պատերազմի կորստաբեր հե-

տեանքները և համոզեց հաշտութիւն անելու: 421 Թ. խաղաղութեան դաշն կապուեցաւ Սպարտայի և Աթէնքի մէջ, այն պայմանով, որ յիսուն տարի չխախտուի խաղաղութիւնը և վերականգնեն առաջուան բարեկամական յարաբերութիւնները: Ի պատիւ Նիկիասի՝ այս խաղաղութիւնը կոչուեցաւ Ն ի կ ե ա ն խ ա ղ ա ղ ո ւ թ ի ւ ն:

2.

ԱԹԵՆԱՑԻՈՑ ԱՆՅԱՋՈՂ ԱՐՇԱՒԱՆՔՆ Ի ՍԻԿԻԼԻԱ (415—413). ԱԼԿԻԲԻԱԴԷՍ.

Նիկեան խաղաղութիւնը երկարատև չեղաւ: Այն ժամանակ Աթէնքի մէջ գտնվում էր Ալկիբիադէս փառասէր երիտասարդը, որ ամեն կերպ աշխատում էր գրգռել իւր հայրենակիցներին որևէ նոր պատերազմի, որ ինչ է առիթ գտնի բարձրանալու:

Ալկիբիադէսը Պերիկլէսի ազգականն էր և մեծ հարստութեան տէր էր. նա շատ վայելչագեղ, սրամիտ և հանճարեղ մարդ էր. բայց միևնոյն ժամանակ շատ կամակոր, փառասէր, դիւրաբորբոք և թեթեւամիտ բնաւորութիւն ունէր: Դեռևս մանուկ հասակից երևում էր նորա անթեքելի կամակորութիւնը: Մի անգամ նա ընկերակից տղաների հետ վէգ էր խաղում փողոցում. վէգը խփելու միջոցին մի կառք եկաւ, որ անցնի. «Կա՛ց», ասաց Ալկիբիադէս կառապանին. սա ոչինչ ուշք չդարձրեց: Ալկիբիադէս ձիերի առաջն ընկաւ ու մեկնուեցաւ ճանապարհի մէջ տեղն ասելով. «Ապա՛ եկ վրայիցս քշի՛ր». կառապանը սարսափած հարկադրուեցաւ կանգնեցնել, մինչև նա վերջացնէր իւր խաղը: Մի ուրիշ անգամ Ալկիբիադէս կռւում էր մի տղայի հետ, որ վայր էր ձգել նորան և հուպ էր տալիս. նա տեսնելով որ ոյժը չէ պատում հակառակորդին յաղթելու՝ սաստիկ կծեց նորա ձեռքը և բաց ընկաւ: «Ինչ ես շան պէս կծոտում» ասաց հակառակորդը. «ինչո՛ւ չես ասում առիւծի պէս», վրայ բերաւ Ալկիբիադէս:

Ալկիբիադէս շատ շռայլ էր. նա ծիրանի զգեստ էր հագնում, ոսկեայ վահան էր առնում ձեռքը, հեծնում էր ամենագեղեցիկ ձի և նստում ամենափառաւոր կառք: Նա շատ օտարոտի միջոցներ էլ

էր գործ դնում, որ ժողովուրդը միշտ նորա վերայ խօսի։—Մէկ անգամ մի գեղեցիկ շնիկ գնեց 2000 մանէթի. ամբողջ քաղաքն Ալկիբիադէսի շան վերայ էր խօսում. երբ մի քիչ հնացաւ նիւթը, կտրեց շան պոչը, հիմայ էլ դորա վերայ սկսան խօսել, և այս մեծ զուարճութիւն էր պատճառում Ալկիբիադէսին։ Մի ուրիշ անգամ փողոցով գնալիս մի խումբ մարդ տեսաւ, որ սպասում էին փող ստանալու. նա մի բուռն փող ցրուեց նոցա մէջ. ամբոխը շատացաւ, իրար գլխով ընկան. աղմուկ, կռիւ բարձրացաւ. այդ միջոցին փէշի տակից հանեց մի լոր ու բաց թողեց, խոստանալով մեծ ընծայ տալ բռնողին. ամբոխն սկսեց թռչնի յետևից ընկնել, իսկ ինքը քրքջալի ծիծաղում էր։

Իմաստուն Սոկրատեսը, որի մասին յետոյ պիտի խօսենք, նկատում էր որ Ալկիբիադէս շատ տաղանդաւոր անձն է և հայրենիքին կարող է մեծ ծառայութիւններ անել, ուստի աշխատում էր կրթել ուղղել նորա պակասութիւնները։ Ալկիբիադէս անկեղծ սիրով մտերմացաւ Սոկրատէսի հետ և շատ անգամ նորա մօտ գալիս լաց էր լինում իւր թեթևամտութեան վերայ. Սոկրատէս նորա վերայ մեծ ազդեցութիւն ունէր. շատ անգամ իւր մօտ էր պահում նորան։ Մի անգամ պատերազմի մէջ Ալկիբիադէս սաստիկ վիրաւորուել էր. Սպարտացիք նորա վերայ յարձակուեցան, բայց Սոկրատէս մեծ անձնուիրութեամբ պաշտպանեց նորան. նոյնը արաւ և Ալկիբիադէս Դելեան պատերազմում, երբ տեսաւ որ ուսուցչի կեանքը վտանգի մէջ է։

Բայց չնայելով և Սոկրատէսի ազդեցութեանը՝ Ալկիբիադէսի պակասութիւններն արմատահան չեղան նորանից. մերթ զգալով իւր սխալանքները խորին տրտմութեան մէջ էր ընկնում, մերթ մոռանալով նոցա՛ անձնահաճ բաւականութեան մէջ։ Ամենից անյաղթելի էր նորա փառք վաստակելու ձգտումը, որ պատերազմով միայն պիտի ստանար։ Տարաբաղդաբար նոյն միջոցին Սիկիլիայի Եգեստա քաղաքից դեսպաններ եկան Աթէնք և օգնութիւն խնդրեցին ընդդէմ ամբարտաւան Սիրակուսայի, որ ուզում էր բռնանալ կղզու բոլոր քաղաքների վերայ։ Նիկիաս և ուրիշ երևելի

անձինք խորհուրդ տուին Աթենացւոց հեռու մնալ նոր պատերազմներից. բայց Ալկիբիադէս իւր յափշտակիչ պերճախօսութեամբ սկսաւ համոզել, թէ ինչ մեծամեծ արդիւնքներ կարող էին վաստակել այդ պատերազմից, տէր դառնալով Սիկիլիային։ Թեթևամիտ Աթենացիք զմայլեցան նորա ճառից և վճռեցին զօրք ուղարկել Սիկիլիա. Ալկիբիադէս նշանակուեցաւ զօրապետ։

Ալկիբիադէս 415 Թ. ամենընտիր զօրքով ճանապարհ ընկաւ դէպի Սիկիլիա. նորան ընկերակից էին Լամաքոս ու Նիկիաս։ Բայց յանկարծ նորան յետ կանչեցին։ Այս բանի պատճառը հետևեալն էր։ Սիկիլիա ուղևորուելուց քիչ առաջ մի օր առաւօտեան տեսան որ Հերմէսի արձանների գլուխները կոտրած էին։ Այս յանցանքի կասկածն Ալկիբիադէսի ու նորա ընկերակիցների վերայ ընկաւ։ Թշնամիքը յաջողեցրին դատի ենթարկել նորան. դուրս գալուց առաջ Ալկիբիադէս պահանջեց որ գործն անշուշտ քննուի, բայց հակառակորդները յետաձգեցին, որպէս զի առանց նորան դիւրաւ մեղադրեն։ Եւ յիրաւի հենց որ նա բացակայեցաւ, իսկոյն դատապարտեցին նորան։ Ալկիբիադէս յետ կանչուեցաւ, բայց նա փոխանակ վերադառնալու՝ գնաց Արգոս։ Աթենացիք մահուան վճիռ կայացրին նորա համար։ Ալկիբիադէս այս լսելով ծիծաղեցաւ ու գոչեց. «Ես շուտով կապացուցանեմ, որ դեռ կենդանի եմ»։ Նա գնաց Սպարտա և այնտեղ այդ շուայտ երիտասարդը սկսեց խիստ կեանք վարել Սպարտայի օրէնքներին համաձայն։ Նա Սպարտացւոց համոզեց օգնութիւն տալ Սիրակուսային։ Այսպէս էլ եղաւ. Սպարտական զօրքը Գիլիպպոսի առաջնորդութեամբ ուղևորուեցաւ Սիրակուսա, և այդ օրուանից Աթենացւոց աստղը մարեցաւ։ Սպարտացիք 413 Թ. մեծ ջարդ տուին նոցա. խլեցին նոցա նաւերը, գերի առին զօրքը և հրամայեցին գլխատել Նիկիասին ու Դեմոսթենէս զօրապետին Սիրակուսայի հրապարակում։ Գերիներից շատ քչերը միայն հայրենիք դարձան, մնացածները վաճառուեցան 'ի ստրկութիւն։

Սորանից աւելի սարսափելի վրէժ չէր կարող առնել Ալկիբիադէս։ Աթէնքն աւելի հարուածելու համար՝ Սպարտացիք դաշն

կապեցին Պարսից հետ։ Սակայն կարճ ժամանակից յետոյ Սպարտացիք կասկած տարան Ալկիբիադէսի վերայ, տեսնելով մանաւանդ նորա մէջ վարմունքն Ագիս թագաւորի հետ և սկսան կոպիտ վարուել հետը։ Ալկիբիադէս զայրացաւ Սպարտացւոց վերայ, գնաց Պարսից մարզպան Տիսափեռնի մօտ և համոզեց նորան կռուել յօգուտ Աթենացւոց։ Սոքա տեսնելով Ալկիբիադէսի սէրը դէպ իւր հայրենակիցները՝ նորա մահուան վճիռը ջնջեցին և մինչև անգամ նորան յանձնեցին նաւատորմիղը։ Ալկիբիադէս Պարսից հետ միասին յաղթեց Սպարտացիներին ծովի և ցամաքի վերայ, յետ առաւ բոլոր նուաճած քաղաքներն ու կղզիները և առհասարակ ահուսարսափ տարածեց լքեալ Սպարտացւոց վերայ, որոնք իրանց սովորական համառօտաբանութեամբ գրեցին Սպարտա. «բաղդը դարձել է մեզանից, մեր զօրապետը սպանուեցաւ, զինուորները քաղցած են, չգիտենք ինչ անենք»։ Այսպիսի տագնապի մէջ Սպարտան դեսպաններ ուղարկեց Աթէնք հաշտութիւն խօսելու. բայց Աթենացիք գոռոզութեամբ մերժեցին նոցա առաջարկութիւնը։

Այդքան փառաւոր յաղթութիւններից յետոյ միայն Ալկիբիադէս վճռեց Աթէնք մտնել։ Բոլոր նաւահանգիստը բազմութեամբ լիքն էր. նորան ընդունեցին մեծ հանդիսով և ուրախութեան աղաղակներով։ Ամբողջ քաղաքը բերկրալից սրտով շրջապատել էր իւր պաշտելի դիւցազին, որին զարդարում էին դափնեայ պսակներով։

Բայց այս ցնծութիւնն էլ երկարատև չեղաւ։ Ալկիբիադէսն անսահման իրաւունքներով կարգուեցաւ ծովային և ցամաքային զօրաց գլխաւոր և ուղևորուեցաւ դէպի Փոքր Ասիայի ափերը։ Այստեղ լսելով որ Սպարտացւոց զօրավար խորամանկ Լիսանդրը գրաւել է իւր կողմը Պարսից նոր մարզպանին՝ փոքր Կիւրոսին, աճապարեց Փոքր Ասիա նորէն իւր կողմը ձգելու Պարսիկներին, իսկ կառավարութիւնը յանձնեց իւր օգնական Անտիոքոսին և պատուիրեց ամենևին կռիւ չը մտնել թշնամու հետ։ Լիսանդր տեղեկանալով Ալկիբիադէսի բացակայութեան մասին՝ խորամանկութեամբ սկսաւ գրգռել Անտիոքոսին, որը չհամբերելով յարձակուեցաւ Սպարտացւոց վերայ։ Լիսանդր շրջապատեց նորան Նոցիոն

հրուանդանի մօտ և բոլորովին խորտակեց նորան։ Այս ձախորդութեան լուրն որ Աթէնք հասաւ, քաղաքացիք չափազանց զայրացան Ալկիբիադէսի վերայ և խլեցին նորանից իշխանութիւնը։ Ալկիբիադէս թողեց հեռացաւ Թրակիա։

3.

ԱԹԷՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ (404) ՊԵԼՈՊՈՆԵՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԸ։—ԼԻՍԱՆԴՐ.

Ալկիբիադէսը հեռացաւ թէ չէ նորից Աթէնքի հորիզոնը մութ պատեց։ Նորա տեղը տասն զօրապետներ նշանակուեցան, որոնք եկան բանակեցան Հելլեսպոնտոսի ափին, Եգոս—Պոտամոս գետի մօտ։ Աթենական նաւատորմղի դէմ յանդիման, Ասիական ափում կանգնած էր Սպարտական նաւատորմիղը քաջ Լիսանդրի առաջնորդութեամբ։ Աթենացւոց դիրքը շատ անյարմար էր։ Ալկիբիադէս, որ գտնւում էր այդտեղից մօտիկ, զօրապետների ուշադրութիւնը դարձրեց այդ բանի վերայ, իսկ նոքա պատասխանեցին. «Քաշուիր գնա, այժմ ուրիշներն են կարգադրում այստեղ»։ Աթենացիք գոռոզ անձնապաստանութեամբ ամեն օր մօտենում էին Սպարտական նաւերին և պատերազմի էին գրգռում. իսկ խորամանկ Լիսանդրը ծոցից չէր դուրս գալիս. զօրապետները կարծում էին թէ նա երկիւղից չէ դուրս գալիս և շատ անգամ նաւատորմիղը թողում գնում էին այս ու այն կողմ։ Մի անգամ էլ Լիսանդր անակնկալ կերպով յարձակուեցաւ նոցա վերայ, շրջապատեց և զարհուրելի ջարդ տուեց նոցա Եգոս-Պոտամոսի մօտ, 3000 գերիներ իրանց զօրապետներով անգթօրէն գլխատուեցան։ Միմիայն Կոնոն զօրավարն իւր նաւով ազատուեցաւ և Կիպրոս կղզին փախաւ։

Լիսանդրն Եգոս-Պոտամոսի յաղթութիւնից յետոյ էլ ժամանակ չտուաւ որ Աթենացիք ուշքի գան. դիմեց Աթէնքի վերայ և առաւ քաղաքը 404 Թ.։ Յաղթողները խնդութեան աղաղակներով, պատերազմական երաժշտութեամբ, ծաղրելով ու ծիծաղելով Աթենացւոց վերայ՝ մտան քաղաքը, քարուքանդ արին Թեմիստոկլէսի շինել տուած պարիսպը և նաւահանգստի ամրութիւնները։

Դորանից յետոյ Լիսանդր փոխեց Աթէնքի կառավարչական կարգերը, ազգային վարչութիւնը, և աքսորուած ազնուականներից 30 հոգի կառավարիչներ նշանակելով՝ մտցրեց Սպարտայի ձևով ազնուապետական կառավարութիւն։ Այս 30 անձինք Սպարտայի կուսակիցներից էին և նշանակուեցան բոլորովին հակառակ ժողովրդի ցանկութեանը, ուստի և կոչուեցան բ ռ ն ա ւ ո ր ն ե ր։ Սոքա չափից դուրս խստութեամբ էին կառավարում. քաղաքացիներին աքսորում, կողոպտում, մահապարտ էին անում լոկ իրանց քմահաճութեամբ։ Նոցա բռնութեան գործիքը Սպարտական գունդն էր, որ թողած էր Աթէնքի մէջ։ Աթենացւոց սարսափն ու թշնամութիւնն այնքան մեծ էր, որ նոյն իսկ թշնամիք կարեկցում էին նոցա վիճակին։

Այսպիսի ողբալի դրութեան մէջ Ալկիբիադէս կարող էր յանկարծ օգնութեան հասնել ժողովրդին. բռնաւորներն այս զգում էին, ուստի նորանից վախենում էին աւելի քան բոլոր Աթենացիներից և նորա դէմ հնարներ էին մտածում։ Ալկիբիադէս այս իմացաւ և փախաւ Պարսից մարզպանի Փառնաւազի մօտ, որ ուրախութեամբ ընդունեց նորան և նշանակեց նորա բնակութեան համար մի առանձին գեղեցիկ տուն։ Բայց Սպարտացիք դադար չտուին նորան այնտեղ էլ. նոքա կաշառեցին մարզպանին։ Մի օր սպանիչները շրջապատեցին նորա տունը և չհամարձակուելով ներս մտնել՝ տունը կրակ տուին։ Ալկիբիադէս քնած տեղից վեր թռաւ և սուրը ձեռքին դուրս վազեց բոցերի միջից դէպի սպանիչները, բայց չարագործներից մէկի նետից վիրաւորուեցաւ և ընկաւ։ Նորա գլուխը կտրեցին տարան Փառնաւազին։ Ալկիբիադէսի բարեկամուհին՝ Թիմանդրա՝ ծածկեց նորան իւր ծածկոցով և այրեց վառուող տան բոցերի մէջ։

ԹՐԱՍԻԲՈՒԼՈՍ ՀԱԼԱԾԵՑ ԲՌՆԱՒՈՐՆԵՐԻՆ։ Աթէնքի չարաբաղդ վիճակը միայն ութ ամիս տևեց։ Բռնաւորների երեսից փախած, աքսորուած երիտասարդներից շատերը ապաստանարան էին գտել Թեբէյի մէջ։ Սոցա միջից Թրասիբուլոս ազատասէր և քաջ երիտասարդը մի խումբ կազմեց իւր

ընկերակիցներից և յարձակուեցաւ Ատտիկէ Թիւլէ ամրոցի վերայ և առաւ Պիրէոն նաւահանգիստը։ Բռնաւորները լաւ ջարդ կրեցին ու փախան։ Սպարտացւոց թագաւոր Պաւսանիասի միջնորդութեամբ, որ Լիսանդրի հակառակորդն էր, Թրասիբուլոս հաշտութեան պայման կապեց Սպարտայի հետ. 30 բռնաւորների իշխանութիւնը վերցաւ և ընդհանուր ներողութիւն հրատարակուեցաւ։ Աթէնքը վերստին ստացաւ իւր ազատութիւնն ու նախկին կառավարութիւնը, բայց նախկին մեծութիւնն ու փառքը կորած էին անդառնալի։

Ը.

ՍՈԿՐԱՏԷՍ.

Ոչ մի բան այնպէս ուժգին չնպաստեց Աթէնքի անկման, որքան բարուց ապականութիւնը, որ ընդհանրացել էր բոլոր դասակարգերի մէջ։ Անբարոյականութեան ամենապարզ օրինակ կարող է լինել անմեղ մահը Սոկրատէսի, որը իւր ուսմունքներով աշխատում էր քաղաքացիների բարքն ազնուացնել։—Սոկրատէս ծնաւ 469 թ. Քր. ծն. յառաջ, նորա հայրն արձանագործ էր, և ինքն էլ երկար ժամանակ պարապում էր այդ արհեստով։ Բայց այս պարապմունքը չկարողացաւ բաւականութիւն տալ նորա ձգտումներին։ Ոչ քարի, ոչ փայտի, ոչ փղոսկրի վերայ կամեցաւ նա ձևակերպել առաքինութեան գեղեցկութիւնը, այլ իւր և իւր նմանների հոգու վերայ։ Նա սկսեց լրջօրէն մտածել թէ ինչ է մարդուս նշանակութիւնը և բարձրագոյն արժանաւորութիւնները։ Նա ամեն պարապմունքներից ձեռք քաշեց և անձնատուր եղաւ խորհրդածութեանց. շատ անգամ այնպէս խորասոյզ էր լինում մտքերի մէջ, որ ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշերը մնում էր անշարժ միևնոյն տեղը կանգնած. միայն լուսածագին կարծես արթնանում էր մտածութիւնից և սկսում էր աղօթել։ Իւր զեղխ ու շռայլ հայրենակիցների մէջ՝ նա ժուժկալութեան նախատիպ էր ներկայացնում։ Նա հագնում էր շատ պարզ զգեստ, մինչև անգամ ձմեռը յաճախ

բոբիկ էր մանգալիս։ Նորա կերակուրը շատ պարզ ու հասարակ էր, և իւր պարզ կենցաղավարութեամբ փայլում էր ամենապայծառ առողջութիւն։ «Ոչ մի կարիք չունենալ, ասում էր նա, աստուածային յատկութիւն է. իսկ շատ սակաւ կարիք ունենալը՝ մօտիկ է աստուածայնութեան»։ Մի անգամ անուանի Աթենացիներից մէկը նորա մօտ գանգատում էր սաստիկ թանգութեան վերայ, թուելով ծիրանու, ընտիր գինիների և ուրիշ շռայլութեան առարկաների գները։ Սոկրատէս համբերութեամբ լսեց նորան մինչև վերջ. յետոյ առաւ նորան գնաց մի խանութ, որտեղ ուտելեղէն էին ծախում. գները հարցնելուց յետոյ ասաց. ալիւրն ու ձիթապտուղը թանգ չեն։ Յետոյ գնաց մի ուրիշ խանութ, ուր հասարակ շորեղէն էին ծախում.—տես՛, ասաց նա, ես տեսնում եմ, որ Աթէնքի մէջ ապրուստը շատ արժան է։

Մի ուրիշը գանգատում էր ոտքով կատարած ճանապարհորդութեան ժամանակ կրած չարչարանքի համար։ «Իսկ ծառադ կարողանում էր յետևիցդ գալ հարցրեց Սոկրատէս։—Ինչպէ՛ս չէ։ «Ծալակը բառնէ՞ր»։—Մի մեծ կապոց։ «Ուրեմն նա քեզանից աւելի յոգնած կլինէր։»—Ո՛չ, ես նորան էլի ուրիշ գործի ուղարկեցի։ «Նայի՛ր, ասաց Սոկրատէս, դու ծառայիցդ աւելի բաղդաւոր ես, բայց բնութիւնը նորան աւելի առաւելութիւններ է տուել։ Դու հարուստ ես և ազատ, բայց թոյլ և քնքոյշ. իսկ նա աղքատ է և ստրուկ, բայց առողջ և ուժեղ։ Ինքդ ասա. ձեզանից ո՞րն է աւելի երջանիկ։

Սոկրատէսի երիտասարդ բարեկամ Անտիսթենէս ուզում էր նորանից գերազանցել չափաւորութեան մէջ։ Աչքի ընկնելու համար՝ նա ման էր գալիս պատառոտուն հագուստով։ «Բարեկամ, նկատեց նորան Սոկրատէս, հագուստիդ պատառուածքից դուրս է երևում քո ունայնասիրութիւնը»։

Իւր պարզ կենցաղավարութեամբ Սոկրատէսը միշտ զուարթ ու հաճելի էր։ Նորա ոգու հանդարտութիւնը ոչնչով չէր վրդովւում։ Մի անգամ անպիտանի մէկը նորան մի ապտակ տուաւ։ «Ափսոս որ չի կարելի նախատեսել, թէ ե՛րբ սաղաւարտը պէտք կգնայ մարդուս» ասաց Սոկրատէս։ Մի ուրիշ անգամ պատմեցին

թէ նորա մասին շատ վատ էին խօսում. փիլիսոփան պատասխանեց. «Թո՛ղ մինչև անգամ ծեծեն ինձ, երբ այնտեղ չեմ»։ Մի օր մանգալու ժամանակ պատահեցաւ մի անուանի քաղաքացու և գլուխ տուաւ նորան, բայց վերջինս գոռոզաբար անպատասխան թողեց նորա ողջոյնը։ Սոկրատէսի երիտասարդ բարեկամներն արտայայտում էին իրանց զզուանքը քաղաքացու վարման վերայ։ «Թո՛յլ տուէք, ասաց Սոկրատէսը, մի՞թէ դուք կնեղանայիք, եթէ ինձ պատահէր մի մարդ ինձանից աւելի տգեղ»։ Բայց նորա անսահման համբերութիւնը իւր կին Քսանթիպպայի հետ վարման մէջն է երևում։ Քսանթիպպան շատ կռուասէր ու անհաշտ կին էր։ Մի անգամ նա զայրացած չափազանց անպատուեց Սոկրատէսին, որ անվրդով հանդարտութեամբ լսեց նորա շատախօսութիւնը։ Բայց երբ տեսաւ որ նորա զայրոյթը հետզհետէ աւելի մեծանում է՝ թողեց դուրս գնաց տանից։ Այս բանն աւելի չարացրեց կնոջը, մօտը դրած գաւաթը վերցրեց ու մէջը ջուրը պատուհանից դուրս նորա գլխին ածեց։ «Իհարկէ, ասաց Սոկրատէսը ժպտալով, որոտմունքից յետոյ պէտք է որ անձրև գար»։

Սոկրատէսի գլխաւոր պարապմունքն էր երիտասարդներին ուսուցանել։ Բայց նա առանձին դպրոց չէր պահում, այլ ուսուցանում էր հրապարակում, զբօսարանում, ճաշի վերայ, զօրաբանակում, արհեստանոցում, մի խօսքով ամեն տեղ, ուր որ լսողներ էին լինում։ Նա ուսման վարձ չէր պահանջում ոչ ոքից։ Մի առանձին եղանակ ունէր ուսուցանելու.—իւր խօսակցի հետ սկսում էր զրոյց անել որև է առարկայի մասին և փոխադարձ հարց ու պատասխաններով հասցնում էր մինչ այնտեղ, որ խօսակիցն ինքնին ասում էր ճշմարտութիւնը։ Օրինակի համար, մի անգամ Ալկիբիադէս գանգատում էր նորան իւր ամօթխածութեան վերայ, թէ ժողովի մէջ չի կարողանում վստահ խօսել։ «Մի՞թէ ամաչում ես խօսել կօշկակարի մօտ», հարցրեց Սոկրատէս։—Ո՛չ։ «Իսկ դարբնի մօ՞տ»։—Ամենևին։ «Ուրեմն վաճառականներից ես քաշւում»։—Մտքովս էլ չի անցնիլ։ «Բայց չէ՞ որ այդ մարդկանցից է կազմւում Աթէնքի ժողովը, երբ առանձին առանձին չես ամաչում

նոցանից, էլ ժողովից ինչու ես քաշվում»: Նորա աշակերտները հաղորդել են մեզ այդպիսի ղուցատրութեան շատ օրինակները: Նոքա ամենայն հոգւով անձնատուր էին նորան և շատ անգամ զանազան նեղութիւններ ու վտանգներ բանի տեղ չէին դնում, որ ինչ է ժամանակ անցկացնեն իրանց սիրելի ուսուցչի հետ: Աթենքեան ամեն օր մի քանի վերստ ճանապարհ էր գնում, որ միայն լսէ Սոկրատէսին: Էւկլիդէս չորս մղոն հեռաւորութեամբ Մեգարայից շատ անգամ գալիս էր Աթէնք նորա հետ ժամանակ անցկացնելու. բայց որովհետև այդ ժամանակ մահուան պատիժ էին տալիս ով որ համարձակուէր Մեգարայից Աթէնք գալ, ուստի նա գալիս էր ծածուկ, կանացի զգեստով:—Էգինէս պատանին շատ ցանկանում էր աշակերտել նորան, բայց ամաչում էր իւր ցանկութիւնը յայտնել նորան, որովհետև աղքատ էր: Սոկրատէս այս իմացաւ և մի անգամ հարցրերեց. «Դու ինչու ես քաշվում ինձանից»:—Որովհետև ես միջոց չունիմ ուսման վարձ վճարել: «Միթէ ինք զինքդ այդքան քիչ ես գնահատում. չէ՞ որ դու անձնատուր ես լինում ինձ», և Էգինեսը մտաւ նորա աշակերտների կարգը: Մի անգամ Սոկրատէսը մի նեղ անցքում պատահեցաւ Քսենոփոնտին. սա մի գեղատեսիլ և խելացի պատանի էր, որին Սոկրատէս վաղուց ուզում էր իրան աշակերտ շինել: Իւր ձեռնափայտով նորա առաջը բռնեց ու հարցրեց. «Խնդրեմ ասես, ո՞րտեղ են ծախում ալիւրը»:—Վաճառանոցում: «Իսկ իւղը՞»:—Էլի այնտեղ: «Բայց ո՞ւր պիտի գնանք որ խելք և ուսումն ստանանք»: Պատանին լուռ մնաց: «Եկ իմ յետևից, շարունակեց Սոկրատէս, ես քեզ ցոյց կտամ»: Այդ օրուանից նոքա անբաժան բարեկամներ դարձան:

Այսպէս Սոկրատէս շրջապատում էր իրան ուսումնասէր և շնորհալի երիտասարդներով, որոնք յետոյ ամենանշանաւոր մարդիկ եղան: Նորա հռչակն այնպէս տարածուեցաւ, որ Դելփեան պատգամախօսը համարեց նորան ամենիմաստուն անձն:

Դժուար չէր գուշակել, որ Սոկրատէս իւր իմաստութեամբն ու առաքինութեամբ պէտքէ գրգռէր իւր անբարոյական հայրենակիցների նախանձն ու ատելութիւնը: Նոքա չարախօսեցին Սոկրատէսին և աշխատում էին նորա բոլոր արարքները ծաղրելի կացուցանել: Երբ այս ամենը ոչինչ հետևանք չունեցաւ, չարակամները հրապարակապէս մեղադրեցին նորան, իբր թէ նա չէ հաւատում հայրենի աստուածներին և եղծանում է երիտասարդների բարքը, նոքա պահանջում էին, որ անյապաղ մահու դատապարտեն նորան, որպէս հայրենիքի համար վտանգաւոր մարդու: Սոկրատէս դատարանի ատենի առաջև վայել չէր համարում երկար ու բարակ ճառ ասել իւր անձի պաշտպանութեան համար կամ ողորմութիւն հայցել, ինչպէս այն ժամանակ սովորութիւն էր, նա միայն ցոյց էր տալիս իւր կեանքը և ապացուցանում, որ ամբողջ 30 տարի ինքը միմիայն աշխատել է հայրենակիցների առաքինութեան ու երջանկութեան համար, և առաջարկում էր դատաւորներին չը մեղանչել ընդդէմ հայրենի օրէնքների: Չարախօսութիւնը զօրեղ էր, Սոկրատէսին բանտարկեցին: Նորա բարեկամներից մէկը՝ Լիւսիոս, մի գեղեցիկ ճառ էր պատրաստել նորա անմեղութիւնը պաշտպանելու համար. բայց Սոկրատէսը երբ կարդաց՝ ասաց. «Շատ հիանալի է գրած, բայց եթէ դու պատրաստէիր ինձ համար փափուկ ու բարակ ոտնամաններ, չէ՞ որ ես չէի հագնել նոցա», և յետ տուաւ ճառը Լիւսիոսին:

Հետևեալ ժողովի մէջ երեք ձայների առաւելութեամբ Սոկրատէսը մահու դատապարտուեցաւ: Եօթանասնամեայ ծերունին լսեց դատավճիռը խորին հանդարտութեամբ. բայց այդպէս սառնարիւն չկարողացան մնալ աշակերտները: Նոքա լալիս էին, աղաչում էին դատաւորներին, բայց իզուր. Սոկրատէս հրաժարական ողջոյն տուաւ դատաւորներին և ներեց իրան մեղադրողներին. նա ուրախ էր որ շուտով պէտք է փոխադրուի յաւիտենական կեանքը, անցեալ ժամանակների առաքինեաց հոգիների մէջ: Նորէն բանտը դրին նորան և շղթայեցին: Աշակերտներն ընծաներով գրաւեցին բանտապետին, և սա առաջարկեց Սոկրատէսին փախչել բանտից իւր օգնութեամբ: Բայց մեծ իմաստասէրը մերժեց այդ առաջարկութիւնը, ասելով որ իւրաքանչիւր քաղաքացու պարտաւորութիւնն

է հնազանդել օրէնքներին։ Նորա բարեկամ Ապօլլոդորն ասաց նորան արտասուագին. «Ա՜խ, ինչքան ցաւալի է, որ դու պէտք է մեռնես անմեղ»։—Մի՞թէ կցանկայիր, որ ես մեղաւոր մեռնէի, պատասխանեց Սոկրատէս ժպտալով։ Միւս առաւօտը դարձեալ կանուխ ժողովուեցան նորա բարեկամները։ Դատարանի պաշտօնեայն հանեց Սոկրատէսի վերայից շղթան և յայտնեց որ մինչ արեւը մար մտնելը պէտքէ մեռնի։ Նորա կինը, որ այդ րոպէին մանկան ձեռքից բռնած կանգնած էր այդ տեղ՝ սկսաւ բարձրաձայն հեկեկալ։ Բոլոր ներկայ եղողները չկարողացան արտասուքը զսպել։ Այն ժամանակ Սոկրատէս խնդրեց որ դուրս տանեն կնոջը, որպէս զի կեանքի վերջին րոպէները չծանրանան սրտին, և դառնալով իւր բարեկամներին՝ սկսաւ մխիթարել նոցա և յայտնեց իւր յոյսը մարդկային հոգու անմահութեան վերայ։

Այն ինչ արեւը մօտ էր մտնելու, ներս եկաւ դատարանի պաշտօնեայն բաժակը ձեռին և լացակամած թողութիւն խնդրեց, որ հարկադրուած էր մատուցանել նորան թոյնը. յետոյ երեսը շրջեց և բաժակը տուաւ նորան։ «Ասա՛ խնդրեմ, խմելուց յետոյ էլ ինչ պիտի անեմ» հարցրեց Սոկրատէսը։—Պէտք է մանգաս, մինչև որ թուլութիւն զգաս և յետոյ պարկես։ Բաժակն առաւ Սոկրատէս, աղօթեց աստուածներին և խմեց։ Այդ րոպէին բոլոր բարեկամներն սկսան լալ հեկեկալով։ «Մի՛ լաք, ասաց Սոկրատէս, դուք տեսաք, որ կնոջս դուրս ուղարկեցի, որ արտասուք չտեսնեմ»։ Դորանից յետոյ նա ման եկաւ, մինչև որ թմրեցաւ և պարկեց։ Թոյնն սկսաւ ներգործել. ոտները սառեցան. այլ ևս կեանքի նշան չկար նորա վերայ։ Աշակերտները մնացել էին կանգնած խորին տխրութեան մէջ։ Յանկարծ նա աչքերը բաց արաւ և ասաց. «Էսկուլապին մի աքաղաղ եմ պարտ, խնդրեմ ղրկէք»։ Սովորաբար Յոյները հիւանդութիւնից առողջանալիս՝ բժշկութեան աստուած Էսկուլապին մի աքաղաղ էին ղրկում. ուստի Սոկրատէս այս ասելով հասկացնում էր, որ աշխարհային կեանքը մի հիւանդութիւն էր համարում, որից ազատում էր մահը։

Այսպէս մեռաւ անմեղ Սոկրատէսը 399 թ. Ա. յ. Ք։ Նորա

մահուանից յետոյ միայն հասկացան Աթենացիք, թէ ինչքան անիրաւ վարուեցան իրանց մեծ փիլիսոփայի հետ։ Ամբողջ քաղաքը սուգ հագաւ. նորա գլխաւոր մեղադրողին մահու դատապարտեցին, իսկ միւս թշնամիներին աքսոր վճռեցին։ Ժամանակ անցաւ, Աթենացիք հոյակապ արձան կանգնեցին Սոկրատէսի համար և յարգում էին նորան իբրև աստուծոյ։ Նորա աշակերտներից Պղատոնն ու Քսենոփոնը տարածեցին նորա ուսմունքը գրով և բերանացի։

Թ.

ՍՊԱՐՏԱՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Աթէնքի անկումը մեծ ուրախութիւն պատճառեց բոլոր Յոյներին. նոքա սիրով ընդունեցին Սպարտացւոց վերին իշխանութիւնը, ազատիչ համարելով նոցա։ Բայց մի տարի էլ չանցած բիրտ Սպարտացւոց լուծը աւելի ծանր ու աւելի ատելի եղաւ նոցա համար։ Անակնկալ յաջողութիւնը շլացրել էր Սպարտացիներին. նոքա Լիկուրգոսի օրէնքներին հակառակ, սկսել էին ոսկեայ ու արծաթեայ դրամ գործ ածել. պարզութեան, խստակեցութեան և զգաստութեան տեղ՝ նոցա մէջ մտել էր ընչաքաղցութիւն, զեղխութիւն ու անառակութիւն։ Դաշնակիցները պարտաւորած էին հարկ տալ նոցա։ Սպարտացւոց այսպիսի ամբարտաւան վարմունքը յարոյց նոցա դէմ ընդհանուր ատելութիւն, որից օգուտ քաղեցին պարսիկներն իրանց նպատակների համար։

ՆԱՀԱՆՋ ԲԻՒՐՈՒՆ։ Պարսկաստանի մէջ Փոքր-Ասիայի կուսակալ Կիւրոսն ապստամբեցաւ իւր եղբայր Արտաշէս Ուշեղի դէմ, և բացի իւր բազմաթիւ զօրքից վարձեց 13,000 յոյն զինուորներ ըստ մեծի մասին Սպարտացիք՝ Կղէարքոսի առաջնորդութեամբ։ Յոյներն արդէն այնքան չէին գնահատում իրանց պատիւը, որ վարձվում էին բարբարոսների մօտ։ Բաբելոնին մերձ Կունաքսայի մօտ արիւնահեղ պատերազմ տրուեցաւ։ Յոյները թէև քաջաբար կռուեցան, բայց երբ Կիւրոս սպանուեցաւ և Պարսից

զօրքն Արտաշէսի կողմն անցան՝ նոքա հարկադրուած էին փախչել: Աթենացի Քսենոփոնտ, որ ինքնակամ մասնակցում էր այդ տեղ, առաջնորդեց մնացած 10,000 Յոյներին և մեծամեծ նեղութիւններով փախցրեց նոցա Հայաստանի վերայով Հայ գիւղացիների ձեռնտուութեամբ: Այս բանը նկարագրել է ինքը Քսենոփոնտ իւր «Նահանջ բիւրուն» գրուածքի մէջ:

ԱՆՏԱԼԿԻԴԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ (387) Արտաշէս չէր կարող մոռանալ, որ Սպարտացիք օգնութիւն էին տուել իւր եղբայր Կիւրոսին. ուստի յարձակուեցաւ նոցա Ասիական դաշնակիցների վերայ: Ագեսիլայոս, Սպարտայի թագաւորը շտապեց Ասիա և մի քանի փառաւոր յաղթութիւններ արաւ. բայց շուտով յետ կանչուեցաւ Սպարտա, որովհետև նոցա բոլոր դաշնակիցները գըլուխ էին բարձրացրել, որ անջատուեն: Պարսիկներն ուրախ էին այս հանգամանքին և իրանց նաւատորմիղն յանձնեցին Աթենացի Կոնոնին, որ Եգոս-Պոտամոսի կռուից յետոյ Պարսկաստան էր գընացել: Կոնոն խորտակեց Սպարտական նաւատորմիղը, աճապարեց Աթէնք և վերանորոգեց քաղաքի պարիսպն ու ամրութիւնները: Սպարտացիք Աթէնքի բարձրանալուց սարսափելով Անտալկիդասին ուղարկեցին Պարսկաստան որ խաղաղութիւն կապէ, և կապեց Անտալկիդեան կոչուած ամօթալից խաղաղութիւնը, որով բոլոր Ասիական Յոյները թողնուեցան Պարսիկների ձեռքին. իզուր էին այնքան արիւն թափել Մարաթոնի, Թերմոպիլէի, Սալամինայի դիւցազները:

Ժ.

ԹԵԲԷՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (378—362). ՊԵԼՈՊԻԴԱՍ ԵՒ ԵՊԱՄԻՆՈՆԴ

Սպարտացւոց ամբարտաւանութիւնը ո՛չ չափ ունէր, ո՛չ սահման: Նոքա մի դատարկ պատճառով կռիւ բաց արին Թեբէի հետ և նոցա զօրապետ Թեբիդը սուտանց ուղևորուելով դէպի Մակեդոնեա՝ խարդախութեամբ Թեբէ մտաւ և ազնուապետական կուսակցութեան գլխաւորների ձեռնտուութեամբ տիրեց Կադմէա ամրոցին, հրամայեց գլխատել ռամկապետական կուսակցութեան գլխաւոր առաջնորդներին և կառավարութիւնը յանձնեց 30 բռնաւորի, ինչպէս և Աթէնքում: Ազատասէր Թեբացիներից շատերը փախան Աթէնք, ուր որ պատուաւոր ընդունելութիւն գտան: Թեբիդի դաւադրութիւնը յարոյց բոլոր Յոյների զզուանքը: Թէպէտ Սպարտացիք պատժեցին իրանց զօրապետին ինքնակամ վարմանց համար, այսուամենայնիւ Սպարտական զօրագունդը քանի մի տարի շարունակ մնաց Թեբէի մէջ: Այն ինչ Թեբացի փախստականները հնարներ էին մտածում իրանց հայրենիքի ազատութեան համար: Դոցա թւում գտնվում էր և Պելոպիդաս, որ վառուած լինելով հայրենեաց սիրով՝ առաջնորդ դարձաւ ընկերակիցներին և մտքում վճռեց անշուշտ կործանել բռնաւորներին: Որոշած օրը Պելոպիդաս իւր տասնումէկ ընկերների հետ առաւօտուց կանուխ որսկանի շորեր հագած քաղաքից ներս մտան զանազան դռներով: Խօսք կապողներից մէկի՝ Խարոնի տանը բոլոր պատրաստութիւններն արդէն տեսնուած էին: Նոյն այդ օրը նոցանից մէկի՝ Փիլիդոսի մօտ մեծ հացկերոյթ էր պատրաստած Թեբէի երկու կառավարիչների՝ Արքիասի և Փիլիպպոսի համար: Երբ բոլոր հիւրերը յափշտակուած էին ուրախութեամբ ու ցնծութեամբ՝ մէկ մարդ նամակ բերաւ քրմապետից, որի մէջ վտանգից զգուշացնում էին բռնակալներին: Եկւորը նամակը յանձնեց Արքիասին ասելով. «Գիրը շատ կարևոր նիւթի վերայ է, կարդա այս րոպէիս»: Հարբած Արքիասը նամակը մի կողմ դրաւ. «Այսօրուան կարևոր գործերը մենք էգուցուան ենք թողնում» ասաց նա ժպտալով: — Այ, խելօք ասացիր, վրա բերաւ Փիլլիդոս, ինչ գործ ժամանակն է, այժմ դեռ հարկաւոր է ուրախութիւն անել. ես պատուիրել եմ, որ հիմայ պարող կանայք գան: Արդարև շուտով եկան նոքա: Բայց եկողները դաւադիրներն էին կանացի հագուստով: Նոքա իսկոյն դաշոյններն առին սպանեցին բռնաւորներին: Ազատութիւնը շուտով վերականգնեցաւ. քաղաքական յանցաւորներն ու աքսորուածները յետ կանչուեցան: Կառավարութեան գլուխն անցան

Պելոպիդաս և Եպամինոնդ՝ երկու մտերիմ բարեկամներ։ Աթենացւոց օգնութեամբ Սպարտացի բերդապահ գունդը դուրս հալածուեցաւ Կադմէա ամրոցից։

Դժուար չէր նախատեսել, որ գոռոզ Սպարտացիք անտարբեր չեն մնալ Թեբէյի ազատուելու վերայ։ Եւ յիրաւի, նոքա մեծ զօրքով արշաւեցին Թեբէյի վերայ։ Բայց Թեբացիք իրանց առաջին յաջողութեամբ քաջալերուած, վճռեցին պաշտպանել ազատութիւնը՝ ինչ էլ որ պատահէր։ Նոցա առաջնորդներն էին վեհ դիւցազներ Պելոպիդաս և Եպամինոնդ, որոնց գործերը պարզ ապացոյց են, թէ ինչպէս երբեմն մեծ անձնաւորութիւնք իրանց հայրենասիրութեամբ կարող են ամբողջ ազգի բաղդաւորութեան պատճառ լինել։

Եպամինոնդ աղքատ բայց ազնիւ ընտանիքից էր. ծնողները ոչինչ չէին խնայել նորա դաստիարակութեան համար։ Նա գիտութեանց մէջ իւր ժամանակակից ամենամեծ մարդկանցից ոչնչով պակաս չէր. պարզասիրտ էր և քաղցրահամբոյր բնաւորութիւն ունէր, որով շահել էր բազմաթիւ բարեկամներ, նոցա թւում և Պելոպիդասին։ Սա ամեն ժամանակ համոզում էր Եպամինոնդին իրանց մէջը բաժանել իւր ահագին հարստութիւնը. բայց նա, որքան էլ ճնշուելիս լինէր աղքատութիւնից, յանձն չէր առնում իւր մտերիմ բարեկամի սրտանց առաջարկութիւնը։ Նա միայն մի վերարկու ունէր, և շատ անգամ ստիպուած էր լինում քանի մի օր շարունակ տանից դուրս չգալ, երբ լուանում էին այդ միակ վերարկուն։ Նա ամենևին հետամուտ չէր մեծ մեծ պաշտօններ ստանալու. բայց երբ կարիք էր լինում՝ երբէք չէր հրաժարվում հայրենիքին ծառայելուց. ինչ պաշտօնի մէջ կուզէ լինէր, և ծառայում էր ամենայն բարեխղճութեամբ։ Նա այսպէս էր համոզուած, թէ մարդս է պաշտօնին յարգ տուողը և ոչ պաշտօնը մարդուս։ Մի անգամ Պարսից դեսպանն ուզում էր կաշառել Եպամինոնդին. նա ասաց. «Բարեկամ, թէ որ քո թագաւորիդ մտադրութիւնները հայրենիքիս օգուտ են, ես առանց ընծաների կկատարեմ. իսկ եթէ ոչ՝ Պարսկաստանի բոլոր ոսկին ու արծաթը չեն կարող դաւաճան

լինել ինձ»։ Բայց դու, որպէս զի ուրիշներին չկաշառես, անյապաղ հեռացիր քաղաքից»։ Դորանից յետոյ պատերազմի ժամանակ մի անգամ լսեց, որ իւր զինակիրը փող է առել ու մէկ գերի արձակել։ «Տուր ինձ վահանս, ասաց նա զինակրին, այն րոպէից, երբ դու ձեռքերդ կեղտոտեցիր կաշառքով՝ այլ ևս արժանի չես իմ զէնքը կրելու»։

ԼԵՒԿՏՐԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ (371)։ Այդ մեծ անձը սակաւաթիւ Թեբացի զօրքի հետ դուրս եկաւ ընդդեմ Սպարտացւոց. նորա բարեկամ Պելոպիդասը գլխաւոր կարգուեցաւ Նուիրական գնդի վերայ։ (Այնպէս էր կոչվում Թեբայի երիտասարդների այն փոքրիկ գունդը, որ երդուած էին յաղթել կամ մեռնել)։ Լեւկտրա փոքրիկ քաղաքի մօտ երկու զօրքերն իրար հանդիպեցան։ Այստեղ Եպամինոնդ ցոյց տուաւ իւր բոլոր հանճարը։ Որպէս զի իւր բուռը զօրքը չշրջապատուի թշնամեաց մեծ զօրքով, կարգաւորեց նորան թեք եռանկիւնի դրութեամբ։ Սպարտացիք յաղթուեցան. նոցա թագաւորն ընկաւ պատերազմի դաշտում, մնացածները հարկադրուեցան փախչել գլուխներն ազատելու համար։ Այս փառաւոր յաղթութիւնը Յունաստանի գերիշխանութիւնը Թեբէյի կողմն անցուց։

Այս սարսափելի պարտութեան լուրը երբ Սպարտա հասաւ, փախչողների մայրերը մեծ տխրութեան մէջ ընկան. նոքա ամաչելուց տանից չէին դուրս գալիս, իսկ որոնց որդիքը մեռել էին պատերազմի մէջ՝ ծաղիկներով պսակուած ելնում էին հրապարակ և միմեանց գրկախառնում էին, շնորհաւորելով որդւոց քաջաբար մեռնելը հայրենեաց համար։—Լիկուրգոսի օրէնքով պէտք էր որ փախչողներին մահու վճիռ տային. բայց այդպիսի նեղ ժամանակում զինուոր էր պէտք, մնացել էին շուարած։ Վերջապէս թագաւորներից մէկն ասաց. «Թող այսօր օրէնքը քնէ, վաղը նա կզարթնի աւելի խստութեամբ»։ Այսպէս՝ փախստականներին ներեցին այս անգամ։

ՄԱՆՏԻՆԷԱՅԻ ՃԱԿԱՏԸ (362). Անվեհեր Եպամինոնդը շուտով մտաւ նոյն իսկ Պելոպոննէս և շատ քաղաքներ

նուաճեց։ Սպարտացիք այնպիսի յուսահատ դրութեան մէջ ընկան, որ չամաչեցին օգնութիւն խնդրել իրանց նախկին թշնամիներից՝ Աթէնքից։ Աթենացիք էլ նախանձելով Թեբէյի բարձրանալուն՝ չամաչեցին օգնութիւն տալ Սպարտային։ Սակայն Եպամինոնդ ամենեին չվհատեցաւ։ ընդհակառակն նա խուժեց մտաւ նոյն իսկ Սպարտա քաղաքը մինչև հրապարակի մէջտեղը. բայց այստեղ Սպարտացիք կատաղաբար ընդդիմադրեցին։ Եպամինոնդ յետ քաշուեցաւ գնաց բանակից Մանտինէա քաղաքի մօտ։ Այստեղ բացուեցաւ արիւնահեղ պատերազմ։ Սպարտացիք կռւում էին սովորական քաջութեամբ, բայց այնու ամենայնիւ չկարողացան դիմանալ։ Եպամինոնդ յափշտակուած խոյը մտաւ թշնամեաց շարքերի մէջ և կեանքը զոհեց. տէգը մտաւ նորա կուրծքը. վիրաւոր հերոսը վայր ընկաւ անզգայ և նորա շուրջը ահեղ կռիւ ծագեցաւ. վերջապէս Թեբացիք դուրս տարան իրանց սիրելի զօրավարին շրջապատող թշնամիների միջից։

Թեբացիների սիրտը կոտրուեցաւ. պատերազմը դադարեցրին։ Տէգի երկաթեայ ծայրը դեռ ևս Եպամինոնդի կուրծքի մէջն էր. բժիշկը յայտնեց որ երկաթը հանելուն պէս կմեռնի։ Եպամինոնդ պատուիրեց չհանել, մինչև որ իմանայ պատերազմի ելքը և մինչև իւր վահանն ազատուած լինի։ Երբ նորա վահանը բերին և յայտնեցին, որ Թեբացիք յաղթող հանդիսացան՝ համբուրեց վահանը և գոչեց. «Ես բաւական ապրեցայ և մեռնում եմ չյաղթուած». ասաց և երկաթը դուրս քաշեց կուրծքից։ Նորա բարեկամները ցաւէին յայտնում, որ նա ժառանգ չթողեց հայրենեաց համար։ Եպամինոնդ ասաց. «Բայց թողնում եմ երկու քոյրեր—Լևկտրա և Մանտինէա»։ Այսպէս դիւցազնաբար մեռաւ Եպամինոնդ։

Այն ինչ Եպամինոնդ պատերազմ էր վարում Սպարտացւոց դէմ, Պելոպիդաս կռւում էր Թեսալիայում Փերէյացի Աղէքսանդրի դէմ, որ բռնութեամբ ուզում էր տիրել բոլոր այդ երկրին։ Աղէքսանդր նենգութեամբ բռնել բանտարկել էր Պելոպիդասին. ամեն ոք (իրաւունք ունէր) նորա մօտ մտնել ազատաբար։ Նա միշտ բացարձակ խօսում էր բռնաւորի դէմ, և մի անգամ մարդ ուղարկեց թէ. «Զարմանում եմ որ ինձ այսքան երկար կենդանի ես թողնում. ազատուիմ թէ չէ սաստիկ վրէժ կըհանեմ»։ Աղէքսանդր հարցրեց.—ինչու է ցանկանում այդպէս շուտով մեռնել։ «Որպէս զի Աղէքսանդրն աւելի ատելի դառնայ աստուածներին», պատասխանեց Պելոպիդաս։ Եպամինոնդ շուտով եկաւ և ազատեց իւր բարեկամին։

Թեսալիացիք նորէն օգնութիւն խնդրեցին Թեբէյից ընդդէմ բռնաւորի։ Պելոպիդաս նորէն գնաց, և զարմանալի քաջութիւններ անելով մեռաւ պատերազմի դաշտում։ Նորա մահուան վերայ զօրքն այնպէս տխրեցաւ, որպէս թէ մի սարսափելի պարտութիւն լինէր կրած։

Այս երկու դիւցազանց մահուամբ Թեբէյի փառքն էլ նսեմացաւ։ Մանտինէայի պատերազմից յետոյ պատերազմող կողմերը հաշտութիւն արին. բայց Յունաստանի մէջ խաղաղութիւնը չվերականգնեցաւ։

ԺԱ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

ՓԻԼԻՊՊՈՍ Բ. (359—336) ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄՆ

Այն ինչ Յունաց վերջին զօրութիւնը քայքայվում էր ներքին խռովութիւններով՝ հիւսիսից մի վտանգաւոր փոքրիկ սպառնում էր նոցա։ Յունաստանի հիւսիսային սահմանում զօրացաւ Մակեդոնական աննշան տէրութիւնը, շնորհիւ խորամանկ և պատերազմական գործին հմուտ Փիլիպպոսի։ Պատանի հասակում նա պատանդ էր տրուած Թեբէ և գտնվում էր Եպամինոնդի մօտ։ Աչքի առաջ ունենալով նորա օրինակը՝ ինքն էլ երևելի զօրավար դարձաւ։ Իւր եղբայր Պերդիկասի մահուանից յետոյ վերադարձաւ Մակեդոնիա և չնայելով որ բազմաթիւ թշնամիներ ու հակառակորդներ ունէր՝ կարողացաւ թագաւորութիւնը

ձեռքն առնել: Բարբարոսների դէմ վարած պատերազմների մէջ կազմակերպեց վարժ ու հմուտ զօրագունդ և Եպամինոնդից սովորած բոլոր պատերազմական ձևերը կատարելագործեց և անյաղթելի եղաւ: Նորա գնդերը փալանգներ էին կոչվում: Իւրաքանչիւր փալանգ բաղկանում էր 8000 ծանրապէս սպառազինուած հետևոտ զինուորներից, որոնք կանգնում էին 16 շարք իրար յետևից. առաջին հինգ շարքը նիզակներ էին կրում մինչ 20 ոտնաչափ երկարութեամբ. բոլոր գունդը շարժւում էր սեպաձև և կազմում էր անթափանցելի եռանկիւնի. Այս փալանգները Փիլիպպոսի առաջնորդութեամբ սարսափ տարածեցին Թրակիայի և Թեսալիայի մէջ:

Թրակիայում Մեդոնա քաղաքի պաշարման ժամանակ Փիլիպպոսի մէկ աչքը կուրացաւ: Մէկ զինուոր ցանկութիւն յայտնեց ծառայութեան մտնել Փիլիպպոսի մօտ, ասելով որ ինքն այնքան լաւ նետաձիգ է, որ թռչունը թռչելիս կարող է խփել նորան: «Լաւ, պատասխանեց Փիլիպպոս ծաղրելով, երբ որ ծտերի դէմ պատերազմ գնամ քեզ կը կանչեմ»: Վիրաւորուած զինուորը մտաւ պաշարուած քաղաքը, մէկ նետ արձակեց այսպիսի վերնագրով. «Փիլիպպոսի աչքին» և դիպաւ ուղիղ թագաւորի աչքին:

Փիլիպպոս վերջապէս իւր մտադրութիւնը դարձրեց դէպի Յունաստան: Նա ուրախ էր, որ Յոյներն անընդհատ վէճերով ու կռիւներով մէկ մէկի տկարացնում էին և յարմար դէպքի էր սպասում միայն, որ մտնի Յունաստան: Նորա համար ո՛չ մի միջոց արհամարհելի չէր, միայն թէ իւր նպատակին հասնէր: Կաշառքը մեծ գործիք էր նորա համար. նա սովորաբար ասում էր. «ո՛չ մի բարձր պարիսպ չը կայ, որի վերայից ոսկով բեռնած էշը չը կարենայ անց կենալ»:

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ ԵՒ ՓՈԿԻՈՆ: Շլացած Յոյները ամենևին չէին մտածում, թէ Մակեդոնիայի աննշան թագաւորը կարող էր վտանգաւոր լինել իրանց համար: Մէկ մարդ միայն հեռատեսութեամբ հասկանում էր նորա խորամանկ ձգտումները և զգուշացնում էր իւր հայրենակիցներին սպառնացող վտանգից:

Այդ մարդը Դեմոսթենէս ճարտասանն էր: Նա մի Աթենացի զինագործի որդի էր. եօթն տարեկան հասակում հայրը մեռաւ: Տկար ու թուլակազմ տղայ լինելով չէր կարողանում հօր արհեստով պարապել: Ո՛չ ոքի մտքովն էլ չէր անցնում, թէ նա մի ժամանակ կարող էր հռչակաւոր ճարտասան դառնալ: Մի անգամ լսեց Կալլիստրատ ճարտասանի ճառը և այնպէս զմայլուեցաւ, որ վճռեց անշուշտ պերճախօսութեան արհեստը սովորել: Ամենամեծ ժրաջանութեամբ կարդում էր նա Յունաց մատենագրների շարադրութիւնները և ութ անգամ արտագրեց Թուկիդիդէսի պատմութիւնը: Նա լսում էր նոյնպէս իմաստուն Պղատոնին և Իսէոս ճարտասանին:

Առաջին ճառն որ ասաց նա, իւր խնամակալների դէմն էր, որոնք հօր մեռնելուց յետոյ փչացրել էին նորա կարողութիւնը: Յետոյ փորձ արաւ ճառել ազգային ժողովի մէջ. բայց Աթենացիք ծաղրեցին նորան: Նա սրտաբեկ ու զայրացած՝ գանգատ արաւ իւր բարեկամ Սատիրոս դերասանին ժողովրդի անիրաւացի վարման համար, ասելով որ այնքան անկիրթ ճարտասաններին ծափահարող ժողովուրդը՝ իրան անարդարապէս խայտառակեց, այն ինչ ինքը ոչինչ ջանք չէ խնայում պերճախօսութեամբ ճառելու: «Իրաւ ես ասում, պատասխանեց Սատիրոս, բայց թերևս հեշտ է ուղղել այդ. հապա Սոփոկլէսից, Եւրիպիդէսից մի բան ասա»: Դեմոսթենէսն ասաց. յետոյ Սատիրոսը կրկնեց միևնոյնը, բայց ուժգին արտասանութեամբ և շարժուածքներով, այնպէս որ Դեմոսթենէս կարծում էր թէ բոլորովին ուրիշ բան է լսում: Նոր հասկացաւ, որ ինքը դեռ շատ պակասութիւն ունի, բայց չվհատեցաւ, այլ իւր աշխատութիւնները կրկնապատկեց, որ կատարելագործուի:

Ձայնը զօրեղացնելու համար՝ նա գնում էր ծովի ափը և աշխատում էր բարձր ձայնով ալիքների շառաչիւնը խլացնել: Որովհետև լեզուն թլուատ էր՝ փոքրիկ քարեր էր առնում բերանը, որ բառերը լիահնչիւն արտասանէ. ճառ ասելով նա բարձրանում էր զառիվեր լեռների գլուխը, որպէս զի վարժուի երկարաշունչ լինել: Նա որոշել էր մինչև կատարելագործուելը ժողովրդի մէջ

դուրս չգալ. գլխի կէսը սափրել էր և սենեկի մէջ հայելու առաջ վարժում էր իւր ձեռքերի և դէմքի շարժմունքները։ Այսպիսի նախապատրաստութիւններից յետոյ միայն դուրս եկաւ ժողովրդի մէջ, և ազգային ժողովներում հիացնում էր ամենքին իւր սքանչելի պերճախօսութեամբ։ Ըստ երևութին ոչ ոք Դեմոսթենէսից աւելի անընդունակ չէր ճարտասան լինելու, բայց և ոչ ոք նորա չափ չ'վաստակեց մեծ ու կատարեալ ճարտասանի փառքը։

Ահա սա էր որ անխոնջ եռանդով աշխատում էր թեթևամիտ Աթենացիների մէջ վառել նախնեաց առաքինութեան ու քաջութեան ոգին. նա յիշեցնում էր Միլտիադէսի ու Թեմիստոկլէսի քաջագործութիւնները, համոզում էր չխաբուել Փիլիպպոսի նենգաւոր շողոքորթութեանցը և պահպանել հայրենի ազատութիւնը։ Տարաբաղդաբար այդ ոգևորուած հայրենասէրի ճառերն ապարդիւն էին մնում, որովհետև Աթէնքի մէջ բացի թուլութեան և շուայտութեան մէջ ընկղմած ժողովրդից՝ կային ընտիր քաղաքացիներ ևս, որոնք յուսահատուած էին հայրենիքի փրկութեան մասին և ցանկանում էին ինչ պայմանով կուզէ լինէր հաշտութիւն կապել Մակեդոնիայի փառասէր ու խորամանկ թագաւորի հետ։ Այս մտքի էր և Փոկիոն, որ հենց այդ պատճառով Դեմոսթենէսի հակառակորդն էր։

Փոկիոն մի հասարակ արհեստաւորի որդի էր. իւր բոլոր կեանքը խեղճութեան մէջ էր անցկացրել և իւր բոլոր վարմանց մէջ ցոյց էր տալիս ամենամեծ լրջութիւն. ոչ ոք ոչ մի ժամանակ տեսած չէր, որ նա կամ ծիծաղէր կամ լաց լինէր։ Երբէք հասարակաց բաղանիքներ չէր գնում և ձեռքերը միշտ վերարկուի տակ էր պահում, որ մեծ պարկեշտութեան նշան էր համարվում Յունաց մէջ։ Նա միշտ մռայլադէմ ու խստահայեաց էր, այդ պատճառով էլ ոչոքի ցանկալի չէր նորա հետ ընկերութիւն անել։ Մի անգամ կատակասէրի մէկը սկսաւ ծիծաղել նորա մռայլոտ տեսքի վերայ, Աթենացիք խնդացին, իսկ Փոկիոն պատասխանեց. «Իմ մռայլոտ դէմքը դեռ ոչ մի վնաս չէ հասցրել, իսկ ներկայ եղողների ծիծաղը շատ արտասուք է պատճառել տէրութեանը»։ Չնայելով իւր աղքատութեանը՝ նա երբէք ընծաներ չէր ընդունում։

Իւր կեցութիւնը շատ պարզ ու հասարակ էր։ Մի անգամ Մակեդոնացի դեսպանները բերել էին նորան 1000 տաղանդ ընծայ, իհարկէ կաշառելու համար. երբ նորա տունը մտան՝ տեսան որ ինքը ջուր է ածում, կինը հաց է հունցում։

Դեմոսթենէս խորհուրդ էր տալիս Աթենացիներին պատերազմ սկսել Փիլիպպոսի դէմ, իսկ Փոկիոն համառօտ՝ բայց ազդու խօսքերով համոզում էր նոցա խաղաղութիւն կապել։ Երբ Փոկիոն վեր էր կենում խօսելու՝ Դեմոսթենէսն ասում էր մերձաւորներին. «Ահաւասիկ իմ խօսքերի կացինը»։ Եւ այս կացնից աւելի էր վախենում Դեմոսթենէս, քան բոլոր միւս ճարտասաններից։ Մի անգամ զայրացած ասաց նա. «Փոկիոն, Աթենացիք որ կատաղեն՝ կ'սպանեն քեզ»։ —Իսկ քեզ կըսպանեն, եթէ խելքները գլուխներին լինի, պատասխանեց Փոկիոն։ Փոկիոն միշտ յանդիմանում էր Աթենացիներին թեթևամտութեան և անառակութեան համար. ուստի միշտ մերժում էին նորա առաջարկութիւնները։ Բայց մի անգամ շատ հաւանեցան նորա խօսքերին։ Փոկիոն զարմացած հարցրեց. «չլինի՞ թէ մի յիմար բան ասած լինիմ»։ 338 թ. Աթենացիք Փոկիոնին դատապարտեցին որպէս դաւաճանի և նա հարկադրուած էր թոյն խմել։ Բարեկամներից մէկը ցաւում էր այդպիսի անարժան վախճանի համար։ «Ի՞նչ անենք, պատասխանեց Փոկիոն, բոլոր երևելի Աթենացիք նոյնպէս վախճան են ունեցել»։

ՔԵՐՈՆԷԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (338)։ Յոյներն չ'զգուշացան և թոյլ տուին Փիլիպպոսին խառնուել իրանց ներքին գործերի մէջ։ Թեբացիք հրաւիրեցին նորան Փոկիսացիներին պատժելու համար, որոնք կողոպտել էին Դելփեան տաճարի ունեցուածքը։ Յունաց զօրութիւնն արդէն այն աստիճանի թուլացած էր, որ նոքա հարկադրվում էին օտարի օգնութիւնը խնդրել իրանց վէճերը վերջացնելու համար։ Իզուր էր Դեմոսթենէսը թափում իւր պերճախօսական հանճարը։ Փիլիպպոս անցաւ Թերմոպիլէն, սկսաւ կամայական կարգադրութիւններ անել ինչպէս նուաճած երկրում և այլ ևս չկամեցաւ դուրս գալ Յունաստանից։ Նոր հա-

կացան Յոյներն իրանց սխալը. զէնք առին այդ անկոչ հիւրի դէմ. բայց Փիլիպպոս Քերոնէայի մօտ վերջնական ջարդ տուաւ նոցա իւր որդի Աղէքսանդրի գործակցութեամբ: Յոյները վերջին անգամ էր, որ կատաղաբար կռւում էին իրանց ազատութեան համար. բայց անօգուտ:

Սակայն Փիլիպպոս շողոքորթութեամբ ու զգուշութեամբ վարուեցաւ տիրապետած երկրում, մանաւանդ Աթենացւոց հետ, ձևի համար թողեց նոցա ազատութիւնը, և պահանջում էր միայն, որ իրան սպարապետ ճանաչէին յառաջակայ պատերազմի մէջ, որ մտադիր էր սկսել Պարսից դէմ՝ նախկին պատերազմների վրէժը հանելու համար: Բոլոր Յոյները, բացի Սպարտացիներից, ընդունեցին նորա առաջարկութիւնը: Փիլիպպոս բարկացաւ և գրեց Սպարտա. «Եթէ ես գամ այդ տեղ՝ ո՛չ ոք չի մնալ հայրենիքում»: «Եթէ», պատասխանեցին Սպարտացիք իրանց սովորական ոճով: Փիլիպպոս առանձին ուշք չդարձրեց նոցա վերայ, և կարճ ժամանակով վերադարձաւ Մակեդոնիա տնական գործերով: Այստեղ, դստէր հարսանեաց հանդիսին թիկնապահներից մէկը սպանեց նորան, մասնաւոր վրէժ ունենալով: Սակայն նորա մահը չփրկեց Յոյներին Մակեդոնական տիրապետութիւնից, որովհետև Փիլիպպոսի որդի Աղէքսանդրը հօրիցն աւելի փառասէր էր:

ԺԲ.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԵԾ. (336--323).

1.

Աղէքսանդր արդէն մանկական հասակում մեծամեծ ձիրքեր էր ցոյց տալիս: Նորա ծննդեան օրը Փիլիպպոս նամակ գրեց Արիստոտէլ մեծ փիլիսոփային՝ թէ «Ես ուրախ եմ որ ինձ որդի ծընաւ, բայց առաւել ուրախ եմ որ քո ժամանակը ծնաւ. դու պէտք

է արժանաւոր կրթութիւն տաս նորան»: Երբեք առաւել երևելի մի ուսուցիչ՝ չեն ունեցել առաւել երևելի մի աշակերտ:

Դեռ ևս մանուկ՝ Աղէքսանդրը մեծագործութեանց ձգտումն ունէր: Նա փափագում էր բոլոր երկրների և բոլոր գիտութեանց տէր դառնալ, և մինչև անգամ նախանձում էր հօրը յաղթութեանցը: Ամեն անգամ երբ լուր էր ստացվում, թէ հայրն առել է այս ինչ քաղաքը, այն ինչ երկիրը՝ Աղէքսանդրը լացակումած ասում էր. «Ախ, հայրս պէտքէ ամբողջ աշխարհը տիրէ, էլ ինձ ինչ պիտի մնայ անելու»: Ամենից աւելի նա սիրում էր լսել հին դիւցազանց քաջ քաջ գործերի պատմութիւնը. Հոմերոսը նորա սիրելի հեղինակն էր, Աքիլլէսը՝ նորա համար նախագաղափար: Գիշերները բարձի տակն էր պահում այդ բանաստեղծութիւնը և շատ անգամ զարթնում կարդում էր. պատերազմների ժամանակն անգամ չէր բաժանվում նորանից: Միշտ աշխատում էր ինքն էլ Աքիլլէսի նման կտրիճ և վարժ լինել: Մի անգամ նորա բարեկամները հարցրին. «Չե՞ս ուզում արդեօք դու էլ մասնակից լինել Յունաց հասարակական խաղերին»:—Ինչու չէ, պատասխանեց Աղէքսանդր, եթէ իմ ախոյեանները թագաւորազունք կլինին: Մի անգամ Փիլիպպոսի համար բերել էին մի ամեհի երիվար 10,000 մանէթի. ամենավարժ ձի-նստողները փորձեցին՝ չկարողացան սանձել նորան. նա ոստոստում էր ցայտքում և վերան նստողին գետին էր զարկում: Երբ ուզում էին ձին յետ դարձնել՝ Աղէքսանդր խնդրեց որ իրան տան փորձելու. ոչնչով չէին կարողանում յետ պահել նորան այդ ցանկութիւնից. վերջապէս հայրը նորա կամակորութիւնը պատժելու համար թոյլ տուաւ: Անձնապաստան վստահութեամբ մօտեցաւ այս 8 տարեկան մանուկը ձիուն, սկսաւ փայփայել նորան և երեսը շրջեց դէպի արևը, որովհետև նկատել էր որ ձին իւր շուաքիցն է խրտնում: Այսպէս մեղմացնելով՝ թռաւ նստաւ վերան: Բուկեֆալը (ձիու անունն է) չափ ընկաւ սարսափելի արագութեամբ. Աղէքսանդր կարծես կպած էր մէջքին: Ամենքեան մտածում էին, թէ նա կորաւ արդէն. բայց երբ դարձրեց ձին քրտինք կոխած ու հանդարտած՝ սառած մնացին: Փիլիպպոսն ուրախութիւ-

նից լաց եղաւ ու գրկախառնեց որդուն ասելով. «Որդեակ իմ, որոնիր քեզ ուրիշ թագաւորութիւն: Մակեդոնիան շատ փոքր է քեզ համար»:

Աղէքսանդր 20 տարեկան հասակում նստաւ Մակեդոնիայի գահը. բայց նա պէտք է շատ մեծ դժուարութիւնների յաղթէր: Աթենացիք երբ լսեցին նորա գահ նստելը՝ ծիծաղեցան և ասում էին. «այդ երեխան պէտքէ թագաւորէ»: — Ես Աթէնքի պարսպի տակ շուտով կապացուցանեմ որ երեխայ չեմ. այսպէս հրամայեց նա պատասխանել Աթենացւոց և գնաց ընդդէմ Աթէնքի: Աթենացիք երկիւղից իսկոյն հնազանդեցան: Վերադառնալուց յետոյ նա նուաճեց ապստամբած ազգերին: Ձայն տարածուեցաւ, թէ Աղէքսանդր մեռել է այդ պատերազմների մէջ: Ամբողջ Յունաստանը ցնծութիւն արաւ. ամեն տեղ շնորհակալութեան զոհեր մատուցին, և մինչև անգամ Թեբացիք դուրս արին քաղաքից Մակեդոնական զօրագունդը: Աղէքսանդր կայծակի արագութեամբ հասաւ Թեբէ. հիմնայատակ աւերեց այդ քաղաքը, թողնելով միմիայն տաճարները և Պինդարոս բանաստեղծի տունը, որ գեղեցիկ ոտանաւորներով երգած էր Յունաց ազգային խաղերը: Այս խիստ վարմունքը սարսափ տարածեց բոլոր Յունաստանի վերայ, եւ ոչ ոք չհամարձակեցաւ ապստամբել նորա դէմ: Դորանից յետոյ Աղէքսանդր գնաց Կորնթոս, ժողով կազմեց որ խորհրդածուի Պարսից դէմ սկսելի պատերազմի մասին. այստեղ նա ընդհանուր սպարապետ ընտրուեցաւ բոլոր Յունական զօրքերին: Իսկ Սպարտացիք դարձեալ չուզեցան հնազանդիլ և պատասխանեցին, թէ «Մենք սովոր չենք ուրիշի հրամանները լսել, այլ ինքեանքս հրամայել:»

Նոյն միջոցին Կորնթոսում բնակվում էր մի շատ իմաստուն, բայց և շատ օտարոտի բնաւորութեան տէր մարդ. սա Դիոգինէսն էր: Սոկրատէսի ժուժկալութեան ու պարզութեան կանոնը Դիոգինէս ծայրայեղութեան էր հասցրել: Նա մազերը չէր խուզում, պատառած վերարկու էր հագնում, շալակը մի հին մաղախ էր կրջրում և բնակվում էր տակառի մէջ: Մի փայտեայ գաւաթ ունէր ջուր խմելու. մի անգամ տեսաւ որ մի տղայ ափով ջուր էր խմում,

այն գաւաթն էլ դէն ձգեց: Աղէքսանդրը լսելով այս զարմանալի մարդու համբաւը՝ գնաց նորան տեսնելու: Տեսաւ որ Դիոգինէսը տակառի առաջ թիկն տուած՝ տաքանում է արևի տակ: Երբ Աղէքսանդր իւր խմբով մօտեցաւ նորան և քաղաքավարութեամբ ողջունեց՝ նա մի քիչ վեր բարձրացաւ ու ողջունեց նորան: Աղէքսանդր նորա հետ երկար խօսակցեց ու գոհ մնաց, յետոյ հարցրեց. «կարո՞ղ եմ մի ծառայութիւն անել քեզ»: — Շատ մեծ, պատասխանեց Դիոգինէս, արևից հեռու կաց: Աղէքսանդր ճանապարհ ընկաւ ասելով. «Եթէ ես Աղէքսանդրը չլինէի, կցանկայի լինել Դիոգինէս:»

2.

ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ.

Քսանու երեք տարեկան հասակում Աղէքսանդր Յունաստանի ու Մակեդոնիայի կառավարութիւնը իւր զօրապետ Անտիպատրոսին յանձնելով՝ ինքն ուղևորուեցաւ դէպի Ասիա: Հելլեսպոնտոսից անցնելիս առաջին ինքը դուրս եկաւ Ասիայի ցամաքը և գոչեց. «Ասիան ինձ է պատկանում, չպէտքէ աւերել նորան»: Հասնելով Տրովադա՝ այցելեց Աքիլլէսի գերեզմանը և ծաղիկներ ցանեց վերան: «Երանի քեզ, Աքիլլէս, բացագանչեց նա, որ կենդանի ժամանակդ Պատրոկլէսի նման ընկեր ունէիր, իսկ մեռնելուցդ յետոյ Հոմերոսի պէս երգիչ»: Այդ տեղ մի անշնորհք բանաստեղծ կար, որ շողոքորթելով ասաց նորան. «Մենք էլ քո գործերը պէտքէ գովաբանենք»: — Լաւ է Հոմերոսի երգերում Թերսիտէս լինիմ, քան քո երգերում Աքիլլէս, պատասխանեց Աղէքսանդր արհամարհանքով: Այստեղից ճանապարհը շարունակեցին մինչև Գրանիկոն գետակը Միւսիայում:

ԳՐԱՆԻԿՈՆԻ ԿՌԻՒԸ (334): Պարսից մարզպաններն իրանց զօրքերով կտրել էին ճանապարհը գետի ափով, որպէս զի թշնամին չկարողանայ յառաջ գնալ: Աղէքսանդր զինուորական խորհուրդ կազմեց: Հմուտ ու փորձառու Պարմենիոնը խորհուրդ

տուաւ սպասել մինչև նոքա յետ քաշուին։ «Հելլեսպոնտոսը կամաչէ, եթէ մենք վախենանք այս գետից», ասաց Աղէքսանդր և գետը նետուեցաւ։ Մակեդոնացիք հետևեցին նորան։ Պարսիկները չկարողացան դիմանալ և փախան։ Բայց երկու պարսիկ զօրապետներ ճանաչելով Աղէքսանդրին իւր շողշողուն սաղաւարտից՝ վերան յարձակուեցան։ Երիտասարդ թագաւորը քաջաբար ընդդիմացաւ, բայց այնպիսի մի հարուած ստացաւ, որ սաղաւարտը ջարդ ու փշուր եղաւ, երբ նա դարձաւ դէպ՝ այդ հարուած տուողը, միւսը սուրը բարձրացրեց, որ գլուխը կիսէ, իսկոյն վրա հասաւ Կլիտոս զօրավարը և մի հարուածով կտրեց Պարսկի բազուկը։ Այսպէս փրկուեցաւ թագաւորի կեանքը։

Գրանիկոնի յաղթութեամբ Աղէքսանդր բոլոր Փոքր-Ասիային տէր դարձաւ։ Քաղաքները մէկ մէկի յետևից յայտնում էին իրանց հպատակութիւնը։ Նա հասաւ մինչև Կիլիկիա։ Այստեղ Աղէքսանդր Կիդնոս գետում լողանալուց՝ վտանգաւոր կերպով հիւանդացաւ, բժիշկները մնացել էին տարակուսած։ Վերջապէս բժիշկ Փիլիպպոսը մէկ վճռական դեղ նշանակեց, որ կամ պէտքէ մեռցնէր, կամ առողջացնէր նորան։ Հենց Աղէքսանդր պատրաստւում էր խմելու, իսկոյն Պարմենիոնից մի նամակ ստացաւ, որի մէջ ասուած էր, թէ բժիշկը կաշառուած է Պարսից թագաւորից և ուզում է թունաւորել նորան։ Մօտը կանգնած մարդիկն ահ ու դողի մէջ էին, բայց նա չկասկածեց բժշկի վերայ. նամակը նորան տուաւ և ինքն իսկոյն ընդունեց դեղը։ Երրորդ օրն արդէն առողջ էր նա, և շարունակելով իւր արշաւանքը՝ հասաւ Իսսոս։

ԻՍՍՈՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ, 333։ Պարսից թագաւորը՝ Դարեհ Կոդոման՝ մեծ պատրաստութիւններ տեսաւ Աղէքսանդրին յետ մղելու համար։ Նորա յետ, բացի ուրիշ դաշնակիցներից, միացել էր և Հայկազանց վերջին թագաւոր Վահէն, որ մտածելով, թէ մի՛ գուցէ Աղէքսանդր Դարեհին յաղթելուց յետոյ Հայաստան մտնէ՝ ջանք էր անում այնպիսի վտանգաւոր դրացիներից ազատ պահել իւր երկիրը։ 600,000 զօրք բանակած էին Աղէքսանդրի դէմ, բայց Մակեդոնական փալանգները յառաջ էին գը-

նում անվեհեր։ Արիւնահեղ և յուսահատ պատերազմ տրուեցաւ։ Վերջապէս Պարսից զօրքը փախաւ բազմաթիւ մեռածներ թողելով պատերազմի դաշտում. Վահէն մինչ վերջին շունչը կռուեց և նոյնպէս ընկաւ։ Իսկ Դարեհ իւր սուրը, վահանը, սաղաւարտը թշնամեաց ձեռքը թողելով, ձի նստաւ ու դուրս փախաւ ահագին դիակուտի միջից։ Նորա մայրը, կինն ու որդիքը գերի ընկան և կարծելով թէ Դարեհն սպանուած է՝ լալիս ու կածում էին։ Աղէքսանդրը նոցա հաւատացրեց որ կենդանի է և շատ քաղցրութեամբ էր վարվում հետները։ Երբ Պարսից թագաւորն իմացաւ նորա այսպիսի վեհանձն վարմունքը՝ ձեռքերն երկինք բարձրացրեց և ասաց. «ո՜վ աստուածներ պահեցէք ինձ իմ թագաւորութիւնս, որ կարողանամ շնորհակալութիւն անել Աղէքսանդրին. իսկ եթէ վճռուած է, որ ես զրկուիմ հայրական ժառանգութիւնիցս, մի՛ տաք այն ոչ ոքի, բացի Մակեդոնիայի թագաւորից»։

3.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.

Իսսոսի պատերազմից յետոյ քաջ երիտասարդը հարկաւոր չըհամարեց Դարեհի յետևիցն ընկնել և շարունակեց իւր ճանապարհը ծովի եզերքով։ Բոլոր քաղաքներն առանց հակառակութեան անձնատուր էին լինում, որովհետև կամովին հնազանդուողների հետ նա քաղցրութեամբ էր վարվում։ Միմիայն Տիւրոսը, Փիւնիկիայի վաճառաշահ քաղաքը չուզեցաւ հպատակել և ընդդիմադրեց։ Աղէքսանդր եօթն ամիս չարչարուեցաւ. չկարողացաւ առնել. վերջապէս հրամայեց ցամաքից մինչև այն կղզեակը, որի վերայ շինած էր Տիւրոսը, լցնել հողով ու քարով և մի արհեստական ցամաք շինել։ Այն ժամանակ միայն յաջողուեցաւ առնել քաղաքը՝ եօթնամսեայ պաշարումից յետոյ (332)։ Աղէքսանդր զարհուրելի կերպով պատժեց Տիւրացիներին, քաղաքն այրեց աւերեց. 6000 հոգի անգթօրէն սպանել տուաւ և 2000 գերի վաճառեց։ Այստեղից գնաց Հրէաստան, այստեղ էլ բոլոր քաղաքները յօժա-

բոլոր անձնատուր եղան բացի Գազա քաղաքից. սա էլ զօրով առնուեցաւ և Տիւրոսի նման պատժուեցաւ:

Պաղեստինայից անցաւ Եգիպտոս, ուր որ ժողովուրդը սաստիկ ձանձրացած Պարսից լծից՝ մեծ ուրախութեամբ ընդունեցին Աղէքսանդրին իբրև ազատարարի: Այստեղ Նեղոսի մէկ առաջքի վերայ շինեց Աղէքսանդրիա քաղաքը, որը իւր յարմարաւոր դրութեան պատճառով համաշխարհային առևտրականութեան կենտրոն դարձաւ և գիտութեանց ու ճարտարապետութեանց միջնավայրը:

Եգիպտոսից դէպի արևմուտք, Լիբիական անապատում, ձիթենիներով և արմաւենիներով ստուերաւորուած մի հարթավայրում գտնվում էր Ամոնի տաճարը: Ամոն Եգիպտացւոց Արամազդն էր: Այս տաճարի քուրմերը պատգամախօսութեան մէջ հռչակուած էին, ինչպէս Դելփեան տաճարինը: Պերսէոս, Հերկուլէս և այլ դիւցազներ հին ժամանակը նշանաւոր գուշակութիւններ էին առած այս տաճարում: Աղէքսանդր, որ միշտ կուզէր հին դիւցազներին նմանել, գնաց այնտեղ և պատգամ հարցրեց իւր մասին: Քրմապետը նորան Զևսի որդի անուանեց: Աղէքսանդր գոռոզացաւ այս պատգամից և շատ անգամ նամակների տակ «Որդի Զևսի» էր ստորագրում:

4.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ.

Նուաճած ազգերի օժանդակութեամբ Աղէքսանդր նորէն դիմեց Պարսկաստանի վերայ: Դարեհ դեսպաններ ուղարկեց և խաղաղութիւն խնդրեց, խոստանալով տալ նորան Եփրատից միւս կողմ բոլոր երկրները, իւր դուստրն ի կնութիւն և ահագին փրկանք իւր գերդաստանի համար: «Ի՞նչպէս ես կարծում», հարցրեց Աղէքսանդր Պարմենիոնին:—Եթէ ես լինէի Աղէքսանդրը՝ կըհամաձայնէի, պատասխանեց նա: «Ես էլ կըհամաձայնէի, թէ որ Պարմենիոնը լինէի». վրայ բերեց Աղէքսանդր ժպտալով:—Խաղաղութեան պայմանները գոռոզաբար մերժուեցան:

ԳԱՒԳԱՄԵԼԱՅԻ ՃԱԿԱՏԸ 331: Դարեհ որոշեց

վերջին փորձն անել և հրամայեց իւր իշխանութեան տակ գտնուած բոլոր նախարարներին օգնութիւն հասնել: Շուտով մի ահաւոր բանակ ժողովեց և եկաւ Գաւգամելայի ու Արբելայի մօտ մի յարմար դիրք բռնեց ամրացաւ: Մակեդոնական զօրավարները Պարսից զօրաբանակի մեծութիւնը տեսնելով ահի մէջ ընկան և խորհուրդ տուին Աղէքսանդրին գիշերանց անակնկալ յարձակուել թշնամեաց վերայ.. բայց նա հպարտութեամբ պատասխանեց. «ես չեմ ուզում յաղթութիւնը գողանալ»: Ճակատը յամառ ու արիւնահեղ էր: Պարսիկները մեծ քաջութեամբ պատերազմեցին. բայց Մակեդոնական փալանգների պատերազմական հմտութիւնը գերազանցեց: Աղէքսանդր տէր դարձաւ Պարսից լայնածաւալ պետութեանը: Յոյները մտան Պարսից զանազան քաղաքները և մեծամեծ աւարներ առին Բաբելոնի, Շօշի, Պերսեպօլիսի և Եկբատանի մէջ:

Դարեհ Գաւգամելայի պարտութիւնից յետոյ փախաւ գիւղէ գիւղ քաղաքէ քաղաք: Աղէքսանդր յետևից ընկած հալածում էր նորան: Այդ միջոցին ինքը Աղէքսանդրն էլ իւր զօրքի հետ մեծ վտանգի ենթարկուեցաւ: Նոքա ընկան մի անջրդի անապատի մէջ և ծարաւից շունչները կտրվում էր: Վերջապէս զինուորի մէկը մի քիչ ջուր գտաւ և սաղաւարտի մէջ բերաւ Աղէքսանդրին տուաւ. Բայց թագաւորը դէն ածեց ջուրն ասելով. «եթէ բոլոր զօրքի համար է՝ շատ քիչ է, եթէ միայն ինձ համար է՝ շատ շատ է»: Զօրքը հիացած թագաւորի անձնուիրութեան վերայ աղաղակեց. «Տար մեզ թագաւոր, ուր կամիս, մենք քո առաջնորդութեամբ անմահ ենք համարում մեզ»:

Դարեհ երկար թափառելով՝ ի վերջոյ գերի ընկաւ Բեսսոսի ձեռքը, որ իւր կուսակալն էր Բակտրիա նահանգում և միտք ունէր ինքնին թագաւորել: Աղէքսանդր այսպիսի տիրադրուժ արարքը պատժելու համար՝ աշխատեց բռնել Բեսսոսին. սա տեսնելով որ իրան հալածում են՝ դաշունով մի քանի հարուած տուաւ Դարեհին ու փախաւ: Աղէքսանդրի զինուորները թագաւորի մօտ հասան, տեսան որ նա մեռնելու վերայ է. զինուորներից մէկը սաղաւարտով ջուր հասցրեց, բայց իզո՛ւր: Դարեհ հազիւ կարողացաւ

այս խօսքերն ասել. «բարեկամ, ցաւում եմ, որ չեմ կարող վարձատրել քեզ աշխատանքիդ համար, բայց Աղ'էքսանդրը կանէ այդ: Ասա նորան, որ ես հաշտութեան ձեռք եմ տալիս նորան». ասաց և հոգին աւանդեց: Շուտով հասաւ և Աղ'էքսանդր, խղճաց նորա վերայ, ծածկեց իւր վերարկուով և ուղարկեց Պերսեպօլիս, որ թաղեն նորան Պարսից թագաւորական շիրիմի մէջ: Դորանից յետոյ Բեսսոսի քամակիցն ընկաւ և այնքան հալածեց, մինչև որ նա բռնուեցաւ ու սպանուեցաւ:

Աղ'էքսանդր յաղթական գնացքով շարունակեց իւր արշաւանքը Արեաց և Վրկանաց աշխարհներում, Բակտրիայում և Սոգդիանայում: Բայց իւր յաղթութիւններով յափշտակուած՝ նա հետզհետէ ամբարտաւանութեան ու շռայլութեան մէջ ընկաւ. ամուսնացաւ մի պարսիկ աղջկան հետ և շրջապատեց իրան Պարսիկ շողոքորթներով: Զինուորները պէտք է արևելեան սովորութեամբ երկրպագանէին նորան: Այս ամենը անտանելի էր նորա զօրականների մանաւանդ քաջ զօրավարների համար: Մի անգամ երբ խնջոյքի ժամանակ շողոքորթները փառաբանում էին նորա գործերը և բոլոր դիւցազներից աւելի էին բարձրացնում նորան, Կղ'իտոս չկարաց զսպել և յանդիմանեց Աղ'էքսանդրի յանդգնութիւնը, որ մինչև անգամ իւր հօր Փիլիպպոսի քաջագործութիւնները ոչինչ էր համարում: Աղ'էքսանդր տեղից վեր թռաւ, խլեց թիկնապահի ձեռքից սուրը և խրեց Կղ'իտոսի կուրծքը, մոռանալով, որ նա էր Գրանիկոնի մօտ իւր կեանքն ազատողը: Սակայն իսկոյն ուշքի եկաւ Աղ'էքսանդր, սկսաւ դառնապէս լալ և ամբողջ երեք օր վրանի մէջ փակ ողբում էր բարեկամի կորուստը՝ գոչելով. «Ո՜հ, Կղիտոս, Կղիտոս»: Վերջապէս զօրավարները դուրս հանեցին նորան վրանից և մխիթարում էին հաւատացնելով որ Կղ'իտոսի մահն աստուածներն էին նախասահմանել: Դորանից յետոյ Աղ'էքսանդր մեղմացաւ. բայց այս մեղմութիւնը կարճատև եղաւ. նա դարձեալ սկսաւ խստութիւններ անել և պահանջում էր, որ իրան աստուծոյ պէս պատուեն: Այսպիսի անխելք վարմունքները զօրացրին զօրքի դժգոհութիւնն ու տրտունջները:

5.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ.

Աղէքսանդրի աշխարհակալութեան սէրն անյագ էր. նա կամեցաւ Հնդկաստանին էլ տիրել: Մօտաւոր Հնդկաստանը բարելից ու հարուստ երկիր էր: Նորա բնակիչները շատ վաղուց զարգացած էին արհեստների, առևտրի ու երկրագործութեան մէջ. բընակվում էին ծաղկեալ քաղաքների ու գիւղերի մէջ: Հնդկացիք Եգիպտացւոց նման դասերի էին բաժանվում: Ամենանշանաւոր դասը կազմում էին քուրմերը կամ բ ր ա մ ի ն ն ե ր ը:

Այս երկրում Աղէքսանդրի արշաւանքների ժամանակ երկու միմեանց հակառակ իշխաններ կային. ըստ այսմ առանձին դժուարութիւն չեղաւ տիրել նորան: Աղ'էքսանդր հասաւ Հինդ գետի ափը: Երկրի մեծամեծները առանց հակառակութեան հպատակեցան նորան և ընծաներ տուին: Բայց Հնդկաց ամենաերևելի թագաւորը՝ Պօվրոս՝ բազմաթիւ զօրք էր ժողովել և գետի միւս ափում կանգնած վճռել էր խափանել Աղ'էքսանդրի գնացքը: Մի խաւարչտին գիշեր, յորդահոս անձրևի տակ՝ Մակեդոնացի հերոսը գետն անցաւ և յարձակուեցաւ Հնդկաց թագաւորի վերայ: Թշնամու զօրքն սկսաւ փախչել. Պօվրա մինչև վերջին շունչը կռուեց իչպէս առիւծ և վերջապէս ուժասպառ անձնատուր եղաւ: Աղէքսանդր երբ տեսաւ գերեալ թագաւորին՝ հիացաւ նորա վայելչակազմ հասակի, գեղանի դէմքի և ազնիւ շարժմունքների վերայ: Յետոյ հարցրեց. «Ինչպէս կամիս, որ վարուիմ քեզ հետ»:—Ինչպէս թագաւորի հետ, պատասխանեց Պօվրոս: «Իսկ ուրիշ ոչինչ չե՞ս ուզում ինձանից» հարցրեց երկրորդ անգամ Աղ'էքսանդր:—Արդէն ամենայն ինչ պարունակում է առաջին պատասխանիս մէջ, ասաց Պօվրոս: Նորա ցանկութիւնը կատարուեցաւ: Աղ'էքսանդր ոչ միայն դարձրեց նորան իւր իշխանութիւնը, այլ և ուրիշ երկրներ:

Աղ'էքսանդր այս յաղթութեամբ ոգևորուած՝ կամեցաւ աւելի յառաջ գնալ, բայց Մակեդոնացիք չուզեցան հետևել. նորա

սաստիկ թախծութեան մէջ էին հայրենեաց կարօտ քաշելով։ Աղէքսանդր շատ համոզեց, խնդրեց, սպառնաց, բայց ամենն էլ անօգուտ։ Վերջապէս յայտնեց, թէ «Ես պիտի շարունակեմ ճանապարհս. ով չի ուզում՝ կարող է վերադառնալ. ոչ ոքի չեմ պահելու զօրով. գնացէք տանը պատմեցէք որ ձեր թագաւորին թողիք թշնամեաց երկրում»։ Սակայն այս հնարքն էլ չօգնեց։ Աղէքսանդր ճարահատեալ զիջաւ և յայտնեց որ պէտք է դառնան։ Զօրքը մեծ բերկրութեամբ լսեց այս լուրը և սկսաւ ուրախութեան հանդէսներ կատարել ու զոհեր մատուցանել։

Զօրքի մեծ մասը Նէարքոսի առաջնորդութեամբ Հնդ գետով ճանապարհ ընկան որ ծովը դուրս գան և այն տեղից Բաբիլոն դառնան։ Մնացած մասն ինքն Աղէքսանդրն առաւ և ցամաքով վերադարձաւ Բաբիլոն։ Այս քաղաքը մայրաքաղաք շինեց և ցանկանում էր իւր նուաճած բոլոր երկրներից մի ընդարձակ Յունա-Պարսկական պետութիւն կազմել։ Բայց այսպիսի երևելի մտքերի զբաղած ժամանակ՝—յանկարծակի հիւանդացաւ ջերմախտով, երևի թէ անժուժկալ կեանք վարելուց։ Զօրավարները խորին տխրութեամբ շրջապատել էին նորան։ Նա մի քիչ գլուխը բարձրացրեց և ասաց. «Նախազգում եմ, որ մահուանիցս յետոյ արիւնահեղ պատերազմներ պիտի ծագին»։ Այն ժամանակ հարցրին մեռանողին, թէ ում է նշանակում իրան յաջորդ։ «Ամենաարժանաւորին» ասաց Աղէքսանդր և իսկոյն աւանդեց հոգին. (323 Թուականին Քր. ծն. յառ.)։ Նա մեռաւ 32 տարեկան հասակում, 12 տարի 8 ամիս փառքով թագաւորելուց յետոյ։

6.

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ինչ որ Աղէքսանդր նախագուշակեց մահուան րոպէին՝ կատարուեցաւ իսկութեամբ։ Նա ժառանգ չէր թողել իրան. ոչ նորա խելացնոր եղբայրը, ոչ երկու մանկահասակ որդիքը, (որոնցից մէկը նորա մեռնելուց յետոյ է ծնած) չէին կարող Աղէքսանդրի գահը ժառանգել։ Զօրավարներից ամեն մինն իրան էր համարում արժանի թագաւորութեան։ Այստեղից յառաջացան արիւնահեղ պատերազմներ, որ 22 տարի տևեցին։

Սկզբում կառավարութեան ղեկը ձեռքն առաւ Պերդիկկաս, որին Աղէքսանդր մեռնելուց առաջ յանձնել էր թագաւորական կնիքը։ Միւս զօրավարներին յանձնեց նա այս կամ այն երկրի կուսակալութիւնը։ Բայց երբ Պերդիկկաս մտքում դրաւ Աղէքսադրի ժառանգներին հեռացնել և ինքնին թագաւորել՝ կուսակալները վեր կացան նորա դէմ. ուստի և սարսափելի կռիւներ յառաջացան։ Վերջապէս, անդադար բաժանումներից ու խռովութիւններից յետոյ, Աղէքսանդրի լայնածաւալ պետութիւնը բաժանուեցաւ երեք գլխաւոր մասերի։ 1, Մակեդոնեան Յունաստանի հետ, ուր որ զանազան դաշնակցութիւններ ու իշխանութիւններ կազմուեցան։ 2, Եգիպտոսը, ուր որ Պտղոմէոս Լագոս կուսակալը հիմնեց առանձին Պտղոմեանց թագաւորութիւնը. և 3, Ասորիք, ուր Սելևկոս կուսակալը հաստատեց Սելևկեանց թագաւորութիւնը։

Հայաստանը իբրև Մակեդոնական մի կուսակալութիւն ենթարկուած էր Սելևկեան իշխանութեան, և մինչև Վաղարշակ Արշակունու թագաւորելը կառավարվում էր երբեմն օտար երբեմն Հայ կուսակալներով, որոնցից ամենաերևելին էր Արտաշէս կուսակալը, որ Աննիբալի խորհրդով շինեց Արտաշատ քաղաքը։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Ա.

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ

1.

ԻՏԱԼԻԱ

Յունաստանից դէպ Արեւմուտք, Ալպեան լեռներից դէպի հարաւ երկարաձգվում է Միջերկրական ծովի մէջ Իտալական չքնաղ թերակղզին, որ սովորաբար Եւրոպայի պարտէզ է կոչվում։ Այս պտղաբեր երկրում զուարճալի հովիտներն ընդհատվում են Ապենեան լեռների շառաւիղներով։ Թէեւ այս լեռնաշղթայի երկու կողմերից, դէպ արեւելք ու դէպ արեւմուտք, հոսում են բազմաթիւ գետեր, բայց նոքա նաւագնաց չեն։ Միայն հիւսիսային Իտալիայում Ալպեան լեռների բազմաթիւ վտակներից գոյանում է Պօ (Պադոս) գետը, որ նաւագնաց է. սա թափվում է Ադրիական ծովը։ Այս բարեկից երկրի ջերմ ու ախորժալի օդի մէջ հասնում են համեղ ու քնքոյշ պտուղներ. Զարմանք չէ, որ հին ժամանակներից սկսած զանազան ազգեր ձգտում էին իրանց ձեռքը ձգել այդ հրաշագեղ աշխարհը, որ այնքան առատ էր բնութեան պարգեւներով։

Յոյներն Իտալիան անուանում էին Հեսպերիա, որ կնշանակէ երեկորնեայ կամ արեւմտեան։ Սովորաբար Իտալիան երեք մասն էին բաժանում, 1, Վերին, որ տարածվում էր Ալպեան լեռներից մինչեւ Ռուբիկոն եւ Մակրա գետերը. 2, Միջին, Վերին Իտալիայից մինչեւ Սիլարոս եւ Ֆրենտօ գետերը, եւ 3 Ստորին Իտալիա բոլոր հարաւային մասը։

Տեղային հին բնակիչները Պելասգացիք էին, որոնք զանազան իրարից անկախ ցեղերի էին բաժանվում. Յետոյ եկան Տուսկիացիները, Գալղիացիները եւ Յոյները։ 1. Վերին Իտալիայում արեւմտեան կողմը բնակվում էին Լիգուրիացիք Գենուա վաճառաշահ քաղաքով. արեւելեան կողմը՝ Վենետացիք՝ Վերոնա եւ Պադուա քաղաքներով, իսկ Պօյի հովիտներում—Գաղղիացիք, որոնց անունից երկիրն էլ կոչուեցաւ Գաղղիա յայսկոյս Ալպեանց. սոցա նշանաւոր քաղաքները էին Միլան (Մեդիոլանոն), Մոդենա, Մանտուա, Ռաւեննա։

2. Միջին Իտալիայում բնակվում էին ա) Տուսկիացիք կամ Ետրուրացիք, որոնք դաշնակցութիւն ունէին կազմած. նշանաւոր քաղաքներն էին. Վէյի, Տարկուինի, Կլուսիոն եւ Պերուսիա. բ) Սաբինացիք, որ բաժանվում էին մի քանի ցեղերի. գ) Լատինացիք, որոնց նշանաւոր քաղաքներն էին Ալբա-Լոնգա, Ռոմա, Հռոմ։

3. Ստորին Իտալիայում բնակվում էին Կալաբրիացիք, Ապուլիացիք, Բրուտտիացիք, Մեսապիացիք. եւ այլք։ Այս երկիրը բռնուած էր Յունաց գաղթականութիւններով, որի համար էլ նա կոչվում էր Մեծ Յունաստան։

Իտալիան շրջապատուած է բազմաթիւ կղզիներով, որոնցից նշանաւորներն են Սիկիլիան ու Սարդինիան։

2.

ՀՌՈՄԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ (753 Թ.)

Իտալիայի բոլոր քաղաքների միջից ամենանշանաւոր եղաւ Հռոմը, որ զօրանալով տիրեց միւս ցեղերին։ Հռոմի ծագման պատմութիւնը զրոյցներով խառնէ։ Աւանդութիւնը պատմում է որ Տրովադայի կործանմանից յետոյ Ենէաս իւր որդի Ասքանիասի եւ ուրիշ Տրովայինների հետ երկար ժամանակ թափառելուց յետոյ դուրս եկաւ Իտալիա եւ Լատիոնի մէջ հիմնեց Ալբա-Լոնգա քաղաքը։ Ալբա-Լոնգայի տասնուչորս երորդ թագաւորը՝ Պրոկաս՝ մեռնելու ժամանակ թագաւորութիւնը յանձնեց իւր երկու որդւոց՝

Նումիտորին ու Ամուլիոսին։ Բայց գոռոզ Ամուլիոս միայնակ յափշտակեց թագաւորութիւնը, եղբօրը դուրս արաւ, նորա որդուն սպանեց, իսկ դստերը՝ Հռէա-Սիլվիային Վեստեան կուսանաց մէջ գրաւ, որպէս զի ամենևին եղբօրը ժառանգ չմնայ։ Եւ սակայն Հռէան երկուորեակ որդիք ծնաւ որ կոչուեցան Հռոմուլոս և Հռեմոս, և կարծիք եղաւ, թէ նոցա հայրը Մարս աստուածն է։ Այս բանի վերայ Ամուլիոս սաստիկ բարկացաւ և հրամայեց Հռէային ձգել ստորերկրեայ մութ վիրապի մէջ։ Իսկ երկուորեակ երեխաներին՝ հրամայեց կողովի մէջ դնել Տիբերիս գետը ձգել։ Բարեբաղդաբար այն միջոցին գետը հեղեղուած պատահելով ալիքները քշեցին կողովը դէպի ափերը, և երբ ջուրը սկսաւ քաշուիլ՝ տղայքը մնացին մի ծառի տակ։ Ով կմտածէր թէ այս դէն ձգած տղայքը պէտք է դառնային աշխարհիս ամենաերեւելի տէրութեան հիմնադիրները։

Մէկ էգ գայլ ջուր խմելու համար գետն իջնելով՝ լսեց տղայոց ձայնը, մօտեցաւ նոցա և կաթ տուաւ։ Փաւստուլոս անունով մի հովիւ տեսնելով այս՝ կարեկցեց խեղճ երեխաների վերայ, առաւ տարաւ իրանց տուն և կնոջը տուաւ, որ մեծացնէ նոցա։ Հռոմուլոս և Հռեմոս մեծացան հովուի տանը և ոչխար էին արածեցնում, երբեմն էլ որսորդութեան էին գնում, կամ իրանց ընկերների հետ աւազակների վերայ էին յարձակվում ու գողացած բաները ձեռքներից խլում։ Շատ անգամ նոցա ու Նուիտորի հովիւների մէջ կռիւ էր պատահում։ Մի անգամ էլ այդ հովիւները Հռեմոսին բռնեցին տարան Նուիտորի մօտ, որ պատժէ նորան։ Նումիտոր ճանաչեց իւր թոռին, որովհետև Հռէային շատ նման էր, պատմեց նորան Ամուլիոսի նենգութիւնը և նոցա ազատուիլը։ Գործը բացուեցաւ. իսկոյն Հռոմուլոսն էլ ընկերները հաւաքեց եկաւ. մտան քաղաքը, Ամուլիոսին սպանեցին և Նումիտորին նորէն թագաւոր կարգեցին։

Հռոմուլոս և Հռեմոս Նումիտորի համաձայնութեամբ՝ իրանց գետը ձգուած տեղը հիմնարկեցին Հռոմ քաղաքը 753 թ.։ Քաղաքը շինելիս Ետրուրիացւոց սովորութեան համեմատ մի լուծ

սպիտակ եզներ լծեցին և Պալատինեան բլրի շուրջը գութանով քառանկիւնի ակօս փորեցին, որտեղ կուզէին դուռը շինել՝ գութանը բարձրացրին։ Այս քառանկիւնի խրամի մէջտեղը շինուեցան բազմաթիւ ցիրուցան խրճիթներ հասարակ կաւից՝ եղեգով կամ յարդով ծածկուած։

Հենց սկզբում երկու եղբարց մէջ վէճ բացուեցաւ, թէ ով լինի քաղաքի տէրը և որի անուամբ կոչուի նա։ Նումիտոր խորհուրդ տուաւ որ աստուածների կամքը հարցնեն. և որովհետև հին հռովմայեցիք հաւատում էին, թէ թռչունների երկնքով թռչելիս լսում են աստուածների խորհուրդը և յայտնում են մարդկանց թռիչքով կամ երգով, ուստի որոշեցին մէկ մէկ բլրի գլուխ բարձրանալ, ում առաջինը նշան կտան թռչունները՝ նա լինի թագաւորը և նորա անուամբ կոչուի քաղաքն էլ։

Առաջ Հռեմոս տեսաւ վեց անգղ. բայց քիչ յետոյ Հռոմուլոս 12 անգղ տեսաւ։ Այստեղից նոր վէճ ծագեցաւ, մէկն ասում էր թէ ինքն առաջ է տեսել. միւսը՝ թէ իւր տեսածը կրկնապատիկ աւելի էր։ Բանը կռուի հասաւ և Հռոմուլոս խփեց սպանեց իւր եղբօրը՝ ասելով. «Այսպէս պիտի մեռնի ամեն ոք, որ կհամարձակուի ներս մտնել այս խրամից»։

Այսպիսով Հռոմուլոս միայն մնաց թագաւոր և քաղաքը կոչուեցաւ Հռոմ։

Բ

ՀՌՈՎՄ՝ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԺԱՄԱՆԱԿ (753—510).

1.

Հռոմուլոս.

Հռոմուլոս նոր քաղաքի բնակիչների թիւն իմանալու համար հաշուել տուաւ, տեսաւ որ 3300 մարդ էին։ Դոքա ամենքն էլ պատերազմասէր մարդիկ էին և առասպ էին տարածում դրացի-

ների վերայ։ Երբ Թագաւորը տանից դուրս էր գալիս՝ նորան ուղեկցում էին 12 հոգի սկուռներ (տապարաւորներ, լիկտոր), որոնց պարտականութիւնն էր կարգի վերայ հսկել և պէտք եղած ժամանակ տեղնուտեղը պատժել։

Տեսնելով որ ժողովրդի մէջ որոշ կարգ ու կանոններ չկան՝ Հռոմուլոս մի քանի կարգադրութիւններ արաւ։ Երևելի տներից հարիւր հոգի խելացի ծերեր ընտրեց, որ Թագաւորի հետ միասին խորհուրդ կազմեն և հոգան տէրութեան պէտոյքների մասին, սոցա ժողովը կոչուեցաւ ծերակոյտ (սենատուս)։ Ծերերը որովհետև իբրև հայր պէտքէ հոգ տանէին ընտանեց վերայ՝ այս պատճառով նոքա ստացան հարք (պատրէս) պատուանունը, և այս դասակարգի բոլոր անդամները կոչվում էին պատրիկներ. այս կոչումն ազնուականի նշանակութիւն ունէր։

Որովհետև քաղաքի բնակիչները երեք այլ և այլ ցեղերից էին, ուստի քաղաքը բաժանեց երեք թեմ կամ ցեղ (տրիբուս). Թեմը բաժանվում էր 10 ծուխ (կուրիա), իսկ ծուխը՝ 10 գերդաստան (գենտէս)։ Ամեն մի գերդաստան պարտաւոր էր մի ձիաւոր և տասն հետի զինուոր տալ։ Ուրեմն սկզբում պէտքէ 300 ձիաւոր ու 3000 հետի զինուորներ լինէին։ Ձիաւորները վերջը առանձին ասպետաց դասակարգ կազմեցին։

Բնակիչների թիւը շատացնելու համար Հռոմուլոս, ինչպէս մի ժամանակ Հայոց Արշակ Բ. Թագաւորն Արշակաւանի համար արաւ, յայտնեց, որ ամեն ցանկացող կարող է բնակուել Հռովմի մէջ՝ ազատ որևէ պատասխանատուութիւնից. ուստի ամեն կողմից գող, փախստական, պարտատէր և ուրիշ տեսակ մարդիկ եկան լցուեցան քաղաքը։ Այսպիսով այր մարդիկ շատացան քաղաքի մէջ, իսկ կանայք չկային։ Հռոմուլոս մարդ ուղարկեց դրացի ազգերի մօտ և խնդրեց որ խնամութիւն անեն իւր քաղաքացւոց հետ։ Բայց ոչ միայն նորա առաջարկութիւնը չընդունեցին, այլ և երգիծական պատասխաններով արհամարհեցին Հռովմայեցիներին։ Հռոմուլոս ուզեց վրէժխնդիր լինել և խարդախութիւն բանեցրեց։ Հրամայեց յայտնել, որ Հռոմի մէջ պէտքէ կատարուի հանդիսաւոր տօն 'ի պատիւ Նեպտունի։ Դրացի ազգերը որ լսեցին շտապեցին եկան

հանդէսը տեսնելու, մանաւանդ որ ցանկանում էին տեսնել նոր քաղաքը ևս։ Ամենից առաջ եկան Սաբինացիք իրանց ընտանիքով։ Հանդիսի ժամանակ, երբ հանդիսականներն աչքերը տնկած նայում էին խաղերին՝ յանկարծ նշան տրուեցաւ, և Հռովմայեցի երիտասարդները յարձակուեցան 700-ի չափ աղջիկ առին փախցրին։

Այսպիսի նախատանաց վերայ սաստիկ ջղարկացած՝ Սաբինացիք Տիտոս Տատիոս Թագաւորի առաջնորդութեամբ պատերազմ գնացին Հռոմի վերայ։ Երկու բլուրների մէջտեղի հովտում կռիւն սկսուեցաւ։ Երկու կողմից սաստիկ կոտորած էր լինում, բայց յափշտակուած կանայքը հերարձակ վազեցին կռուողների մէջ և աղաչանքով համոզեցին իրանց ամուսիններին ու ազգականներին, որ դադարեցնեն անողորմ պատերազմը։ Այն ժամանակ երկու Թագաւորները սիրտները շարժուած այս տեսարանից՝ յառաջ եկան հաշտութիւն արին և դաշինք դրին, որ երկուքը միասին Թագաւորեն Հռովմի մէջ. բայց այնպէս որ քաղաքը Հռոմուլոսի անուամբ Հռոմ կոչուի, իսկ ժողովուրդը Սաբինացւոց Կուրէս մայրաքաղաքի անուամբ Կուրիացիք։ Բացի դորանից ծերակուտի մէջ պէտքէ աւելանային 100 հոգի ևս Սաբինացիներից։

Սակայն Հռոմուլոս որ իւր հարազատ եղբօր հետ չհաշտուեց՝ ինչ կըհաշտուէր օտարի հետ, և յիրաւի 6 տարուց յետոյ բռնաւեր Հռոմուլոս սպանել տուաւ Տատիոսին և սկսաւ մենակ Թագաւորել։ Սակայն կարճ ժամանակից յետոյ Հռոմուլոս ինքն էլ զոհ գնաց իւր փառասիրութեանը։ Մի օր զօրաց հանդէս անելիս, սոսկալի որոտմունքների ժամանակ, նա անյայտացաւ։ Ժողովուրդը ծերերիցն էր պահանջում Թագաւորին, բայց նոքա յայտնեցին, որ Թագաւորը փոթորկի ժամանակ թանձր գոլորշիքով պատած՝ երկինք քաշուեցաւ։ Նոցանից մէկը մինչև անգամ հրատարակեց, թէ Հռոմուլոս տեսիլքով երևեցաւ իրան, բաղդ և երջանկութիւն աւետեց ժողովրդին և պահանջեց որ իրան պաշտեն իբրև աստուծոյ Կուիրինոս անուամբ։ Ժողովուրդն էլ գոհ մնաց այս բացատրութեամբ և սկսաւ պաշտել նորան։

2.

ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ (715—672).

Հռոմուլոսի մահուանից յետոյ երկրի կառավարութիւնը ծերակուտի ձեռքն անցաւ մի տարի ժամանակով: Եթէ ժողովուրդը ձայն չհանէր՝ ծերակոյտը երևի մտքումն էլ չէր անցկացնիլ թագաւոր ընտրել: Բայց ժողովուրդը շուտով ձանձրացաւ նորա կառավարութիւնից և թագաւոր պահանջեց: «Մենք չենք ուզում մէկի տեղ հարիւր տէր», ասում էր նա: Վերջապէս ժողովրդի կամքը կատարուեցաւ և այս անգամ թագաւոր ընտրուեցաւ Սաբինացիներից Տիտոս Տատիոսի փեսան՝ Նումա Պոմպիլիոս, որ հռչակուած էր իբրև արդար, բարեպաշտ և իմաստուն մարդ:

Նա պատերազմներ չէր սիրում և ամեն ջանք գործ էր դնում, որ իմաստուն կարգադրութիւններով մեղմացնէ այն անսանձ ժողովուրդը: Ամենից առաջ մտածեց կանոնաւոր կրօնական պաշտամունք մտցնել և սորա համար տաճարներ ու սեղաններ շինել տուաւ, ի թիւս որոց և Յանոս երկդիմի աստուծոյ տաճարը, որ միմիայն պատերազմի ժամանակ պէտքէ բացուէր, որպէս զի նորա մէջ աղօթէին շուտով խաղաղութիւն լինելու համար: Ազգարար (ֆեցիալ) անուամբ քուրմեր էլ նշանակեց, որոնք պէտքէ ամեն հնար գործ դնէին, որ խաղաղութիւն լինէր. իսկ երբ պատերազմն անմերժելի էր լինում, ազգարարն արեան մէջ թաթախած մի նետ էր առնում ձգում դէպի թշնամեաց սահմանը՝ ասելով. «Ես և Հռովմայեցիք պատերազմ ենք հրատարակում այս ազգի դէմ»:

Նա հաստատեց և Վեստա աստուածուհու պաշտամունքը, որի տաճարի մէջ միշտ պէտքէ վառ պահուէր կրակը, և եթէ հանգչէր՝ դժբաղդութիւն կըլինէր Հռովմի համար: Վեստայի սեղանի վերայ կրակը վառ պահելու համար ծառայում էին Վեստեան կուսանք, որոնք տասն տարեկանից ցած կընդունուէին և երեսուն տարի պիտի ծառայէին տաճարի մէջ ամենախիստ ողջախոհութեամբ: Եթէ կրակը հանգչէր՝ քրմապետը սաստիկ կըծեծէր նո-

ցա. իսկ եթէ ողջախոհութեան դէմ մեղանչէին՝ կըձգէին մութ ստորերկրեայ վիրապի մէջ: Բայց սորա փոխարէն, եթէ իրանց կոչման հաւատարիմ մնային՝ մեծ յարգանք կը վայելէին. զոր օրինակ, դատարանում առանց երդման կըհաւատային նոցա խօսքին. ճանապարհին եթէ մահապարտի հանդիպէին՝ նա կազատուէր, հասարակական հանդէսների մէջ պատուաւոր տեղեր կստանային և այլն:

Բացի սոցանից Նուման նշանակեց զոհաբերութեանց ու տօների համար որոշ օրեր և բարեկարգեց տօմարը: Հողերը նուիրական սահմանաքարերով բաժանեց և շատ քաջալերեց երկրագործութիւնը: Աւանդութեան ասելով նա բոլոր իւր կարգադրութիւնները Եգերիա աստուածուհու խորհրդովն էր անում:

Նումայի երկարատև թագաւորութեան ժամանակ ոչ մի անգամ Յանոսի տաճարը չբացուեցաւ:

3.

ՏՈՒԼԼՈՍ ՈՍՏԻԼԻՈՍ (672—640).

Այս անզուսպ թագաւորը Հռոմուլոսից աւելի պատերազմասէր էր: Նորա ժամանակ Ալբա-Լոնգայի և Հռոմի միջի ատելութիւնն այնչափ բորբոքուեցաւ, որ բանը բացարձակ կռուի հասաւ: Ալբայեցւոց զօրավար Մետտիոս Ֆուֆֆետիոս պատրաստուած զօրքով եկաւ և բանակ դրաւ Հռոմի դէմը: Երբ երկու կողմից պատրաստվում էին յարձակուելու միմեանց վերայ՝ Մետտիոս յառաջ անցաւ և Տուլլոսին հրաւիրեց բանակցութեան: «Չենք կարող ծածկել իրարից, ասաց նա, որ ատելութիւնն է միայն երկու դրացի ու արենակից ազգեր դուրս հանել մէկ մէկի դէմ կռուելու. ինչո՞ւ իզուր տեղն արիւն թափենք: Քան թէ իրար ուժերը տկարացնենք և յետոյ մեր թշնամեաց ձեռքն ընկնենք, աւելի լաւ է ամեն մէկիս կողմից մի քանի երիտասարդ դուրս գան և գործը մենամարտութեամբ վերջացնեն»: Տուլլոս շատ հաւանեցաւ այս առաջարկութեանը:

ՈՎՐԱՏԵԱՆՔ ԵՒ ԿՈՒՐԻԱՏԵԱՆՔ: Դէպքն այնպէս էր բերել, որ Հռովմայեցւոց բանակում գտնվում էին երեք եղ-

բարք՝ Հորատեանք, իսկ Ալբայեցւոց բանակում նոյնպէս երեք եղբարք Կուրատեանք։ Որոշուեցաւ որ սոքա լինին մենամարտողները։

Երբ որ պայմանը երդմամբ հաստատուեցաւ և կտրիճները երկու բանակից սկսան յառաջ գալ՝ ամենքի վերայ լռութիւն տիրեց. ամենքի սիրտը տագնապում էր երկիւղի և յուսոյ մէջ։ Նշան տրուելուն պէս մենամարտիկները միմեանց վերայ յարձակուեցան սրերը ձեռքներին։ Առաջ մեռաւ Հորատեաններից մէկը, յետոյ միւսը։ Ալբայեցիք սկսան ցնծութեան աղաղակներ բառնալ, այն ինչ Հռոմայեցիք մնացել էին սարսափած։ Բայց Կուրատեան երեք եղբարք էլ ծանր վէրքեր էին ստացել։ Հորատիոս թէպէտ մենակ էր մնացել, բայց դեռ անվնաս էր և չէր յուսահատում. յանկարծ նա սկսաւ փախչել։ Կուրատեանք գործը լրացնելու համար նորա յետևից ընկան, և որովհետև մինը միւսից համեմատաբար աւելի թոյլ էին, ուստի իրարից հեռու հեռու մնացին։ Հորատիոսն էլ հենց այդ էր ուզում։ Նա յետ դարձաւ դէպի իւր հակառակորդները և բոլոր ուժովն առաջինի վերայ յարձակուեցաւ ու գետինը փռեց. միւս եղբայրը վազեց օգնութեան, բայց ուշ էր. Հորատիոս սորան էլ մահաբեր հարուածը տուաւ։ Մնաց երրորդը. նա էլ ուժահատ, արիւնլուայ՝ ընկաւ յաղթականի ոտքը։ Հորատիոս Հռոմայեցւոց ուրախալից աղաղակներից ոգևորուելով՝ կանչեց. «Երկու եղբարցդ իմ երկու եղբարցս հոգուն նուիրեցի, քեզ էլ հայրենեացս ազատութեանը պէտք է նուիրեմ». ասաց և թուրը նորա կոկորդը խրեց։—Ալբայեցիք հնազանդեցան։

Հորատիոս թշնամու կողոպուտները ձեռքն առած յաղթանակով Հռոմ դարձաւ. Ժողովուրդն ընդունեց նորան ցնծութեան ձայներով ու փառքով։ Դորան առաջև նորա դէմն ելաւ իւր քոյր Կամիլլէն, որ Կուրատեաններից մէկի վերայ նշանուած էր. երբ որ եղբօր ձեռքին տեսաւ նշանածի վերարկուն, որ իւր ձեռքովն էր գործել՝ սկսաւ լալ, մազերը քանդել ու եղբօրը նախատել խստասրտութեան համար։ Հորատիոս այսպիսի անտեղի ողբի վերայ չկարողանալով բարկութիւնը զսպել՝ թուրը հանեց ու քրոջ կուրծքը խրեց գոչելով. «Հրաժարուիր քո յիմար սիրովդ նշանածիդ

մօտ, որին նախապատիւ ես համարում եղբայրներիցդ ու հայրենիքիցդ։ Այսպէս պիտի մեռնի ամեն Հռոմայեցի, որ կողբայ թշնամեաց մահը»։

Այս անգթութեան վերայ բոլոր քաղաքը զայրացաւ և մահու դատապարտեց Հորատիոսին. սակայն նորա քաջագործութիւնը և ծերունի հօր դառն արցունքները փոխել տուին այս վճիռը։ Բայց Հորատիոս դարձեալ պէտք է կրէր նախատինքը. գլխակոր, երեսը ծածկած, սկուռները յետևից՝ պէտք է գնար կախաղանի տակիցն անցնէր։

Մինչ այս մինչ այն Մետտիոս Ֆուֆֆետիոս հնարք էր մտածում Հռոմայեցւոց աւելի լուծը թօթափելու համար. նա Ֆիդենացւոց ու Վէյացւոց գրգռեց Հռոմի դէմ, խոստանալով պատերազմի ժամանակ նոցա կողմն անցնել։ Պատերազմն սկսուեցաւ. Մետտիոս Ալբայեցի գնդով պէտք է Ֆիդենացւոց դէմ գնար, իսկ Տուլլոս Վէյացւոց։ Մետտիոս ոչ մէկ ոչ միւս կողմին չէր օգնում, այլ մօտիկ բլրի վերայ քաշուած դիտում էր, որ յաղթողի կողմն անցնի։ Տուլլոս նորա դիտաւորութիւնը լաւ հասկանում էր, բայց չիմանալու էր դնում։ Պատերազմը վերջացաւ. Հռոմայեցիք յաղթեցին։ Մետտիոս ցած իջաւ, շնորհաւորեց Տուլլոսին յաղթութիւնը։ Տուլլոս պահեց իւր զզուանքը և շնորհակալութիւն յայտնեց դաւաճանին։ Միւս առաւօտ ժողով կազմեց, բոլոր զօրքը կանչեց, յայտնեց Մետտիոսի խարդախութիւնը և դառնալով նորան ասաց. «Դու դաւաճան ես. որովհետև երեկ քո սիրտը բաժանուած էր Հռոմի և Ֆիդենայի մէջ, ուստի քո մարմինդ պէտք է երկու մաս բաժանուի»։ Յետոյ նշան տուաւ՝ որ երկու քառաձի կառք բերեն. Մետտիոսին կապեցին նոցանից և ձիանքը հակառակ կողմեր քշելով՝ պատառեցին Ալբայեցի թշուառ զօրապետի մարմինը։ Ամեն մարդ սարսափ ու զզուանք զգաց այս ահռելի տեսարանից, որ միակ օրինակն է Հռոմի պատմութեան մէջ։

Դորանից յետոյ հրամայեց որ Ալբա քաղաքն էլ կործանեն և բնակիչներին Հռոմ տեղափոխեն։ Այս կերպով կործանեցաւ Լատինացւոց մայրաքաղաքը, չորս դար գոյութիւն ունենալուց յետոյ։

4.

ԱՆԿՈՍ ՄԱՐՏԻՈՍ (640—616).

Անկոս Մարտիոս իւր պապ Նումայի պէս խաղաղասէր էր. նա ջանաց ծաղկեցնել երկրագործութիւնը, որ իւր նախորդի ժամանակ շատ ընկած էր և կրօնական արարողութիւնները վերականգնեց: Դրացի անհանգիստ ազգերը, մանաւանդ Լատինացիք, օգուտ քաղելով Անկոսի խաղաղասէր բնաւորութիւնից՝ մտքում դըրին ապստամբել Հռոմի դէմ և սկսան կողոպտել Հռոմէական երկիրները: Բայց Անկոս զէնք բանեցնելու էլ կորիճ էր: Լատինացիներին ջարդեց, նոցա քաղաքներն առաւ, բնակիչներին Հռոմ փոխադրեց և Աւենտինեան լերան վերայ բնակեցրեց: Այս նոր քաղաքացիներից նա կազմեց ժողովրդեան նոր դասակարգ, որոնք թէև պատրիկների իրաւունքները չունէին, բայց և այնպէս ազատ էին: Բացի դոցանից Հռոմի մէջ օտարներ էլ կային, որ քաղաքացիութեան իրաւունք չունէին. և բնակվում էին քաղաքում պատրիկների հովանաւորութեան տակ: Հովանաւորող պատրիկը կոչվում էր Թ և ա ր կ ո ւ (պատրոնուս), որին Թ և ա ր կ և ա լ ը (կլիէնտ) հօր պէս պատվում էր: Անկոս Հռոմի իշխանութիւնը տարածեց մինչև Տիբերիս գետի բերանը և շինեց այնտեղ Օ ս տ ի ա նաւահանգիստը, որ Հռովմայեցւոց ծովային վաճառականութեան դուռն եղաւ:

Իւր կարգադրութիւններից մեծ մասն Անկոս կատարում էր հարուստ և կրթուած Լուկումոն անուն Յոյնի խորհրդով: Սորա հայրը Կորնթացի վաճառական էր, որ իւր հայրենիքի ներքին գժտութեանց պատճառով տեղափոխուել էր Ետրուրիայի Տարկուինիա մայրաքաղաքը: Հօր մեռնելուց յետոյ Լուկումոնը իւր փառասէր ու խորագէտ կնոջ Տանակուիլլայի հետ Հռոմ եկաւ: Այստեղ ոչ միայն ժողովրդի, այլև թագաւորի, ուշադրութիւնը գրաւեց իւր հարստութեամբ ու խելքով: Անկոս բերաւ նորան իւր մօտ և մեռնելուց առաջ որդւոց վերայ հոգաբարձու կարգեց: Անկոսի մահուանից յետոյ, երբ ազգային ժողով կազմուեցաւ թագաւոր ընտրելու համար, խորամանկ Յոյնը իւր սաներին որսի ուղարկեց և ինքը շողոքորթութիւններով ու խաբէութեամբ թագաւոր ընտրուեցաւ: Նոր թագաւորը Տարկուինոս ասուեցաւ՝ այն քաղաքի անուամբ, ուր ինքը մեծացել էր: Վերջը Երէց մականունը տուին նորան, որպէս զի որոշուի Հռոմի վերջին թագաւորից, որի անունը նոյնպէս Տարկուինիոս էր:

5.

ՏԱՐԿՈՒԻՆՈՍ ԵՐԷՑ (616—578)

Նախորդ թագաւորները ջանք էին անում Հռովմի սահմաններն ընդարձակելու և թշնամիներից ապահովելու համար, Տարկուինիոսն էլ, իբրև կրթուած Յոյն, հոգ տարաւ քաղաքը զարդարելու և գեղեցկացնելու, որի վերայ գործ դրաւ Լատինացւոց ու Ետրուրացւոց հետ վարած յաջողակ պատերազմներից ստացած աւարները: Հին խրամի տեղ քաղաքը շրջապատեց քարէ պարիսպներով. քաղաքի Հրապարակը (ֆորում) զարդարեց և նշանակեց ազգային ժողովների համար, իսկ Մեծ Կրկէսը (ցիրկուս մաքսիմուս) ազգային խաղերի ու հանդէսների համար. հիմնարկեց Կապիտոլեան տաճարն՝ ի պատիւ Իւպիտերի:

Նորա կարգադրութիւններից ամենօգտակարն այն էր, որ ջրմուղներ շինել տուաւ քաղաքը ջուր բերելու համար և փորել տուաւ ամուր կամարակապ կոյուղիներ, որոնցով քաղաքի բոլոր աղտոտութիւնները գնում թափվում էին գետը:

Այն ինչ Անկոսի որդիքը չէին կարողանում մոռանալ, որ հայրական գահն այնպէս խաբէութեամբ յափշտակուած էր իրանցից, և նկատելով որ թագաւորը մտադիր է յաջորդ նշանակել իւր փեսայ Սերուիոս Տուլլիոսին՝ խորհուրդ արին նորան սպանելու: Այս խորհուրդը գլուխ բերելու համար երկու հովիւ կաշառեցին, որ սպանեն Տարկուինիոսին: Նոքա գնացին թագաւորի սրահը և սուտ վէճ բանալով սկսան գոռգոռալ: Թագաւորը դուրս եկաւ որ

նոցա դատը որոշէ. երբ հովիւներից մէկը իբր թէ վէճնէր պատմում՝ միւսը կացնով զարկելն ու մոռցնելը մէկ արաւ: Սպանութիւնը կատարելուց յետոյ երկուքն էլ անյայտացան, բայց վերջը բռնուեցան ու պատժուեցան:

6.

ՍԵՐՒԻՈՍ ՏՈՒԼԼԻՈՍ (578—534).

Սակայն Անկոսի որդիքը չհասան իրանց նպատակին: Տանակուէլ՚լան իսկոյն կանչել տուաւ Սերուիոսին և համոզեց նորան կառավարութիւնը ձեռքն առնել: «Եթէ դու պէտք է թոյլ տաս, ասում էր նա, որ սպանիչները թագաւորական գահը նստին»: Ժողովուրդը Տարկուինիոսի մահուան գոյժը լսելուն պէս թափուել էր պալատի սրահը. Տանակուիլլան դռները փակեց և պատուհանից ասաց ժողովրդին. «Տարկուինիոսի վէրքերը մահացու չեն. յոյս կայ մի քանի օրից վեր կենայ և անձամբ յայտնէ քաղաքացւոց իւր շնորհակալութիւնը. միայն պատուիրում է որ առ այժմ ամեն բանի մէջ հնազանդուիք Սերուիոսին»: Այսպէս՝ Սերուիոս թագաւորական զգեստով, թիկնապահները յետևից գալիս էր հրապարակը, կարգադրութիւններ էր անում և ժամանակ առ ժամանակ ցոյց էր տալիս իբր թէ հիւանդ թագաւորի հետ խորհուրդ է անում: Այս միջոցին խելացի վարմունքով կուսակիցների թիւը շատացրեց և երբ Ծերակոյտը բոլորովին իւր կողմը գրաւեց՝ հրատարակեց թագաւորի մահը և ինքը թագաւոր հաստատուեցաւ:

Այս երևելի անձը դարձաւ Հռոմի պետական բարեկարգութեան իսկական հիմնադիրը: Ինչպէս Սոլոնը Աթէնքում՝ այնպէս էլ Սերուիոսն Հռոմի մէջ բոլոր քաղաքացիները դաս դաս բաժանեց՝ սահմանելով նոցա իրաւունքներն ունեցուածքին համեմատ: Ժողովուրդը վեց դաս բաժանուեցաւ. առաջին դասին պատկանում էին 100,000 աս (մօտ 2300) ունեցող քաղաքացիք. նոքա կոչվում էին կ լ ա ս ս ի ք ն ե ր: Իւրաքանչիւր հետևեալ դասը համեմատաբար փոքր կարողութիւն ունէր, այսպէս՝ երկրորդը 75,000, երրորդը

50,000, չորրորդը 25,000 և հինգերորդը 12,500 աս պէտք է ունենային. իսկ վեցերորդ դասին պատկանողները ոչինչ կարողութիւն չունեցողներն էին: Այս վեց դասակարգերը նա նորէն բաժանեց 193 հարիւրեակների (ցենտուրիա): Առաջին դասը բաղկանում էր 98 հարիւրեակներից, հետևեալ չորսը—94-ից, իսկ վերջինը՝ միայն մէկ հարիւրեակից: Իւրաքանչիւր քաղաքացի իւր դասի աստիճանին նայելով որոշ պարտականութիւններ ու իրաւունքներ ունէր: Պատերազմի ժամանակ ամեն ոք իւր հաշուով պէտք է ծառայէր: Առաջին դասը պարտէր ծանր սպառազէն կրել և կռուել առաջին շարքերում. հետևեալ դասերն աստիճանաբար թեթև պէտք է սպառազինուէին: Վերջին դասը բոլորովին ազատ էր զինուորական պարտաւորութիւններից և միմիայն շատ նեղ հանգամանքներում էր օգնութեան գնում: Հեծելազօրքն առաջ միայն պատրիկներից էր ընտրվում և թւով 6 հարիւրեակ էր, բայց յետոյ հարուստ ռամիկներից էլ ընտրեցին և աւելացրին մինչև 18 հարիւրեակ: Ամեն ձիաւոր տէրութիւնից ձրի էր ստանում իւր ձին: Տէրութեան հարկերն էլ դասի աստիճանին համեմատ էին վճարվում:

Այս նոր սահմանադրութեամբ բոլոր քաղաքացիք իրաւունք ստացան մասնակից լինել ազգային ժողովներին: Ամեն հարիւրեակ մի երեսփոխան ունէր. նոքա վճիռների ժամանակ ձայն էին տալիս և ամեն վճիռ ձայների բազմութեամբ էր կայանում: Բայց որովհետև միմիայն առաջին դասը 98 ձայն ունէր, իսկ բոլոր մնացածները 95, ուստի ըստ մեծի մասին վճիռները կայանում էին հարուստների շահերի համաձայն:

Սրուիոս կարգադրեց, որ ամեն նոր ծնած տղայի համար մէկ դրամ վճարեն Լուկինիայի տաճարին, որ տղաբերքի աստուածուհին էր, ամեն մեռելի համար մէկ դրամ՝ Լիբիտինիայի տաճարին, որ թաղման աստուածուհին էր, երիտասարդութեան հանելուն պէս՝ մէկ դրամ Յուենտասին, որ երիտասարդութեան աստուածուհին էր: Այսպիսի հնարքով և՛ փող էր հաւաքվում, և՛ բնակիչների թիւն էր ճիշդ իմացվում:

Բայց քաղաքաքացւոց կարողութիւնը տարիների ընթացքում

կարող էր աւելանալ, կամ պակասել. այս պատճառով որոշուեցաւ որ ամեն հինգ տարին մի անգամ նոր հ ա մ ա ր ա գ ր ու թ ի ւ ն (ցենզուս) լինի։ Այդ համարագրութեան միջոցին Հռոմայեցիք մեծ տօն էին կատարում հանդէսներով ու զոհաբերութիւններով։ Առաջին համարագրութիւնից երևեցաւ, որ Հռոմի մէջ 83,700 հոգի կային զէնք կրելու ընդունակ։

Սերուիոս Հռոմը մեծացրեց. առաջ քաղաքը հինգ բլուրների վերայ էր, ինքը երկուսն էլ աւելացրեց (ուստի Հռոմը յաճախ Եօթն բլուր քաղաք էր ասվում)։ Նա դաշն կապեց Լատինացւոց ու Սաբինացւոց հետ և նոցա հաւանութեամբ Աւենտինեան բլրի վերայ Դիանա աստուածահու անուամբ մի տաճար շինուեցաւ. որի մէջ պղնձի սիւնի վերայ փորուած էին իրանց դաշնադրութեան պայմանները։

Չնայելով իւր իմաստուն կառավարութեանը՝ Սերուիոս բազմաթիւ թշնամիներ ճարեց իւր նորամուտ կարգադրութիւններով. այդ թշնամեաց թւումն էին և Տարկուինիոսի երկու որդիքը՝ Տարկուինիոս և Արունս։ Սերուիոս միշտ կասկածում էր նոցանից, ուստի կամենալով սիրտները գրաւել՝ իւր երկու դստերքը տուաւ նոցա կնութեան։ փոքր քոյր Տուլլիան և մեծ եղբայր Տարկուինիոսն փառասէր, գոռոզ և չարասիրտ էին, իսկ մեծ Տուլլիան և Արունսը հեզ էին և բարեսիրտ։ Սերուիոս հեզ Տուլլային տուաւ չար Տարկուինիոսին և չար Տուլլային՝ հեզ Արունսին որ մէկզմէկու կրթեն մեղմացնեն։ Բայց դաժան Տարկուինիոսը փառամոլ Տուլլայի հետ խօսք մէկ արին, իրանց ամուսիններին սպանեցին և միմեանց առին։ Սորանից յետոյ որոշեցին Տրուիոսին գահավիժել, և այս նպատակով ծերակուտի ու ժողովրդի մեծ մասը կաշառքներով գրգռեցին Տրուիոսի դէմ։ Մի օր էլ Տարկուինիոս իւր ամբարիշտ կնոջ գրգռմամբ, թագաւորական զգեստ հագած մտաւ ազգային ժողով։ Սերուիոս բանն իմանալով շտապեց իւր գահը նստելու, բայց Տարկուինիոս ոտքով խփեց ծերունի թագաւորին սանդուղքներից վայր գլորեց և զինքը թագաւոր հրատարակեց։ Սերուիոս կոտրուած և արիւնաշաղախ մի քանի հաւատարիմ թիկնապահներով

շտապում էր իւր պալատը. բայց Տարկուինիոսից կաշառուած մարդիկը փողոցում սպանեցին նորան թողին։ Այս որ լսեց անգութ Տուլլիան կառք նստաւ որ աճապարէ ամուսնու գահ նստելը շնորհաւորէ։ Ճանապարհին տեսնելով իւր սպանուած հօր մարմինը՝ հրամայեց կառապանին որ կառքը նորա վերայով քշէ, և տարաբաղդ ծերունու արեան ցայտերն ամբարիշտ աղջկան երեսովը տուին։ Այս մեծ անօրէնութեան յիշատակի համար այդ փողոցը Ն զ ե ռ ն ա կ ա ն փ ո ղ ո ց կոչուեցաւ։

7.

ՏԱՐԿՈՒԻՆԻՈՍ ԳՈՌՈԶ (574—510).

Պարզ բան է, որ այդպիսի բռնութեամբ գահը յափշտակող թագաւորը չէր կարող ժողովրդի սէրն ու յարգանքը գրաւել։ Ընդհակառակն, ժողովուրդն սկսաւ ատել ոչ միայն նորան այլև թագաւորական իշխանութիւնը։ Տարկուինիոս աթոռը նստելուն պէս սկսաւ սուտ-սուտ պատճառներով ծերակուտի ու ժողովրդի գլխաւորներից որին աքսորել, որին մեռցնել, որի ստացուածքը գրաւել. օրէնքները ոտքի տակ առած՝ էլ ոչ ծերակուտին ոչ ժողովրդին խորհուրդ չէր հարցնում. այս պատճառով էլ նորան անուանեցին Գոռոզ (սուպերբուս)։ Անդադար կասկածների մէջ լինելով՝ թիկնապահների թիւն աւելացրեց օտար զօրքով և իւր բռնակալութիւնը դրսից էլ հաստատելու համար՝ Լատինացւոց հետ դաշնադրութիւն արաւ։ Ռամիկ դասը զբաղեցրեց քաղաքի մէջ զանազան շինութեանց վերայ. նա զարդարեց Մեծ Կրկէսը. լրացրեց Տարկուինիոս Երեցի սկսած հիմնարկութիւնները և մասամբ այս ծախքերը ծածկելու, մասամբ դժգոհ ժողովրդի ուշքն իրանից հեռացնելու համար՝ երկարատև պատերազմներ վարեց հարուստ դրացիների հետ։

Ինչքան շատանում էին նորա բռնութիւնները, այնքան աւելանում էր և ընդհանուր ատելութիւնը. այնքան էլ մեծանում էին նորա կասկածները դէպի ազատամիտ մարդիկ. նա ոյժ տուաւ լր-

տեսութեանց ու գաղտնի սպանութեանց. մինչև անգամ նորա ազգականներն ազատ չեղան բռնաւորի հալածանքից: Սոցանից մէկը միայն, Լուկիոս Յունիոս, խելացնոր ձևանալով կարողացաւ ազատուիլ մահուանից: Տարկուինիոս անմիտ համարելով բանի տեղ չէր դնում նորան և անուանում էր Բրուտոս, որ տկարամիտ նշանակէ: Բայց հէնց Բրուտոսն էր, որ փութացրեց Տարկուինիոսի, ընդ նմին և թագաւորական իշխանութեան, անկումն:

Մի անգամ, երբ Տարկուինիոս պաշարել էր դրացի Ռութուլների Արդէա քաղաքը՝ նորա որդի Սեքստոսը հարբած գիշերանց գնաց մօտակայ Կոլլատիա գիւղաքաղաքը և այնտեղ ամօթալի կերպով վշտացրեց առաքինութեամբ անուանի Լուկրետիա տիկնոջը, որի այրը՝ Կոլլատինոս գտնւում էր Արդէայի պատերազմում: Լուկրետիան չուզեցաւ այլևս պատիւն արատաւորուելուց յետոյ ապրել, շտապով կանչել տուաւ հօրը և ամուսնուն, որոնք փութացին եկան մի քանի ընկերակիցներով: Լուկրետիան եղածը պատմելուց յետոյ՝ սուրը կուրծքը խրեց և մեռաւ: Եւ այն ինչ մէկալոնք սարսափած արտասւում էին՝ Բրուտոս Լուկրետիայի կուրծքից դուրս հանեց արիւնաշաղախ սուրը, դէպ երկինք վերցրեց և ասաց. «Թող վկայ լինին աստուածները, Լուկրետիա, որ մինչև արեանս վերջին կաթիլը պէտքէ վրէժխնդիր լինիմ քո մահուան համար»: Բոլոր ներկայ եղողներն էլ նոյն սրի վերա երդուեցին որ հայրենիքն ազատեն չարագործի ձեռքից: Բրուտոս քաղաքի դռները փակել տուաւ, գնաց բանակի մէջ, սրտակտոր խօսքերով նկարագրեց արքայորդու անօրէն գործը և ամենքի սրտում վառեց վրէժխնդրութեան ոգին: Տարկուինիոս իսկոյն բանակը թողեց Հռոմ շտապեց, բայց քաղաքի դռները փակ գտնելով՝ անպաշտպան և յուսահատ՝ փախաւ Էտրուրիա իւր որդւոց հետ: Բոլոր քաղաքացիք ուրախացան նորա փախստեան վերայ, ժողովուեցան վերցրին թագաւորական իշխանութիւնը և 'ի յիշատակ այդ ազատութեան՝ տօնախմբութիւն նշանակեցին (510): Տարկուինիոսի աքսորը համարեա նոյն ժամանակն էր, երբ Աթենացիք աքսորեցին բռնաւոր Հիպպիասին:

Այսպէս ուրեմն՝ Հռոմ միայն 7 թագաւորներ ունեցաւ, որոնց իշխանութիւնը 243 տարի տևեց:

Թագաւորութեան տեղ Հռոմայեցիք հաստատեցին հասարակապետութիւն: Նոր կարգով պէտքէ տարին միանգամ երկու հիւպատոսներ (կօնսուլ) ընտրուէին պատրիկներից, որոնք Ծերակոյտի հետ միասին կառավարէին երկիրը, թէ պատերազմի, թէ խաղաղութեան ժամանակ: Ժողովուրդը 'ի նշան երախտագիտութեան առաջին հիւպատոս ընտրեց հայրենեաց ազատիչներին՝ Բրուտոսին ու Կոլլատինոսին:

Գ.

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ (510—30 Թ.) ՊԱՏԵՐԱԶՄ ՊՈՐՍԵՆԱՅԻ ԴԷՄ.

Ովրատիոս Կոկլէս, Մուկիոս Սկեվոլա, Կլէլիա.

Նորահաստատ սահմանադրութիւնը հէնց սկզբից հարկադրուած էր ծանր պատերազմներ տալ Տարկուինիոսի դէմ, որ ամեն կերպ աշխատում էր կորցրած իշխանութիւնը ձեռք ձգել: Նոյն իսկ Հռոմի մէջն էլ պակաս չէին սահմանադրութեան թշնամիներ: Դոքա ըստ մեծի մասին ազնուականների որդիներ էին, որոնք թագաւորութեան ժամանակ ինչ ուզում անում էին. վարժուել էին օրերն անցնելու արքունեաց մէջ և Տարկուինիսի որդւոց հետ ընկերութիւն անելով զանազան արտօնութիւններ էին վայելում. հասարակապետութիւնը զրկեց նոցա այս ազատութիւններից. ուստի նոցա համար ցանկալի էր թագաւորութեան վերահաստատուիլը:

Տարկուինիոս իւր աքսորանքից դեսպաններ ուղարկեց Հռոմ՝ ստացուածքը պահանջելու: Մինչդեռ Ծերակոյտն այս առաջարկութեան վերայ էր խորհրդակցում, դեսպանները գաղտնաբար ըսկսան որին փողով, որին խոստմունքներով համոզել յօգուտ Տարկուինիոսի, և մի դաւակցութիւն կազմեցին: Դաւակիցների թւում կային նաև Բրուտոսի երկու որդիքը և Կոլլատինոսի քեռորդին:

Բարեբաղդաբար Ծերակոյտն իմացաւ այս բանը, Տարկուինիոսի բոլոր ստացուածքը գրաւեց, պալատները քանդեց և ամեն տեղից ջնջեց նորա յիշատակը: Իսկ մատնիչներն ամենքն էլ 'ի մահ դատապարտուեցան: Հիւպատոսները փղոսկրեայ աթոռների վերայ նստած պէտքէ ներկայ լինէին դատակնիքը կատարուելիս: Նշանակած ժամին բերուեցան նոքա. Բրուտոս նշան տուաւ դահիճներին: Ամենքի աչքը նորա վերայ էր և նորա դէմքի այլայլութիւնն էր դիտում: Արդարև այլայլեցաւ Բրուտոս. նորա հայրական սիրտը կտրտուեցաւ, երբ երկու որդւոց գլուխները գետին ընկան, բայց հարկ էր որ արդարութիւնը կատարուէր և հայրենեաց մատնիչները պատժուէին:

Կոլլատինոս չկարողացաւ դիմանալ և բարեխօսում էր, որ իւր քեռորդւոցն աքսորեն: Այս պատճառով նա անընդունակ համարուեցաւ հիւպատոսական պաշտօնի համար և պաշտօնանկ եղաւ: Նորա տեղն ընտրուեցաւ Լուկիոս Վալերիոս:

ՈՎՐԱՏԻՈՍ ԿՈԿԼԷՍ: Տարկուինիոս տեսաւ, որ դաւակցութիւնն էլ իրան ոչինչ օգուտ չբերաւ, գնաց Կլուսիոնի Պորսենա թագաւորի մօտ և պատերազմի գրգռեց նորան ընդդէմ Հռոմի: Պորսենան բազմաթիւ զօրքով եկաւ Հռովմի վերայ և Տիբերիս գետի մօտ կամրջի դէմ բանակ դրաւ: Պորսենան առաջին յարձակմամբ ցրուեց կամուրջը պահպանող զօրքը: Հռոմայեցիք սկսան փախչել, բայց այստեղ Ովրատիոս Կոկլէսի հերոսական քաջութիւնը խափանեց Պորսենայի ընթացքը: «Մի՞թէ քաղաքի մէջ մէջ դուք ապահով պէտքէ լինիք, որ թողնում էք կամուրջը գոչեց Ովրատիոս փախչողներին: Նա քաղաքումն էլ ձեր յետևից կհասնի: Ի սէ՛ր ազատութեան, դուք քանդեցէք կամուրջը երկաթով, կրակով ինչով կարենաք, իսկ ես կպաշտպանեմ կամրջի բերանը, որքան ուժս տայ»: Ովրատիոսի խորհուրդն իզուր չանցաւ. երկու երիտասարդ հետևեցան նորա օրինակին: Այն ինչ նոքա անվեհերութեամբ ընդդիմադրում էին թշնամուն կամրջի բերանում, Հռոմայեցիք կոտրտեցին կամուրջը: Նոքա վերջացրին և ուրախութեան աղաղակներով յետ կանչեցին կորովի երիտասարդներին:

Երկու ընկերներն անցկացան մնացած վերջին տախտակով, բայց Ովրատիոս անյողդողդ կանգնեց, մինչև որ այդ էլ կոտրեցին: Այն ժամանակ միայն զէնքերը վերան գետը նետուեցաւ և թշնամեաց անթիւ նետերի միջից անվնաս անցաւ եկաւ ընկերների մօտ:

ՄՈՒԿԻՈՍ ՍԿԵՒՈԼԱ: Այս անասելի քաջասրտութեամբ Հռոմ մի կարճ ժամանակ ազատ մնաց. բայց վտանգը դեռ չէր անցել: Պորսենան հրամայեց շրջապատել քաղաքը, որպէս զի սովից անձնատուր լինին: Քիչ ժամանակից յետոյ Հռովմայեցիք տագնապի մէջ ընկած՝ չգիտէին ինչ անէին: Այս միջոցին մի երիտասարդ Մուկիոս անուամբ մտքումը դրաւ մի ուրիշ կորճութեամբ հայրենիքն ազատել թշնամու ձեռքից: Առաւօտեան կանուխ, Ետրուսցի զինուորի հագուստով, թագուն մտաւ Պորսենայի բանակը և գնաց մինչև նորա վրանը, ուր այդ միջոցին թոշակ էր բաժանում զօրքին: Թագաւորի մօտ նստած էր նորա ատենադպիրը, որ նոյնպէս զարդարուն հագուստ ունէր, ինչպէս և թագաւորը: Մուկիոս կարծելով որ սա է թագաւորը տուաւ սպանեց ատենադպրին: Իսկոյն նորան բռնեցին և զինաթափ արին: Պորսենան սկսաւ հարց ու փորձ անել, թէ ո՞վ է նա և ինչից հարկադրուած արաւ այդ սպանութիւնն: Մուկիոս համառօտակի պատասխանեց. «Ես Հռոմի քաղաքացի եմ, անունս է Մուկիոս, եկայ որ քեզ սպանեմ, բայց սխալուեցայ. սակայն մենակ ես չեմ, մեր երիտասարդներից 300 հոգի խօսք ենք կապել քեզ սպանելու, եթէ ոչ մէկը՝ միւսն անպատճառ կ'անէ այդ: Պորսենան սարսափած՝ հրամայեց բոլոր դաւակցութիւնը յայտնել մի առ մի, եթէ ոչ կըմեռնի: «Նայի՛ր և սովորի՛ր, բացագանչեց Մուկիոս, թէ ինչպէս քիչ են գնահատում իրանց մարմինը նոքա, որ բարձր փառքի են ցանկանում». ասաց և իւր աջ ձեռքը դրաւ մօտակայ բոցավառ կրակարանի վերայ: Այս մեծ անձնուիրութեան օրինակը սարսուռ ձգեց բոլոր ներկայ եղողների սիրտը. ինքը թագաւորը վեր թռաւ տեղից, հեռացրեց նորան կրակարանից և վեհանձնաբար ազատ թողեց նորան:

Պորսենան տեսնելով Հռովմայեցւոց այդպիսի անվեհերութիւնը՝ թողեց իւր մտադրութիւնը և սկսաւ հաշտութեան բանակցու-

թիւններ անել: Սկզբում նա պնդում էր, որ Հռովմայեցիք նորէն ներս ընդունեն Տարկուինիուսին, բայց տեսնելով որ իզուր են իւր բոլոր ջանքերը՝ պահանջեց միայն դարձնել Էտրուրիային այն երկիրները, որ Հռոմայեցիք խլել էին Վէյացիներից և իբրև երաշխաւորութիւն 30 հոգի պատանդ տալ:

ԿԼԷԼԻԱ: Այս պատանդների թւում կային և օրիորդներ: Դոցանից մէկը՝ Կլէլիա անուամբ ազնուատոհմ աղջիկը գիշերանց փախաւ պահապանների ձեռքից և իւր ընկերուհիների հետ միասին գետն անցաւ ու Հռոմ դարձաւ: Բայց Հռովմայեցիք ուխտադրժութիւնը նախատինք համարելով՝ նորից յետ ուղարկեցին փախած պատանդներին: Սակայն Պորսենան զարմացած Կլէլիայի անվեհերութեան վերայ՝ ազատութիւն տուաւ նորան և իրաւունք տուաւ իւր ընկերուհիներից հետը վերցնել ում կ'ուզենար: Նա ընտրեց ամենից մատաղահասներին և դարձաւ:

Տարկուինիուս զուրկ Էտրուրիայից օգնութիւն չտեսնելով դարձաւ դէպի Լատիոն: Սոցա օգնութեամբ նոր պատերազմ բացաւ Հռոմի դէմ: Հռեգիլլոս լճակի մօտ արիւնահեղ ճակատամարտ եղաւ: Լատինացիք սարսափելի ջարդ կրեցին. Տարկուինիուսի երկու որդիքն ու փեսան մեռան պատերազմի մէջ, իսկ ինքը փախաւ Կումա քաղաքը, որտեղ և կարճ ժամանակից յետոյ մեռաւ չարաչար հիւանդութեամբ:

Դ

ԿՌԻՒ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՌԱՄԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՒ

(501—300):

1.

Իշխանապետ, 501. Ցեղապետներ 493.

ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ: Տարկուինիոսի աքսորմամբ Հռոմի մէջ տակաւին կարգ ու հանդարտութիւն չմտաւ, վասն զի Հռովմայեցւոց իրանց մէջ գժտութիւններ բարձրացան:

Թագաւորների փոխանակ այժմ Հռոմի պետական գործերը կառավարում էին ազնուականները՝ իրանց միջից ընտրած հիւպատոսներով: Նոքա անխղճօրէն նեղում էին իրանց քաղաքակից ռամիկներին: Բոլոր հասարակաց պաշտօնները նոքա իրանց ձեռքն առին, դատում էին ժողովրդին սիրտներն ուզածին պէս և տէրութեան հողերի ամբողջ արդիւնքն իրանք էին յափշտակում, այնինչ ռամիկները հարկադրուած էին ծանր կապալագին վճարել այդ հողերը վարելու համար:

Պատերազմի ժամանակ ազնուականները ստրուկներ էին վարձում իրանց հողերը մշակելու համար, իսկ խեղճ ռամիկը ոչ միայն միջոց չէր ունենում երկրագործութեամբ պարապելու, այլ և շատ անգամ ստիպվում էր վերջին ունեցածը գնել պատերազմական պահանջների ծախքը ծածկելու համար, ըստ որում ամեն քաղաքացի պատերազմի ժամանակ պարտաւոր էր ինքնին հոգալ իւր բոլոր պիտոյքները՝ ձի, սպառազինութիւն ևն.: Պատերազմի աւարներից համարեա ոչինչ չէր հասնում նորան: Շատ անգամ վերադարձին տունն աւերած էր գտնում, արօրն ու եզները յափշտակած: Այսպիսի նեղ հանգամանքում ողորմելի ռամիկը հարկադրվում էր դիմել հարուստ ազնուականներին, որոնք յիրաւի օգնութիւն էին տալիս նորան, բայց այս օգնութիւնը շատ թանգ էր նստում: Ստացած փողի համար նա մեծ տոկոս էր վճարում. և եթէ իւր ժամանակին պարտքը չէր կարողանում վճարել՝ անգութ պարտատէրն իրաւունք ունէր ոչ միայն գրաւելու նորա խրճիթը, կալուածն ու բոլոր ունեցուածը, հապա նա և ծախելու նորա զաւակները և վերջապէս իրան: Այն ժամանակ դեռ ևս արգելուած չէր գարշելի մարդավաճառութիւնը՝ և մեծատուն պատրիկներն օգուտ էին քաղում այդ ազատութիւնից: Ահա թէ ինչպիսի սոսկալի դրութեան մէջ էին հայրենի ազատութեան պաշտպանները: Ինչ զարմանք, եթէ բռնաւորի աքսորն էլ ոչ մի թեթևութիւն չբերաւ խեղճ ժողովրդականաց վիճակին:

Այդ միջոցներին մի օր մէկ ծեր մարդ բանտից փախած դուրս եկաւ հրապարակը, շորերը պատռտած, մազերը գզգզած և երեսի

գոյնը կարուած։ Ամենքն էլ ճանաչեցին որ նա մի հարիւրապետ էր, որ պատերազմների ժամանակ մեծամեծ քաջութիւններ էր արած։ Ժողովուրդը չորս կողմը հաւաքուած հարցրին այդ խեղճութեան պատճառը։ Ողորմելին բերանը բացաւ և սկսաւ պատմել. «Սաբինացւոց դէմ պատերազմի գնացած ժամանակ, ասաց, թշնամիները բոլոր արտերս քարուքանդ արին. վրաս դրած տուրքը վճարելու համար ստիպուեցայ պարտք անել. քանի գնաց՝ պարտքիս տոկոսը վրան բարդուելով շատացաւ։ Պարտատէրս բոլոր ունեցած չունեցածս խլեց. յետոյ ինձ բռնեց բանտը դրաւ և դահճի պէս վարուեցաւ հետս»։ Այս ասաց և ցոյց տուաւ արիւնաշաղախ թիկունքը որ գաւազանների հարուածներից կապուտկել էր ու ջարդոտուել։ Այս ողորմելի տեսարանը կատաղեցրեց ժողովրդին։

Վերջապէս նա վճռեց մի զօրաւոր հնար գործ դնել նեղսակիր վիճակից ազատուելու համար այն է ամենևին չմասնակցել պատերազմների մէջ։ Արդարև, երբ այդ միջոցին Լատինացիք եկան Հռոմի վերայ՝ ժողովրդի մեծագոյն մասը չուզեց զէնք առնուլ՝ ասելով. «Ինչպէս որ պատերազմի պտուղներն ազնուականներն են քաղում, թող իրանք էլ պատերազմին»։ Ծերակոյտը մնաց շփոթուած. վերջապէս Տրուիլլոս հիւպատոսը, որ շատ սիրելի էր ժողովրդին քաղցրութեամբ և այլ խոստմունքներով հանդարտեցրեց ժողովրդին. հրաման հանեց, որ ոչ ոք չկարողանայ մի Հռոմայեցու բանտ դնել կամ շղթայակապ անել. պատերազմի ժամանակ որ և է զինուորի ունեցուածքը գրաւել կամ նորա զաւակները բռնել։ Ժողովուրդը մեղմացաւ, հետևեց Սերուիլլիոսին, և թշնամիք յաղթուեցան։

Սակայն պատերազմից յետոյ ծերակոյտը չլսեց Սերուիլլիոսի առաջարկութիւններն ու ժողովրդի պահանջները. խռովութիւններն աւելի զօրացան։ Միւս կողմից էլ Վօլսկացիք, Էկուացիք ու Սաբինացիք պատրաստուեցան Հռոմի վերայ յարձակուել։ Դարձեալ վտանգի մէջ էր հայրենիքը. դարձեալ ժողովուրդը չէր ուզում զէնք առնել։ Ծերակոյտը շուարել մնացել էր։ Ուրիշ հնարք չկար. Հիւպատոսներն ու բոլոր միւս իշխանաւորները թողին իրանց պաշ-

տօնը. նոցա տեղ վեց ամիս ժամանակով ի շ խ ա ն ա պ ե տ (դիքտատոր) ընտրուեցաւ Մանլիոս Վալերիոս անսահման իշխանութեամբ, որ Սերուիլլիոսի պէս ժողովրդին սիրելի անձն էր։ Իշխանապետի վճիռը վերջնական էր. ազգային ժողովն էլ իրաւունք չունէր նորա վճիռները փոխել։ Նա ինքն իրան համար մի օգնական էր ընտրում՝ հրամանները կատարելու համար։ Այսպիսի իշխանապետներ ընտրւում էին միայն այն ժամանակ, երբ հայրենիքը մեծ վտանգի մէջ էր, կամ մի ամենահարկաւոր անյետաձգելի խնդիր էր լինում վճռելու։

Վալերիոս թէ սպառնալիքներով թէ խոստումներով ժողովուրդն առաւ պատերազմի գնաց, յաղթեց թշնամիներին և յաղթանակով Հռոմ մտաւ։ Բայց փոխանակ նոր զոհաբերութեանց համար ժողովրդին վարձատրելու և տուած խոստումները կատարելու, նորա հետ սկսաւ առաջուանից աւելի խստութեամբ վարուիլ։ Վալերիոս զզուելով ազնուականների տմարդութիւնից՝ հրաժարուեցաւ իշխանապետութիւնից։

ՑԵՂԱՊԵՏՆԵՐ, 493։ Ռամիկները Հռոմի մէջ իրանց վիճակի բարւոքման վերայ յուսահատած՝ զէնքերն առին դուրս եկան Հռոմից և քաշուեցան Ն ո ւ ի ր ա կ ա ն լ ե ռ ա ն Սիկինիոս երիտասարդի առաջնորդութեամբ։ Ծերակոյտը ներքին խռովութիւններից ու արտաքին թշնամիներից ալեկոծուած՝ չգիտէր ինչ անէր. մարդ ուղարկեց ժողովրդին, որ վերադառնայ, խոստանալով նորա բոլոր պահանջները կատարել. բայց այս անգամ նա չուզեցաւ խաբուել։ Նորէն տասն դեսպան ուղարկեց, որոնց առաջնորդն էր Մենենիոս Ագրիպպաս ճարտասան, զուարճախօս և ժողովրդին սիրելի մարդը։ Ագրիպպաս յորդորեց ժողովրդին վերադառնալու և հետևեալ առակն ասաց, «Լսե՞լ էք, որ մի անգամ մարմնի անդամներն ապստամբեցան ստամոքսի դէմ, թէ ինչու պիտի մենք աշխատենք՝ ստամոքսը վայելէ։ Ձեռքը չուզեցաւ կերակուրը բերանը տանել. բերանը չուզեց ներս առնել ծամել. այսպէս շարունակեցին, մինչև որ ամբողջ մարմինն անդամներով հանդերձ քաղցածութիւնից տկարացաւ։ Այն ժամանակ հասկացան, որ ստամոքսն ուրեմն անգործ չի եղել մնալիս

և նա է սննդական հիւթը հասցնում մարմնի բոլոր մասերին. շուտով անդամները խելքի եկան և հաշտուեցան ստամոքսի հետ»:
Ժողովուրդն իմացաւ այս առակի միտքը. հաւանեցաւ որ Հռոմ դառնայ, որպէս զի տէրութիւնը չթուլանայ, բայց այն պայմանով, որ բոլոր պարտքերը վերցուին և պարտքի պատճառով բանտարկուած քաղաքացիք ազատութիւն ստանան. իրաւունք ունենան իրանց միջից առանձին ներկայացուցիչներ ընտրել (ցեղապետներ կամ տրիբուններ), որ կարողանան ռամիկների շահերը պաշտպանել. սոքա իրաւունք պիտի ունենան Ծերակուտի խորհրդների մէջ ներկայ լինել և ամեն վճիռ, որ հակառակ լինի ժողովրդի շահերին՝ խափանել, ասելով «Արգելում եմ (Veto): Երբ այս պայմանները երկու կողմից էլ ապահովութեամբ հաստատուեցան՝ ժողովուրդը հանդիսաւոր կերպով դարձաւ քաղաք, ինչպէս մի մեծ յաղթութիւնից յետոյ: Յիրաւի, այս մի նշանաւոր յաղթութեան առաջին քայլն էր. դորանից յետոյ ռամիկները կանոնաւոր կռիւ վարեցին ազնուականների դէմ իրաւանց և պարտականութեանց հաւասարութեան համար, մինչև որ կարողացան ձեռք բերել կատարեալ հաւասարութիւն: Այս արժանաւոր կռուի առաջնորդները ցեղապետներն էին: Սոցա թիւն առաջ երկու էր, յետոյ հինգ և յետոյ տասն: Ցեղապետներից զատ երկու հոգի էլ օգնականներ, նշանակուեցան որոնց պարտականութիւնն էր ժողովրդի նիւթական պիտոյքների վերայ հոգ տանել, վաշխառութեան ու թանգութեան առաջն առնել, հասարակաց շէնքերը հոգալ ևն: Սոքա կոչվում էին Շ ի ն ո ւ ա ծ ա պ ե տ ն ե ր (էդիլներ):

2.

ՄԱՐԿԻՈՍ ԿՈՐԻՈԼԱՆՈՍ.

Ազնուականները միայն ճարահատեալ էին համաձայնուել ռամիկներին արուած զիջումներին: Ամենից աւելի տհաճ էր նոցա ստացած նոր իրաւունքների համար Մարկիոս անուն ազնուական երիտասարդը, որ հռչակուած էր իւր քաջութեամբ և որ Ետրուրացւոց Կորիոլի քաղաքը պաշարմամբ առնելու պատճառով ստացել էր Կ ո ր ի ո լ ա ն ո ս պատուանունը:

Վերջին խռովութեանց ժամանակ շատ երկիրներ մնացել էին չցանուած, այս պատճառով սաստիկ սով ընկաւ Հռոմի մէջ: Չորս կողմ մարդիկ ուղարկուեցան հաց գտնելու. վերջապէս Սիկիլիացիք մեծ քանակութեամբ ցորեն բերուեցաւ: Կորիոլանոս խորհուրդ էր տալիս Ծերակուտին, որ այս յարմար դէպքում ժողովրդին խոնարհեցնելու համար որքան կարելի է թանգ ծախուի ցորենը, որպէս զի նորից պարտքերի մէջ խրուին: Ցեղապետներն այս որ իմացան՝ ազգային ժողով կազմեցին և Կորիոլանոսին աքսորանքի դատապարտեցին:

Գոռոզ Կորիոլանոսն ատելութեամբ լցուած երդուեց վրէժխնդիր լինել, Հռոմից ելաւ գնաց Վոլսկացւոց մօտ և խոստացաւ նոցա ձեռքը տալ իւր հայրենի քաղաքը. Վոլսկացիք զօրապետ նշանակեցին նորան: Կորիոլանոս մտաւ Հռոմի սահմանները, սկսաւ աւերել մանաւանդ ռամիկների երկիրները և եկաւ բանակ դրաւ Հռոմի դէմը: Ժողովուրդն անպատրաստ էր. քաղաքի մէջ միաբանութիւն չկար, զօրքը չէր կազմակերպվում. ամբողջ քաղաքն ահուդողի մէջ էր: Ծերակոյտը նեղի ընկած դեսպաններ ուղարկեց Կորիոլանոսի մօտ հաշտութիւն խնդրելու, խոստանալով հանդիսաւոր կերպով դարձուցանելու նորան քաղաքացիութեան պատիւը: Բայց դեսպաններն արհամարհանքով մերժուեցան: Այն ժամանակ քրմապետներն ու հաւահմանները բոլոր իրանց սրբազան անօթներով ու հանդիսական զգեստով եկան աղաչեցին Կորիոլանոսին, բայց առաջիններին պէս սոքա էլ մերժուեցան: Երբ որ այլևս ուրիշ ճար չկար, Հռովմայեցի տիկնայք—Կորիոլանոսի մայրը՝ Վետուրիա, նորա կինը Վոլումնիա իւր երկու որդիքը հետն առած՝ սգոյ հագուստներով ելան գնացին: Վոլսկացւոց բանակը, յուսալով կակղացնել նորա քարացած սիրտը: Երբ լսեց Կորիոլանոս որ մի խումբ կանայք գալիս են իւր մօտ դեսպանութեամբ՝ զզուանօք երեսը շրջեց, բայց հենց որ իմացաւ, որ նոցա մէջ գտնվում են և իւր մայրն ու կինը՝ դուրս ելաւ նոցա առաջ և մօտեցաւ որ համբուրէ

մօրը. իսկ մայրը յետ քաշուեցաւ՝ ասելով. «Համբուրելուց առաջ ինձ ասա, թշնամու մօտ եմ եկած, թէ որդուս. այստեղ բանակիդ մէջ գերիդ եմ, թէ մայրդ: Ինչ սրտով ես աւերում այն երկիրը որ մեծացրեց քեզ ու կերակրեց. և մի՞թէ ծնայ քեզ որպէս դաւաճան հայրենեաց»: Այն ինչ Վետուրիան այս խօսքերն էր ասում, կինը և որդիքը նորա ոտներն ընկած գթութիւն էին խնդրում: Այս սրտակոտոր տեսարանը շարժեց Կորիոլանոսին. Նա գրկեց իւր սիրելի մօրը և արտասուելով ասաց. «Ո՜հ, մայր իմ, մայր իմ, դու ազատեցիր Հռոմը, բայց որդիդ կորուսիր յաւիտեան»:

Կորիոլանոս հրամայեց Վոլսկացւոց, որ պաշարումը վերցնեն յետ քաշուին: Այս զիջողութիւնը թանգ նստաւ Կորիոլանոսին, վասն զի Վոլսկացւոց զօրավար Տուլլոսը վրէժ հանելու համար սպանել տուաւ նորան:

Ե.

ՏԱՍՆՊԵՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, 451—450.

Հազիւ Հռոմայեցիք ազատուել էին արտաքուստ սպառնացող վտանգներից, հազիւ մի սկսել էին ազատ շունչ քաշել, բարձրացան ներքին կռիւներն ու խռովութիւնները: Ժողովուրդն արդէն ձայն ունէր տէրութեան գործերի մէջ. Նա պահանջում էր հասարակաց որոշ ու գրաւոր օրէնքներ, որպէս զի մի անգամ ընդ միշտ վերջ լինի պատրիկների կամայականութեանը: Ցեղապետ Տերենտիլլոս Արսան առաջարկեց որ օրէնքներ կազմուին, բայց ազնուականները յամառութեամբ հակառակեցան նորան, որպէս զի իրանց քմահաճ արարմանց համար մէկ սանձ չյօրինուի: Գժտութիւնները շարունակվում էին. Հռոմի այս ներքին խռովութիւնից օգուտ քաղելով՝ Սաբինացիք մեծ զօրքով եկան Հռոմի վերայ: Քաղաքի դրութիւնը տագնապալի էր: Այսպիսի վտանգաւոր ժամանակ հարկադրուեցան մի իշխանապետ նշանակել: Ամենքի աչքը Կուինկտոս Կինկինատոսի վերայ էր, որ հարստութիւնից զրկուած մի պատրիկ էր և որդին աքսորուելուց յետոյ մի կողմ քաշուած՝ իւր փոքրիկ

ագարակնէր մշակում: Երբ պատգամաւորները գնացին նորան հրաւիրելու, տեսան որ գութան էր քշում: Կինկինատոս արցունքն աչքերին յանձն առաւ իշխանապետութիւնը, եկաւ Հռոմ և իսկոյն հրաման հանեց, որ զէնք կրող մարդիկ արևը չմտած Մարսեան դաշտը ժողովուին: Երբ ամենքը հաւաքուեցան, գիշերանց գնաց պաշարեց թշնամեաց բանակը, ջարդեց նորանց և փառաւոր յաղթանակով ու շատ աւարներով մտաւ Հռոմ: Նորա որդին իսկոյն յետ կանչուեցաւ աքսորանքից: Կինկինատոս տասնուվեց օր իշխանապետութիւն անելուց յետոյ՝ հրաժարուեցաւ իւր իշխանութիւնից, դարձաւ գիւղը և նորէն արօրը ձեռքն առաւ:

Վտանգն անցաւ թէ չէ, խռովութիւնները նորէն բարձրացան. Ժողովուրդը պահանջում էր, որ հողեր բաժանուին չունեցող քաղաքացիներին ևս. պահանջում էր նոր իրաւունքներ և գրաւոր օրէնքներ: Վերջապէս Ծերակոյտն երեք մարդ ուղարկեց Աթէնք, որ այդ ժամանակ ծաղկում էր Պերիկլէսի իմաստուն կառավարութեան տակ, որպէս զի ուսումնասիրեն Աթէնքի օրէնքները (451): Նոյն միջոցին երկրի բոլոր կառավարութիւնը յանձնեց տասն մարդու, որ օրէնքները մշակեն ու կարգի բերեն և պետական բոլոր պաշտօնները վարեն մինչև օրէնքները հաստատուիլը, սոցա իշխանութիւնը կոչուեցաւ տ ա ս ն պ ե տ ն ե ր ի ի շ խ ա ն ու թ ի ւ ն: Տարուան վերջին արդէն պատրաստ եղան տասն օրինատախտակներ, բայց որովհետև օրէնքները դեռ ևս լիակատար չէին, ուստի որոշուեցաւ որ տասնպետները մի տարի էլ կառավարեն. այս միջոցում պատրաստուեցան երկու օրինատախտակ ևս:

Մինչ այս մինչ այն երկրորդ տարին լրացաւ, բայց տասնպետների բերանը քաղցրացել էր իրանց նոր իշխանութեան վերայ. Նոքա առանց Ծերակուտի կամ ազգի կամքը հարցնելու՝ կամայական վճիռներ էին տալիս և բռնութիւններ էին գործում: Տասնպետների գլխաւորը, Ապպիոս Կլաւդիոս, մինչև անգամ խորհում էր ընկերների գլուխնէլ ցանել և իշխանութիւնը մենակ իւր ձեռքն ամփոփել: Այսպիսի ամբարտաւան խորհուրդների պատճառով նա ատելի դարձաւ ամենքին, ռամիկ լինէր՝ թէ ազնուական: Կարծես

հասել էր նորէն Տարկուինեանց ժամանակը. բայց ինչպէս Տարկուինեանց, այնպէս էլ տասնպետների բռնութիւնը մի կնոջ արեամբ պէտք է որ կործանուէր:

Վիրգինիոս քաջ ու առաքինի Հռոմայեցին մի դուստր ունէր Վիրգինիա անուամբ, որ արդէն նշանած էր մի երիտասարդի հետ: Ապպիոս բռնաւորը մի անգամ տեսնելով Վիրգինիային՝ ուզեցաւ խլել նորան հօրիցը, և որպէս զի իւր լրբութեանը մի օրինաւոր կերպարանք տայ՝ դատաստանի առաջ յայտնեց որ այդ օրիորդը իւր հարճերից մէկի դուստրն է: Թշուառ հայրը տեսնելով, որ այլևս չի կարող ազատել անմեղ աղջկանը չարագործի ճանկից՝ մօտիկ անցնող մսագործի դանակը դուրս քաշեց և խրեց դստեր կուրծքը գոչելով. «Գնա նախահարցդ մօտ, Վիրգինիա, քանի որ անարատ ու ազատ ես. այս է միակ ճանապարհը քո պատիւդ պահպանելու», Յետոյ դուրս հանեց արիւնաթաթախ դանակն օրիորդի կրծքից և, ինչպէս երբեմն Բրուտոս, բարձր բռնած ձեռքին մտաւ ժողովրդի մէջ և վրէժխնդրութեան կանչեց նորան: Ժողովուրդն այս սրտաճմլիկ տեսարանից կատաղած՝ Ապպիոսին բռնեց բանտը ձգեց, որտեղ նա ինքզինքն սպանեց. մնացած ընկերները փախան Հռոմից: Այսպէս վերջացաւ տասնպետների երկամեայ իշխանութիւնը և հիւպատոսներն ու ցեղապետները նորից իրանց պաշտօնները յանձն առին:

Զ.

ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹԵԱՆՑ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Սակայն գրաւոր օրէնքներ հաստատելը չտուաւ քաղաքացւոց կարևոր համաձայնութիւնն ու խաղաղութիւնը: Ազնուականներն ու ռամիկներնը տակաւին երկու մեծ կուսակցութիւն էին կազմում, առաջինները հիւպատոսների առաջնորդութեամբ, երկրորդները՝ ցեղապետների: Կանուլէոս եռանդոտ ցեղապետը պահանջում էր որ վերցուի օրինատախտակների միջից այն օրէնքը, որ արգելում էր

ազնուականների ու ռամիկների մէջ խնամութիւնը: Այս պահանջը կատարուեցաւ և այս փոքր ինչ նպաստեց թշնամի կուսակցութիւնները մօտեցնելու: Դորանից յետոյ նոյն ցեղապետը պահանջեց, որ ռամիկների միջից ևս հիւպատոսներ ընտրուին: Ազնուականները լաւ հասկացան, որ ռամիկների նպատակն է քաղաքացւոց մէջ իրաւանց կատարեալ հաւասարութիւն հաստատելը. և աշխատում էին ամեն կերպ պաշտպանել իրանց արտօնութիւնները: Երկու կուսակցութեանց մրցումն ութսուն տարի տևեց, և այս միջոցում ազնուականները հետզհետէ զանազան զիջումներ արին ռամիկներին: Իվերջոյ որոշեցին զ ի ն ո ւ ո ր ա կ ա ն ց ե ղ ա պ ե տ ն ե ր ընտրել հիւպատոսների փոխանակ՝ թէ՛ մէկ և թէ՛ միւս դասից անխտիր: Սոցա թիւն առաջ երեք էր, յետոյ չորս, յետոյ վեց: Բացի դոցանից ուրիշ երկու իշխաններ էլ դրին հ ա մ ա ր ա կ ա լ (ցենզօր) անուամբ, որոց պաշտօնն էր ժողովուրդը համարագրել, տէրութեան գործերի վերայ հսկել և զօրքի կրթութեան վերայ հոգ տանել: Սոցա պաշտօնն աւելի նշանաւոր եղաւ վերջին ժամանակները, երբ նոցա յանձնեցին ժողովրդի բարքի վերայ հսկելու պարտականութիւնը:

Սակայն չնայելով այս ամեն գժտութեանց՝ Հռոմի մէջ ներքին բացարձակ կռիւներ չկային քաղաքացւոց մէջ. ըստ այսմ Հռոմայեցիք կարող էին ընդհանուր ուժով թշնամուն ընդդիմադրել: Արտաքին թշնամիներն էլ երբէք պակաս չէին Հռոմի մէջ: Նորա հետ դաշնակից Ֆիդինէ քաղաքը միացաւ Վէյի քաղաքի հետ ընդդէմ Հռոմի: Հռոմայեցիք վստահութեամբ յարձակուեցան թշնամեաց վերայ. շատ տեղեր առնուեցան. բայց Վէյին, յուսալով իւր անմատչելի ամրութեան վերայ անձնատուր չեղաւ: Հռոմայեցիք պաշարեցին քաղաքը. և այս առաջին անգամն էր, որ գործ դրին կանոնաւոր պաշարման բոլոր արհեստական միջոցները. նոյնպէս առաջին անգամ զինուորներին ռոճիկ կապեցին, որ սրտով պատերազմեն. բայց Վէյին Տրովադայի պէս տասն տարի պաշարուած մնաց և չյանձնուեցաւ: Վերջապէս Կամիլլոսն իշխանապետ ընտրուեցաւ, և բանակից մինչև քաղաքի ներսն ական բանալ տուաւ,

որով Հռովմայեցիք ներս թափուեցան քաղաքն առին: Քաջագործ զօրապետը վերադարձաւ Հռովմ փառաւոր յաղթանակով, չորս սպիտակ ձի լծած կառքին: Սակայն շատերը մեղադրում էին նորան, որ գոռոզաբար սպիտակ ձիանք էր լծել, որովհետեւ այդ գոյնի ձիանքը նուիրուած էին Իւպիտերին:

Կամիլլոսի յաղթանակն երկար չտեւեց: Ժողովուրդը մեղադրելով նորան իբր թէ Վէյական պատերազմի աւարներն իրան էր սեպհականել, դատի կանչեց հռչակաւոր զօրապետին, որ արդարացնէ իւր անձը: Այն ժամանակ մեծահոգի Կամիլլոսն անպատւութիւն համարելով դատի ներկայանալ այդպիսի մեղադրանաց դէմ զինքը պաշտպանելու համար՝ յօժարակամ թողեց Հռոմը և գնաց Արդէա: Դուրս գալու ժամանակ նա ձեռքերը վերցրեց դէպի երկինք և խնդրում էր աստուածներին՝ Հռոմն այնպիսի նեղութեան մէջ ձգել, որ նորից կարօտի իրան: Նոր ցանկութիւնը շուտով կատարուեցաւ:

Ե.

ԳԱՂՂԻԱՑԻՔ ՀՌՈՄՈՒՄ (389 Թ.) ԿԱՄԻԼԼՈՍ.

Իտալիայի հիւսիսում, Ալպեան լերանց ստորոտներում, վաղ ժամանակներից բնակւում էին Գալլիական ցեղեր, պատերազմասէր ու վայրենի: Նոցանից մէկը՝ Սենոնք քիչ քիչ դէպի հարաւ շարժուելով՝ 389 թուին մտան Էտրուրիայի սահմանները և եկան Պորսենայի մայրաքաղաքի՝ Կլուսիոնի դիմացը բանակ դրին: Այս պտղաւէտ ու բարեկից երկրում Գալլիացիք ուզում էին խլել տեղացիների դաշտերն ու բնակարանները: Կլուսիոնի բնակիչները սարսափած՝ դիմեցին Հռոմի օգնութեանը. Հռոմայեցիք էլ ուզելով գործը խաղաղութեամբ վերջացնել՝ Ֆաբեանց երեք ազնուական երիտասարդներին դեսպան ուղարկեցին Գալլերի մօտ: Սոքա գնացին Գալլիացւոց մօտ և հարցրին նոցա առաջնորդ Բրեննոսին, թէ «ինչ իրաւունքով են մտել ազատ քաղաքացիների երկիրը»: «Այդպիսի իրաւունք մենք կրում ենք մեր սրերի ծայրում, պա-

տասխանեց Բրեննոս, որովհետեւ քաջերին է պատկանում աշխարհը»: Այս յանդուգն պատասխանից գրգռուած՝ Ֆաբեանք Կլուսիոնցւոց հետ յարձակուեցան Գալլերի վերայ և դեսպաններից մէկը իւր ձեռքով սպանեց նոցա զօրավարներից մէկին:

Բրեննոս վճռեց վրէժխնդիր լինել Հռոմայեցւոց: Առաջ պահանջեց դեսպաններին. Հռովմայեցիք մերժեցին. յետոյ զօրքն առած եկաւ Հռոմի վերայ: Ալիա գետակի մօտ սկսուեցաւ ճակատամարտը: Հռոմայեցիք երբ տեսան վայրենի Գալլերին իրանց բարբարոսական ոստաղինութեան մէջ՝ սարսափեցան և փախան քաղաքի մէջ: Նոքա այլ ևս չէին մտածում քաղաքը փրկելու վերայ. աշխատում էին պաշտպանել միմիայն Կապիտոլիոնը, ուր որ գտնվում էին բոլոր նոցա գանձերն ու հարստութիւնները: Բրեննոս անարգել մօտեցաւ քաղաքին. բայց երբ դռները բաց տեսաւ, ապշեց մնաց. կարծում էր թէ Հռոմայեցիք անշուշտ մի խորամանկութիւն են արել՝ նորան որոգայթի մէջ ձգելու համար. այս պատճառով զգուշութեամբ ներս մտաւ դռներից: Բոլոր տները փակ էին. ոչ մի հոգի չէր երևում փողոցներում. միայն Կապիտոլիոնի պարիսպների վերայ էին երևում զինուորուած մարդիկ: Նա մօտեցաւ մեծ Հրապարակին: Այստեղ մի սրտաշարժ տեսարան բացուեցաւ: Ութսուն հոգի ծերեր ու քուրմեր, փղոսկրեայ գաւազանները ձեռքներին և հանդիսական զգեստով, խորին լռութեան մէջ ընկղմած նստած էին բազկաթոռների վերայ, հաստատապէս որոշած լինելով չտեսնել հայրենեաց կորուստը: Սկզբում Գալլերը կարծում էին թէ նոքա արձաններ են. բայց երբ մէկը հետաքրքրութիւնից ձգեց ծերերից մէկի մօրուքը և նա գաւազանով խփեց Գալլի գլխին՝ վրայ թափուեցան գլխատեցին ամենքին, իսկ քաղաքը կողոպտեցին ու կրակ տուին այրեցին:

Միմիայն Կապիտոլիոնն էր մնացել Հռոմայեցւոց ապաստան. Գալլիացիք այն էլ պաշարեցին, և մի անգամ պատահմամբ մարդու ոտնահետք տեսնելով, որ ժայռերի միջով մինչև Կապիտոլիոն էր գնում, մի պայծառ և լուսնկայ գիշեր ժայռն ի վեր սողոսկելով հասան մինչև բերդը. խորին հանդարտութիւն էր. մինչև ան-

գամ շները չիմացան Գալլերի մօտենալը: Նոքա բերդն արդէն իրանցն էին համարում. բայց այդ միջոցին Իւնոնային նուիրուած սագերը պարսպի տակից սկսան աղաղակ բառնալ. սոցա ձայնի վերայ զարթեցաւ Մանլիոս Կապիտոլիացին, որն իսկոյն արթնացրեց բերդապահ զօրքին, վազեց Գալլերի դէմ, որ արդէն ճանկռտելով վեր էին բարձրանում և ինքն իւր վահանով վայր գլորեց պարսպի գլխից առաջին Գալլին: Այսպէս Կապիտոլիոնն ազատուեցաւ սագերի ձեռքով և Մանլիոսի արիութեամբ: Այս նշանաւոր անցքի պատճառով տարին մի անգամ հանդիսաւոր տօն էին կատարում, սագերին գրկած պըտըտեցնելով, իսկ շներին պատժելով քնէածութեան համար:

Մանլիոս երկար չվայելեց հայրենակիցների երախտագիտութեան շնորհը. վեց տարուց յետոյ նորան մահու դատապարտեցին իբր ինքնիշխանութեան ձգտումներ ունենալու համար և անդունդն ի վայր գլորեցին հռչակաւոր Մանլիոսին նոյն իսկ Տարպէյեան ժայռից, որի վերայ նա պաշտպանել էր Կապիտոլիոնը Գալլերի դէմ: Այն օրուանից՝ առած դարձաւ Հռոմում ասել. «Կապիտոլիոնից մինչև Տարպէյեան ժայռը մի քայլ է միայն»:

Գալլիացիք շարունակեցին բերդը պաշարել: Քաղաքի մէջ սով ընկաւ: Ծերակոյտն ու ժողովուրդը սաստիկ նեղի ընկած՝ հաշտութեան բանակցութիւն արին Բրեննոսի հետ. սա պահանջեց որ 1000 լիտր ոսկի տան իրան, որ Հռոմից հեռանայ բոլորովին: Հռոմայեցիք ճարահատեալ համաձայնեցան: Ոսկին կշռելու ժամանակ Գալլիացիք խարդախութիւն էին անում կշռքի մէջ. երբ Հռոմայեցիք գանգատեցին այս բանի վերայ՝ Բրեննոս յանդգնաբար իւր սուրն էլ առաւ կշռքի թաթի մէջ դրաւ, ասելով. «Վայ յաղթուողներին»: Այդ իսկ րոպէին փախած Հռոմայեցիները գլխին հաւաքած վրայ հասաւ Կամիլլոս, որին Հռոմայեցիք իւր աքսորանաց տեղն իշխանապետ էին ընտրել: Չկարաց զայրոյթը բռնել Բրեննոսի ժպրհութեան վերայ. «Ոչ ոսկուով, գոչեց նա, այլ երկաթով պէտք փրկուի Հռոմը». ասաց և կշռքի միջից դուրս ածեց ոսկին: Բրեննոս պահանջում էր դաշնագրութեան պայմանը կատա-

րել. իսկ Կամիլլոս պատասխանեց. «Այդ դաշնադրութիւնն այլևս զօրութիւն չունի, որովհետև ես իշխանապետ եմ, իսկ առանց ինձ Հռոմայեցիք իրաւունք չունէին դաշն կապել»: Արիւնահեղ պատերազմ սկսուեցաւ Կապիտոլիոնի առաջև. Գալլերը սաստիկ ջարդ կրեցին և Հռոմից դուրս հալածուեցան. Կամիլլոս յետևներիցն ընկաւ և նոցա բոլոր աւարները խլեց:

Թշուառացած ժողովուրդն ուզում էր թողնել Հռոմի աւերակները և տեղափոխուել Վէյի, բայց Կամիլլոս համոզեց նոցա մնալ, և վերանորոգել տուաւ քաղաքը: Հռոմայեցիք ի նշան երախտագիտութեան՝ անուանեցին նորան Երկրորդ հիմնադիր Հռովմայ և հայր հայրենեաց:

Ը

ՌԱՄԻԿՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ.

Արտաքին թշնամիներից ազատուեցան թէ չէ՝ Հռոմայեցիք դարձեալ սկսան իրանց ընտանեկան գործերի վերայ աշխատել: Կուսակցութեանց վէճերը նորէն բարձրացան: Լիկինիոս և Սեքստիոս սխրագործ ցեղապետները պահանջեցին, որ զինուորական ցեղապետների իշխանութիւնը ոչնչանայ և վերահաստատուի հիւպատոսների իշխանութիւնը, այն պայմանով որ հիւպատոսներից մէկը ռամիկներից ընտրուի: Բացի դորանից նոքա պնդում էին, որ իւրաքանչիւր քաղաքացի 500 օրավարից աւելի հող չունենայ: Ով որ աւելի ունէր պէտք է դարձնէր յօգուտ աղքատների: Պատրիկները շատ ընդդիմացան այս առաջարկութեանը. ցեղապետների մէջ երկպառակութիւն ձգեցին, և ամբողջ հինգ տարի Հռոմի մէջ ոչ հիւպատոս եղաւ, ոչ զինուորական ցեղապետ: Վերջապէս համաձայնութիւնը կայացաւ. Կամիլլոսն ինքը շատ աշխատեց որ այս համաձայնութիւնը գլուխ գայ: Ռամիկներն իրանց միջից առաջին անգամ հիւպատոս ընտրեցին հայրենասէր Սեքստիոսին: Հողերի բաժանման առաջարկութիւնը նոյնպէս ընդունեցաւ և ասվում էր Լիկինիոսի ագրարական օրէնք:

Ի յիշատակ այս հաշտութեան Հռոմայեցիք չորեքօրեայ տօնախմբութիւն արին և մի տաճար շինեցին յանուն Համաձայնութեան: Մէկ ու կէս դար ռամիկները չարչարվում էին իրաւունքների հաւասարութիւն ստանալ. որքա՜ն արիւն թափուեցաւ, քանի՜ ցեղապետներ և ազգի բարեկամներ սպանուեցան: Ներքուստ երկպառակուած և ջլատուած Հռոմը շատ վնասներ կրեց արտաքին թշնամիներից, և քանի՜ քանի անգամ հասարակապետութիւնը կործանման դուռը հասաւ: Իսկ այժմ երբ տիրեց խաղաղութիւն ու միաբանութիւն, երբ ժողովրդին տրուեցան իւր իրաւունքները, օր օրի վերայ զօրացաւ հասարակապետութիւնը. ամեն ոք հայրենիքի որդի էր համարում իրան և աշխատում էր նորա փառքը մեծացնելու:

Թ.

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ՍԱՄՆԻԱՑՒՈՑ ԵՒ ԼԱՏԻՆԱՑ ԴԷՄ:

Իտալիայի ամեն կողմերից գեղեցիկը՝ Կամպանիա նահանգն էր: Դրացի Սամնիացիք, որ քաջ լեռնական ազգ էին, մի անգամ յարձակուեցան Կամպանիա և Կապուա մայրաքաղաքը պաշարեցին: Կամպանիացիք Հռովմայեցիներից օգնութիւն խնդրեցին ընդդէմ Սամնիացւոց: Նոքա չկարողացան օգնութիւն տալ, պատճառ բերելով թէ դաշնակից են Սամնիացւոց հետ: Այն ժամանակ Կամպանիացիք իրանց երկիրներով հպատակեցան Հռոմին, որ պաշտպանութիւն գտնեն: Այժմ Հռոմայեցիք պարտաւոր էին պաշտպանել իրանց քաղաքակիցներին. ուստի 342 Թ. պատերազմ յայտնեցին Սամնիացւոց: Այս միջոցին Լատինացիք էլ, որ Հռոմայեցւոց հաւատարիմ դաշնակիցներն էին, պահանջեցին որ Հռոմայեցւոց հետ հաւասար իրաւունքներ ունենան ու Ծերակուտի կէսն ու հիւպատոսի մէկը իրանցից լինի. և երբ այս պահանջը չլսուեցաւ, նոքա էլ միւս կողմից Հռոմի դէմ պատերազմ բացին: Այս դժնդակ և արիւնահեղ պատերազմները, որոնց նմանը Հռոմայեցիք դեռ ոչ մի անգամ չէին տեսած, կազմեցին հասարակապետութեան դիւ-

ցական շրջանը, թէ զօրավարների անձնազոհութեան և թէ զինուորների քաջութեան օրինակների հարստութեամբ:

Մանլիոս զօրապետը հրամայել էր, որ ոչ ոք առանց իւր թոյլտուութեանը չհամարձակի կռիւ անել թշնամու հետ և անհնազանդին մահուան պատիժ նշանակեց: Մի օր նորա որդին Տիտոս քանի մի ձիաւորներով գնացել էր թշնամեաց զօրութիւնը լրտեսելու. յանկարծ պատահեցաւ Լատինացւոց զօրավարին. սա մենամարտութեան հրաւիրեց Տիտոսին: Քաջասիրտ Հռոմայեցին ամօթ համարեց առաջարկութիւնը մերժել. մոռացաւ հօր պատուէրը, մենամարտութեան մտաւ Լատինացու հետ. սպանեց նորան և ուրախ ուրախ դարձաւ բանակը: Բոլոր ընկերակիցներն աղաչեցին Մանլիոսին չպատժել նորան, բայց Մանլիոս ոչ ոքի ականջ չարաւ և հրամայեց դահիճներին որդու գլուխը կտրել, որպէս զի ամեն Հռոմայեցի տեսնէ, թէ ինչպէս պէտքէ օրէնքները պահել:

Մանլիոս և Դեկկիոս Մուս զօրքը տարին Լատինացւոց դէմ. Վեզուվի մօտ սաստիկ կոտորած եղաւ: Հռոմայեցի զօրքի ձախ թևը չկարենալով դիմադրել՝ սկսաւ տկարանալ Պատերազմից առաջ իբրև տեսիլ՝ մի յաղթահասակ ու փառահեղ մարդ էր երևացել նոցա և ասել. «Մի զօրապետ և նորա դիմացի զօրքը Անդարամետաց աստուածներին պիտի զոհուին»: Մանլիոս և Դեկկիոս պայման էին դրել, թէ որ կողմի զօրքը թուլանայ՝ այն կողմի զօրապետն ինքզինքը նուիրէ: Ուստի Դեկկիոս Մուս, ձախ թևի զօրապետը, քրմապետի ցոյց տուած ձևով՝ ծիրանին վերան առաւ, քօղը ձգեց գլխին և նիզակի վերայ բաղկատարած կեցած՝ խնդրեց աստուածներին, որ յաղթութիւնն իրանց տայ, իսկ թշնամու վերայ ահ ու սարսափ տարածէ: Յետոյ զէնքերն առած ձի հեծաւ և կրակի պէս թշնամեաց մէջ նետուեցաւ. նոցա զօրքն իրարով տուաւ, ինքն էլ զարկուեցաւ անկաւ: Հռոմայեցիք սիրտ առին և թշնամու վերայ վազելով այնպիսի մի ջարդ տուին, որ Լատինացւոց զօրքի չորրորդ մասը հազիւ ազատուեցաւ փախաւ:

Միևնոյն քաջագործութիւնն արաւ հետևեալ պատերազմներից մէկի մէջ և Դեկկիոս Մուս-որդին:

Սամնիական պատերազմները յիսուն տարուց աւելի տեւեցին փոփոխ յաջողութիւններով. վերջապէս Պապիրիոս Կուրսորի, Ֆաբիոս Իշխանապետի և Կուրիոս Դենտատի առաջնորդութեամբ Հռոմայեցիք սպառսպառ յաղթեցին Սամնիացիներին 290 Թ.:

Լ.

ՊԱՏԵՐԱԶՄ ՏԱՐԵՆՏՈՆԻ ԴԷՄ (283—272).

Պիւռոս.

Սամնիացւոց նուաճելուց՝ Հռոմայեցիք պատերազմ բացին հարուստ ծովեզրեայ Տարենտոն քաղաքի դէմ, որի բնակիչները դատարկ պատճառով բռնել էին Հռոմայեցւոց տասն նաւերը. և երբ Հռոմի Ծերակոյտը դեսպաններ ուղարկեց նաւերը պահանջելու՝ Տարենտացիք արհամարհեցին նոցա պահանջը և մինչև անգամ ծաղրում էին, որ դեսպանները լաւ չէին խօսում Յունարէն: Բայց որովհետև Տարենտացիք փափկասէր ու թոյլ մարդիկ էին, այս պատճառով օգնութիւն խնդրեցին Եպիրոսի թագաւոր Պիւռոսից, որ իւր ժամանակի ամենաերևելի զօրապետն էր համարւում: Պիւռոս Աղէքսանդր Մակեդոնացու օրինակին էր հետեւում և նորա նըման սիրում էր ամէն տեղ արշաւելով փառք ու բաղդ որոնել: Նորա փառասիրութեանը մի քիչ սանձ էր դնում իմաստուն Կինէաս՝ որ աշակերտած էր Դեմոսթենէսին:

Երբ որ Պիւռոս Իտալիա գնալու խորհուրդը յայտնեց նորան, Տէր արքայ, ասաց Կինէաս, Հռոմայեցւոց հետ վարած պատերազմներից վաստակն ինչ պիտի լինի»:—Իտալիային տիրել, ասաց թագաւորը: «Նորանից յետո՞յ»:—Հարուստ և բազմամարդ Սիկիլիային կը տիրենք: «Դորան տիրելուց յետոյ արշաւանքդ կը դադարեցնե՞ս»:—Այնտեղից Աֆրիկան մօտ է, կ՚երթանք այն էլ կը տիրենք: «Այս բոլոր աշխարհակալութիւնից յետո՞յ ինչ պիտի անենք»:—Այն ժամանակ, սիրելի Կինէաս, կուտենք, կըխմենք»: Ո՛հ, տէր արքայ, ասաց Կինէաս, ո՞վ է արգելում քեզ հիմիկուանից այդ հանգստութիւնը վայելելու, առանց այնչափ չարչարանքի»:

Բայց Պիւռոսի իշխանասիրութիւնը թոյլ չտուաւ հետեւել Կինէասի իմաստուն խորհրդին: Նա մտածեց Մեծ Յունաստանից Հռոմայեցիներին դուրս քշել: Մտաւ Իտալիա 25,000 մարդով և 20 վարժած փղերով: Հռոմայեցիք չվախեցան: Պիւռոս դեսպաններ ուղարկեց որ Տարենտացւոց հետ խաղաղութեամբ վերջացնեն. բայց Հռոմայեցիք պատասխանեցին, թէ չեն ճանաչում նորան իբրև միջնորդի, իսկ իբր թշնամու՝ ոչինչ երկիւղ չունեն: Պիւռոս զարմացաւ այդ բարբարոսների, ինչպէս ինքն էր կոչում նոցա, յանդուգն պատասխանի վերայ, և պատրաստուեցաւ մի լաւ դաս տալ նոցա:

ՀԵՐԱԿԼԵԱՅԻ ՃԱԿԱՏԸ (280): Հռովմայեցիք վստահարար եկան Պիւռոսի դէմ: Հերակլեայի մօտ երկու բանակները ճակատեցան. մեծ պատերազմ տրուեցաւ. բայց յաղթութիւնը մնաց անորոշ: Հռոմայեցիք շատ արիաբար կռուեցին և անշուշտ յաղթած կլինէին, եթէ Պիւռոս փղերը յառաջ չ՚ձգէր: Այս վիթխարի մարմինները իրարանցում ձգեցին Հռոմայեցւոց ձիաւորների մէջ, որոնք ամենևին փիղ չէին տեսած: Ձիանքը խրտնեցան այս ու այն կողմ վազեցին և վայր թափեցին նստողներին: Զօրքի մեծ մասը փախաւ. շատերին փղերը ոտնատակ տուին, շատերին էլ նոցա թիկունքի աշտարակներում նստած զինուորները նետահար արին: Հռոմայեցւոց կորուստը սարսափելի էր: Բայց Պիւռոսն էլ արժան չպրծաւ. պատերազմի մէջ նա հազիւ հազ իւր կեանքն ազատեց վտանգից. նորա զօրապետներից ու զինուորներից երևելիքը մեռան հերոսաբար: Պիւռոս ապշեցաւ Հռոմայեցւոց քաջութեան վերայ և բացագանչեց. «Ա՛հ, եթէ այսպիսի զինուորներ ունենայի՝ ամբողջ աշխարհին կըտիրէի»:

Պիւռոս յոյս ունէր, որ այս պարտութիւնից յետոյ Հռովմայեցիք ուրախ կլինին հաշտուելու, և ուղարկեց ճարտար ու խելացի Կինէասին բանակցութեան համար: Նա շատ ջանք գործ դրաւ մինչև որ կարողացաւ Ծերակոյտի մէջ շատերին համոզել խաղաղութեան պայմաններն ընդունելու: Այս լսելով զառամեալ Ապպիոս Կլաւդիոս, որ առաջ Ծերակոյտի անդամ էր և կուրութեան

պատճառով տանից դուրս չէր գալիս, պատգարակի մէջ շտապեց եկաւ և սկսաւ յանդիմանել քաղաքակիցների վատասրտութիւնը։ «Մինչև այժմ, ասաց նա, ես ողբում էի իմ կուրութիւնը, այժմ կցանկայի և խլանալ, որպէս զի չլսէի ձեր ցած խորհուրդը։ Միթէ նորա համար էիք միայն պարծենում Հռոմայեցու անուան փառքով, որ դողաք մի բուռն մարդկանց առաջև որոնք ստրուկ էին Մակեդոնացոց ձեռքը»։ Ծերունու խօսքերն ազդեցութիւն ունեցան։ Կինէասին պատասխանեցին, որ մինչև Պիւռոսը դուրս չգայ Իտալիայից՝ խօսք չէ հաշտութեան վերայ բանակցելը։ Կինէաս յանձնելով այս պատասխանը Պիւռոսին՝ աւելացրեց. «Հռոմայ Ծերակոյտն երևեցաւ ինձ ինչպէս թագաւորների ժողով»։

Գերիները փրկելու համար Հռոմայեցիք դեսպան ուղարկեցին Պիւռոսի մօտ Կ ա յ ի ո ս Ֆ ա բ ր ի կ ի ո ս ի ն։ Այս պատուարժան ծերունին, չնայելով որ տէրութեան մէջ նշանաւոր պաշտօնների տէր էր, պարզ և մինչև անգամ աղքատ էր ապրում։ Պիւռոսը պատուով ընդունեց պատկառելի դեսպանին և պատուիրեց նորա համար հարուստ ընծաներ պատրաստել ի նշան իւր յարգանաց։ Ֆաբրիկիոս չընդունեց։ Միւս օրը, Պիւռոս ցանկանալով փորձել Հռոմայեցի ծերի անվեհերութիւնը, հրամայեց վրանի մէջ վարագոյրի քամակին մէկ փիղ պահել։ Նշան տուած րոպէին վարագոյրը յետ քաշեցին և ահռելի կենդանին մռնչալով պարզեց կնճիթը Ֆաբրիկիոսի գլխի վերայից։ Բայց սա սառնարիւն կերպով վեր նայեց և ասաց. «Որքան որ երեկ քո ոսկին ինձ գայթակղեցրեց, այնքան էլ այսօր քո փիղը սարսափեցրեց»։ Պիւռոս սքանչացած Ֆաբրիկիոսի անյողդողդ բնաւորութեանը վերայ, ի նշան իւր համակրութեան, բոլոր գերիներին արձակեց, որ գնա Հռոմ ներկայ լինին այդ օրուան մեծ հանդիսին, բայց ժամանակը լրանալուց յետոյ վերադառնան։ Գերիները եկան Հռոմ, տօնին մասնակցեցին և նշանակած ժամանակը դարձան Պիւռոսի մօտ. Ծերակոյտը յայտնել էր, որ ով յետ մնայ՝ մահու պատիժ պիտի ստանայ։

ԱՍԿՈՒԼՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ, (279). Պիւռոս գնաց Ապուլիա, որ հարկադրէ Հռոմայեցիներին հաշտութիւն անել։

Ասկուլոնի մօտ արիւնահեղ պատերազմ եղաւ։ Պիւռոս այստեղ էլ յաղթեց, բայց այնքան մարդ էր կորցրել, որ յուսահատութեամբ աղաղակեց. «Այսպիսի մի յաղթութիւն էլ, և ես կորած եմ»։ Հետագայ տարին ինքը Ֆաբրիկիոսն էր զօրքի առաջնորդը։ Պիւռոսի բժիշկը մի նամակ ուղարկեց Ֆաբրիկիոսին, և առաջարկեց որ եթէ լաւ վարձատրէ իրան, պատրաստ է թունաւորել Պիւռոսին։ Ֆաբրիկիոս սրտմտեցաւ այս ցած անհաւատարմութեան վերայ և նամակն ուղարկեց Պիւռոսին, որ տեսնէ թէ ինչ մարդկանց է հաւատում իւր կեանքը։ Ֆաբրիկիոսի վեհանձնութեանը վերայ զմայլած Պիւռոս բացագանչեց. «Այո, աւելի հեշտ է արեգակը իւր ընթացքից դարձնել, քան թէ այս Հռոմայեցուն արդարութեան ճանապարհից»։ Նա հրամայեց գլխատել բժշկին, դարձրեց բոլոր գերիներին առանց փրկանքի և նորէն հաշտութիւն առաջարկեց. բայց Հռոմայեցիք նոյն պատասխանը տուին և ազատած գերիների փոխարէն իրանք էլ նոյն թուով գերիներ արձակեցին։

Պիւռոս այս յամառութեան վերայ յուսահատած մնաց. երրորդ անգամ չէր վստահանում պատերազմել. ոչինչ չարած տուն դառնալն էլ ամօթ էր համարում։ Այս պատճառով նա ուրախութեամբ ընդունեց Սիկիլիացոց հրաւէրը՝ Կարքեդոնացոց դէմ իրանց օգնելու։ Սակայն Սիկիլիայումն էլ նորա գործերը յաջողութիւն չունեցան։ Երկու ամսից յետոյ նա ստիպուեցաւ նորէն Իտալիա դառնալ Տարենտացոց խնդրանօք։ Սիկիլիայից ելնելիս նա ասաց. «Այս կղզին մի ժամանակ կռուախնձոր պիտի դառնայ Հռոմայեցոց և Կարքեդոնացոց մէջ»։

Հռոմայեցիք նորա դէմ զօրապետ նշանակեցին Կուրիոս Դենտատոս ազնիւ և խելացի հիւպատոսին։ Անշահասիրութեամբ նա Ֆաբրիկիոսից յետ չէր մնում։ Երբ Սամնիական պատերազմների ժամանակ դեսպաններ եկան նորա մօտ, որ խնդրեն հաշտութեան համար միջնորդել, տեսան որ նա իւր տնակի մէջ կրակարանի առաջը նստած մի փայտեայ կուշի մէջ հաց է ուտում. նորա կերակուրը հասարակ շաղգամ էր. որ իւր ձեռքովն էր եփել պատ-

ռաստել: Դեսպանների առաջարկութիւնն ու նոցա ընծաներն արհամարհանօք մերժեց ասելով. «Ես աւելի կըցանկամ հարուստների վերայ իշխել, քան թէ ինքս հարուստ լինել»:

ԲԵՆԵՎԵՆՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ (275)· Այս անգամին էլ Պիւռոսը յոյսը փղերի վերայ էր դրել, սակայն Հռովմայեցիք այլ եւս չէին վախենում. նոքա ահարկու աղաղակներով վերայ թափուեցան, վառած ջահեր ձգեցին փղերի գլխին. վիթխարի կենդանիքը խրտնելով յետ փախան եւ մեծ շփոթ յարուցին Պիւռոսի զօրքի մէջ: Հռոմայեցիք օգուտ քաղելով հանգամանքից վրայ յարձակուեցան եւ զարհուրելի կոտորած տուին թշնամուն. Պիւռոսի բոլոր բանակը Հռոմայեցւոց ձեռքն ընկաւ, իսկ ինքը միքանի ձիաւորներով հազիւ հազ դուրս պրծաւ Տարենտոն փախաւ:

Կուրիոս փառաւոր յաղթանակով Հռոմ մտաւ: Աւարների թւում կային եւ չորս հատ փիղ, որոնց վերայ ապշած նայում էր Հռոմի ժողովուրդը:

Պիւռոս իւր ամեն յոյսերը փչացած տեսնելով ամօթահար դուրս քաշուեցաւ Իտալիայից, մինչեւ անգամ չսպասելով որ զօրքի բոլոր մնացորդները գան հաւաքուին:

Այս գոռոզ եւ իշխանասէր թագաւորի խղճալի պարտութիւնը շատ մեծացրեց Հռոմի զօրութեան հռչակն օտար ազգերի առաջեւ: Պիւռոսի դաշնակիցներից շատերը յօժարակամ յայտնեցին իրանց հպատակութիւնը: Տարենտացիք թէեւ նորանոր փորձեր արին իրանց՝ ազատութիւնը պաշտպանելու, բայց անօգուտ: Հռոմայեցիք նոցա նաւերը խլեցին եւ քաղաքի պարիսպները քանդել տուին:

Պիւռոսի հետ ունեցած պատերազմներից Հռոմայեցիք շատ զինուորական հմտութիւններ սովորեցան. ծանօթացան փաղանգների դասաւորական եւ հեծելազօրքի շարժմանց ձեւերին, որի մասին առաջուց հասկացողութիւն չունէին. տեսան թէ ինչպէս պէտք է բանակ կազմել եւ ամրացնել: Կարճ ասել, նոքա սովորեցան Յոյների զինուորական կարգաւորութեանց ճարտարութիւնը, որի շնորհիւ 50 տարի առաջ Աղեքսանդր Մակեդոնացին հաստատել էր իւր լայնածաւալ տէրութիւնը:

ԺԸ·

ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ:

Դուիլիոս. Հռեգուլոս.

Փիւնիկեցւոց հիմնած գաղթականութիւններից ամենաերեւելին էր Կարքեդոն կամ Կարթագեն. այս հզօր եւ ծաղկեալ քաղաքը գտնվում էր Ափրիկայի հիւսիսային ափում, ուղիղ Սիկիլիա կղզու դէմ ու դէմը, որտեղ որ այժմ Թունիսն է: Կարքեդոնը միայն առեւտուրով չէր պարապում, ինչպէս Տիրոն ու Սիդոնը, այլ աշխարհակալութիւն էր անում: Կարքեդոնացիք նուաճեցին Ափրիկայի Հիւսիսային ծովեզերքի մեծ մասը: Սարդինիա եւ Կորսիկա կղզիքը եւ Սիկիլիայի կէսը: Նոքա գաղթականութիւններ էլ ունէին եւ իրանց բեռնաւորած նաւերն ուղարկում էին զանազան ծովեր: Նոցա վաճառականութիւնը ծաղկած էր, նոցա տիրած երկիրներն անթիւ: Կարքեդոնացիք իրանք մի փոքրիկ ազգ էին, եւ իրանց՝ տիրապետութիւնները կատարում էին վարձկան զօրքերով:

Հռոմայեցիք վաղուց արդէն նախանձում էին Կարքեդոնի զօրութեան ընդարձակուելու վերայ: Մանաւանդ շատ անհաճոյ էր նոցա համար Կարքեդոնացւոց ձգտումը Սիկիլիային տիրելու, որովհետեւ նախ՝ իրանք էլ նոյն ցանկութիւնն ունէին, եւ երկրորդ որ ամենեւին ձեռնտու չէին համարում Կարքեդոնի պէս զօրեղ դրացի ունենալը: Բայց քանի որ նոքա տակաւին զբաղուած էին պատերազմներով բուն Իտալիայի մէջ՝ ոչինչ չէին կարող անել Կարքեդոնացւոց դէմ. հենց որ ամբողջ Իտալիան իրանց իշխանութեան տակը ձգեցին՝ առիթ էին սպասում որ կռուին իրանց աւելի հակառակորդի հետ: Եւ այդ առիթը շուտով յայտնուեցաւ:

Մի քանի ժամանակ առաջ Սիկիլիայի մէջ տիրող մեծամեծ խռովութիւնները հանդարտացնելու համար Ագաթոկլէս Սիրակուսացի տիրապետը մի գունդ Կամպանիացի զօրք վարձեց: Իւր մահուանից հետոյ այդ անգլուխ, անսանձ ու թափառական գուն-

դը սկսաւ սարսափելի աւապատակութիւններ անել Սիկիլիայի մէջ և ցած խարդախութիւններով տիրեց Մեսսենային։ Այս աւազակաց գունդը կոչվում էին Մամերտացիք, այսինքն Մարսի որդիք։ Պիւռոս թէև շատ չէ քիչ օգնեց Սիրակուսային Կարքեդոնացւոց դէմ, բայց նոցա աւապատակութիւնները չկարողացաւ զսպել։ Պիւռոսի գնալուց յետոյ Սիրակուսայի նորընտիր թագաւորը, քաջ ու մեծահոգի Հերոն, արշաւեց նոցա վերայ որ բոլորովին փչացնէ և Մեսսենան էլ քարուքանդ անէ։ Մամերտացիք տագնապի մէջ էին, մտածեցին օգնութիւն խնդրել- կէս մասը դիմեց Կարքեդոնացւոց կէս մասն էլ Հռոմայեցւոց։ Երկուքն էլ ուրախ էին այս հրաւէրին, որովհետև Սիկիլիան տիրելու աչք ունէին։ Շուտով գործի ընթացքը շրջեցաւ և պատերազմը փոխուեցաւ Հռոմի ու Կարքեդոնի վերայ։ Սիկիլիա կղզին, Միջերկրական ծովի այդ մարգարիտը նոցա կռուի ծաղիկն էր։

ԴՈՒԻԼԻՈՍԻ ՆԱՒԱՄԱՐՏԸ (260)։ Հռոմայեցիք նաւատորմիղը յանձնեցին Դուիլլիոս զօրապետին։ Նա շատ լաւ տեսնում էր, որ ծովային կռուի մէջ Կարքեդոնացիք իրանցից գերազանց են. Հռոմայեցիք արագաշարժ ու ամուր նաւեր չունէին և ծովային կռուի մէջ վարժուած չէին։ Դուիլլիոս այնպիսի մի հնարք մտածեց, որ Հռոմայեցիք ծովի վերայ կարողանան պատերազմել ինչպէս ցամաքի վերայ. Նա ամեն մի նաւի երկու կողմերից կապել տուաւ շարժական կամրջի նման երկերկու երկաթի կեռեր, որ ագռաւի կտուցի պէս լինելուն համար ագռաւ էին ասվում։ Միտքն այն էր, որ թշնամեաց նաւերը մօտենալիս իսկոյն այդ կեռերով կարթէ նոցա։ Այդպէս էլ արին. Հռոմայեցիք բարձրանում էին այդ կամուրջների վերայ և սրերով կռվում ինչպէս ցամաքի վերայ։ Դուիլլիոսի առաջնորդութեամբ Հռոմայեցիք փառաւորապէս յաղթեցին Կարքեդոնացւոց 150 նաւերին։ Ի յիշատակ այս առաջին ծովային, յաղթութեան Դուիլլիոսի համար մարմարեայ կոթող կանգնեցին, որի վերայ կախկախած էին նորա խլած նաւերի ցռուկները, և իրաւունք տուին, որ ամեն անգամ որ և է խնջոյքից դառնալիս ջահերով ու երաժշտութեամբ ճանապարհ ձգեն նորան։ Հռոմի այն ժամանակուան պարզութեան մէջ այս մի զարմանալի յարգանք էր Դուիլլիոսին։

ՌԵԳՈՒԼՈՍ։ Յիշեալ յաղթութիւնից յետոյ Հռոմայեցիք տիրեցին Կորսիկային ու Սարդինիային, իսկ Ռեգուլոս հիւպատոսը խիզախեցաւ դուրս գալ Աֆրիկա և թշնամու վերայ յարձակուել իւր յատուկ երկրի մէջ։ Կարքեդոնացւոց քաղաքները մէկիկ մէկիկ նուաճեց, անթիւ աւարներ առաւ և մօտեցաւ Կարքեդոնի տափերին։ Այս միջոցին վրայ հասաւ Յունական վարձկան զօրքը Սպարտացի Քսանտիպպոսի առաջնորդութեամբ. Ռեգուլոս իւր չափազանց վստահութեան պատճառով ջարդուեցաւ և գերի ընկաւ, նորա հետ էլ 200 հոգի Հռոմայեցիք։ Յետագայ տարիներն էլ Հռոմայեցիք մի քանի ձախորդ պատերազմներ տուին. Սիկիլիայի քաղաքներից շատերը կորցրին, և երկու անգամ մրրիկը խորտակեց նոցա նաւատորմիղը։ Բայց նոքա չյուսահատուեցան, նոր նաւատորմիղ կազմեցին և Սիկիլիայի մէջ այնպիսի փառաւոր յաղթութիւններ արին, որ Կարքեդոնացիք նեղի ընկած մտածեցին հաշտութեան բանակցութիւն սկսել։ Սորա համար Ռեգուլոսին ուրիշ դեսպանների հետ Հռոմ ուղարկեցին, որ հաշտութիւնը հաջողեցնէ, բայց առաջուց երդում առան, որ եթէ չյաջողի նորէն յետ գայ Կարքեդոն։ Ռեգուլոս փոխանակ Հռոմայեցւոց համոզելու որ հաշտուին, հասկացրեց Կարքեդոնի նեղ վիճակը և խորհուրդ տուաւ պատերազմը շարունակել։ Այժմ նա թէպէտ գիտէր որ երբ վերադառնայ Կարքեդոն չարաչար պատիժներ պիտի ստանայ, բայց չուզեցաւ երդմնազանց լինել։ Ծերակոյտը, ազգականները յորդորում էին նորան որ մնայ. նա չլսեց, գնաց Կարքեդոն, Այնտեղ թշնամիք անգթօրէն մեռցրին նորան։

Ռեգուլոսի խորհուրդներն իզուր չէին. Կարքեդոնացիք մի արիւնահեղ ծովամարտի մէջ զարհուրելի ջարդ կրեցին, այն ինչ միւս կողմից էլ ներքին խռովութիւններն էին զօրացել։ Նոքա հարկադրուած էին հաշտութիւն խնդրել և ընդունել բոլոր այն ծանր պայմանները, ինչ որ Հռոմայեցիք առաջարկեցին. այնէ ամբողջ Սիկիլիան և մօտի փոքրիկ կղզիները թողուլ Հռոմայեցիներին, և իբրև պատերազմական ծախք ահագին գումար վճարել (2200 տաղանդ, որ 3 միլիոն րուբլուց աւելի է)։ Այսպէս Սի-

կիլեան դարձաւ Հռոմէական նահանգ և պարտաւոր էր մեծագումար հարկ վճարել Հռոմին և հարկաւոր եղած ժամանակը զօրք տալ ինչքան պահանջէին։

Հռոմայեցիք նահանգների կառավարութիւնը յանձնում էին փոխհիւպատոսների, որոնք կատարեալ տէր էին դառնում երկրին և կառավարում էին ըստ հաճոյից՝ կամ Հռոմէական օրէնքներով կամ իրանց յարմարադատութեամբ։ Նոքա իրանց համար օգնականներ էին նշանակում, քաղաքական գործերի համար՝ կուեստորներ, զինուորական գործերի համար՝ լեգատներ։ Երկրի հասոյթները հաւաքելը կապալով էր տրվում մասնաւոր մարդկանց, որոնցից անհնարին չարիքներ էին յառաջանում բնակիչների համար։ Փոխհիւպատոսները պարտաւոր էին ամեն տարուան վերջը հաշիւ տալ Ծերակուտին, և մինչև յետ կանչուելն աշխատում էին կարելի եղածին չափ կողոպտել խեղճ ժողովրդին, որ իրանց համար հարստութիւն դիզեն։ Այսպէս՝ անտանելի էր Հռոմէական նահանգների վիճակը։

Բազմահարուստ և չքնաղ Սիկիլիայի նուաճումն գրգռեց Հռոմայեցւոց աշխարհակալութեան սէրը. իսկ հզօր Կարքեդոնին յաղթելով՝ նոքա այնպէս գոռոզացան, որ այլևս ոչ մի ազգ երկիւղալի չէր իրանց համար. անզուսպ շահասիրութիւնը տիրեց նոցա. ոչ երդման, ոչ դաշնադրութեան սրբութիւն էլ չէին ճանաչում։ Այսպէս՝ մինչև Կարքեդոնացիք զբաղուած էին իրանց երկրի ներքին գժտութիւնները հանդարտեցնելով, Հռոմայեցիք անհաւատարիմ գտնուելով դաշնադրութեան պայմաններին՝ գրաւեցին Կորսիկան ու Սարդինիան։ Կարքեդոնացիք բողոքեցին այս անիրաւութեան դէմ, բայց Հռոմայեցիք փոխանակ բաւականութիւն տալու նոցա, պատերազմի սպառնալիքներ տուին և դեռևս արած ծախքերն էլ պահանջեցին նոցանից։ Էլ ինչ զարմանք, եթէ Կարքեդոնացիք բորբոքեցան վրէժխնդրութեամբ ընդդէմ Հռոմի։

ԺԲ.

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

1.

Աննիբալ

Համիլկար քաջ և վեհանձն Կարքեդոնացին զօրքն առած՝ Սպանիա մտաւ, որ այս հարուստ երկրի նուաճմամբ իրանց մեծամեծ կորուստները փոխարինէ, և մանաւանդ թէ հնար լինի մի ժամանակ այն տեղից դէպի Հռոմ արշաւել։ Սպանիան առաջուց էլ ծանօթ էր նոցա արծաթի հարստութեամբ. այժմ էլ փոքր առ փոքր գաղթականութիւններ հաստատեցին և հիմնեցին Միջերկրական ծովի ափում Նոր Կարթագեն քաղաքը, (այժմեան Կարթագենան)։ Համիլկարն Սպանիա ուղևորուելիս՝ նորա իննամեայ որդին Աննիբալ հօրն աղաչեց որ իրան էլ հետը տանի։ Հայրը համաձայնեցաւ, բայց նախ և առաջ տարաւ նորան սեղանի առաջ և երդուեցրեց որ մինչ ի մահ թշնամի լինի Հռոմայեցւոց։ Այդ երդումից աւելի սրբութեամբ դեռ մի երդում կատարուած չկայ։

Համիլկար և յետոյ իւր փեսան Ասդրուբալ տիրեցին Սպանիային մինչև Իբէր (Էբրո) գետը, որտեղ շինուեցաւ Նոր Կարթագենը։ Կարքեդոնացւոց այս յաջողութիւնները դարձեալ շարժեցին Հռոմայեցւոց նախանձը. բայց որովհետև առիթ չունէին նոցա գործերին խառնուելու, իրանց հետ դաշնակից շինեցին Սագունտոն քաղաքը, որ Յունաց գաղթականութիւն էր, Նոր Կարթագենից փոքր ինչ դէպ հիւսիս. յետոյ յայտնեցին Ասդրուբալին, որ եթէ Իբէր գետն անցնեն դէպի Սագունտոն՝ պատասխանատու են Հռոմի առաջ։ Կարքեդոնացիք հարկադրուած էին զիջանել նոցա յանդուգն սպառնալիքներին։

ԱՆՆԻԲԱԼ։ Ասդրուբալի մեռնելուց յետոյ նորան յաջորդ ընտրուեցաւ Աննիբալ քսան և վեց տարեկան երիտասարդը. մի զօրավար, որի նմանը հազւոյ մեծութեամբ և դիւցազնական գոր-

ծերով՝ շատ քիչ կայ պատմութեան մէջ։ Նա բարձրահասակ և վայելչակազմ տղամարդ էր. բոցավառ աչքեր ունէր և հուժկու ձայն։ Մեծամեծ վտանգների մէջ միշտ անյողդողդ էր. թէ՛ մարմնով և թէ՛ մտքով յոգնիլ չունէր. արև ու անձրև, ցուրտ ու տաք՝ չէին ազդում նորան. շատ անգամ քաղցած ու ծարաւ էր մնում, կամ՝ ամբողջ գիշերներով անքուն էր լինում։ Իւր ապրուստով չէր ուզում հասարակ զինուորից որևիցէ բանով զերազանցել։ Շատ անգամ վերարկուի մէջ փաթաթուած՝ կը քնէր բացօդեայ։ Միշտ առաջինը թշնամու վերայ կը յարձակուէր և ամենից վերջը յետ կը քաշուէր։ Այս կատարելութեանցը համար զինուորները հօր պէս սիրում էին նորան։ Ամենավատ վարձկանն էլ նորա առաջնորդութեամբ քաջ պատերազմող էր դառնում։

Աննիբալ Հռոմայեցւոց պահանջները բանի տեղ չդրաւ և Սագունտոնը պաշարեց։ Բնակիչներն անօգուտ տեղն էին օգնութիւն խնդրում Հռոմից. ինքեանք էլ չկարացին քաղաքը պաշտպանել. վերջապէս քաղաքը կրակ տուեին, իրանք էլ մէջը տնով տեղով այրուեցան։

Սագունտոնի թշուառութեան գոյժը Հռոմ հասածին պէս՝ դեսպան ուղարկեցին Կարքեդոն ու բաւականութիւն պահանջեցին։ Երբ Կարքեդոնացւոց Ծերակուտի մէջ վիճաբանութիւնը շատ երկարացաւ, Ֆաբիոս տեղիցն ելաւ, պատմուճանի ծայրը ծալեց և ասաց. «Այստեղ բերել եմ պատերազմ կամ խաղաղութիւն, ո՞րն էք կամենում»։—Ընտրիր որը կուզես, կանչեց մէկը Ծերակուտի միջից։ «Ուրեմն առէք ձեզ պատերազմ». գոչեց դեսպանը պատմուճանի ծայրը բաց թողնելով։ Ամենքն էլ միաբերան աղաղակեցին. «պատերա՛զմ, պատերա՛զմ»։

Մինչ այս մինչ այն, Աննիբալ իւր եղբայր Ասդրուբալին թողեց Սպանիայում, իսկ ինքը 60,000 հետևակ և 9,000 ձիաւոր զօրքով, 37 էլ փիղ հետն առած՝ անցաւ Պիրենեան լեռները 218 Թ. ամառը։ Հռոմայեցիք կարծում էին թէ Աննիբալ դեռևս Սագունտոնումն է. իսկ նա արդէն Թիրնայի եզերքն էր հասել՝ ամեն հասած տեղերի բնակիչները դաշնակից անելով իրան հետ։

Աննիբալ շարունակեց արշաւանքը. ինչ որ ուրիշ մէկի համար անհնարին կըլինէր, նորա համար կարելի եղաւ։ Իւր հանճարը միայն առաջնորդ առած, հայրենիքից հեռու, յետևիցն այնչափ թշնամի ազգեր թողած՝ Իտալիա էր շտապում։ Ջերմ կլիմայի սովոր Աֆրիկացիք Ալպեանց վերայ բարձրանալիս՝ երբ որ տեսան բարձրաբերձ ու սև եղևինները, սառցապատ ու ձիւնապատ լեռները, որ կարծես միացած էին ամպերի հետ, սկսան վհատիլ։ Աննիբալ իմացաւ այս. «Մի՛ կարծէք, ասաց նոցա, որ այս երկիրը երկնքի հետ կպած է. մի՞թէ Գալլիացիք որ գնացին Հռոմն այրեցին՝ թռչելո՞վ անցան այս սարերը»։ Վերջապէս ինն օրուան մէջ, անլսելի նեղութիւններով ու չարչարանքներով Նոյեմբեր ամսի ցրտերին, Աննիբալ բարձրացաւ Ալպեան լերանց գագաթը՝ մի քանի հազար մարդիկ ու բեռնակիր անասուններ թողլով սառցակոյտերի ու քարմարցանկների տակ։ Այստեղ, մշտնջենական ձիւնի և սառցի սահմանում, երկու օր հանգիստ տուաւ զօրքին։ Բայց լեռներից իջնելը պակաս դժուարութիւններ չունէր, ամբողջ զօրաբաժիններ գլորվում թաղվում էին ծերպերի ու անդունդների մէջ և չէին կարողանում ո՛չ յետ գնալ ո՛չ առաջ։ Վեց օրուան մէջ Ալպեան լեռներից իջաւ Աննիբալ Պիեմոնտի հովիտը, բայց զօրքից միայն 26,000 հոգի էին մնացել։

2.

ԱՆՆԻԲԱԼ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

Հասաւ Աննիբալ, տեսաւ որ Սկեպիոն զօրավարը Տիկինոս գետի եզերքում բանակել կացել է։ Այստեղ նա ցոյց տուաւ հմուտ զօրավարի բոլոր ճարտարութիւնը։ «Այս թշնամու երկրի մէջ, ասաց, ուրիշ յոյս չունինք, բայց եթէ մեռնիլ կամ յաղթել»։ Այնպիսի մի յաջողակ դիրք բռնեց որ ցուրտ քամին փչում էր դէպի Հռոմայեցիք և ձիւնախառն անձրևը նոցա երեսին խփում։ Զօրքը շատ եռանդով պատերազմեց. Հռոմայեցիք չկարողացան Նումիդիացի ձիաւորների յարձակմանը դիմադրել։ Հիւպատոսը վիրաւորուեցաւ. և քիչ մնաց որ սպանուէր, թէ որ իւր դեռահասակ որդին

չազատէր նորան։ Այս կոտորածից յետոյ բոլոր հիւսիսային Իտալիան Աննիբալի կողմն անցաւ, ոչ այնքան նորա զէնքից յաղթուելով, որքան հեզ ու քաղցրաբարոյ վարմունքից գրաւուելով։

Հետեւեալ թուականի գարնանը Աննիբալ մտաւ Միջին Իտալիա, Արնօ գետը հեղեղուել ծածկել էր շրջակայ դաշտերը։ Այս հանգամանքն արգելք չեղաւ նորա արշաւանքը։ Չորս օր զինուորները ճահիճների միջով յառաջ գնացին. բեռնակիր անասունների մեծ մասը թաղուեցաւ մնաց տղմի մէջ։ Ինքն Աննիբալ գիշերուան խոնաւութիւնից և ճահիճների վնասակար գոլորշիացումից՝ աչքի մէկը կորցրեց։

Յամաք տեղը հասան թէ չէ Ֆլամինիոս զօրավարը նոցա առաջն եկաւ։ Տրասիմէն լճի մօտ ահեղ ճակատամարտ եղաւ. 6000 Հռոմայեցի գերի առնուեցան. 1500 մեռան. Ֆլամինիոս յուսահատութիւնից սրի վերայ ընկաւ մեռաւ։ Պատերազմի տեղը կոչուեցաւ ա ր ի ւ ն ա շ ա ղ ա խ դ ա շ տ։

ՖԱԲԻՈՍ ԴԱՆԴԱՂԿՈՏ։ Հռոմայեցիք տեսնելով որ գործը շատ ծանր կերպարանք առաւ, սովորականին պէս, իշխանապետ ընտրեցին փորձ, զգոյշ և քաջ ծերունի Ֆաբիոսին։ Աննիբալ առանց Հռոմին դիպչելու՝ անցաւ դէպի հարաւ։ Ֆաբիոս չէր խաբվում Աննիբալի պատերազմական խորամանկ հնարներից. նա ջանք էր անում շրջապատել Աննիբալին և խոհեմաբար կարգաւորած յարձակումներով տկարացնել նորան, Նա բռնեց բոլոր բարձրութիւնները, որպէս զի թշնամու ճանապարհները կտրէ։ Շատ չանցաւ՝ զօրքն սկսաւ գանգատել, որ իբր թէ անօգուտ տեղը միայն բլրէ բլուր էին թափառում. այն ինչ թշնամին իւրեանց աչքի առաջ աւերում էր երկիրը։ Ֆաբիոս ոչ նոցա գանգատներին, ոչ ծաղրաբանութեանը մտիկ չարաւ։ Վերջապէս մի անգամ որոգայթի մէջ ձգեց խորամանկ Կարքեդոնացուն. Աննիբալ ընկել էր մի հովտի մէջ, չորս կողմից բլուրներով շրջապատուած, իսկ բլուրների վերայ Ֆաբիոսի զօրքը ճանապարհները բռնած էր։ Բայց Աննիբալի հնարագիտութեանը բան չէր դիմանում. կէս գիշերին հրամայեց որ 2000 եզների եղջիւրներին ցախ կապեն ու վառեն և

քշել տուեց դէպի Հռոմայեցւոց բանակը։ Չորս կողմից կրակներ տեսնելով՝ Հռոմայեցիք կարծեցին թէ թշնամին ամեն տեղից յարձակվում է նոցա վերայ, մեծ իրարանցում եղաւ, չգիտէին որ կողմից սկսեն դիմադրել։ Աննիբալ օգուտ քաղելով ընդհանուր շփոթմունքից՝ մէկ կիրճից դուրս պրծաւ ազատուեցաւ։

Ֆաբիոս իւր բռնած ուղղութիւնը չէր փոխում. զինուորները տրտնջում էին նորանից և Դ ա ն դ ա ղ կ ո տ (կունկտատոր) մականունը տուին նորան։ Մինչև անգամ կասկած էին տանում, թէ նա ծածուկ յարաբերութիւն ունի Կարքեդոնացի զօրապետի հետ, որովհետև սա իւր կողոպուտների ժամանակ հրամայում էր ամենևին ձեռք չտալ Ֆաբիոսի կալուածներին։ Դժգոհների գլխաւորը Մ ի ն ո ւ կ ի ո ս ն էր, Ֆաբիոսի օգնականը, որ զօրքի առաջ միշտ պարծենում էր թէ՝ եթէ զօրապետութիւնն իրան յանձնեն՝ շատ շուտով կըհալածէ Աննիբալին Իտալիայից։ Նորա ցանկութիւնը կատարուեցաւ. Ծերակոյտը տուաւ նորան Ֆաբիոսին հաւասար իրաւունք. այժմ զօրքի մի մասը նորա իշխանութեան տակն էր։ Մինուկիոս ինքնագլուխ լինելով՝ ցած իջաւ բլուրների գագաթից և յարձակուեցաւ Կարքեդոնացւոց վերայ։ Աննիբալ խորամանկութեամբ յետ յետ քաշուելով յառաջ գրաւեց և յանկարծ շրջապատեց նորան։ Անխոհեմ Մինուկիոսը շուարեցաւ մնաց. կորուստն անխուսափելի էր. բայց այդ միջոցին Ֆաբիոս վրայ հասաւ լեռների գլխից։ Աննիբալ՝ իշխանապետի գալը տեսաւ թէ չէ թողեց հեռացաւ. «Գիտէի որ, ասաց նա. այդ լերանց վրայի ամպերից փոթորիկ պիտի ծնի մեզ համար»։

Մինուկիոս ճանաչեց իւր յանցանքը, գնաց Ֆաբիոսի բանակը, հայր անուանեց նորան, պատուանշանները նորա ոտի տակ դրաւ և ասաց. «Վեհանձն իշխանապետ, այսօր երկու յաղթութիւն արիր, մէկը Աննիբալի վերայ՝ քաջութեամբդ, միւսն էլ իմ սրտի վերայ՝ խոհեմութեամբդ ու վեհանձնութեամբդ. մէկովն ազատեցիր մեզ, միւսովը խրատեցիր։ Այսուհետև դու իմ հայրն ես և ես քո ձեռքիդ տակը կուզեմ հրամայել ու յաղթել»։ Այս ասաց ու գրկեց Ֆաբիոսին.

զօրքերն էլ հետևեցին նոցա օրինակին, միմեանց գրկախառնեցին և համբուրուեցան։

ԿԱՆՆԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ (216)։ Հետևեալ տարին Հռոմայեցիք երկու զօրավար նշանակեցին.—Էմիլիոս Պաւլոս և Տերենտիոս Վարրոն։ Առաջինը համեստ, հեռատես և Ֆաբիոսի ուղղութեանը հետևող մարդ էր. իսկ Վարրոն դիւրաբորբոք և մեծաբան. սա պարծենալով ասում էր թէ մէկ օրը բաւական է, որ թշնամին տեսնելս ու յաղթելս մէկ անեմ։ Իզուր Էմիլիոս աշխատում էր չափաւորել նորա անձնապաստանութիւնը։ Աննիբալ տեղեկանալով Վարրոնի ձգտումներին՝ շատ ուրախացաւ։ Երկու բանակները հանդիպեցան միմեանց Կաննայի մօտ. սկսուեցաւ ահարկու պատերազմ, որի նմանը երբէք տեսնուած չէր։ Աննիբալ զօրքը երկու բաժանելով յետ յետ քաշուեցաւ և յանկարծակի շրջապատեց Հռոմայեցւոց զօրքին. կոտորածը զարհուրելի էր. 50000 Հռոմայեցի ընկան պատերազմի դաշտում, որոնց թւում 80 ծեր և հեծելազօրքի ընտիր առաջնորդները։ Էմիլիոս Պաւլոս, որի խորհրդին հակառակ սկսուած էր պատերազմը, նոյնպէս զոհ գնաց։ Այս ազնիւ ու վեհանձն տղամարդը, երբ վիրաւորուած ժամանակը կուզէին օգնութիւն հասցնել, մերժեց, չկամենալով այդ չարաբաստ օրուանից յետոյ ապրել։ Պատմում են որ Աննիբալ Կարքեդոն ուղարկեց երեք չափ ասպետական մատանի, ի նշան իւր մեծ յաղթութեան։ Այս թշուառութեան գոյժը սուգ ու լաց տարածեց Հռոմի մէջ. տուն չկար, որ չողբար հօր, կամ եղբօր, կամ ազգականի մահը։ Կարծես Հռոմի կորուստը անմերժելի էր, և իրաւ կորած էր նա, եթէ Աննիբալ օգնութիւն ստանար Կարքեդոնից, որովհետև նորա զօրքն էլ զօրութիւնից ընկել էր. ապրուստի հնար չէր մնացել, երկիրն աւեր ու ամայի էր դարձել։

Կարքեդոնի մէջ վաճառական դասը տրտնջում էր, թէ ինչու Աննիբալ փոխանակ հարստութիւններ ուղարկելու՝ օգնութիւն է ուզում։ Նորա նախանձորդներն էլ շատ էին։ Աննիբալ օգնութիւն չստանալով Կարքեդոնից՝ հարկադրուած էր դիմել օտար օգնու-

թեան։ Իսկ Հռոմայեցիք այն տագնապալից վիճակին, այնու ամենայնիւ յոյսերն նրանց վերայ դնելով, հաստատուն և անյողդողդ մնացին։

Աննիբալ դիմեց Սիրակուսացւոց և Մակեդոնացւոց օգնութեան։ Հռոմայեցիք էլ Կաննայի կոտորածից յետոյ ուշքի գալով՝ նոր զօրք կազմեցին, ժողովելով բոլոր զէնք կրելու ընդունակ բնակիչներին։ Գարունքին զօրքը պատրաստ էր. զօրավար նշանակուեցաւ կորովի Մարկելլոս, որ սուր էր կոչւում։ «Ֆաբիոս մեր վահանն էր, ասում էին Հռոմաեցիք, Մարկելլոս սուրը պիտի լինի», Եւ արդարև Մարկելլոս Նոլա բերդի մօտ մի նշանաւոր յաղթութիւն տարաւ Կարքեդոնացի զօրավարի վերայ։ Հռոմայեցիք սիրտ առին և նորից ձեռք ձգեցին ապստամբած դաշնակիցներին։ Ամենից նշանաւորը Սիրակուսա քաղաքն էր։ Մարկելլոս մտաւ Սիկիլիա և պաշարեց Սիրակուսան. այդ տեղ գործ դրաւ բոլոր պաշարողական հնարները. բայց քաղաքը երկու տարուց աւելի ընդդիմադրեց Հռոմայեցիներին։ Այս դիմացկանութեան պատճառը հռչակաւոր Արքիմէդն էր, որ երևելի մաթեմատիկոս էր և իւր հնարած մեքենաներով իդերև էր հանում Հռոմաեցւոց բոլոր ջանքերը։ Այդ մեքենաները կամ ահագին քարեր ու գերաններ էին ձգում թշնամեաց վերայ, կամ նոցա մեքենաներն էին ջարդում, այրում, կամ նաւերը խորտակում և կամ երկաթեայ ճանկերով վեր էին քաշում նոցա գործիքները։ Մինչև անգամ պատմում են որ մեծամեծ կիզապակիներով Հռոմայեցւոց նաւերն այրում փչացնում էր։ Վերջապէս երկամեայ պաշարումից յետոյ քաղաքն առնուեցաւ։ Կոպիտ զինուորների վրէժխնդրութիւնն անսանձելի էր։ Մարկելլոս պատուիրել էր որ Արքիմէդին ոչ ոք չդիպչի։ Երբ մի զինուոր ներս մտաւ նորա սենեակը, տեսաւ որ խորին մտածմանց մէջ ընկղմած նստած է, նա առաջը դրած սեղանի երեսն աւազով ծածկել էր, զանազան շրջաններ շինելով նոր ծրագիր էր կազմում և չգիտէր թէ Հռոմայեցիք արդէն քաղաքի մէջն են։ Զինուորը մտել էր կողոպտելու նորան. «Զգոյշ կաց, ձեռք չտաս այս շրջաններին», ասաց Արքիմէդ։ Իսկ զինուորը

չճանաչելով նորան՝ գլուխը կտրեց: Մարկելլոս անչափ ցաւեցաւ նորա մահուան վերայ և հրամայեց պատուաւոր յուղարկաւորութեամբ թաղել նորան: Ամբողջ Սիկիլիան նորէն Հռոմէական նահանգ դարձաւ:

3.

ԱՆՆԻԲԱԼԻ ԱՖՐԻԿԱ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ: ՍԿԻՊԻՈՆ ԱՖՐԻԿԱՑԻ:

Հռոմայեցւոց գործերը Սպանիայի մէջ նոյնպէս յաջող էին գնում: Գիտենք որ այս երկիրը յանձնուած էր Ասդրուբալի պաշտպանութեանը: Զնայելով որ Հռոմայեցիք Աննիբալի հետ մրցելով՝ վտանգաւոր դրութեան մէջ էին, այնուամենայնիւ Սպանիան աչքից չէին թողում: Կնէաս Սկիպիոն և Պուբլիոս Սկիպիոն փոփոխ յաջողութիւններով պատերազմներ էին տալիս Ասդրուբալի դէմ. բայց նոցանից յետոյ երբ զօրավար նշանակուեցաւ Պուբլիոսի որդին Կոռնելիոս. 24 տարեկան ճարտասան, հնարագէտ և վայելչադէմ երիտասարդը, Սպանիայի մէջ Կարքեդոնացւոց աստղը թեքուեցաւ: Սկիպիոն առաջին հարուածից առաւ Նոր Կարթագենը: Ասդրուբալի բոլոր ջանքերը վառվռուն զօրապետին ընդդիմադրելու համար՝ անօգուտ անցան: Վերջապէս տեսնելով իւր անելանելի դրութիւնը Սպանիայում, շտապեց գնալ օգնութիւն հասցնել եղբօրը: Աննիբալ ժամէ ժամ սպասում էր նորան: Ասդրուբալ Պիրենեան ու Ալպեան լեռները յաջողութեամբ անցաւ, բայց հիւսիսային Իտալիայում ջարդուեցաւ: Մի առաւօտ, երբ Աննիբալ նստած եղբօր օգնութեամբն սկսելիք պատերազմների ծրագիրն էր մտածում, յանկարծ նորա առաջը ձգեցին Ասդրուբալի արիւնաշաղախ գլուխը. վրդովեցաւ երևելի զօրավարը և բացագանչեց. «Աւաղ, այժմ պարզ տեսնում եմ Կարքեդոնի մօտիկ օրհասը»:

Նա յիրաւի մօտենում էր այդ օրհասական ժամը: Կոռնելիոս Սկիպիոն ամբողջ Սպանիան նուաճելով՝ արշաւեց Աֆրիկա իւր

յաղթութեանց փառքը լրացնելու համար: Աննիբալ վշտալի սրտով հարկադրուեցաւ հեռանալ Իտալիայից, որ ազատէ Կարքեդոնը: «Ո՛չ թէ Հռոմայեցիք յաղթեցին ինձ և ստիպեցին դուրս գալ Իտալիայից, ասաց նա հեռանալիս, այլ Կարքեդոնացւոց Ծերակուտի նախանձն ու զրպարտութիւնը»:

Աֆրիկա հասնելուն պէս Աննիբալ մարդիկ ուղարկեց որ գնան լրտեսեն թշնամու բանակը: Հռոմայեցիք բռնեցին նոցա բերին Սկիպիոնի մօտ. նա էլ տարաւ բոլոր բանակը ցոյց տուաւ նոցա և ընծաներով յետ ուղարկեց: Այս որ լսեց Աննիբալ՝ շատ զարմացաւ, ուզեցաւ հաշտութիւն անել և խնդրեց որ Սկիպիոնի հետ տեսնուել: Սկիպիոն համաձայնեցաւ: Այն դարի երկու մեծանուն մարդիկը միմեանց որ տեսան՝ մի քանի բոպէ իրար վերայ զարմացած՝ մնացին անբարբառ: Պայմանների վերայ չկարողացան միաբանիլ, և որոշեցին պատերազմ տալ:

Հետևեալ օրը Զամա քաղաքի մօտ երկու կողմի բանակները պատրաստի դիրք ընդունեցին. օրհասական ճակատամարտն սկսուեցաւ: Երկու կողմն էլ այրաբար ու անձնազոհութեամբ կռուեցին, բայց նոցա ոյժերը շատ տարբեր էին իրարից: Սկիպիոնի զօրքը բաղկացած էր վարժուած, փորձուած ու յօժարակամ կռուողներից, իսկ Աննիբալինը, բացի Իտալիայից հետը բերած մի փոքր գնդից՝ վարձկան ու անփորձ մարդիկ էին: Աննիբալի ո՛չ քաջալերական խօսքերը, ո՛չ անձնական օրինակը չէին ազդում, միայն հին զինուորներն էին նորա հետ միասին յամառութեամբ դիմադրում թշնամուն և մի քանի անգամ յետ մղեցին նորան. բայց նոցանից շատերն էլ ընկան. մօտ 20,000 Կարքեդոնացիք գերի ընկան, միևնոյն չափ էլ մեռան: Աննիբալ տեսնելով որ այլևս ոչինչ հնար չմնաց կռիւը շարունակելու՝ պատերազմի դաշտը թողեց յաղթանակող թշնամու ձեռքը, ինքը յետ քաշուեցաւ:

Կարքեդոնացիք հաշտութիւն խնդրեցին. գոռոզ յաղթողը հաշտութիւն շնորհեց նոցա հետագայ պայմաններով. 1) Կարքեդոնացիք պարտաւորեցան իսպառ ձեռք քաշել Սիկիլիայից. 2) յանձնել իրանց ամբողջ նաւատորմիղը, բացի տասն հատ վաճառականական

նաւերից և տալ բոլոր պատերազմական փղերը, խոստանալով այնուհետև չպահել նորերը. 3) յիսուն տարուան ընթացքում 10,000 տաղանդ (մօտ 14 միլիոն րուբլի) տուգանք վճարել. 4) երբէք ոչ ոքի հետ պատերազմ չսկսել առանց Հռոմայեցւոց գիտութեան, մանաւանդ Հռոմայեցւոց նիզակակից ազգերի հետ. և 5) Կարքեդոնացի պատանդներ ուղարկել Հռոմ։

Երբ պէտքէ ծանր գլխահարկ ժողովէին Կարքեդոնացիներից՝ պատերազմական տուգանքը վճարելու, Կարքեդոնի մէջ ամենքեան լաց էին լինում. մենակ Աննիբալ դառնապէս ժպտում էր և ասում. «Այն ժամանակ պիտի լայիք, երբ փախչում էիք Հռոմայեցւոց առաջ, երբ ձեր զէնքը խլում էին և ձեր նաւերն այրում»։

Այսպիսի մեծագործ յաղթութիւնից յետոյ՝ Սկիպիոն չ՚տեսնուած ու չ՚լսուած փառաւորութեամբ Հռոմ վերադարձաւ. ամեն մարդ փափագում էր որևիցէ կերպով տեսնել Հռոմի հանճարեղ թշնամուն նուաճողի երեսը։ Հռոմայեցիք սքանչացած էին նորա քաջագործութեան վերայ, այնպէս որ ուզում էին մինչև անգամ մինչև մահը հիւպատոսութեան ու իշխանապետութեան իրաւունք տալ նորան. սակայն զգոյշ ու համեստ Սկիպիոն խոհեմաբար մերժեց բոլոր այդ պատիւները և բաւականացաւ միմիայն Ափրիկացի մականուամբ։

4.

ԱՆՆԻԲԱԼԻ ՎԱԽՃԱՆԸ։

Աննիբալ չէր կարող սառն աչքով տեսնել հայրենիքի թշուառութիւնը. նա ձեռք զարկեց ներքին գործերը բարեկարգելու. այստեղ էլ այնքան հմտութիւն ցոյց տուաւ, որքան և զինուորական ասպարիզում։ Ամենից առաջ նա աշխատեց ոչնչացնել ազնուականների ինքնասիրական իշխանութիւնը և վերականգնել Ծերակոյտը. յետոյ կարգի դրաւ ելևմուտքի գրութիւնը. կանոնաւոր տուրքեր նշանակեց և արդէն սովորութիւն դարձած զեղծումները վերցրեց. ջանք արաւ նորէն ծաղկեցնել վաճառականութիւնն ու երկրագործութիւնը։ Բայց նորա հայրենասէր ոգին չէր բաւականանում այս ամենով. դադար չունէր, քանի որ վրէժ չէր հանել Հռոմայեցիներից։ Նա մտածեց նպատակին հասնել օտար տէրութեանց օգնութեամբ։ Այս դիտաւորութեամբ ծածուկ դաշն կապեց Ասորիքի թագաւոր Անտիոքոս Մեծի հետ, որ այն ժամանակ ամենից զօրեղ թագաւորն էր։ Գործն այնպէս կարգաւորել էր Աննիբալ, որ Ասորւոց, Յունաց և Մակեդոնացւոց հետ պէտք է արշաւէին Հռոմի վերայ. Սակայն նորա բոլոր ջանքերն անօգուտ եղան։

Աննիբալի թշնամիքը գիտենալով նորա խորհուրդները՝ յայտնեցին Հռոմայեցւոց. սոքա պահանջեցին Աննիբալին։ Աննիբալ մատնութեան զոհ գնալ, եթէ նախազգուշութեամբ չհեռանար Կարքեդոնից։ Նա մի փոքրիկ նաւակի վերայ, ծպտեալ չորերով, գնաց Ասորիք հասաւ։ Որչափ զարմացաւ Աննիբալ, երբ տեսաւ որ Անտիոքոս մի դանդաղ, անխելք ու փոքրոգի մարդ է. Նա յիրաւի պատերազմ սկսաւ. բայց փոխանակ Աննիբալի խորհրդին համաձայն Իտալիայի վերայ գնալու՝ դատարկ զբօսանքներով ժամանակը կորցրեց. Կատոն զօրավարն այնպիսի սարսափելի ջարդ տուաւ նորան, որ նա գլուխը մոռացած՝ իւր զօրքի խղճալի մնացորդներով մինչև փոքր Ասիա մին փախաւ. Հետագայ տարին Հռոմայեցիք Ասիա էլ մտան և վերջնական հարուածը տուին Անտիոքոսին Մագնեսիայի մօտ (190 թ.). Հաշտութեան ծանր պայմաններից մէկն էլ այն էր, որ Անտիոքոս Հռոմայեցւոց ձեռքը տայ Աննիբալին. Անտիոքոս գոնէ այնքան բարի եղաւ, որ միջոց տուաւ Աննիբալին հեռանալ Ասորիքից։

Աննիբալ փախաւ Հայաստան Արտաշէս կուսակալի մօտ, որը պատուով պահում էր այս մեծանուն զօրավարին և նորա խորհրդով շինեց Արտաշատ քաղաքը։ Մի քանի ժամանակից յետոյ Աննիբալ գնաց Բիւթանիա. Հռոմայեցիք լսեցին այս և Պրուսիոս թագաւորից պահանջեցին Աննիբալին. նա էլ նոցա սպառնալիքներից սարսափած՝ մարդիկ ուղարկեց որ շրջապատեն Աննիբալի տունը և կալանաւորեն։ Այն ժամանակ երևելի դիւցազը չուզելով իւր անողոք թշնամեաց ձեռքն ընկնել, վճռեց ինք զինքը մեռցնել. Նա մատանու ակի տակ թոյն էր պահում. Երբ զինուորուած մարդիկը մօտեցան նորան՝ մատանին հանեց և թոյնը խմեց ասելով. «Ահա ես ինքս վերջ

եմ տալիս այն կեանքին, որ այնչափ ահարկու է Հռոմայեցւոց համար»:

Այսպէս եղաւ վախճանը այդ մեծ տղամարդի, որ իւր բոլոր ձիրքերը, բոլոր զօրութիւնը, բոլոր կեանքը նուիրել էր իւր ապերախտ հայրենեաց փառքին: Միեւնոյն տարին (183) վախճանեցաւ և նորա արժանաւոր ախոյեանը Սկիպիոն Աֆրիկացին, որը նոյնպէս հայրենակիցների անշնորհակալութեան երեսից քաշուել բնակվում էր Հարաւային Իտալիայում իւր կալուածներից մէկի մէջ՝ իբրև աքսորական:

ԺԳ.

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄՆ (168—146).

Երկրորդ Պունիկեան պատերազմները յաջողութեամբ վերջացնելուց յետոյ՝ Հռոմայեցիք աչքները դարձրին դէպի Յունաստան, որ գտնվում էր Մակեդոնական իշխանութեան տակ: Նոցա համար առիթ չէր պակասում պատերազմ սկսելու: Մակեդոնիայի Փիլիպպոս Գ. թագաւորին մեղադրում էին իբրև Յունաստանի նեղիչ և իբրև Աննիբալի երբեմնական դաշնակցի: Փլամինինոս զօրավարը Յունաստան մտաւ և ինք զինքը Յունաստանի ազատութեան դէմ պաշտպան ցոյց տալով Աքէյեան դաշնակցութիւնն իրան գրաւեց: Պատերազմ բացուեցաւ Փարսաղ'ի մօտ. ուր Փիլիպպոս մեծ ջարդ կրեց և հարկադրուեցաւ հաշտութիւն կապել հետևեալ ամօթալի պայմաններով. 1) պարտաւոր էր ճանաչել Յունաստանի անկախութիւնը. 2) զրկուել իւր նաւատորմղից, 3) ոչ ոքի հետ պատերազմ չսկսել, և 4) 400 տաղանդ պատերազմական ծախք վճարել: Յոյները Փլամինինոսին իրանց ազատարար անուանեցին և քիչ էր մնում գրկերի մէջ սեղմելով խեղդեն նորան:

Դորանից յետոյ Մակեդոնացիք մի քանի անգամ փորձ փորձեցին իրանց իշխանութիւնը վերստին ձեռք բերելու, բայց Էմի-

լիոս Պաւլոս (որդի) և Մետելլոս զօրավարների յաղթութիւնները ի դերև հանեցին նոցա ջանքերը:

ԿՈՐՆԹՈՍԻ ԱՒԵՐՈՒՄՆ. 146: Ճշմարիտ է Հռոմայեցիք Յունաստանից վերցրին Մակեդոնական լուծը, բայց սորա փոխանակ կամաց կամաց իրանք հաստատուեցան այնտեղ: Յոյների համար անցեալ փորձերը դեռ դաս չէին եղել: Հռոմայեցւոց զօրքերը հետզհետէ բուն էին դնում Կորնթոսում, Քաղկեդոնում և ուրիշ տեղերում. բայց Յոյներին հաւատացնում էին, թէ երկիրը Մակեդոնացւոց պէս թշնամի ազգերից պաշտպանելու համար, ոչ ոքի մտքումն էլ չէր անցկենում թէ այդ զօրքերը նոցա ազգային շարժումները ճնշելու համար էին նշանակուած: Մի առիթ էր պակաս, որ Հռոմայեցիք բոլորովին տէր դառնան Յունաստանին, և այս առիթը շուտով լոյս ընկաւ: Այդ՝ Յունաստանի ներքին խռովութիւնն էր:—Սպարտան հակառակորդ էր Կորնթոսին. Կորնթոսը զանազան քաղաքներ վերկացրեց Սպարտայի դէմ: Դաւաճան մարդիկ այդ ժամանակ անպակաս էին Յունաց մէջ. նոքա ծածուկ յարաբերութիւններ սկսան Հռոմայեցւոց հետ և հրաւիրեցին նոցա օգնութիւն հասցնելու: Մումմիոս հիւպատոս գնաց Կորնթոսի և նորա դաշնակիցների դէմ. քաղաքն անգթօրէն կողոպտեց, աւերեց ու այրեց: Հինալի ճարտարապետական շէնքերը կրակին զոհ գնացին: Իւր կողոպուտների միջից շատ թանկագին պատկերներ ու արձաններ Հռոմ ուղարկեց. բայց նա այնքան տգէտ էր գեղարուեստի մէջ, ինչպէս և նորա հայրենակիցները, որ ճանապարհ ձգելիս նաւաստիներին պատուիրում էր, թէ. «տեսէք, տղերք, եթէ մի բան կոտրուի կամ կորչի՝ անպատճառ պէտքէ շինէք տեղը դնէք»:

Կորնթոսի բնակիչները և շատ ուրիշ Յոյներ ստրկութեան մատնուեցան: Նոքա Յունաց ճարտարութիւններն ու ուսմունքը տարածեցին Հռոմի մէջ. իսկ այնտեղից տարածուեցան ուրիշ ազգերի մէջ աշխարհիս զանազան կողմերում: Այսպէս, Յոյները իրանց անկախութիւնն ու մեծութիւնը կորցնելուց յետոյ էլ մեծ ազդեցութիւն ունեցան մարդկային ազգի կրթութեան վերայ:

ԺԳ.

ԵՐՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (149—146).

Կատոն Երէց. Սկիպիոն Եմիլիանոս.

Կորնթոսի կործանման տարին՝ կործանուեցաւ և Կարքեդոնը: Հռոմայեցիք դադար չունէին, քանի որ Կարքեդոնը կանգուն էր և Աննիբալի կարգաւորութեանց շնորհիւ դարձեալ ծաղկեալ դրութիւն էր ստացել. ժողովուրդն էլ կարծես նոր ոգի էր առել: Այս ամենը Հռոմայեցւոց մէջ երկիւղ ու նախանձ էր գրգռում:

Այս միջոցին Հռոմի մէջ համարակալ էր Կատոն Երէց, որ հին վարք ու բարքի ու պարզութեան ջերմաջերմ պաշտպանն էր, նորա համար անտանելի էր տեսնել, թէ ինչպէս փոքր առ փոքր շռայլութիւնը, փափկակեցութիւնն ու զուարճասիրութիւնը մտնում է Հռոմայեցւոց մէջ: Նորա կարծիքով Յունական ճարտարութիւնն ու գիտութիւնները փչացնում էին Հռոմի երիտասարդութիւնը: Այս պատճառով Կատոն հուժկու ճառերով յանդիմանում էր Հռոմայեցւոց բարուց փոփոխութիւնը և առաջարկում էր, որ Յոյն ուսուցիչներն ու ճարտասանները դուրս արուեն Հռոմից: Բացի սորանից, յայտնի չէ թէ ինչու, բայց ժողով չէր անցնել, որ այս խստաբարոյ մարդը իւր ճառի վերջում չաւելացնէր. «Ի վերայ այսր ամենայնի, կարևոր եմ համարում Կարքեդոնն աւերել»: Նորա ցանկութիւնը շուտով կատարուեցաւ:

Հակառակի պէս, այդ միջոցին Կարքեդոնին դրացի Նումիդիայի Թագաւոր Մասինիսան, երևի Հռոմայեցիներից գրգռուած, Կարքեդոնի հողերից մի կտոր խլեց: Կարքեդոնացիք վերջին պայմանադրութեան զօրութեամբ իրաւունք չունէին պատերազմ սկսել. ուստի դեսպաններ ուղարկեցին Հռոմ գանգատ անելու: Հռոմայեցիք մի բաւականութիւն չտուին: Դեսպանները նորից գնացին: Վերջապէս Հռոմայեցիք մարդ ուղարկեցին գործը քննելու, սոքա

վճիռ տուին յօգուտ Մասինիսայի: Այն ժամանակ այդ աննշան Թագաւորն աւելի շատացրեց իւր աներեսութիւնը: Կարքեդոնացիք զայրացած՝ չդիմացան և զէնք առին ու պատժեցին Մասինիսային: Հռոմայեցիք էլ այսպիսի մի պատճառանքի էին սպասում. իսկոյն զօրք ուղարկեցին Աֆրիկա, յայտնելով որ դաշինքը բանդուած է: Կարքեդոնացիք սարսափեցան և պատգամաւորներ ուղարկեցին Հռոմ իրանց հնազանդութիւնը ցոյց տալու համար: Հռոմայեցիք 300 հոգի պատանդ պահանջեցին. նոքա տուին: Բայց այսու ամենայնիւ Հռոմայեցւոց զօրքը Սկիպիոն Կրտսերի առաջնորդութեամբ, դուրս եկաւ Աֆրիկայի ափը: Կարքեդոնացիք հրաման ստացան յանձնել իրենց բոլոր զէնքերն ու պատերազմական պաշարները: Այս էլ կատարեցին: Հիմա էլ հրաման եկաւ, որ բնակիչները քաղաքից դուրս գան մի ուրիշ տեղ բնակութիւն ձգեն, և այնպէս որ երբէք մղոնից աւելի մօտիկ չլինին ծովին: Բայց այս արդէն չափից դուրս անամօթութիւն էր. Կարքեդոնացիք կատաղեցան, վերջին ոյժերը ժողովեցին և վճռեցին որ գէթ փառքով մեռնին:

Քաղաքը գեղեցիկ դրութեամբ շինուած էր մի փոքրիկ թերակղզու վերայ և զօրեղ ամրութիւններ ունէր: Նաւամատոյցը փակեցին, որ Հռոմայեցւոց նաւերը ներս չմտնեն. ցամաքային զօրքն այնպէս դասաւորեցին, որ քաղաքը կարող լինէր միշտ կենսական պաշարներ ստանալ անխափան: Մեծ ու փոքր առ հասարակ սկսան գործի կենալ. տների երդիկները քանդում էին, որ գերաններից նաւեր շինեն. հաւաքեցին գիզեցին քաղաքի մէջ գտնուած բոլոր մետաղեղէնը, մինչև անգամ ոսկեղէն ու արծաթեղէն, որ զէնքեր շինեն: Ամէն տեղ փողոցներում, տներում, տաճարներում՝ մուրճերի ձայն էր լսվում. մէկ տեղ սրոցում էին, միւս տեղ կռանում: Կանայք իրանց հիւսերը կտրատում էին, որ աղեղների համար լար պատրաստեն: Ամբողջ երկու տարի Կարքեդոնը դիմադրեց Հռոմայեցիներին: Շատ աշխատեց ազնիւ Սկիպիոնը զանազան հնարներով հաւանեցնելու, որ քաղաքացիք անօգուտ ընդդիմադրութիւն չանեն. բայց Կարքեդոնացիք վճռել էին, որ հայրենի-

քի կորուստը իրանց էլ կորուստ լինի։ Վերջապէս Հռոմայեցիք կատաղաբար յարձակեցան քաղաքի պարիսպների վերայ և ներս թափուեցան։ Կարքեդոնացիք դարձեալ անձնատուր չեղան. նոքա աչքերն արիւնով լցուած Հռոմայեցւոց վերայ խիզախեցին և ցոյց տուին աշխարհին, թէ ինչքան դժուար է մի ազատ ազգի համար իւր հայրենի երկիրը թողուլ. ամբողջ վեց օր անընդհատ նոքա ջարդվում ու ճանկռտվում էին թշնամիների հետ, ինչպէս կատաղի գազաններ. բոլոր փողոցներն ու հրապարակները լցուած էին արիւնլուայ դիակներով։ Վերջապէս եօթներորդ օրը, երբ այլևս ոյժ չմնաց կռուելու՝ տները կրակ տուին և կանանց ու զաւակների հետ միասին մէջը թափուեցան, լաւ համարելով այնտեղ նահատակուել, քան թէ պատելի թշնամուն ստրուկ լինել։ Կարքեդոնի կէս միլիոն բնակիչներից միայն 50,000 հոգի Հռոմայեցւոց ձեռքն ընկան։ Գերիների թւումն էր և Ասդրուբալ զօրավարը իւր ընտանիքով։ Նա Սկիպիոնի ոտներն ընկաւ և փոքրոգութեամբ շնորհ էր խնդրում. այս տեսնելով՝ նորա կինը արհամարհական երգիծանքով մնաս բարեաւ ասաց ամուսնին և երեխաները գրկած՝ աշտարակի գլխից բոցերի մէջը թռաւ։ Մեծահոգի Սկիպիոնի սիրտը կտրատվում էր այս զարհուրելի տեսարաններից. նա լաց եղաւ և խորհում էր, որ մի օր էլ իւր հայրենիքը կարող է նոյն վիճակին արժանանալ։

Այսպէս կործանեցաւ հզօր Կարքեդոնը, ջնջուեցաւ աշխարհի երեսից, և այն աշխատասէր ու յառաջադէմ ազգի տեղը բուն դրին վայրենի, աւազակ ու բարբարոս ցեղեր։

ԺԵ

ՀՌՈՄԻ ՆԵՐՔԻՆ ՏԿԱՐՈՒԹԻՒՆԸ.

Գրակքեանց մրցումները (133—121 Թ.)

Այն ինչ Հռոմէական հասարակապետութիւնը անդիմադրելի արագութեամբ տարածում էր իւր իշխանութիւնը դէպի զանազան կողմեր, նորա ներքին ոյժերը առաւել և առաւել թուլանալու

վերայ էին։ Արտաքին ձեռնարկութեանց մէջ անհաւատալի յաջողութիւնները՝ դժբաղդութիւն եղան նորա համար, իսկ չափազանց ծաւալումը՝ պատճառ դարձաւ նորա անկման։ Նախուց հին պարզութիւնը և սահմանադրական սխրագործութիւնները, որոնց շնորհիւ միայն Հռոմը հասել էր այն մեծափառ բարձրութեան՝ անհետացան ու կորան, երբ Հռոմայեցիք ծանօթացան արևելեան ազգերի զեղխութեան հետ։ Նուաճած երկիրներից ստացած անհուն գանձերն ու հարստութիւնները Հռոմի քաղաքացիներին միջոց տուին իրանց ամեն տեսակ հաճոյքները լցուցանել։ Կինկինատոսի և Կուրիոսի յետնորդներն ամօթ էին համարում երկրագործութեամբ պարապելու։ Աշխատութիւնը յանձնում էին ստրուկներին, իսկ իրանք զբօսանաց ու զուարճութեանց յետևից ընկնում։ Ընտանեկան կեանքը կորցրեց իւր վսեմ նշանակութիւնը, օրէնքը՝ իւր պարտաւորական ոյժը. կրօնքն այլևս մարդկանց սրտի ու մտքի վերայ ոչինչ բարերար ազդեցութիւն չէր անում։ Կառավարութիւնն ընկաւ ամբարտաւան, փառասէր ու ագահ մարդկանց ձեռքը։ Նոր տոհմականներն աշխատում էին տէրութեան բոլոր օգուտներն իրանք յափշտակել. ժողովրդի ամենամեծ մասը ոչ հող ունէր, ոչ ապրուստի միջոց։ Այսպիսի դրութիւնը կարող էր հասարակապետութիւնը դէպի կորուստ տանել. այս պատճառով Հռոմում գտնուող մի քանի խելացի մարդիկ մասամբ կարեկցութիւնից, մասամբ հայրենիքի վերայ ունեցած սիրուց ստիպուած՝ ողորմելի ժողովրդին պաշտպան դուրս եկան։

Ազնիւ մօր զաւակներ.

Ժողովրդի այդ ճշմարիտ բարեկամների թուին պատկանում էին և երկու եղբարք՝ Տիբերիոս և Կայոս Գրակքեանք։ Նոցա մայր Կոռնելիան, հռչակաւոր Սկիպիոն Աֆրիկացու դուստրը, ամենազնիւ կանանցից մէկն էր։ Նորա տասներկու զաւակներից միայն այդ երկու որդիքն էին մնացել, և նա իրաւամբ կարող էր պարծենալ նոցանով, վասն զի բնութեան լաւագոյն ձիրքերով զարդարուած էին նոքա։ Կոռնելիան նոցա համար երևելի ուսուցիչներ

հրաւիրեց և դաստիարակեց նոցա ընդունակութիւնները. կուզէր որ իւր որդիքը Սկիպիոնի սխրագործութեանց հետևող լինին: Մի անգամ Հռոմայեցի մի անուանի տիկին ցոյց տալով նորան իւր թանկագին իրեղէնները ու փայլուն զարդերը՝ խնդրեց որ նա էլ իրանը ցոյց տայ: Կոռնելիան կանչեց իւր որդւոց և ցոյց տալով նոցա վերայ՝ ասաց. «Ահա իմ բոլոր գանձերն ու գոհարեղէնքը»:

Երկու եղբայրն էլ մէկ նպատակի էին դիմում բայց զանազան ուղղութեամբ: Տիբերիոս համբերող, հանդարտ ու համեստ էր. իսկ Կայոս՝ վառվռուն ու վճռական: Երկուքն էլ պերճախօս էին. բայց մեծ եղբայրը համոզում ու շարժում էր, իսկ կրտսերը՝ կրակոտ խօսքերով յափշտակում էր լսողների սրտերը: Տիբերիոս պարզութիւն ու առանձնութիւն էր սիրում. Կայիոս՝ փառաճոխութիւն ու բացութիւն: Երկուքն էլ արդարութեան և իրաւունքի ջերմաջերմ պաշտպանն էին:

ՏԻԲԵՐԻՈՍ ԳՐԱԿԽՈՍ: Տիբերիոս 133 թ. ցեղապետ ընտրուեցաւ. Նորա առաջին հոգսն եղաւ հարստահարուած ժողովրդի վիճակը թեթևացնել: Նա պահանջեց որ Լիկինիոսի ագարակային օրէնքը վերահաստատուի և ամեն Հռոմայեցի հող ունենայ: «Այս ինչպէս բանէ, ասում էր նա, վայրենի անասունները որջ ունին իրանց համար, իսկ այն քաղաքացիք որ արիւն են թափել Իտալիայի ազատութեան համար, լուսից ու օդից աւելի ոչինչ բան չունին. ուրիշները նոցա աշխարհի տէրն են կանչում, իսկ նոքա մի թիզ երկիր չունին»:

Այսպէս ահա, Տիբերիոս պահանջումէր որ ամեն քաղաքացի միայն 500 արտավար հող ունենայ և աւելին դարձնէ, որ բաժանուի չքաւորներին. որպէս զի կալուածատէրների կողմից հակառակութիւն չծագի՝ առաջարկեց որ 250-ական արտավար էլ տրուի նոցա անդրանիկ որդւոցը: Սակայն հարուստները ամենևին չէին համաձայնում նորա իրաւացի առաջարկութեանը. նոքա գրաւեցին Օկտաւիոս ցեղապետին, որ ժողովի մէջ «արգելում եմ» ասելով խափանէ Տիբերիոսի առաջարկութիւնը: Որքան աշխատեց Տիբերիոս համոզել ընկերին, որ կարեկցութիւն ունենայ թշուառ ժողովրդի վիճակի վերայ, բայց իզուր: Այն ժամանակ Տիբերիոս գոչեց, «Ով Հռոմայեցիք, հեռացրէք պաշտօնից այս ցեղապետին, որ իւր իրաւունքը չարաչար է գործ ածում»: Օկտաւիոս զրկուեցաւ իշխանութիւնից: Տիբերիոսի առաջարկութիւնն ընդունուեցաւ և պատրաստուեցան հողերը բաժանել:

Այդ միջոցին Տիբերիոսի ցեղապետութեան ժամանակը լրացաւ. նա գիտէր, որ առանց իշխանութեան գործ չի կարող յառաջացնել՝ կամեցաւ նորէն ցեղապետ ընտրուել. իսկ հարուստներն որոշեցին բռնութեամբ արգելել նորա ընտրութիւնը: Հասաւ նշանակած օրը. Տիբերիոս իւր մտերիմ բարեկամների հետ Կապիտոլիոն եկաւ: Ծերակոյտն երբ տեսաւ որ ժողովուրդը ձայն է տալիս նորա ընտրութեան համար՝ պահանջեց հիւպատոսից, որ երկրի մէջ կարգ պահպանէ. այս կընշանակէր թէ զէնք պէտքէ գործ դնէ. բայց նա ասաց. «Ես չեմ կարող անմեղ արիւն թափել»: Այն ժամանակ Նասիկա քրմապետը գոչեց. «Հիւպատոսը տէրութեան դաւաճան է. ով որ ուզում է Հռոմն ազատել՝ թող գայ յետևիցս»: Բոլոր Ծերակուտի մարդիկը հետևեցին նորան. նոքա առաջուց զինուորուած պատրաստուած էին. շրջապատեցին անզէն ժողովրդին ու սրի բերան տուին: Տիբերիոս և քաղաքացիներից 300 հոգի սպանուեցան. նոցա մարմինները փողոցներով քարշքաշեցին և վերջապէս Տիբերիս գետը ձգեցին:

ԿԱՅԻՈՍ ԳՐԱԿԽՈՍ: Ազնուականների բոլոր ջանքն այն էր, որ հողերը բաժանելու վճիռը խափանեն: Ամենից աւելի երկիւղ ունէին Կայիոս Գրակքոսից. ուստի Հռոմից նորան հեռացնելու համար՝ պաշտօնով Սիկիլիա ուղարկեցին: Բայց պաշտօնի ժամանակը լրացաւ թէ չէ՝ Կայիոս վերադարձաւ Հռոմ և աշխատեց որ ցեղապետ ընտրուի. իզուր եղան մօր աղաչանքները մտադրութիւնից յետ պահելու նորան. սպանած եղբօր պատկերը գիշեր ցերեկ աչքի առաջն էր. նա կամենում էր Տիբերիոսի սկսածն ինքն աւարտել:

Ժողովուրդը ցեղապետ ընտրեց նորան, և ընտրութեան օրն այնչափ Իտալացիք եկան դիզուեցան Մարսիան դաշտի մէջ, որ էլ

տեղ չլինելով՝ շատերը տների վերայից էին ձգում իրանց քուէները: Եղբօր յիշատակը, ժողովրդի կարիքները, այնքան ապարդիւն ջանքերը՝ բորբոքում էին նորա սիրտը, և երբ խօսում էր՝ նորա հայեացքն ու ձայնն այնպիսի ուժգնութիւն էին ստանում, որ նոյն իսկ թշնամիները երբեմն արտասւում էին: Նա պահանջեց և ընդունել տուաւ, 1) որ ագարակային օրէնքը հաստատուի. 2) բոլոր իտալացիք քաղաքակցութեան իրաւունք ունենան, 3) Կապուա, Տարենտոն և Կարքեդոն քաղաքները նորէն շինուին, և 4) Ծերակոյտը իրաւունք չունենայ քաղաքական յանցաւորներին դատել: Ժողովրդեան ներկայացուցչի այսպիսի պահանջները սարսափեցրին տոհմականներին. նոքա սկսան հնարներ մտածել որ մի կերպով վերցնեն նորա կեանքը:

Կայիոս զբաղուած էր փառաւոր շինութիւններ անել տալով. աղքատ ժողովուրդին բանեցնում էր ճանապարհներ բանալու ու դաշտեր մշակելու վերայ, որպէս զի այս կերպով չքաւորները վարձ ստանան ու ապրուստ անեն. նուաճած երկրներում նոր քաղաքներ էր հիմնարկում, որ տնանկ քաղաքացիք գնան բնակուեն: Երբ Կայիոս այսպիսի կարգադրութեանց համար գնացել էր Աֆրիկա, թշնամիներն ամեն հնար գործ դրին, որ նա երկրորդ անգամ ցեղապետ չընտրուի. նոքա ժողովրդին համոզում էին թէ Կայիոս ուզում է բռնաւոր դառնալ. այսպէս շատերին ընծաներով ու խոստմունքներով իրանց կողմը գրաւեցին: Կայիոս վերադարձաւ. ցեղապետութեան ժամանակը լրացել էր. նա աշխատում էր նորից ընտրուիլ. բայց զգաց որ շատերը երես էին դարձրել իրանից: «Ո՞ր դիմեմ ես, ասում էր նա վշտագին,—Կապիտոլի՞ն.—բայց նա դեռ շաղախուած է եղբօրս արիւնով: Տո՞ւն.—այնտեղ մօրս եմ տեսնում արտասուքն աչքին: Քաղաքացի՛ք, ես ձեր բարեկամն եմ. ինչո՞ւ չէք ուզում պաշտպանել ինձ»:

Հասաւ ընտրութեան օրը: Ազնուականները զինուորուեցան և զինուորեցին իրանց մերձաւորներին ու ստրուկներին. Կայիոս Գրակքոսի ընկերներից շատերն էլ նոյնն արին: Ամբողջ գիշերը Կայիոսի տան առաջ անցուցին նոքա: Առաւօտեան դաշոյնը կապած և

վերարկուն ձգած՝ դուրս եկաւ Կայիոս տանից: Դռան չէմքում կինը մանկանց ձեռքից բռնած ծունկ չոքեց նորա առաջ և աղաչում էր չգնալ: Բայց նա ականջ չարաւ և գնաց ժողով: Ծերակոյտը ժողովից առաջ ասաց հիւպատոսին. «Հիւպատոսը պարտաւոր է հսկել, որ տէրութեանը վնաս չհասնի»: Զինուորուած քաղաքացիներն առած՝ հիւպատոսը գնաց Աւենտինեան լեռը, ուր հաւաքուած էր ժողովուրդը: Այն տեղ արիւնահեղ կռիւ բացուեցաւ: Կայիոսի կուսակիցների մեծ մասը ջարդուեցան, մնացածներն սկսան փախչել: Յուսահատութեան մէջ, ժողովրդի ապերախտութեան ու փոքրոգութեան վերայ զայրացած՝ Կայիոս ուզում էր սուրը կուրծքը խրել. բայց մօտը մնացած վերջին երկու ընկերները բռնեցին փախցրին: Սակայն թշնամիքը վազում էին նոցա յետևից: Ընկերներից մէկը՝ Պոմպոնիոս՝ քաղաքի դռների առաջ ճանապարհը կտրեց կանգնեց և անընդհատ հարուածներով թշնամիների առաջը պահում էր, որ միջոց տայ Կայիոսին փախչելու. շուտով անկաւ նա և սպանիչները նորա դիակի վրայով վազեցին Կայիոսի քամակից: Տիբերիսի կամրջի վերայ միւս ընկերը՝ Լիտորիոս՝ նոյնպէս մինչ վերջին շունչը դիմադրեց և յետոյ սուրը կուրծքը խրելով գետը նետուեցաւ: Կայիոսի ոյժը հատել էր արդէն. ամեն տներից ձայն էին տալիս. «շտապի՛ր, շտապի՛ր», բայց մէկը չկար որ օգնութիւն հասցնէր նորան: Նորա մէկ հաւատարիմ ծառան էր մնացել միայն. Կայիոս խնդրեց որ մեռցնէ իրան, որովհետև ինքը զինաթափ էր եղած: Ծառան արցունքն աչքերին կատարեց նորա խնդիրը և յետոյ սպանեց ինքզինքն էլ: Այսպէս վերջացրեց իւր կեանքը Կայիոս Գրակքոս, Հռոմի ցեղապետներից ամենաերևելին:

Նորա հետ միասին սպանուեցան 3000-ից աւելի քաղաքացիներ. նոցա ստացուածքը գրաւեց գանձարանը, հայրենեաց թշնամի նախատական անունը տուեն նոցա և արգելեցին այրիներին ու որբերին սուգ հագնել նոցա համար:

Մի քանի տարից յետոյ ժողովուրդը Գրակքեան եղբարց համար արձան կանգնեց և սրբացրեց նոցա անկած տեղերը: Նոցա

մօր համար նոյնպէս արձան շինեցին այսպիսի վերնագրով. Կոռնելիսա մայր Գրակքեանց։

Ուշ հասկացաւ Հռոմի ժողովուրդը թէ ինչ մեծ կորուստ ունեցաւ երևելի զօրապետների մահուամբ։

ԺԶ.

ՅՈՒԳՈՒՐԹԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ (111—105).

Մարիոս.

1.

Հռոմ շահասիրութեան մէջ ընկղմուել էր. փողի ուժով ամեն տեսակ ամօթալից գործեր կատարվում էին։ Առաքինութեան այսպիսի անկման ամենալաւ օրինակը երևում է Յուգուրթայի գործի մէջ։

Մասսինիսայի տեղ Նումիդիայում թագաւոր էր նստել Միկիպսա, որ մեռնելու ժամանակ թագաւորութիւնը յանձնեց իւր Հիեմպսալ ու Ադերբալ որդւոցն և Յուգուրթա եղբօրորդւոյն։ Այս վերջինը քաջ ձիաւոր ու ճարտար որսորդ էր. միշտ առիւծների հետ էր կռվում։ Այս խորամանկ Աֆրիկացին ծառայած լինելով Հռոմայեցւոց զօրքի մէջ՝ լաւ էր ճանաչում նոցա զօրավարների շահասիրութիւնը և կասկած չունէր որ նոցա ձեռնտուութեամբ կարող է միայնակ գրաւել Նումիդիայի թագաւորութիւնը։ Նա դաւաճանութեամբ սպանեց Հիեմպսալին, իսկ Հռոմի Ծերակուտի մէջ այդ առթով բարձրացած ձայներն ոսկւով լռեցրեց։ Դորանից յետոյ մի նոր խարդախութեամբ սպանեց Ադերբալին։ Ժողովուրդը զայրացաւ և պահանջեց որ Յուգուրթան պատժուի։ Բայց նորա վերայ պատերազմ ուղարկուած հիւպատոսը Յուգուրթայի ոսկւով կուրացաւ և հաշտութիւն կապելով յետ եկաւ։ Այն ժամանակ ժողովուրդն այնպէս սաստիկ բարկացաւ որ Յուգուրթան իսկոյն Հռոմ կանչուեցաւ։ Նա գրպանները ոսկւով լիքը Հռոմ եկաւ և գործն այնքան ապահովեց, որ մինչև իսկ Հռոմի մէջ յանդգնեցաւ վարձկան սպանչի ձեռքով մեռցնել Նումիդիական գահի ժառանգներից մէկին ևս, որ Հռոմ էր եկել իւր իրաւունք-

ները յայտնելու։ Այսպիսի չարագործութիւնը չափից դուրս գրգռեց ժողովրդին. նորան հրամայեցին դուրս գալ Հռոմից, որովհետև նորան խոստացել էին անվնաս յետ դարձնել։ Ելաւ Յուգուրթան Հռոմից այսպէս ասելով. «Շահասէ՛ր քաղաք, քեզ էլ գնելու համար մի գնող է պակաս միայն»։ Նորա յետևից գնաց և հիւպատոսը հռոմէական զօրքով. բայց Յուգուրթան չարաչար ջարդեց նորան։

Այն ժամանակ միայն Հռոմայեցիք սկսան լուրջ ուշք դարձնել և նշանակել քաջ ու անկաշառելի Մետելլոս հիւպատոսին։ Երբ սա արդէն շատ նեղի էր ձգել Յուգուրթային, Մարիոս, նորա օգնականը, որ շատ փառասէր, բիրտ ու սրտոտ մարդ էր, գնաց Հռոմ, Մետելլոսի գործողութիւնները պարսաւեց և խոստացաւ որ եթէ զօրավարութիւնն իրան յանձնեն՝ Յուգուրթային շուտով կ՚սպանէ կամ կ՚բռնէ։ Ուզածը յաջողեցաւ. նորան հիւպատոս նշանակեցին և զօրապետութիւնն իրան յանձնեցին։ Նորան օգնական նշանակուեցաւ Սիւլլա, ազնուական, խելօք և փառասէր երիտասարդը։

Մարիոս ճարտարութեամբ ու արագութեամբ Յուգուրթային շատ նեղը լծեց. վերջինս ճարահատած փախաւ Մաւրիտանիայի Բոկքոս թագաւորի մօտ, որ իւր աներն էր։ Սիւլլան կարողացաւ համոզել Բոկքոսին որ Յուգուրթային իրանց ձեռքը տայ, որի փոխարէն նա ստացաւ Նումիդիայի մի փոքր մասը. իսկ մեծ մասը Հռոմի նահանգ դարձաւ։

Մարիոս Յուգուրթային շղթայակապ իւր կառքի յետևից ձգած՝ մեծ յաղթանակով Հռոմ մտաւ. բոլոր ժողովուրդը բարձրաձայն ծաղրում էին թագաւորին, մինչև որ նա ամօթից խելքը կորցրեց։ Մութ ու խոնաւ մի բանտի մէջ դրին Յուգուրթային։ Վեց օրից յետոյ այնտեղ մեռաւ նա։

2.

ԿԻՄԲՐԱՑԻՔ ԵՒ ՏԵՒՏՈՆԵԱՆՔ.

Դեռ նոր Յուգուրթայի պատերազմից պրծած՝ գոյժ հասաւ

Հռոմ, թէ հիւսիսային կողմից՝ Գերմանիայից և Գալլիայից՝ Հռոմի նահանգներն են մտել վայրենի ցեղեր՝ Կիմբրացիք և Տևտոնեանք: Գալլերի նման սոքա էլ դէպի հարաւ էին արշաւում, տանելով իրանց հետ կանայքը, երեխայքը և բոլոր ունեցածները: Սարսափ տիրեց Հռովմայեցւոց վերայ և այս առաջին անգամն էր, որ ո՛չ ոք չէր ցանկանում հիւպատոս ընտրուիլ: Ամենքի աչքը Մարիոսի վերայ դարձաւ. նա երեք տարի իրար վրայ հիւպատոս ընտրուեցաւ և պատերազմում էր աչարկու վայրենիների հետ: Սոքա բարձրահասակ, ճաղկադէմ ու գազանանման մարդիկ էին. վրաները ծածկած էին գազանների մորթով և գլուխներից ցցած վայրենի եզների եղջիւրներ: Մարիոսի զօրքը դող զգաց սոցա տեսնելիս: Մարիոս հրամայեց որ մի քանի օր ամենևին բանակից դուրս չգան, որքան էլ թշնամին գրգռելու լինի նոցա. ուզում էր որ զօրքը դեռ մինչև վարժուի և թշնամեաց ահռելի կերպարանքին ու վայրենական աղաղակներին ընտելանայ: Նոցա թագաւորը Տևտոբոդ յաղթահասակ ու զօրեղ մարդ էր, մէկ թռչելով կողք կողքի կանգնած վեց ձիու վրայից անցնում էր: Երբ տեսան որ Հռոմայեցիք պատերազմ չեն սկսում՝ բանակը հաւաքեցին ու խաղ կանչելով ճանապարհ ընկան դէպի հարաւ. Հռոմայեցիներին էլ ծաղրում էին թէ՝ «Հռոմ ենք գնում, բան չունի՞ք ձեր տներն ուղարկելու»:

Մարիոսն էլ հենց այդ էր ուզում. Տևտոնեանց յետևից ընկաւ և Ռ․ գետի մօտ երկու յարձակմամբ զարհուրելի կոտորած տուաւ նոցա: Երբ նա մտաւ Տևտոնեանց բանակը՝ կանայք կացինները ձեռքին պաշտպանվում էին առիւծի քաջութեամբ. երբ ճարները կտրեցաւ՝ երեխաներին սպանեցին, իրանք էլ իրանց երկայն հիւսերովը խեղդոտուեցան մեռան:

Սակայն վտանգը դեռ բոլորովին չէր անցած. Կիմբրացիք արդէն մտել էին Իտալիա Նորիկեան Ալպեանց վրայից, իրանց ահագին փայլուն վահանների վերայ սահելով: Կատուլոս հիւպատոսը նոցա առաջը գնաց և Ադիջէի վերայ կամուրջ շինեց, մօտը բանակ կազմեց և սպասեց. նոքա էլ ծառ, փայտ, քար գետի

հունը ցրին անցկացան: Երկոքեան հիւպատոսները ջարդեցին ոչնչացրին Կիմբրացւոց զօրքը Վերոնայի մօտ (101 թ.): Այստեղ էլ Կիմբրացւոց կանայք կատաղաբար կռուեցին. վերջը երբ այլևս յոյս չէր մնացել, երեխաները կառքերի ու անասունների ոտքի տակն ածեցին և իրանք իրանց սպանեցին: Բարբարոսներից շատ քչերը փրկուեցան կոտորածից. նոքա էլ գերի ընկան Մարիոսի ձեռքը: Հռոմի ժողովուրդը այդ բարձրահասակ հսկաների վերայ նայելիս և՛ զարմանք էր զգում և՛ երկիւղ: Ամենից աւելի հիացած էին մնացել Տևտոբոդի վերայ. բոլոր կալանաւորների միջից աչքի էր ընկնում նա սիգալուէն ու գոռոզ հայեացքովը: Այս յաղթութիւններովը Մարիոս համարեա պաշտելի դարձաւ ժողովրդին:

3.

ՊԱՏԵՐԱԶՄ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԷՄ.

Հազիւ հազ ազատուեցաւ Հռոմը բարբարոսների յարձակմունքից՝ հիմի էլ ներքին խռովութիւնները բարձրացան Իտալիայի մէջ: Դաշնակից քաղաքները, որ պատերազմների ժամանակ Հռոմի հետ հաւասար ծանրութիւն էին տանում, քաղաքակցութեան իրաւունքը պահանջեցին, ինչպէս որ վաղուց արդէն խոստացուած էր իրանց: Դրուսոս ցեղապետը եռանդով պաշտպանում էր դաշնակիցների օգուտը. բայց պատրիկների թելադրութեամբ նա ծածուկ սպանուեցաւ իւր տան մէջ: Այն ժամանակ արիւնահեղ պատերազմ բորբոքեցաւ, որ չորս տարի տևեց և մեծ թշուառութեանց պատճառ եղաւ. Սիւլլան երկու անգամ վճռական յաղթութիւն արաւ և ձեռքն ընկած մի քանի հազար գերիներին անգթաբար կոտորել տուաւ: Վերջապէս խաղաղութիւն եղաւ, և Ծերակոյտը տուաւ իւր դաշնակիցներին պահանջած իրաւունքների մեծագոյն մասը:

4.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԱՐԻՈՍԻ ԵՒ ՍԻՒԼԼԱՅԻ ՄԷՋ.

Դաշնակիցների դէմ պատերազմը դեռ նոր էր վերջացել,

Հռոմի վերայ մի փոթորիկ բարձրացաւ արևելքում: Պոնտոսի թագաւոր Միհրդատը, Մեծին Տիգրանայ քեռայրը, զայրացել էր Հռոմայեցւոց դէմ և Աննիբալի նման երդուել էր վրէժխնդիր լինել նոցանից, որովհետև Հռոմայեցի ասպետներն արձակ համարձակ կողոպտում էին Փռիւգիայի քաղաքները, որ Արտաշէս Մեծի ժամանակ նորա իշխանութեանն էր յանձնուած: Միհրդատ շահելով Հռոմի ներքին խռովութիւններից՝ բոլոր Փոքր Ասիային տէրեց մի օրուան մէջ. հրամայեց որ տիրած քաղաքների մէջ ինչքան Հռոմայեցի կար՝ բոլորին սրի քաշեն: Երբ այս կոտորածի գոյժը Հռոմ հասաւ՝ խիստ վճռեցին պատերազմ բանալ. հարցը նորանումն էր միայն թէ ում զօրապետ նշանակեն—Մարիոսին թէ Սիւլլային: Ընտրութիւնը Սիւլլային ընկաւ, որ դաշնակիցների պատերազմի մէջ ցոյց էր տուել իւր ընդունակութիւնը և հիւպատոս էլ էր ընտրուել: Այն ժամանակ այդ երկու ախոյեանների մէջ եղած ատելութիւնը աւելի բորբոքեցաւ: Դեռ նոր էր հասել Սիւլլան իւր բանակը, որ ճանապարհ ընկնի, լսեց որ Մարիոս ռամիկների օգնութեամբ ջնջել է տուել Ծերակուտի վճիռը և ինքն է զօրապետ նշանակուել: Այս որ լսեց Սիւլլան՝ փոխանակ զօրքը Մարիոսին յանձնելու՝ առաւ ուղղակի Հռոմի վերայ գնաց: Ոչ ոք չկարողացաւ ընդդիմադրել նորան: Մարիոս հարկադրուեցաւ փախչել և թշնամու ձեռքը չընկնելու համար եօթանասնամեայ ծերունին փախաւ թագնուեցաւ Մինտուրնին մօտիկ եղեգնուտի մէջ: Հալածողները գտան նորան ճահճի մէջ խրուած. Մինտուրնի քաղաքապետը բանտարկեց նորան: Մի Գալլիացի ստրուկ ուղարկեցին, որ բանտի մէջ գլխատէ նորան. Մարիոս բարկացայտ աչքերը տնկեց նորա վերայ և գոչեց. «Թշուառական, դու պէտք է Կայոս Մարիոսին սպանես»: Բարբարոսը սարսափած՝ թուրը ձգեց փախաւ: Քաղաքապետն էլ չուզելով այդպիսի մեծ զօրապետի արիւնը մտնել՝ ծածուկ Աֆրիկա փախցրեց նորան: Մեծամեծ վտանգներից ազատուելով Մարիոս վերջապէս Կարքեդոն հասաւ. նայում էր կործանեալ քաղաքին՝ իւր վիճակի կործանումն էր մտաբերում և աշխարհիս փառաց ունայնութեան վերայ էր խորհում:

Այն միջոցին, երբ Մարիոս թափառում էր աննպատակ, Սիւլլան քաղաքը Կիննասին յանձնեց՝ ինքը գնաց Միհրդատի դէմ: Սակայն Կիննաս իւր իշխանութիւնից շահուելով՝ Սիւլլայի կարգադրութիւնները քանդեց և սկսաւ նորա կուսակցութեանը չարաչար նեղել. այս պատճառով հիւպատոսութեան պաշտօնից ձգեցին նորան և քաղաքից դուրս արին: Կիննաս վրէժխնդրութեամբ վառուած՝ դաշնակիցներից ու ստրուկներից մի ահագին խումբ գլխին հաւաքեց և Աֆրիկայից կանչեց իւր բարեկամ Մարիոսին: Թափառականն շտապեց եկաւ. Հռոմ ահ ու դողի մէջ էր. նա արիւնածարաւ գազանի պէս պտըտում էր փողոցներով և իւր մէկ խօսքը, մէկ նայուածքը բաւական էր մեծամեծ քաղաքացիների գլուխը թռցնելու համար. աւազակների խումբը անարգել մտնում էր նորա հակառակորդների տները, կողոպտում, տակն ու վրայ անում: Այս անողոք սպանութիւններով էլ սիրտը չէր հովանում. նա մի գազանական բաւականութիւն էր զգում, երբ սպանուած ազնուականների գլուխները բերում շարում էին իւր առաջև: Հինգ օր հինգ գիշեր շարունակւում էր Հռոմի մէջ կոտորածն ու կողոպուտը: Չարագործը եօթներորդ անգամ հիւպատոս ընտրուեցաւ: Ամեն մարդ նզովում էր նորա անունը և Աստուած էր աղաչում, որ շուտով մահը տանի նորան: Այս բաների համբաւը երբ Սիւլլային հասաւ՝ շտապեց մի կերպ հաշտութիւն արաւ Միհրդատի հետ և Հռոմ վազեց: Մարիոս որ լսեց Սիւլլայի մօտենալը՝ մի գիւղ քաշուեցաւ. այնտեղ երկիւղի տագնապը, արբեցութիւնը և ջերմ ու տենդը մահուան անկողինը գլորեցին ուժասպառ ծերին և Հռոմն ազատեցին այդ պատուհասից: Սակայն աւելի մեծ չարիքը դեռ առաջն էր:

Սիւլլան մտաւ Հռոմ, սկսուեցաւ նոր կոտորած. ամեն փողոցից լացի ու կոծի ձայներ էին լսւում. կոպիտ զինուորների վայրենական աղաղակները, սրերի շկահիւնը սոսկումն տարածեց բոլոր քաղաքի մէջ: Մարիոսի կուսակիցներից 8000 հոգի բռնուած էին և թողութիւն էին խնդրում. Սիւլլան հրամայեց որ ամենքին էլ գլխատեն Կրկէսի մէջ. այն ինչ այդ տարաբաղդներին վարում

էին գլխատման տեղը՝ Սիւլլան Ծերակոյտը խորհրդի էր կանչել մօտակայ տաճարի մէջ: Յանկարծ ճառախօսութեան ժամանակ մեռնողների ողբաձայն բացագանչութիւնները հնչուեցան. ծերերը սարսափելով վեր թռան տեղերից. «Ո՛չինչ, ոչի՛նչ, ասաց սառնութեամբ արիւնարբու գազանը, անհանգիստ մի՛ լինիք, այդ մի խումբ խռովարարներ են, որոնց ես հրամայել եմ գլխատել»: Նա ամեն օր ցուցակներ էր շինում (պրօսկրիպսիօն) սպանելի մարդկանց և յանձնում էր պատուէրը կատարելու. ամեն կտրուած գլխի համար 2000 մանէթ վարձ էր նշանակել. այս շատացրեց քաղցած ու թափառական սպանիչների թիւը: Ժամ չէր անցնում, որ չգային նորա մօտ իրանց արիւնոտ աշխատութեան վարձն ստանալու: Միևնոյնը կատարվում էր Իտալիայի ուրիշ քաղաքներում ևս: Նորա բարեկամներից մինը վստահացաւ հարցնելու. «Ո՞ւմ պէտք է վերջապէս խնայես».—Ճշմարիտ, ինքս էլ չգիտեմ. ասաց նա պաղարիւնութեամբ: Հարուստներից շատերը նորա կազմած ցանկի մէջն էին ընկնում՝ որը իւր պարտէզների պատճառով, որը բաղանիքների, որը տների: Անծանօթ մարդու մէկը մահապարտների ցանկի մէջ իւր անունն էլ լսելով՝ կանչէց. «Վա՜յ ինձ, Ալբայի միջի տունս գլուխս կերաւ»: Այն ինչ Իտալիան այսպէս արիւնհեղութեան տեսարան էր դարձել՝ գազանասիրտ հրէշը իւր ազատ ժամերն անց էր կացնում զուարճութիւնից, խնջոյքների ու անառակութեան մէջ:

Այդպիսի զարհուրելի եղեռնագործութիւններից յետոյ իրաւ է Հռոմի մէջ հանդարտութիւն ձգեց Սիւլլան, բայց այդ մեռելային հանդարտութիւն էր: Նա մշտնջենաւոր իշխանապետ ընտրուեցաւ և կառավարութեան բոլոր պաշտօնները ազնուականների ձեռքն ամփոփեց: Երկու տարուց յետոյ հոգսերից ձանձրացած՝ իշխանութիւնը թողեց և քաշուեց գիւղ՝ իւր կալուածներից մէկի մէջ, որտեղ և մեռաւ շուայտութիւան մէջ:

5.

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.

Ս պ ա ր տ ա կ ո ս.

Հռոմի և Իտալիայի մէջ բազմաթիւ ստրուկներ կային՝ Աֆրիկացի, Գալլիացի, Գերմանացի, Թրակիացի, եայլն: Ստրուկները ծանր աշխատութեանց ենթակայ էին. նոքա էին Հռոմայեցւոց դաշտերը մշակում, տնային ծառայութիւնները կատարում. այնպիսիքն էլ կային, օրինակ Յոյները, որ ուսուցչութիւն կամ գրագրութիւն էին անում: Հարուստ Հռոմայեցին երբեմն հարիւրներով ստրուկներ էր պահում: Պատահում էլ էր, որ հաւատարիմ ծառայութեան համար ազատում էին նոցա: Բացի դորանից ստրուկներին հարկադրում էին ս ո ւ ս ե ր ա մ ա ր տ ի կ դառնալ (գլադիատօր). սոքա պարտաւոր էին հասարակաց հանդէսների ժամանակ մենամարտել մեղկացած Հռոմայեցիներին զուարճացնելու համար: Մի բացօդեայ դաշտում մեծ շրջան էին շինում. մէջ տեղ էին գալիս սուսերամարտիկները և սկսում էին կռուել զանազան զէնքերով, ըստ մեծի մասին սուսերներով: Գետին գլորած սուսերամարտիկը դարձնում էր աղաչական նայուածքը դէպի հանդիսականները, և նայելով թէ ինչ նշան կտային նոքա՝ սպանում կամ խնայում էին նորան: Երբ մի հարուստ անուանի մարդ ուզում էր հաճոյանալ ժողովրդին՝ սուսերամարտիկ ստրուկներ էր կռուացնում: Նոցա համար մինչև անգամ յատուկ վարժարան կար Կապուա քաղաքում:

Սիւլլայի մահուանից յետոյ Կապուայի սուսերամարտիկներից մինը՝ Թրակիացի Ս պ ա ր տ ա կ ո ս՝ 70 հոգի իւր ընկերներից ժողովեց և համոզեց, որ փոխանակ իրանց կեանքն անմիտ ժողովրդի զուարճութեան համար զոհելու՝ փորձ անեն ազատութիւն ձեռք բերելու: Դաշնակիցները զինուորուեցան ինչով կարացին և փախան Վեզուվ լեառը: Հետզհետէ նոցա թիւը շատացաւ. հաւաքուեցան մեծ բազմութիւն ստրուկների և աւազակների և բաւակա-

նին զօրեղ խումբ կազմեցին: Նոքա ուղեւորուեցան դէպի Հռոմ, ճանապարհին կողոպտելով գիւղերն ու քաղաքները: Ծերակոյտը նոցա դէմ զօրք ուղարկեց. բայց արդէն երրորդ տարին եղաւ՝ չէին կարողանում նուաճել նոցա. անուանի զօրավարները ամօթ էին համարում ստրուկների ու աւազակների վերայ պատերազմի գնալ. սակայն Հռոմին արդէն վտանգ էր սպառնում: Վերջապէս Լ ի կ ի ն ի ո ս Կ ր ա ս ս ո ս մեծ զօրքով յարձակուեցաւ նոցա վերայ և արիւնահեղ պատերազմի մէջ խորտակեց նոցա զօրութիւնը. Սպարտակոս ստիպուեցաւ Բրունդուսիոն փախչել: Այստեղ Պ ո մ պ է ո ս ի դէմ կատաղաբար կռուելով՝ մահացու վէրք ստացաւ և մեռաւ: Մինչև վերջին շունչը նա քաջաբար պաշտպանվում էր թշնամեաց հարուածների դէմ: Ստրուկներից 500 մարդ գերի ընկան, մնացածները բոլորովին ջարդուեցան:

ԺԻ.

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

Հռոմի հասարակապետութիւնն այնքան էր բարոյապէս ապականուել և ներքին անկարգութիւններն այնքան էին շատացել, մինչ զի խելացի քաղաքացիք ցանկանում էին որ զօրեղ խելքի ու կամքի տէր մէկը դուրս գայ և Հռոմի խառնակ վիճակը բարեկարգէ: Այսպիսի գործի համար ամենից ընդունակ ճանաչվում էր մի անձն միայն. դա Յ ո ւ լ ի ո ս Կ ե ս ա ր ն էր:

Կեսար տակաւին մանկութեան հասակում այնպիսի ձիրքեր էր ցոյց տալիս, որ ամենքի զարմանքը շարժում էր: Տասնու հինգ տարեկան ժամանակ նորա հայրը մեռաւ, և Կեսար մնաց մօրը խնամքի տակ: Աւրելիան՝ նորա մայրը՝ մեծ սիրով ու ջերմեռանդութեամբ աշխատեց ընտիր դաստիարակչի տալ նորան: Ամենից աւելի նա աշխատում էր, որ դեռահաս պատանին ընտելանայ քաղցրաբարոյութեան մէջ, որպէս զի կարողանայ գրաւել ժողովրդի սիրտը: Կեսար հենց այդ ժամանակուանից ձգտում էր բարձր փառքերի հասնել և մեծամեծ քաջագործութիւններով փայլել: Նա

ամուսնացած էր Մարիոսի բարեկամ Կիննասի դստեր հետ: Սիւլլան հրամայեց նորան կնոջը դուրս անել. Կեսար բոլորովին մերժեց այս պահանջը և իւր կին Կոռնելիայի հետ դուրս գնաց Հռոմից: Դաժան իշխանապետն ուզում էր բռնել տալ նորան մեռցնել՝ բայց միքանի անուանի մարդկանց միջնորդութեամբ ներեց. «Լաւ, թող ապրի նա, ասաց Սիւլլան, բայց այդ երիտասարդի վերայ ես մի քանի Մարիոսներ եմ տեսնում»: Այսուամենայնիւ Կեսար խոհեմ եղաւ և Հռոմ վերադարձաւ միմիայն նորա մահուանից յետոյ:

Մի քանի ժամանակից յետոյ Կեսար դուրս եկաւ որ գնայ Հռոդոս կղզին հռչակաւոր Մ ո լ ո ն ճարտասանին այցելելու: Ճանապարհին նորա վերայ յարձակուեցան ծովային աւազակները և 20 տաղանդ փրկանք պահանջեցին: «Ինչպէս, գոչեց նա, ինձ նման մէկ մարդուց միայն 20 տաղանդ. ես ձեզ կտամ 50 տաղանդ»: Իսկոյն մարդ ուղարկեց տուն փող բերելու. իսկ ինքը մնաց աւազակների մէջ, սոցա յետ նա վարվում էր ոչ որպէս գերի, այլ որպէս իշխանաւոր: Ժամանակ անցկացնելու համար ճառեր ու ոտանաւորներ էր շարադրում և սկսում էր կարդալ ոգեւորութեամբ. երբ նկատում էր որ իրան չեն լսում՝ սպառնալիքներ էր տալիս, թէ երբ ազատուիմ կըխաչեմ ամենքիդ: Վերջապէս ուղարկուած մարդիկը փողը բերին. 50 տաղանդը տուաւ ազատուեցաւ: Նա շտապեց եկաւ Միլետ և իսկոյն զինուորած նաւերով յարձակուեցաւ ծովահէնների վերայ, տուած փրկանքն էլ յետ առաւ, իրանց էլ խաչել տուաւ՝ ինչպէս խոստացել էր:

Հռոմ դառնալուց յետոյ Կեսարն սկսաւ Ալկիբիադէսի պէս շռայլ կեանք վարել. ահագին գումարներ էր վատնում ժողովրդի համակրութիւնը գրաւելու համար, որ հեշտութեամբ կարենայ հասնել իւր փառասիրական նպատակներին: Առաջին անգամ նա Լուսիտանիայի կուսակալ նշանակուեցաւ: Գադէս քաղաքից անցնելու ժամանակ մի տաճարի մէջ տեսաւ Աղէքսանդր Մակեդոնացու արձանը. երկար կանգնեց նորա առաջև մտայոյզ դրութեամբ, վերջապէս բացագանչեց. «Ո՛հ, իմ հասակում դու արդէն տիրել

էիր ամբողջ աշխարհին, իսկ ես դեռ ոչինչ չեմ արել»: Նա փառաւոր կերպով կառավարեց Լուսիտանիան, և երբ Հռոմ դարձաւ՝ օր ըստ օրէ աւելացաւ նորա յարգն ու պատիւը իւր քաղցր հաճոյական վարուողութեան շնորհիւ: Շատ հացկերոյթներ, ընծաներ բաժանելը և հասարակական խաղեր սարքելը՝ ամենասիրելի մարդը շինեցին նորան Հռոմի զուարճասէր ժողովրդի աչքում: Միանգամ այնպիսի մի կռուախաղ (տուրնիր) ներկայացրեց, որի նմանը երբէք չէր տեսնուած. 320 զոյգ մարտիկներ՝ արծաթեայ սպառազինութեամբ՝ կռւում էին իրար դէմ: Յաջողութիւններով յափշտակուած՝ նա ցանկացաւ մինչև անգամ քահանայապետի պաշտօնն ստանալ, որին արժանանում էին միմիայն անուանի և ծերունի սենատորներ: Ընտրութեան օրը Աւրելիան արտասուելով ճանապարհ դրաւ որդուն: «Իմացիր մայրիկ, ասաց նա, որ ես պիտի վերադառնամ կամ քրմապետ, կամ աքսորական»: Նա գնաց հրապարակ և ի մեծ զարմանս Օերակուսի՝ ժողովուրդը քրմապետ ընտրեց նորան:

Միևնոյն ժամանակ Յուլիոս Սպանիայի կուսակալ նշանակուեցաւ: Նա ահագին գումարներ շռայլելով, մի քանի միլիոն պարտքի տակ էր ընկել. պարտատէրները չէին թողնում նորան Սպանիայից ելնելու. Յուլիոս համոզեց Կրասոսին, որ Սիւլլայի չարագործութեանց շնորհիւ անհուն հարստութիւն էր դիզել, իւր պարտքերը վճարելու, և ճանապարհ ընկաւ: Ալպեան լերանց միւս կողմը մի փոքրիկ աննշան քաղաքի միջով անցնելիս՝ ուղեկիցներից մէկը հանաքով հարցրեց. «Մարդ իմանայ թէ այստեղ էլ նախանձ ու կռիւներ լինո՞ւմ են փառասիրութեան համար»:—Անշուշտ, վրայ բերաւ Կեսար, թէ ինձ կհարցնես՝ ես աւելի կցանկայի այսպիսի մի տեղ առաջինը լինել, քան թէ Հռոմի մէջ երկրորդը: Սպանիայի մէջ նա ցոյց տուաւ իւր պատերազմական ճարտարութիւնը. Հռոմ վերադառնալիս անթիւ աւարներ բերաւ, և ժողովուրդն ընդունեց նորան անպատմելի բերկրութեամբ:

ԺԲ.

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ (60 Թ. Քր. ծն. յառաջ.).

1.

Կեսար, Պոմպէոս, Կրասսոս.

Յուլիոս Կեսարի բարձրանալը ո՛չոքի այնքան անհանգիստ չէր անում, որքան Պոմպէոսին, որ կառավարութեան մէջ առաջին անձն էր: Նորա քաջագործութեանց հռչակը թնդում էր ամեն տեղ: Նա խաղաղացրել էր Սպանիան. ոչնչացրել էր Սպարտակոսի զօրութիւնը. պատուաւոր կերպով վերջացրել էր Միհրդատի և Տիգրանի դէմ վարած պատերազմները. նուաճել էր փոքր Ասիան և Ասորիքը. հարկատու էր արել Երուսաղէմը, և վերջապէս նա համարվում էր 15 թագաւորութեանց և 400 քաղաքների տիրող, որի համար էլ տուել էին նորան Մեծ պատուանունը: Եւ այսուամենայնիւ նորա մեծահամբաւ գործերի յիշատակը հետզհետէ նսեմանում էր, քանի որ աճում էր Կեսարի անուան փառքը: Նա չէր կարողանում պաղարիւնութեամբ նայել, թէ ինչպէս Կեսար բարձրագոյն պաշտօնները ձեռք ձգելով օր օրի վրայ մեծանում է և պաշտելի է դառնում ժողովրդին. ինքն այլևս դադարում էր առաջնակարգ աստղ լինելուց. Կեսար նորա համար վտանգաւոր ախոյեան էր:

Պոմպէոս իւր զօրութիւնն ու ազդեցութիւնը վերականգնելու համար վճռեց մօտկանալ Կեսարի հետ. յետոյ այս երկուքն ի միասին իրանց կողմը գրաւեցին և Կրասոսին, ծածուկ դաշնակցութիւն արին, որ միմեանց օգնեն փառասիրական նպատակներին հասնելու մէջ, և այսպէս կազմեցին առաջին Եռապետութիւնը (60 Թ.):

Այն ժամանակ եռապետները տէրութեան կառավարութիւնը հաւաքեցին իւրեանց ձեռքը և բարձրագոյն պաշտօնները բաժանեցին մէջները. Կեսարն առաւ կառավարելու Գալլիան, Պոմպէոս՝ Սպանիան և Աֆրիկան, իսկ Կրասոս՝ Ասորիքը: Սակայն վերջինս իւր անկուշտ ագահութեանը զոհ գնաց և մեռաւ Պարթևաց դէմ յարուցած կռուի մէջ, որի ողբալի մահուան վերայ

Մեծին Տիգրանայ որդին Արտաւազդը մի ողբերգութիւն շարադրեց։

Կեսար առանց նպատակի չէր յանձն առել Գալլիայի կառավարութիւնը։ Այդ երկրի մի փոքր մասն էր միայն Հռոմայեցւոց ձեռքը. մնացած մեծագոյն մասում դեռ ևս բնակվում էին ազատ կիսավայրենի ազգեր, որոնց հարկաւոր էր նուաճել. ուրեմն Կեսար այստեղ կարող էր և՛ իւր պատերազմական ճարտարութիւնը ցոյց տալ, և՛ թարմ ուժեղ զօրք պատրաստել, ապագայ իշխանասիրական նպատակներին հասնելու համար։ Յիրաւի, ութ տարուան մէջ Կեսար բոլոր այդ երկրին տիրեց՝ Հռենոսից մինչև Ատլանտեան ովկիանոսը և Միջերկրական ծովից մինչև Լամանշ ջրանցքը։ Թէպէտ նա Հռենոսն անցաւ Գերմանիա էլ մտաւ և մինչև անգամ Բրիտանիայի ծովեզերքն էլ դուրս եկաւ, բայց առանց որևէ նուաճում անելու վերադարձաւ։

2.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԿԵՍԱՐԻ ԵՒ ՊՈՄՊԷՈՍԻ ՄԷՋ.

Կեսարի յաղթութիւններն ու փառքը գրգռում էին Պոմպէոսի նախանձը և երկիւղ էին ազդում նորա վերայ։ Հետզհետէ նոցա միջի ատելութիւնը զօրացաւ։ Պոմպէոս Սպանիան օգնականներով էր կառավարում, իսկ ինքը միշտ Հռոմի մէջ մնալով զանազան հնարներով աշխատում էր գրաւել թէ ժողովրդի և թէ Ծերակոյտի համակրութիւնը։ Նա յաջողեցրեց հիւպատոս ընտրուիլ, և Հռոմի մէջ նստած՝ համարեա անսահման իշխանութիւն էր վարում։ Կեսար իւր կողմից նոյնպէս քնած չէր. նա էլ մարդիկ ունէր Հռոմի մէջ, ամեն բան տեղեկանում էր, ամեն բանի հսկում. վերջապէս նա էլ սկսաւ որ և է պաշտօն պահանջել վարելու, չնայելով որ բացակայ էր. բայց Պոմպէոս բոլոր ուժով արգելք եղաւ նորա պահանջները կատարելուն։ Այս բաւական չէ. նա հասկացրեց Ծերակուտին, թէ Կեսար իւր զօրքով կարող է շատ վտանգաւոր լինել հասարակապետութեան համար. ուստի համոզեց հրա-

ման ուղարկել, որ նա անյապաղ արձակէ իւր լեգէոնները և գայ Հռոմ։ Հրամանն որ ստացաւ՝ Կեսար սաստիկ զայրացաւ. ժողովեց իւր հաւատարիմ զօրականներին և ազդու պերճախօսութեամբ նկարագրեց Ծերակուտի ու հակառակորդների ապերախտութիւնը. ամենքն էլ պատրաստականութիւն յայտնեցին գնալ, ուր Կեսար կտանէր նոցա։ Իսկոյն տասն լեգէոն գումարեց Կեսար և ճանապարհ ընկաւ դէպի Հռոմ։ Ռ ո ւ բ ի կ ո ն գետի մօտը հասած, որ Գալլիայի սահմանն էր, սկսաւ խորհել թէ ինչպէս վարուէր. մէկէն գոչեց. «Վիճակն ելաւ» և նոյն ժամայն գետն անցաւ։ Երբ ձայնը Հռոմ հասաւ, թէ Կեսար գալիս է՝ ամենքը սարսափի մէջ ընկան. ոմանք գնացին Պոմպէոսի մօտ և առաջարկում էին, որ քաղաքը վտանգից ազատելու հոգս անէ։ Պոմպէոս անձնապաստութեամբ ասաց. «Անհոգ եղէք, ոտքս գետնին խփեմ թէ չէ՝ լեգէոններս չորս կողմն կհաւաքուին»։ Բայց յառաջ քան որևէ կարգադրութիւն կանէր նա՝ Կեսար արդէն քաղաքի դուռը հասաւ։ Պոմպէոս հազիւ կարողացաւ իւր մտերիմների հետ Ստորին Իտալիա փախչել, այնտեղից էլ Յունաստան։ Երկու ամիս դեռ չանցած՝ Կեսար տիրեց բոլոր Իտալիային ու կղզիներին, և իւր հեզ ու սիրալիր վարմունքով ամենքի սիրտն իրան գրաւեց։ Դորանից յետոյ նա գնաց Սպանիա. «Առաջ զօրքը ջարդենք առանց զօրավարի, ասաց նա, յետոյ զօրավարին առանց զօրքի»։ Հանճարեղ զօրապետը շատ շուտով կոտրեց Պոմպէոսի զօրութիւնը Սպանիայում և յաղթանակով Հռոմ վերադարձաւ։ Այստեղ իշխանապետ ընտրուեցաւ. ժողովուրդը կարծում էր, թէ Սուլլայի պէս Կեսարն էլ կ՚սկսի կոտորածներ անել, բայց նա շատ խոհեմութեամբ վարուեցաւ. տէրութեան գործերը կարգի դրաւ. շատ աքսորականների յետ կանչեց և իրաւունք տուաւ առաջուան պէս հիւպատոսներ ընտրել։ Ժողովուրդը հիւպատոս ընտրեց նորան և նորա բարեկամներից մէկին։ Այն ժամանակ նա թողեց իշխանապետութիւնը, որով աւելի սիրելի եղաւ ժողովրդին։

Դորանից յետոյ շտապեց Պոմպէոսի հետ գործը վերջացնելու։ Բրունդուսիոնից նաւ նստաւ և Յունուար ամսին ճանապարհ

ընկաւ դէպի Յունաստան։ Եպիրոսում, Դիւրրաքիոնի մօտ բանակել կանգնել էր Պոմպէոս։ Կռիւն սկսուեցաւ. բայց այս անգամ Կեսար յաղթուեցաւ, և հարկադրուած էր ապաստանուել մի ամայի անպտուղ տեղում։ Զօրավարները խորհուրդ տուին Պոմպէոսին մեծ ճակատամարտ տալ և միանգամից իսպառ ոչնչացնել Կեսարի զօրութիւնը, քանի որ նորա զօրքը յոգնած ու քաղցած էին. բայց Պոմպէոս լաւ էր հասկանում, որ փափուկ մեծացած ու քնքուշացած պարոններից բաղկացած իւր զօրքը չպիտի կարենայ դիմանալ Կեսարի հարուածին, որի զօրքը բաղկացած էր պատերազմների մէջ վարժուած, պնդակազմ ու չարքաշութեանց սովոր մարդկանցից։

ՓԱՐՍԱՂԻԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (48)։ Այնուամենայնիւ Պոմպէոս ստիպուեցաւ համաձայնիլ իւր զօրականների պահանջմանը։ Երկու բանակները ճակատեցան Փարսաղ՚իայի մօտ և ահեղ յարձակմամբ միմեանց վերայ վազեցին։ Պոմպէոսի զօրքի մէջ ամենից աւելի ասպետներն էին փափագում պատերազմի. Կեսար հրամայեց որ այդ պարոնների ուղղակի երեսներին զարկեն. «Որովհետև, ասում էր, այդ գեղեցիկ կաքաւիչները չեն թողնել որ երեսները վիրաւորուի»։ Յիրաւի առաջին փախչողները նոքա եղան. բոլոր զօրքը տեսնելով նոցա փախուստը շփոթուեցաւ և փախչող փախչողի եղան. Կեսարի զօրքը զարհուրելի կոտորած էր տալիս, մինչ զի ինքը Կեսարը զօրքի մէջ մտած գոչում էր բարձրաձայն. «զօրակա՛նք, խնայեցէ՛ք քաղաքացիներին»։ Այս վեհանձնութեան վերայ ծերերից ու ասպետներից շատերը յօժարութեամբ Կեսարի կողմն անցան. մնացածները ցիրուցան եղան։

Պոմպէոս փախաւ Լեսբոս կղզին, այնտեղից էլ Եգիպտոս։ Այստեղ Պտղ՚ոմէոս ժբ. փոխանակ նորան հիւրասիրելու՝ մարդիկ ուղարկեց որ սպանեն նորան. այսպիսով ուզում էր հաճոյանալ զօրաւոր Կեսարին։ Նորա մարմինը փոշու և արեան մէջ շաղախուած ձգեցին դաշտը՝ թռչուններին կերակուր. բայց նորա հաւատարիմ ծառան առաւ լուաց մարմինը, մի նաւակի կրակով այրեց և վրան շիրիմ կանգնեց այսպիսի տապանագրով. «Ինչ խեղճ գերեզմանի

մէջ է այն մարդու աճիւնը, որի համար աշխարհք տաճարներ շինեց»։

Երեք օրից յետոյ հասաւ և Կեսար. զայրացաւ սպանիչների գարշելի մարդահաճութեան վերայ, լացաւ հռչակաւոր Պոմպէոսի մահուան վերայ, և որովհետև այդ ժամանակ գահաժառանգութեան համար վէճ կար Պտղ՚ոմէոսի և իւր քրոջ Կղ՚էոպատրայի մէջ, իրաւունքն այս վերջինիս տուաւ։ Այստեղից անցաւ փոքր Ասիա, ուր որ Մեծին Միհրդատայ որդին Փառնակէս, Պոմպէոսի ջերմ կուսակիցներից մէկը, ապստամբութիւն էր յարուցել. Կեսար այնպէս արագութեամբ յաղթեց նորան, որ այս արշաւանքի դիւրութիւնը հասկացնելու համար՝ իւր բարեկամներից մէկին գրեց. «Եկի, տեսի, յաղթեցի. (veni vidi, vici)»։

Պոմպէոսն այլևս չկար, բայց նորա կուսակիցները չէին հանդարտվում. Աֆրիկայում և Սպանիայում մեծամեծ պատրաստութիւններ տեսնուեցան Կեսարի դէմ։ Աֆրիկայի մէջ նա շատ շուտով հնազանդեցրեց հակառակորդներին. բայց Սպանիայում, ուր նա պէտքէ մարտնչէր Պոմպէոսի երկու որդւոց դէմ, բաղդը կարծես թեքուեցաւ նորանից։ Կեսարի զօրքը թուլացաւ. շատերն սկսան փախչել. Կեսար նոցա առաջը կտրեց. «ամօթ չէ՞ ձեզ համար, ասում էր նա, որ ձեր զօրավարին թողնում էք երկու պատանիների ձեռքը մենակ»։ Իզու՜ր. ամենքը պատրաստ էին փախչելու։ Այն ժամանակ Կեսար ձիուց վայր ցատկեց և սուրն ու վահանը ձեռքին թշնամեաց մէջ վազեց գոչելով. «Թող այս օրը կեանքիս վերջին օրը լինի»։ Զինուորները արդէն քաջալերուեցան և կռուեցին անօրինակ կատաղութեամբ։ Վերջապէս յաղթութիւնը տարուեցաւ։

Կեսար այս անգամ հանդիսաւոր յաղթանակով Հռոմ դարձաւ. ամենքը գովում ու մեծացուցանում էին նորան։ Իւր զօրքին ու ժողովրդին շահելու համար՝ նա մեծամեծ ընծաներ տուաւ նոցա և 60000 տաղանդ փող բաժանեց. իւր ընտիր զօրականներին 2800 ոսկի պսակ բաշխեց։ Բացի դորանից հրամայեց որ չքաւոր դասին որոշ ժամանակներով հաց ու իւղ բաժանեն. իսկ ժողովրդի զուա-

աղթութեան համար փառաւոր հանդէսներ ու կոչունքներ արաւ ծովի ու ցամաքի վերայ։ Մի անգամ մէկ չլսուած ու չտեսնուած հանդէս սարքեց. 1200 ըմբիշներ պէտք է կռուէին 40 փղի դէմ. վերջը հանդիսականները ճաշի նստան. նոցա համար պատրաստուած էին 22000 սեղան՝ զանազան ուտելիքներով փռած։

3.

ԿԵՍԱՐԻ ՎԱԽՃԱՆԸ։

Թէպէտ Կեսար մշտնջենաւոր իշխանապետ էր ընտրուած և նորա կառավարութիւնը սահմանափակող չկար, բայց նա խոհեմութեամբ չափաւորում էր իւր իշխանութիւնը և ամենայն ինչ կարգադրում էր գրեթէ միշտ յօգուտ քաղաքացւոց. նա վեհանձնաբար ներեց իւր թշնամիներին, գիտութեանց և արուեստների պաշտպան հանդիսացաւ. ճանապարհներ ու ջրանցքներ շինել տուաւ. և շատ աշխատեց նահանգների վիճակը բարւոքել։ Նա ստուգեց ու շտկեց տումարը, որ նորա անուամբ Յուլեան կոչուեցաւ։ Ծերակոյտը նորան ընծայեց ոսկեայ գահ ու ծիրանի և դրամների վերայ դրոշմել տուաւ նորա պատկերը։ Այնպէս՝ մի թագաւորութիւն էր պակաս նորան. բայց նա իրօք թագաւոր էր, թէև թագ չունէր և պահպանել էր հասարակապետական կառավարութեան ձևերը։

Հռոմի մէջ կային ազնուամիտ քաղաքացիք, որոնք դառնապէս ցաւում էին հասարակապետութեան անկման համար և շատ անհանգիստ էին լինում Կեսարի մէջ նշմարուող միապետական ձգտմանց վերայ։ Մի հանդիսի մէջ Մարկոս Անտոնիոս երկու անգամ ուզեցաւ Կեսարի գլուխը թագաւորական թագ դնել. նա զգուշութեամբ յետ մղեց. միւս օրը Կեսարի արձանը թագով պսակուած տեսան։ Ցեղապետներն այս անկարգութիւնն անողներին պատժեցին. Կեսարն էլ իշխանութիւնից ձգեց նոցա։ Կասկածները Կեսարի վերայ աւելացան։ Մի անգամ նորա արձանի տակ գրել էին. «Բրուտոսը թագաւորներին հալածելով հիւպատոս եղաւ. սա էլ հիւպատոսներին հալածելով թագաւոր եղաւ»։ Մի քիչ յետոյ

Բրուտոսի արձանի վերայ այսպէս էր գրած. «Ո՜հ, երանի թէ կենդանի լինէիր»։

Ազատամիտները մի դաւակցութիւն կազմեցին Կեսարի դէմ, որի գլխաւորներն էին Բրուտոս և Կասսիոս։ Բրուտոս անյողդողդ ազնուութեան տէր մարդ էր, ժողովրդեան սիրելի և քաջ։ Կեսար որդեգրել էր նորան և իւր շնորհն ու պարգևները վրայից անպակաս էին. բայց Բրուտոս միշտ տխուր էր. հայրենի ազատութեան կորուստը կեղեքում էր նորա սիրտը։ Կասսիոսն այն նիհար, մաշուած մարդկանց թւումն էր, որ քիչ են քնում և շատ մտածում. նա ատում էր իշխանաւորին այնպէս, ինչպէս Բրուտոս իշխանութիւնը։ Նա ամենայն ջանք գործ էր դնում Բրուտոսին գրգռելու համար։ Շատ անգամ Բրուտոս իւր սեղանի վերայ այսպիսի տոմսակներ էր գտնում. «Դու դեռ քնած ես, Բրուտոս»։

Վերջապէս Բրուտոս դաւակցութեան գլուխն անցաւ. վճռուեցաւ Կեսարին մեռցնել և դորա համար նշանակուեցաւ Մարտի 15-ը 44 թուականի։ Կեսար տեղեկացել էր այս բանի մասին և այդ օրը կնոջ աղաչանքները լսելով չէր ուզում տանից դուրս գալ։ Բայց դաւակիցներից մէկը նորան համոզեց, որ Ծերակոյտը շատ կվշտանայ, եթէ այդ տօնի օրը Կեսար բացակայ լինի։ Դուրս ելաւ որ գնայ Ծերակոյտը՝ ժողովրդի միջից մի ձայն լսեց թէ «Զգոյշ եղիր Մարտի իդոսից». Նորան առաջուց գուշակել էին, որ այդ օրը վտանգ է սպառնում իրան։ Մի քիչ անցաւ՝ մի տոմսակ տուին նորան, որի մէջ ասուած էր, որ այդ օրը պէտք է սպանեն նորան։ Կեսար տոմսակն առանց կարդալու քարտուղարին տուաւ և մտաւ ժողով։ Ներս մտնելուն պէս՝ բոլոր Ծերակոյտը ոտքի ելաւ. Կեսար սովորականին պէս նստաւ ոսկի գահի վերայ։ Դաւակիցներից մինը՝ Տուլլիոս Կիմբեր առաջ եկաւ և սկսաւ աղաչել, որ իւր եղբօրն աքսորանքից յետ կանչէ։ Կեսար մերժեց խնդիրը. միւսները մօտեցան, որ իբր թէ միջնորդեն։ Յանկարծ Կիմբեր ձգեց Կեսարի վերարկուն. այս էր որոշուած նշանը. իսկոյն Կասկա անունով մէկը դաշունով հարուածեց նորան։ Կեսար տեղից վեր թռաւ «Չարագործ, ասաց, ինչ ես անում», և բռնեց

նորա ձեռքը։ Դաւակիցները չորս կողմից վրայ թափուեցան և սկսան հարուած հարուածի յետևից հասցնել, մէկը կուրծքին, մէկը երեսին, մէկը թիկունքին։ Մի քանի րոպէ Կեսար պաշտպանուեցաւ դաւադիրների դէմ, բայց երբ տեսաւ որ նոցա թւումն է և Բրուտոս՝ հառաչելով կանչեց. «Դու էլ իմ դէմ, որդեակ իմ Բրուտոս». ասաց և վերարկուն գլխին քաշեց մեռաւ 23 հարուածով վիրաւորուած, և վայր ընկաւ Պոմպէոսի արձանի առաջ։ Ծերակոյտը սարսափած ցրուեցաւ իսկոյն, իսկ սպանիչները դուրս վազեցին փողոց աղաղակելով. «Մեռաւ բռնաւորը. քաղաքն ազատ է»։

ԺԹ.

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ (43 Թ.).

1.

Անտոնիոս, Օկտաւիանոս, Լեպիդոս.

Կեսարի մահը սակայն չբերաւ ցանկալի խաղաղութիւնը Հռոմի համար։ Յառաջացան նորանոր խռովութիւններ ու անկարգութիւններ։ Անտոնիոս հիւպատոսը, Կեսարի ամենամօտիկ բարեկամը, ժողովեց Ծերակոյտը, պատրաստութիւններ տեսաւ նորա թաղման և սպանիչներին պատժելու համար։ Կեսարի մարմինը փղոսկրեայ դագաղի մէջ դրին հրապարակի մէջ։ Անտոնիոս մի դամբանական ճառ կարդաց, որի մէջ գովաբանում էր Կեսարի արած մեծամեծ ծառայութիւնները հայրենեաց համար. նա յիշեց, թէ ինչպէս Կեսար առաջուց յօրինած կտակի մէջ ընծայում է ժողովրդին իւր մեծ պարտէզը, և աղքատներին՝ դրամական նուէրներ։ Տեսնելով որ ժողովրդի սիրտը շատ շարժեցաւ՝ ներբողի մէջ սկսաւ նորա բարկութիւնը բորբոքելու խօսքեր խառնել։ Յետոյ ցոյց տուաւ Կեսարի ծիրանին 23 տեղից ծակծկած և նորա սառած դիակը։ Ամբոխն ալէկոծուեցաւ և կատաղաբար վազեց դաւակիցների տների վերայ։

Կեսար կտակի մէջ ժառանգ էր նշանակել իւր քեռորդի Օկտաւիանոսին։

Այս տասնութնամեայ խորագէտ ու կեղծաւոր երիտասարդը Կեսարի մահը լսելուն պէս՝ շտապեց Էպիրոսից Հռոմ հասաւ. սակայն իւր ակնկալութեան հակառակ՝ շատ սառն ու ցամաք ընդունելութիւն գտաւ Անտոնիոսից։ Թէև այսպիսի վարմունքը շատ վշտացրեց նորան. բայց նա ծածկեց իւր դժգոհութիւնը, և քեռու նման ժողովրդին իւր կողմը գրաւելու յետևից եղաւ, նոյն միջոցներով և նոյն նպատակներով։ Շատերը կյուսային. որ նա կըտկարացնէ Անտոնիոսի օր ըստ օրէ աճող կարողութիւնը. որովհետև սա էլ էր Կեսարի ճանապարհը բռնել։ Վերջապէս Կիկերոն ճարտասանը կրակոտ պերճախօսութեամբ հասկացրեց Ծերակուտին Անտոնիոսի յանդուգն ու վտանգաւոր ձգտումները։ Ծերակոյտը հայրենեաց թշնամի հրատարակեց Անտոնիոսին, և Օկտաւիանոսին և երկու հիւպատոսներին ուղարկեց նորա դէմ պատերազմի։ Մոդենայի մօտ ջարդուեցաւ Անտոնիոս և փախաւ Գաղ'ղիայի կառավարիչ Լեպիդոսի մօտ, որ իւր կուսակիցն էր։ Սոքա երկուքն միասին արշաւեցին Իտալիայի վերայ իբրև թշնամիներ։ Այդ միջոցին Օկտաւիանոս, որ յոյս ունէր ընդհանուր զօրավար նշանակուելու այդ պատերազմի մէջ՝ հրաման ստացաւ զօրքը յանձնելու Դեկիմոս Բրուտոսին, որ նորա քեռուն սպանողի եղբայրն էր։ Այս կարգադրութիւնն այնպէս դիպաւ Օկտաւիանոսի անձնասիրութեանը, որ նա փոխանակ պատերազմը շարունակելու՝ ծածուկ հաշտութիւն արաւ և Անտոնիոսի ու Լեպիդոսի հետ կազմեց երկրորդ եռապետութիւնը (43 Թ.)։

Եռապետներն իրանց կառավարութիւնն սկսան անլսելի եղեռնագործութիւններով. Սուլլայի օրերը վերադարձան. ահ ու սարսափ դարձեալ թագաւորեցին բոլոր Իտալիայում. հայրը որդուն, որդին ծնողներին ուրանում էին իրանց կեանքը փրկելու համար. Անտոնիոս ջոկ էր դատապարտեալների ցանկ շինում, նորա չար կինը Ֆուլուիան՝ ջոկ։ Դահիճները մեռցրած մարդկանց գլուխները ցցերի վերայ անցուցած պտտում էին փողոցներում։ Հռոմ ողողուեցաւ անմեղ քաղաքացիների արեամբ։ Անթիւ սպանուածների միջից առանձին ցաւակցութեան արժանի էր Կիկերոն, որ իւր

հայրենիքին շատ անմոռանալի ծառայութիւններ էր արել։ Մեզ կարևոր է ծանօթանալ այդ մեծանուն անձի կեանքի հետ։

2.

ԿԻԿԵՐՈՆ.

Մարկոս Տուլլիոս Կիկերոն ծնաւ 106 թ. Արպինա քաղաքում. նորա ծնողները թէև չքաւոր մարդիկ էին, բայց մինչև 12 տարեկան հասակը տանը լաւ կրթութիւն տուին նորան։ Դորանից յետոյ հայրը նորան տարաւ Հռոմ և յանձնեց Յոյն ուսուցիչների։ Այստեղ կարճ ժամանակուան մէջ մանուկ Կիկերոնն այնպիսի յառաջադիմութիւն էր ցոյց տալիս, որ ընկերները նորա մասին իբրև հրաշքի մասին էին խօսում։ Այս տղաներից շատերի ծնողները տեսնելով Կիկերոնի սրամտութիւնն ու զարգացումը՝ իրանց տղան էին բերում նորան, որ տղաներն օրինակ առնեն նորանից։ Նա երբէք անգործ չէր նստում. կամ կարդում էր, կամ շարադրում և կամ թարգմանում։ Եթէ պատահում էր նորան մի լաւ շարադրութիւն կարդալ՝ ընկերներին շուրջն էր ժողովում և պատմում կարդացածի բովանդակութիւնը շատ ընտիր ու գեղեցիկ ոճերով։ Այդ տեղից նորա լեզուն մշակուելով ստացաւ այն կենդանութիւնն ու քաղցրութիւնը, որով մինչև այսօր էլ մարդ զմայլւում է նորա գրուածները կարդալիս։ Շատ անգամ նա գնում էր հրապարակ, որ ականջ դնէ ատենախօսների ճառերին։

Երիտասարդ Հռոմայեցւոց այն ժամանակուան սովորութեան պէս. նա էլ ճանապարհորդեց Յունաստան, որ դեռ ևս ամենալուսաւորեալ երկիրն էր։ Աթէնքի մէջ վեց տարի մնաց նա։ Հռոդոս կղզում պայծառապէս երևեցան նորա աշխատանաց ու ձգտմանց հետևանքները։ Այստեղ գտնւում էր ճարտասանութեան հռչակաւոր ուսուցչապետ Մոլ'ոն. Կիկերոն նորան այցելութեան գնաց և ժողովուած ունկնդիրների առաջ յանպատրաստից այնպիսի մի իմաստուն ու գեղեցիկ ճառ ասաց, որ աւարտելուց յետոյ ունկնդիրները բարձրաձայն ծափահարութիւններով թնդացրին դահլիճը։ Միայն Մոլ'ոն մտայոյզ ու գլխակոր՝ մնացել էր անշարժ։ Աշակերտները շատ զարմացան այս բանի վերայ և հարցրին նորա տխրութեան պատճառը։ Այն ժամանակ դառնալով դէպի Կիկերոն՝ նա ասաց. «քո նախնիքը մեզանից խլեցին ազատութիւն, ստացուածք, զօրութիւն, բայց գիտութեան փառքը մնացել էր մեր ձեռքը. այժմ այդ վերջին ունեցուածքն էլ դու ես խլում մեզանից. ահա ինչու է սիրտս տխուր»։

Կիկերոն Հռոմ վերադարձաւ միայն դաժան Սիւլ'լայի մահուանից յետոյ։ Իւր փայլուն ձիրքերովն, անխոնջ գործունէութեամբը և ազնիւ անարատ մտածութիւններովն այնպիսի համարմունք ստացաւ ժողովրդի մէջ, որ մէկ մէկից յետոյ զանազան քաղաքական պաշտօններ յանձնեցին նորան, մինչև անգամ և հիւպատոսութիւն։ Նա ամեն ժամանակ ճնշուած ժողովրդի իրաւունքներն էր պաշտպանում և իւր հրապարակախօսութեանց մէջ միշտ հարուածում էր բռնութիւնը։ Նա յայտնագործեց չարագործ Սերգիոս Կատիլինայի դաւակցութիւնը, որ վճռել էր գիշերանց ծածուկ Հռոմը կրակ տալ, քաղաքի մէջ խռովութիւն յարուցանել և կառավարութիւնը իւր ձեռքն անցնել։ Բորբոքուած պերճախօսութիւններով նա խայտառակեց Կատիլինիայի դաւաճանութիւնը. Ծերակուտի յանձնարարութեամբ ոչնչացրեց նորա կուսակցութիւնը, և Հռոմը մեծ վտանգից ազատելու համար՝ կոչուեցաւ Հ ա յ ր հ ա յ ր ե ն ե ա ց։

Կեսարի բռնաւորական ջանքերով Կիկերոն աքսորուեցաւ Հռոմից, բայց վեց ամսից յետոյ էլի վերադարձաւ. քաղաքացիք ընդունեցին նորան մեծահանդէս յաղթանակով։ Ազատ ժամերում նա գրում էր իւր շարադրութիւնները, որոնց մի մասը մինչև այսօր կան։ Երևելի ճարտասանը այսպիսի պարապմանց մէջ էր մխիթարութիւն գտնում հասարակապետութեան այն ողբալի ժամանակում երբ զանազան փառասէրներ մէկը միւսից յետոյ ուզում էին միահեծան իշխանութիւն ձեռք բերել։ Կեսարի մահը նորա յոյսերն արթնացրեց և նա ոգևորուած ազատութեամբ յարձակուեցաւ Անտոնիոսի վերայ, որ ուզում էր Կեսարի տեղը նստել։ Բայց այս ճառերը նորա կորստեան պատճառ եղան։ Անտոնիոս մահու-

ան վճիռ տուաւ երևելի հռետորին: Տեսնելով որ այլևս ազատութեան հնար չկայ՝ Կիկերոն խոնարհեցաւ Պոմպիլիոսի սրի առաջ, որի կեանքն ու պատիւը մի անգամ փրկել էր նա իւր ատենաբանութեամբ: Ապերախտն անգթաբար կտրեց իւր ազատարարի գլուխն ու աջը և շտապեց ներկայացնել Անտոնիոսին, որ խոստացած վարձն ստանայ: Անտոնիոս հրամայեց անբաղդ Կիկերոնի գլուխն ու աջը դնել այն ամբիոնի վերայ, որտեղից շատ անգամ նա պաշտպանել էր արդարութիւնն ու անմեղութիւնը: Մինչև անգամ պատմում են, որ չար Ֆուլուիան, Անտոնիոսի կինը, ասեղով ծակծկեց մեծ հռետորի լեզուն, որովհետև նա մի անգամ սաստիկ յանդիմանել էր կանանց պճնասիրութիւնը:

3.

ՕԿՏԱՒԻԱՆՈՍ ՈՒ ԱՆՏՈՆԻՈՍ ԹՇՆԱՄԱՆՈՒՄ ԵՆ

Այն ինչ եռապետները սարսափելի ոճրագործութիւններ էին անում Հռոմի մէջ, Բրուտոս և Կասսիոս հասարակապետականները մեծ զօրք էին ժողովել և բանակ դրել Մակեդոնիայում: Անտոնիոս և Օկտաւիանոս եկան որ ոչնչացնեն նոցա զօրութիւնը: Փիլիպպէի մօտ երկու բանակներն իրար հանդիպեցան (42): Կասսիոս յետ մղուեցաւ Անտոնիոսից, իսկ Բրուտոս յաղթեց Օկտաւիանոսին: Այդ միջոցին Կասսիոս սուտ լուրեր ստանալով ընկերոջ վիճակի մասին՝ յուսահատութեան մէջ սրի վերայ ընկաւ մեռաւ. Բրուտոս դեռ շարունակեց արիւնահեղ կոտորածը, վերջը լսելով Կասսիոսի մահը և ինքն էլ զօրութիւնից ընկած լինելով՝ հետևեց Կասսիոսի օրինակին: Ազատութեան այս երկու պաշտպանների հետ անկաւ և հասարակապետութիւնը: Խնդիրն այժմ նորանում էր, թէ եռապետներից որը պէտք է միապետ դառնար Հռոմում:

Լեպիդոս, այդ անշնորհ զօրապետը, շուտով զոհ գնաց իւր անփառութեանն ու տկարութեանը: Մնացած երկու եռապետները բաժանեցին տէրութիւնը, Օկտաւիանոսին ընկաւ Արևմտեան մասը, Անտոնիոսին՝ Արևելեանը: Սակայն համաձայնութիւնը երկար չտևեց

նոցա մէջ: Անտոնիոս անձամբ փորում էր իւր կորստեան խորխորատը: Նախ ծանր տուրքերով բոլոր ժողովրդին նեղեց և ամենքին ատելի եղաւ: Յետոյ Եգիպտոսի թագուհու, չքնաղագեղ Կղ՛էոպատրայի՝ սիրուց բռնուած՝ ախտերի ու զուարճութեանց յետևից ընկաւ և էլ չկարողացաւ միտ դնել, թէ ինչ որոգայթներ էր լարում նորա համար իւր խորամանկ իշխանակիցը: Ի հաճոյս Կղ՛էոպատրայի, որ իւր սրտի տիրապետողն էր կատարելապէս, նա հռոմէական գաւառները միմեանց յետևից ընծայում էր թագուհու ազգականներից մէկին միւսին, և մինչև անգամ Օկտաւիանոսի քաղցրաբարոյ ու առաքինի քոյրը, որ իւր կինն էր, ձգեց՝ Կղ՛էոպատրային առաւ: Անտոնիոսի բռնած այս ամօթալի ճանապարհը չափազանց զայրացրեց ո՛չ միայն իւր իշխանակցին, այլև ժողովրդին: Օկտաւիանոս, օգուտ քաղելով Անտոնիոսի յանդգնութեան գործած վատ ազդեցութիւնից, Ծերակուտին համոզեց, որ Անտոնիոսին զրկէ իշխանութիւնից և Եգիպտոսի թագուհուն պատերազմ յայտէ:

Անտոնիոս փառաւոր հանդէսներով պատերազմի պատրաստութիւններ արաւ և Կղ՛էոպատրայի հետ ի միասին Օկտաւիանոսի վերայ գնաց: Ակտիոն հրուանդանի մօտ արիական և յուսահատ պատերազմ տրուեցաւ: Յաղթութիւնը տակաւին անորոշ էր, յանկարծ Կղ՛էոպատրան իւր նաւատորմիղն առած Եգիպտոս դարձաւ: Այս տեսնելով Անտոնիոս փոքրոգութեամբ մի նաւակ նստաւ հետևեց նորան, ամենևին փոյթ չունենալով պատերազմի վախճանի մասին: Նաւատորմիղը ոչինչ տեղեկութիւն չունէր այս մասին. մինչ երեկոյ պատերազմեց՝ վերջը յանձնուեցաւ, իսկ ցամաքային զօրքը մի ամբողջ շաբաթ Անտոնիոսին էր սպասում. բայց նա չերևեցաւ: Բոլոր զօրքն անցաւ Օկտաւիանոսի կողմը:

Օկտաւիանոս շտապեց գնաց Ասորիք, որ այնտեղից իւր թշնամու վերայ յարձակուի: Անտոնիոս պատրաստվում էր նորէն պատերազմ տալու. բայց նկատեց որ թագուհու զօրքն ու նաւերը հետզհետէ թշնամու կողմն են անցնում, երևի նոյն իսկ Կղ՛էոպատրայի հրամանով, որովհետև նա էլ այս անգամ դրժել էր իւր բարեկամին, և թագնուելով մէկ տաճարի շիրմի մէջ՝ պատուիրել

էր յայտնելու որ ինքը մեռել է։ Անտոնիոս որ լսեց այս լուրը՝ յուսահատութեամբ սրով զարկեց իրան և մահացու վէրքով վիրաւորեց. երբ արեան մէջ շաղախուած ընկած էր մահամերձ՝ եկան ասացին նորան, որ Կղէոպատրան դեռ ևս կենդանի է։ Նա ուղեց որ վերջին շունչը նորա աչքի առաջը փչէ և հրամայեց որ նորա թագնուած շիրիմը տանեն, որտեղ և մեռաւ չարաչար տանջանքով։

Դորանից յետոյ Կղէոպատրան անօգուտ տեղը ջանաց որ Օկտաւիանոսին էլ հրապուրէ. նա պատրաստվում էր իւր յաղթական կառքին փառաւոր զարդ շինել խորամանկ թագուհուն։ Այս որ իմացաւ Կղէոպատրան՝ վճռեց որ մահուամբ ազատուի այնպիսի խայտառակութիւնից։ Նա երկու թունաւոր օձ բերել տուաւ կուրծքի վերայ դրաւ և մեռաւ թոյնի ներգործութիւնից։ Այդ ժամանակուանից Եգիպտոսն էլ դարձաւ հռոմէական նահանգ (30 թ.)։

Անտոնիոսի մեռնելուց յետոյ, Օկտաւիանոս այլևս հակառակորդ չունենալով իրան՝ տէր դարձաւ Հռոմի ընդարձակ պետութեանը։ Նա ընդունեց Կեսար մականունը (որ մինչև այսօր էլ տալիս են անսահման միապետներին). իսկ Ծերակոյտը տուաւ նորան Օգոստոս պատուանունը, որ կնշանակէ մեծափառ, նուիրական։

Այսպէս ահա՝ Հռոմէական հասարակապետութիւնը, երկար արիւնհեղութիւններից յետոյ, վերջապէս ոչնչացաւ և նորա տեղը հաստատուեցաւ Ինքնակալութիւն 30 թ. Քր. ծն. յառաջ։

Ի.

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՓԱՌՔԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՆԿՈՒՄԸ.

Բազմաթիւ յաջողակ նուաճումներով Հռովմի պետութիւնն այնքան ծաւալուեցաւ, որ բուն Իտալիան նորա մի աննշան մասն էր կազմում միայն։ Նա տարածվում էր երեք ցամաքների վերայ՝ Ատլանդեան ովկիանոսից մինչ Եփրատ գետը և Հռենոսից, Դանուբից ու Սև ծովից մինչև Արաբական ու Լիբիական անապատները։ Այս լայնածաւալ տարածութեան մէջ գտնվում էին Պոր-

տուգալիան, Սպանիան, Գալլիան, Իտալիան, Յունաստանը, Մակեդոնիան, Փոքր Ասիան, Ասորիքը, Եգիպտոսը, Կարքեդոնը և Նումիդիան։ Ամբողջ պետութեան մէջ 120 միլիոն բնակիչ կար (20 միլիոն բուն Հռոմայեցիք, 40 միլ. ստորադրեալներ և 60 միլ. ստրուկ ժողովուրդ)։ Նշանաւոր քաղաքների թիւը հասնում էր մինչ 6000-ի, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում էին Հռոմ, Անտիոք և Աղէքսանդրիա։ Հռոմի մէջ մէկ ու կէս միլիոն բնակիչ կար, բայց սոցանից փոքր մասն էին բուն Հռոմի քաղաքացիք։ Զօրքի թիւը հասնում էր 400,000-ի, որ բաժանած էր 25 լեգէոնի և ըստ մեծի մասին ցրուած էր սահմաններում Հռենոսի, Դանուբի և Եփրատի մօտերքը։ Հռոմի մէջ 400-ի չափ տաճարներ կային, մի քանի մեծամեծ հրապարակներ, թէատրոններ և փառաւոր պալատներ։ Կիկերոնի տունը գնահատում էին 240,000 մանեթ, իսկ Կլոդիոսինը՝ 800,000։ Առանձին շքեղութեամբ անուանի էր Օգոստոսի բարեկամ Մեկենասի տունը։ Մարկոս Սկաւրոս շինել տուաւ իւր ծախքով մարմարոնեայ թէատրոն, որի բեմը զարդարուած էր 3000 յունական արձաններով և թանգագին պատկերներով. այս թէատրոնի մէջ 80,000 մարդ էր տեղաւորվում. իսկ մեծ կրկէսի մէջ՝ 250,000։ Հռչակաւոր էին նոյնպէս սիւնազարդ ու կամարաձև դահլիճները, ծովակռուի համար շինուած աւազանները, բաղնիքները, յաղթական կամարները, կոթողները, ջրմուղները ևայլն։

Մի քանի մեծատունների զեղխութիւնը սահման չունէր։ Շինութեանց մարմարիոնի համար ահագին գումարներ էին վատնվում։ Լուկուլլոս սարեր քանդեց՝ ու լճեր ճեղքեց, որ ինչ է ծովի ջուր հանէ ցամաքը և արհեստական լճակի մէջ ծովային ձկներ պահէ։ Նորա օրինակին հետևում էին և ուրիշ հարստականներ։ Մի անգամ նա մի կոչունք տուաւ Կիկերոնին ու Պոմպէոսին, որ 10,000 մանէթ նստաւ իրան, իսկ տանտէրը դեռ ևս ներողութիւն էր խնդրում, որ ժամանակին իմաց չտուելով իրան՝ չէր կարողացել հարկաւոր պատրաստութիւնները տեսնել։ Շռայլութիւնն ամեն բանի մէջ տիրապետում էր։ Պատմում են, որ Հորտենսիոս իւր

ծառերն անգամ գինւով էր ոռոգում, և մեռնելուց յետոյ թողեց 10,000 դոյլ ընտիր քիոսեան գինի: Կրասոսի կարծիքով միայն նա կարող էր հարուստ համարուել, ով որ իւր հաշւով կարող էր բոլոր զօրքը պահել:

Աշխարհի զանազան կողմերից Հռոմ էին թափվում շռայլութեան նիւթեր, ըստ որում իւրաքանչիւր ոք ցանկանում էր մի հազուագիւտ անծանօթ առարկայով փայլել. շատ անգամ մի հատ բերովի ձուկն աւելի էր արժենում, քան թէ մի պարարակ եզն: Մեծատունների մօտ ծառայում էին բազմաթիւ ստրուկներ, որոնց վերայ բաժանած էր ամեն տեսակ աշխատութիւն: Պարտէզների մէջ որոշած էին տարուան եղանակներին յարմար առանձին բաժանումներ. սոքա զարդարուած էին յունական փառաւոր անդրիներով:

ԻԱ.

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄՆ. ՀԱԼԱԾԱՆՔ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԴԷՄ.

Օգոստոս կայսեր օրերում, երբ մարդկութեանը իւր յարգանքը դէպի ամենայն կրօն խպառ կորցրած թաղուածէր խորին մոլութեան մէջ, երկնքից փրկիչ առաքուեցաւ խոստացեալ Մեսիան, որ ծնաւ Մարիամ կուսից Հրէաստանի Բեթղէհէմ քաղաքում: Երեսուն տարի նա համեստ ու գործունեայ կեանք վարեց և զարգացաւ աստուածային ողեշնչութեամբ. յետոյ երեք տարի շարունակ ուսուցանում էր գիւղերում ու քաղաքներում աստուածային ուսումն—սէր առ Աստուած և առ ընկեր. հեզութիւն, ողորմութիւն, հաւասարութիւն և ինչ որ խօսքով ուսուցանում էր, գործով կատարում էր նա. «նախ առնէր և ապա ուսուցանէր»

Յիսուսի համբառնալուց յետոյ՝ նորա աշակերտներն սկսան շրջել գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք և քարոզել հեթանոսներին Աստուծոյ բանը: Հաւատացեալների թիւը հետզհետէ շատանում էր: Արդէն առաքելոց ժամանակ քրիստոնէութիւնը հիմք ձգեց նոյն ժամանակուան երեք յայտնի ցամաքներում. իսկ Հայաստանի մէջ

Աբգար թագաւորը քրիստոնեայ եղաւ, դեռ քանի որ Քրիստոս աշխարհիս վերայ էր: Ամեն մի առանձին հաւատացեալ ժողովրդի վերայ, իբրև առաքելոց յաջորդ, հսկում էր առանձին Վերատեսուչ (եպիսկոպոս). սորան իւր պարտականութիւնները կատարելու մէջ օգնում էին Երէցներ և սարկաւագներ:

Սակայն քրիստոնէութիւնը հալածիչներ ու զրպարտիչներ ևս ունեցաւ: Առաջին հալածանքը բարձրացաւ Հրէաստանում՝ քահանայապետների և դպիրների գրգռմամբ: Բայց ո՛չ յորդոր ո՛չ սպառնալիք ո՛չ բանտ, ո՛չ մահ չէին կարողանում Քրիստոսի մարդասիրական ուսման տարածումը խափանել. շատ շատերը յօժարակամ ուրախութեամբ ենթարկում էին իրանց անձը չարաչար տանջանքների, քան թէ կը համաձայնէին ուրանալ փրկչին. առաջին զոհը հաւատոյ համար եղաւ Ստեփաննոս նախավկան, և սորանից յետոյ դեռ շատ ժամանակ քրիստոնէից արիւնը հեղեղի պէս թափվում էր հալածանքների երեսից:

Ամենից խիստ հալածանքների ենթարկուեցաւ քրիստոնէութիւնը Հռոմի կայսրների կողմից: Այս գոռոզ աշխարհակալները և իրանց կուսակալները չէին կարողանում ներել, որ քրիստոնէական ուսումն բոլորովին պախարակում էր իրանց վարած զեղխ ու մոլի կեանքը: Դոցա աչքում քրիստոնեաները տգէտ մոլորեալներ էին և մարդկութեան թշնամի: Կայսրների այսպիսի վարման վերայ պէտք չէ զարմանալ, ըստ որում եթէ կործանուէր հեթանոսութիւնը՝ պիտի քայքայուէին և տէրութեան այն ժամանակուան շատ կարգերը. իսկ հաստատուած կարգերը քանդուէին թէ չէ՝ բոլորովին պիտի կորչէր կայսրների նշանակութիւնը ևս: Ամեն կայսր մինչև անգամ իբրև մի աստուածութիւն էր համարվում, առանձին տաճար էր ունենում և առանձին քրմեր էր պահում: Այսպիսի ողորմելի աստուածները իհարկէ պէտքէ հակառակէին աստուածային ճշմարիտ ուսման տարածուելուն: Քրմերը որ մեծամեծ օգուտներ էին ստանում տաճարների եկամտից, զոհաբերութիւններից և հեթանոսական տօների արդիւնքից՝ բնական է, որ պէտքէ խստիւ հալածէին քրիստոնէութիւնը:

Հռոմի կայսրներից՝ քրիստոնեաների ամենագաժան թշնամին Ներոնն էր: Հռոմայեցի պատմիչների ասելով՝ նա հրամայել էր ծածուկ կրակ տալ Հռոմ քաղաքը, որպէս զի յետոյ ինքը նորից շինել տայ և իւր անուամբ Ն ե ր ո պ օ լ ի ս անուանէ: Եւ այն ինչ ամբողջ քաղաքը սարսափելի հրդեհով բռնուած մոխիր էր դառնում՝ Ներոն իւր պալատի տանիքի վերայ երաժշտի զգեստ հագած և սրինգ ածելով՝ երգաբանում էր Տրովայի աւերումն: Այս անցքը մեծ յուզմունք բարձրացրեց ժողովրդի մէջ: Ներոն մեղքն իրանից թօթուելու համար լուր տարածեց, իբր թէ քրիստոնեայքն են կրակ տուել քաղաքը. այս խեղճերն առանց այն էլ շատ նեղ դրութեան մէջ էին, այժմ ամեն ոք նոցա դէմ զինուեցաւ: Անագորոյն կայսրը նոցանից անհամար բազմութիւն նահատակել տուաւ. շատերին խաչել տուաւ. շատերին գիշատիչ գազանների առաջը ձգել տուաւ, այլ ոմանց՝ հրամայեց վառողական նիւթ ածել վրաները և ջահերի պէս վառել կայսերական պարտիզի մէջ, երբ այդ տեղ զուարճութեան հանդէսներ էր սարքել՝ Հռոմի փչացած ժողովրդին բաւականութիւն տալու համար: Այս գազանաբարոյ անձն էր դարձեալ, որ նահատակեց Պետրոս և Պօղոս առաքեալներին, առաջնին խաչել տալով, երկրորդին գլխատելով:

Նոյնպիսի խստութեամբ հալածում էին քրիստոնէութիւնը Դոմետիանոս, Տրայանոս, Մարկոս Աւրելիոս և այլ կայսրներ ևս: Ինչ թշուառութիւն էլ պատահէր՝ յանցանքը քրիստոնէից վերայ էին գնում և չարաչար տանջում խեղճերին: Եւ ոչ միայն Հռոմի պետութեան մէջ, այլ ուրիշ երկրներում ևս նոյն հալածանքներն էին կրկնվում քրիստոնէից դէմ. Հայաստանի մէջ Սանատրուկը չխնայեց մինչև անգամ իւր սիրասուն դստեր՝ Սանդխտի կեանքը և սորան էլ Թադէոս առաքելոյ հետ հաւատոյ զոհ տուաւ Շաւարշան դաշտում:

Սակայն, արհամարհելով աշխարհիս կեանքը և յոյս դնելով միայն հանդերձեալ կեանքի վերայ, քրիստոնեայք դիմանում էին ամեն տեսակ չարչարանքների և մինչև անգամ բորբոքուած խարոյկի մէջն էլ գոհաբանութեամբ ու սաղմոսերգութեամբ էին մեռ-

նում: Նահատակների անսահման համբերութիւնը, հեզութիւնը և յոյսը զարմացնում էր հեթանոսներին, որոնցից շատերն այդ տեսնելով՝ հետևում էին նոցա: Հալածանքները միւս կողմից էլ նպաստում էին քրիստոնէութեան տարածման, վասն զի աքսորուածներն ուր գնում՝ քարոզում էին Աւետարանը. ինչպէս Հռիփսիմեանց միջից Նունէ կոյսը, որ քարոզեց Վրաստանում: Այսպէս՝ հալածանքները տևեցին երեք դար, մինչև որ Մեծն Կոստանդիանոս պաշտպան հանդիսացաւ քրիստոնէութեան:

ԻԲ

ՀՌՈՎՄ ԿԱՅՍԵՐԱՑ ԺԱՄԱՆԱԿ

Ս կ ս ա ծ 30 թ. Ք. ր. յ ա ռ ա ջ. մ ի ն չ և 476 թ. Ք. ր. ծն. յ ե տ ո յ:

ՕԳՈՍՏՈՍ.

Օկտաւիանոս Աւգոստոս՝ Հռոմի առաջին կայսրը՝ թէև խորամանկութեամբ հասաւ միապետութեան, բայց սկսաւ խոհեմ և չափաւոր կերպով կառավարել և աշխատում էր իւր նախկին անգթութեանց հետքերը ջնջել: Կեսարի վիճակից վախենալով՝ նա ձեռնամուխ չեղաւ խախտելու ոչ Ծերակուտի, ոչ հիւպատոսների, ոչ ցեղապետների և ոչ հասարակապետական ուրիշ հաստատութեանց իրաւունքները: Սակայն սոքա ամենքն էլ մնում էին լոկ անուամբ, միայն ձևի համար: Աւգոստոս ամեն կերպ աշխատում էր սեպհականելու իրան անսահման իշխանութիւն: Ժամանակ առ ժամանակ կեղծաւորվում էր, իբր թէ շատ ծանր է իրան համար վարչութեան անհնարին դժուարութիւնները կրել և ցանկութիւն էր յայտնում իշխանութիւնից հեռանալու. բայց զիջանելով մտերիմների ու բարեկամների աղաչանքներին՝ նորէն յանձն էր առնում ծառայել հայրենիքին 5 կամ 10 տարի ժամանակով: Այսուամենայնիւ Աւգոստոս մի պարզ քաղաքացու կեանք էր վարում. ուտելու, հագնուելու մէջ շատ չափաւոր էր, և միայն ապահովութեան համար թիկնապահներ էր պահում:

Հռոմի ժողովուրդը ներքին երկարատև խռովութիւններից ձանձրացած ու ոգեսպառ՝ վաղուց արդէն փափագում էր հանգստութեան ու ապահովութեան, և այս յիրաւի տուաւ նորան Օգոստոս իւր իմաստուն կառավարութեամբ: Հարուստներն ստացան գոյքի ու կեանքի ապահովութիւն, սորանով գոհ եղան Հռոմայեցիք և նախկին ազատութիւնն այլևս ոչ ոքի աչքին չէր գալիս, մանաւանդ որ հասարակապետական վաղեմի ազատ կարգերին սովոր քաղաքացիք արդէն մեռած էին ներքին պատերազմների մէջ:

Օգոստոս խաղաղութիւնը հաստատելուց յետոյ՝ հոգ տարաւ Հռոմը շքեղութեամբ փայլեցնելու և գեղարհեստներն ու գիտութիւնները ծաղկեցնելու: Այս գործողութեանց մէջ նորան գործակից ու խորհրդակից էին քաջ և հմուտ Ագրիպպաս զօրապետն և իմաստուն ու ճարտար Մեկենաս: Վերջինիս հովանաւորութեամբ Օգոստոսի ժամանակ գիտութիւններն այնքան ծաղկեցան Հռոմի մէջ, որ նոյն ժամանակամիջոց իրաւամբ Ոսկեդար կոչուեցաւ: Այդ շրջանի մէջ նշանաւոր եղան Վիրգիլիոս բանաստեղծը, (որ գրեց «Մշակականք» և «Հովուականք» ընտիր բանաստեղծութիւնները), Օվիդիոս Նասոն, Տիբուլլոս, Պրոպերցիոս, փեդրոս առակագիրը, Տիտոս Լիվիոս և Կոռնելիոս Նեպոտ պատմագիրները և այլք:

Սահմանների ապահովութեան համար՝ Օգոստոս մի քանի յաջողակ պատերազմներ տուաւ Սպանիայում և Գալլիայում. Դանուբի վերայ էլ զանազան տեղեր տիրապետեց, բայց գերմանացւոց նուաճելու համար բոլոր փորձերն անօգուտ եղան:

Գերմանացիք բնակվում էին Հռենոսից մինչև Վիսլա և Դանուբից մինչև Գերմանական ու Բալթիկ ծովերը: Նոցա երկիրը խիտ անտառով ու ճահիճներով ծածկուած էր. նոյնչափ և կոշտ ու վայրենի էին բնակիչներն իրանք. նոքա ոչ քաղաքներ ունէին, ոչ գիւղեր, այլ գազանների մորթով ծածկուած՝ թափառում էին սարերի ու անտառների մէջ, պարապելով որսորդութեամբ: Գերմանացիք հսկայ, պնդակազմ ու պատերազմասէր մարդիկ էին. երբեմն ամբողջ մի ցեղ տնով տեղով ճանապարհ էր ընկ-

նում ուրիշ անծանօթ երկիրներ՝ ապրուստ ճարելու կամ ասպատակելու համար, ինչպէս Մարիոսի ժամանակ Կիմբրացիք ու Տևտոնացիք յարձակուեցան Հռոմի վերայ:

Հռոմէական պետութեան սահմաններն ընդարձակուելով՝ հասաւ մինչև Գերմանացւոց բնակութեան տեղերը: Հռոմայեցիք միշտ վտանգ էին սպասում այդ տեսակ պատերազմասէր դրացիններից, ուստի ջանք էին անում նուաճել նոցա: Օգոստոս ուղարկեց նոցա դէմ իւր խորթ որդուն՝ Դրուսոսին, բայց սա չորս անգամ արշաւելով Գերմանացւոց վերայ՝ ոչինչ յաջողութիւն չգտաւ և վերջ ի վերջոյ սահմաններն ապահովելու համար մի քանի ամրոցներ շինեց Հռենոսի ափերով: Սորա եղբայր Տիբերիոսն աւելի վտանգաւոր եղաւ Գերմանացւոց համար. վասն զի խորամանկութեամբ ներքին գժտութիւն էր սերմանում նոցա իշխանների մէջ և շատերին գրաւում էր զանազան խոստումներով:

Բայց ամենից ահարկու եղաւ Վարոս կուսակալը, որ 9 թ. մտաւ Գերմանիա և սկսաւ այնտեղ Հռոմէական կարգեր մտցնել և հարկ պահանջել: Այդ ժամանակ Քերուսկեան ցեղից մի քաջ երիտասարդ՝ Արմինիոս (Հերման) անուամբ, որ վարժուած էր նոյն իսկ Հռոմայեցի զօրքի մէջ, անցաւ գրգռուած հայրենակիցների գլուխը, որ փրկէ հայրենեաց ազատութիւնը: Նա խորամանկութեամբ սուտ լուր տարածեց, թէ Վեզերի մօտ Գերմանացիք ապստամբել են. Վարոս 40,000 զօրքով շտապեց որ այնտեղ հասնի. նա պէտքէ անցնէր Տևտոբուրգի թանձր անտառի միջով. Արմինիոսն էլ հենց այդ կ'ուզէր, որ անտառի ներսը քաշէ Վարոսին: Այդ տեղ թագ էին կացած Գերմանացիք. նոքա ամեն կողմից թափուեցան Հռոմայեցւոց վերայ. երեք օր շարունակ արիւնահեղ կոտորած եղաւ. վերջը Հռոմէական լէգէոնները ոչնչացան, և Վարոս յուսահատութիւնից սրի վրայ ընկաւ մեռաւ:

Այս անբաղդութեան գոյժը սարսափ տարածեց Հռոմի մէջ. կայսրն ինքը մեծ սրտատանջութեամբ պտտում էր պալատի մէջ և գլուխը պատերին խփելով աղաղակում էր. Վարոս, Վարոս, տուր ինձ լէգէոններս, ո՞ւր են իմ լէգէոններս»:

Վախենալով թէ մի՛ գուցէ Գերմանացիք արշաւեն Հռոմի վերայ՝ Տիբերիոս և յետոյ քաջ Դրուսոսի որդին Գերմանիկոս նոր զօրքով գնացին Գերմանացւոց դէմ, բայց ոչինչ յաջողութիւն չունեցան։

ԻԳ.

ՕԳՈՍՏՈՍԻ ՎԱԽՃԱՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ.

Որքան բաղդաւոր էր Օգոստոս իւր վարչական ձեռնարկութեանց մէջ, նոյնքան անբաղդ էր իւր ընտանիքի մէջ։ Նա որդի չունէր, որ իւր աթոռը ժառանգէ։ Միտքը իւր դուստր Յուլիայի որդւոց վերայ էր, (Ագրիպպասի կնոջ), նոքա էլ մատաղ հասակում մեռան։ Նորա երրորդ կինը՝ նենգաւոր ու չարասիրտ Լիվիան՝ աշխատում էր իւր որդի Տիբերիոսին ժառանգ նշանակել տալ. դորա համար շատ անխիղճ միջոցներ գործ դրաւ Օգոստոսի մօտաւոր սիրելիների կեանքը մէջտեղից վերցնելու համար. վերջապէս նպատակին հասաւ։ Ընտանեկան վշտերով լցուած՝ Օգոստոս մեռաւ 14 թ. Ք. ծն. յետոյ, յանձնելով աթոռը Տիբերիոսին։ Պատմում են, թէ մեռնելու ժամանակ ասաց նա իրան շրջապատողներին. «Ծափահարեցէք ինձ, բարեկամք, ես լաւ կատարեցի իմ դերը»։ Արդարև 44 տարի իմաստութեամբ կառավարեց նա Հռոմը և արժանի եղաւ իւր ժամանակակիցների գոհութեանն ու գովասանքին։

Օգոստոսի առաջին յաջորդները՝ Տիբերիոս, Կայոս (Կալիգուլա), Կլաւդիոս և Ներոն՝ չտեսնուած բռնակալներ էին։ Նոցա սանձարձակութիւնը սահման չունէր, իրանց հպատակների ոչ կեանքը ոչ գոյքը չէին խնայում։

Տ ի բ ե ր ի ո ս (14—37 թ.) վերին աստիճանի կեղծաւոր, կասկածոտ ու խստասիրտ մի մարդ էր, ինչպէս որ լինում են սովորաբար բռնակալները։ Նորա օրերով լրտեսութիւնն արհեստ դարձաւ. ով ում հետ թշնամի էր գնում մատնում էր նորան, թէ

վ շ տ ա ց ր ե ց կ ա յ ս ե ր ա կ ա ն մ ե ծ ո ւ թ ի ւ ն ը, այսինքն վիրաւորական խօսքեր ասաց կայսեր դէմ կամ գլուխ չտուաւ նորա արձանին. մատնիչն առատ վարձ և շատ անգամ պատուաւոր տեղ էր ստանում։ Մեղապարտուածներին գլխատում էին, կամ երկաթի ճանկերով քաշ էին տալիս փողոցներով և ձգում Տիբերիս գետը։ Շատ պատուաւոր ընտանիքներ զոհ գնացին Տիբերիոսի այսօրինակ գազանութեանը։ Թշուառ մահապարտների ամեն մի դժգոհութեան ձայնը, ամեն մի հառաչանքը նոյնպէս պատժվում էր մահով։ Համարեա ոչ մի ազնիւ մարդ չկար, որ այդ արիւնարբու բռնաւորի աչքին թշնամի չերևար և այսպիսի կասկածամտութեան զոհ չգնար։ Տիբերիոս շրջապատեց իրան 10,000 թիկնապահներով, որոնք Պ ր ե տ ո ր ե ա ն ք էին կոչվում, մասամբ անձի պահպանութեան և մասամբ իւր զարհուրելի հրամանները կատարելու համար։ Վերջը կառավարութիւնն այդ թիկնապահների առաջնորդ Սէյանոսին յանձնեց, ինքը քաշուեցաւ Կապրէա կղզին և հրամայեց որ ոչ ոքի չընդունեն կղզին՝ առանց իրան գիտութեանը։ Եթէ մէկն անզգուշաբար դուրս էր գալիս կղզին՝ զարհուրելի տանջանքներով սպանվում էր։ Այն ինչ Տիբերիոս Կապրէայում շուայտ կեանք էր վարում՝ Սէյանոս անպատմելի անգթութիւններով չարչարում էր Հռոմը, և վերջապէս մտքումը դրաւ ինքնակալութիւնը յափշտակելու։ Տիբերիոս շտապեց եկաւ, Սէյանոսին և նորա բոլոր բարեկամներին սպանեց. սակայն դորանից յետոյ իրան անզուսպ իշխանութիւնն էլ երկար չտևեց. սպանիչները խեղդեցին նորան բարձերի տակ։

Նորա յաջորդը՝ Կ ա յ ի ո ս, որ ծաղրի համար կոչվում էր Կ ա լ ի գ ո ւ լ ա, այսինքն կօշիկ, Տիբերիոսի դաժանաբարոյութեան հետ ունէր և ցնդաբանութիւն։ Օրինակի համար նա մի անգամ հրամայեց կտրատել Իւպիտերի արձանների գլուխները և տեղը իւր պատկերները դնել. պահանջում էր որ պաշտեն իրան՝ ինչպէս Իւպիտերին։ Նորա յիմարութիւնն այն աստիճանի հասաւ, որ իւր ձիուն հիւպատոս նշանակեց. նորա համար մարմարեայ ախոռ շինեց և ոսկեղէն ամանների մէջ էր կերակրում նորան։ Այս տեսակ

զանազան անմտութիւններից յետոյ՝ սպանուեցաւ և սա։

Նորան յաջորդեց Կլաւդիոս, որ խաղալիք էր դարձած կանանց և անպիտան գերիների ձեռքը։ Սա մի առանձին հաճութիւն էր զգում մահապարտների դողդողագին չարչարանքը տեսնելով։ Վերջապէս սա էլ սպանուեցաւ իւր կնոջ ձեռքով։

Ներոնը (54—68), որի մասին վերևը խօսուեցաւ, ամենքին գերազանցեց իւր գժնի արարքներով։ Նա մինչև անգամ սպանեց իւր մօրը, կնոջը և ուսուցչին, որ էր հռչակաւոր Սենեքա իմաստասէրը։ Այսպիսի անասելի խստութեան հետ անմիտ ունայնասիրութիւն ու փառասիրութիւն էլ ունէր։ Ինքն իրան երևելի երաժիշտ ու դերասան էր համարում. այս պատճառով ճանապարհորդեց Իտալիան և Յունաստանը, որ իւր ճարտարապետութիւնն ամեն տեղ ցոյց տայ։ Պրետորեանք սորա կեանքին էլ վերջ դրին և ազատեցին Հռոմն այդ գազանի ձեռքից։ Նորա վերջին խօսքն այս էր. «Ահ, ինչ երևելի դերասան է կորցնում աշխարհն ինձանով»։

Նորանից յետոյ Պրետորեանք փողի համար ում ուզում էին՝ նորան էին կայսր հրատարակում։ Այսպէս՝ մի տարուան ընթացքում զանազան տեղերի լեգէոնները երեք կայսր ընտրեցին՝ Գալբա, Օթոն և Վիտելիոս, որոնք ոչինչ չարած՝ մէկը միւսից սպանուեցան խայտառակութեամբ։

ԽԳ.

ԽԱՂԱՂ, ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

Հռոմի պետութիւնը յիշեալ ուժգին հարուածներից յետոյ մի քանի ժամանակ ազատ շունչ քաշեց մի շարք ընտիր ու իմաստուն կայսրների հովանաւորութեան տակ։ Սոցա օրերով Հռոմը վերստին զօրացաւ ու պատկառելի դարձաւ. Ներքին խաղաղութիւնը տիրեց և իմաստուն ու խնայող կառավարութեամբ երկիրը կարգաւորուեցաւ. գիտութիւններն ու արհեստները պաշտպանութիւն գտան. մատնիչ, լրտես, անարգ ու հացկատակ մարդիկ հալածուեցան և Ծերակոյտը նորից ստացաւ իւր իրաւունքները։ Սոքա

ամենքն էլ փառաւորեցին իրանց անունը պանծալի գործերով. օրինակի համար.—

Վեսպասիանոս քայքայուած տէրութիւնը կարգի բերաւ, Հռոմի մէջ գեղեցիկ շէնքեր շինեց, ուսումնարաններ հիմնեց և Հրէից ապստամբութիւնը զսպելով՝ իւր որդի Տիտոսի ձեռքով առաւ Երուսաղէմը (70 թ.)։

Տիտոս այս թշուառութեանց միջոցին, երբ մի կողմից ժանտախտը մահ էր սփռում Հռոմի մէջ, միւս կողմից էլ Վեզուվ հրաբուղխը ժայթքեց ու լաւայով ծածկեց Պոմպէյ, Հերկուլանում և Ստաբեա քաղաքները (79), *) մեծ կարեկցութեամբ ու բարեսրտութեամբ ամեն տեղ այցելում էր, ամեն տեղ մխիթարում և օգնութիւն էր հասցնում։ Քաղաքացիք նորան տեսնելիս, կարծում էին թէ իրանց բարերար հրեշտակն են տեսնում։ Երբ իւր հայր Վեսպասիանոսի հրամանով և Հրէից յամառութիւնից հարկադրուած՝ քանդում էր Երուսաղէմը, աչքերն արտասուք էր թափում և, ինչպէս Սկիպիոնը Կարքեդոնի աւերման ժամանակ մտածում էր, որ մի օր էլ նոյնը կարող է Հռոմին պատահել։ Նորա անչափ բարութեանը համար՝ ժողովուրդը «սէր և բերկրութիւն մարդկային ազգի» անուանեց նորան։

(Սորա յաջորդ Դոմիտեանոսը 15 տարի (81—96) շարունակ Ներոնի օրերը բերաւ Հռոմի գլխին, մինչև որ վերջապէս սպանուեցաւ բռնութեամբ)։

Տրայանոս Սպանիացին (98—117) նուաճեց Դակիան

---

*) Տասնումեկ դար շարունակ թաղուած էին այս քաղաքներն անյայտութեան մէջ. միայն 1711 թուին Նէապօլսից 2 մղոն հեռի մի ջրհոր փորելու ժամանակ գտան երեք արձան, որ ներկայումս Դրեզդէնի թանգարանումն են։ 1788 թ. նշմարուեցան Պոմպէյի հետքերը և մինչև այսօր հետզհետէ բացվում են քաղաքի զանազան մասերը։ Դուրս են բերվում տնային կահ կարասիք, զանազան գործիքներ, ուտելեղէններ, դրամներ, պատկերներ, գրուածներ, մարդկանց կմախքներ նոյն և այլն։ Այս ամենը շատ մեծ նշանակութիւն ունի հին ժամանակուան ընտանեկան կեանքը, կրթութեան աստիճանը և արհեստների զարգացումն ուսումնասիրելու համար։

(այժմեան Ռումինիան ու Տրանսիլուանիան) որի բնակիչները շատ անհանգիստ էին անում Հռոմի սահմանները. Ասիայի մէջ տիրեց Ասորիքին ու Միջագետքին, հարկատու արաւ Հայաստանը և հասաւ մինչև Տիգրոն Պարթևաց թագաւորին գահավէժ արաւ, տեղն ուրիշին նշանակեց: Հռոմայեցւոց համակրութիւնն այնքան մեծ էր դէպի Տրայանոս, որ ամեն անգամ նոր կայսր ընտրելիս ասում էին «Քո կառավարութիւնդ այնպէս երջանիկ լինի, ինչպէս Օգոստոսինը և այնպէս հեզ, ինչպէս Տրայանոսինը»: Հռոմի մէջ այսօր էլ կայ նորա արձանը 150 ոտնաչափ բարձրութեամբ:

Ադրիանոս անձամբ ուսումնասէր լինելով պաշտպան եղաւ գիտութեանց ու արհեստների: Ութն տարի ճանապարհորդեց իւր տէրութեան նահանգները, մեծ մասը ոտքով, և ամեն տեղ աշխատում էր գեղեցիկ արհեստների յիշատակարաններ հաստատել: Հռոմի մէջ նա շինել տուաւ իրան համար ամուր հոյակապ շիրիմ, որտեղ յետոյ Հրեշտակապետաց ամրոցն էր: Թրակիայում շինեց Ադրիանոպոլիս քաղաքը:

Անտոնինոս Պիոս իւր խաղաղական, քաղցր ու արդար կառավարութեան համար «Հայր մարդկան» կոչուեցաւ: Նա միշտ ասում էր. «իմ կարծիքով լաւ էր մի քաղաքացու կեանքը պահպանել, քան թէ հազար թշնամու կեանքը վերջացնել»:

Մարկոս Աւրելիոս (161—180), որ կոչուեցաւ փիլիսոփայ: Նորա կառավարութեան ժամանակ Դանուբի եզերքի բնակիչներից շատերը Մարկոմաններ. Կուադներ և այլք գլուխ բարձրացրին և սկսան արշաւել ուղիղ Հռոմի վերայ: Խաղաղասէր կայսրը հարկադրուեցաւ զէնք առնել նոցա դէմ. գնաց նոցա կատաղի արշաւանքի առաջն առաւ. սակայն յաղթութիւնը դեռ կատարելապէս գլուխ չբերած հիւանդացաւ մեռաւ Վինդոբոնայի (Վիեննայի) մէջ 180 թ.:

ԻԸ.

ՀՌՈՄԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԱՆԿՈՒՄԸ.

Բարի կայսրների հետ միատեղ չքացաւ Հռոմի երջանկութիւնը ևս: Մարկոս Աւրելիոսի կառավարութիւնը կարելի է նմանեցնել մի պայծառ գեղեցիկ վերջալուսի, որից յետոյ պատում է մթութեան թանձր քօղը: Դարձեալ սկսան երևան գալ բարքերի ապականութիւնը, կայսրների խստութիւնները, ծանր հարկերը, ժողովրդի աղքատութիւնը, բարբարոսների յարձակումները, և այս ամենը արագապէս մղեցին Հռոմի կայսերութիւնը դէպի կորստեան անդունդը. 180 թուականից յետոյ կայսրները սովորաբար դաժան մարդիկ էին, որոնք ենթարկում էին ժողովրդն անլուր աղէտների: Շատ անգամ իրար հակաթոռ մի քանի կայսրներ էին ընտրւում. սոքա էլ փոխադարձ պատերազմների մէջ կոտորում էին միմեանց: Այսպէս 120 տարուան ընթացքում (մինչև 300 թ.) երեսուն ու վեց կայսր ընտրուեցան, որոնցից միմիայն վեցն իրանց բնական մահով մեռան: Նոքա Պրետորեանց ձեռքին խաղալիք դարձած ամօթալի ցածութեամբ աշխատում էին հաճոյանալ այս վերջիններիս. սոքա էլ անզուսպ յանդգնութեամբ մէկին սպանում միւսին էին բարձրացնում գահը, նայելով թէ ումից աւելի շահ ունէին: Կառավարութիւնն անցել էր անսանձ զինուորների ձեռքը: Այս բանը խախտեց տէրութեան հիմքը և կորստեան դուռը հասցրեց նորան: Բարեբաղդաբար երկու մեծ եղելութիւնք մի փրկարար ցնցում տուեին կեանքի այդ կորստական ուղղութեանը. դոցանից մէկն է Մեծին Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելը, միւսը՝ ազգերի մեծ գաղթականութիւնը:

ԻԹ.

ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍ. ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ՄԵԾ.

Դիոկղետիանոս 264 թ. գահը նստելով մտքումը

դրա բարենորոգել Հռոմէական պետութիւնը։ Աշխատեց նախ և առաջ Պրետորեանց մեծագումար գնդերի անսանձ ու վնասակար զօրութիւնը կոտրել․ բոլոր լեգէոնները փոքր փոքր մասերի բաժանեց և առանձին գնդապետների յանձնեց։ Իւր սրատեսութեամբն ու խոհեմութեամբը տեսնելով որ մենակ չպիտի կարողանայ կառավարել այն ընդարձակ ու քայքայուած պետութիւնը և արտաքին յարձակմունքներից պաշտպանել՝ Մ ա ք ս ի մ ի ա ն ո ս զօրավարին գահակից արաւ իրան։ Բայց նեղ ու դժուարին հանգամանքների պատահելով՝ սորանով էլ չբաւականացաւ. և իրանցից իւրաքանչիւրին մի մի կայսրակից ևս նշանակեց (Գալերիոսին և Կոստանդիոսին)։ Այսպիսով Դիոկղետիանոս կարողացաւ ապահովել տէրութեան սահմանները. հիւսիսային կողմում դադարեցրեց Գերմանացի ու Սարմատ ցեղերի արշաւանքները և Գալեան նորէն նուաճեց։ Ասիայի մէջ յաջողակ պատերազմներ տուաւ Պարսիկների դէմ, որոնք Սասանեան Արտաշիրի գահ նստելուց իվեր (222 Թ.) աշխարհակալական ձգտումներով ոգևորուած՝ ուզում էին հին պարսկական իշխանութիւնը մինչև Միջերկրական ծովի եզերքը տարածել հաստատել։ Տարաբաղդաբար Մեծին Խոսրովին չէր յաջողել այս վնասակար իշխանութիւնն սկզբում և եթ ոչնչացնել, վասն զի Արտաշիրը տեսնելով որ Խոսրով զէնքի ուժով խափանեց իւր նպատակը՝ նենգաւոր միջոցներով սպանել տուաւ նորան և Հայաստանը իւր իշխանութեան տակն առաւ։ Դիոկղետիանոս ցանկանալով, որ արևելքում Պարսից զօրութեան առաջն առնող իբրև պատնէշ մի տէրութիւն լինի՝ Թագաւորեցրեց Խոսրովի տան կոտորածից ազատուած Տրդատին, որ և Հռոմէական լեգէոնների օգնութեամբ եկաւ վերանորոգեց Արշակունի Թագաւորութիւնը Հայաստանի մէջ։

Սակայն Դիոկղետիանոսի մտցրած նորոգութիւնները չկարողացան տևողական լինել Հռոմի տէրութեան մէջ։ Հասարակապետութեան ժամանակ հաստատուած զօրութիւնն ու կարգը անկանգնելի կերպով խախտուած էին փառասէր միապետների իշխանութեան տակ։ Տեսաւ Դիոկղետիանոս որ իւր ցանկացածի պէս չի

կարող վերանորոգել պետութիւնը՝ ինքնակամ Թողեց գահը հեռացաւ (305 Թ.). բայց իւր առանձնութեան մէջ էլ հանգիստ չգտաւ, և նոր բռնաւորներից ուղարկուած սպանիչների ձեռքը չընկնելու համար՝ մեռցրեց ինքն իրան։

Դորանից յետոյ վեց զօրավարների մէջ ծագած արիւնահեղ պատերազմներում վերջապէս յաղթող դուրս եկաւ Կոստանդիանոս և ինքնակալութիւնը սեպհականեց (324 Թ.)։

Պատմում են որ իւր հակառակորդների դէմ կռուելու ժամանակ Կոստանդիանոս նեղն ընկնելով, երբ հեթանոսական աստուածներին ուղղած իւր բոլոր աղաչանքներն անօգուտ եղան՝ յաղթութիւն խնդրեց քրիստոնէից Աստուծոյն և խոստացաւ ընդունել քրիստոնէութիւնը, թէ որ ինքը յաղթէ։ Պատերազմի բորբոքուած միջոցին նորա աչքին երևեցաւ երկնքում մի լուսափայլ խաչ, որի վերայ գրած էր. «սորանով կը յաղթես»։ Կոստանդիանոս իսկոյն սոյնպիսի նշանով դրօշակ շինել տուաւ, որի առաջնորդութեամբ ոգևորուած զօրքերը կատաղաբար յարձակուեցան Ջարդեցին Թշնամուն։ Դորանից յետոյ Կոստանդիանոս ընդունեց քրիստոնէութիւնը։ (311 Թ.).

Քրիստոնէութիւն ընդունելը բազմացրեց Կոստանդիանոսի կուսակիցների թիւը, և սոցա օգնութեամբն էր, որ յաղթեց իւր հակառակորդներին։

Կոստանդիանոս քրիստոնէութիւնը տիրապետող կրօն արաւ և պաշտպան ու հովանաւոր եղաւ քրիստոնեաներին։ Հալածուած, չարչարուած, արհամարհուած քրիստոնեաները, որոնցից շատերը երկիւղից՝ ծածուկ էին պահում իրանց դաւանութիւնը, այժմ ազատ համարձակ պաշտում էին Աստուծոյն։ Հոյակապ և շքեղ եկեղեցիք կանգնեցան ամեն տեղ։ Խաչը, որ առաջ մահապարտութեան խայտառակ գործիք էր համարվում, այժմ սկսաւ սրբութեամբ փայլել ամեն մի եկեղեցու բեմի վերայ։

Նորա մայր Հեղինէն նոյնպէս պաշտպան եղաւ քրիստոնէութեան և ամեն կերպ աշխատում էր, որ տարածուի աստուածային ուսմունքը։ Նա գնաց Երուսաղէմ, մկրտուեցաւ Յորդանանի մէջ, և երեք փառահեղ տաճարներ շինել տուաւ, մէկը Քրիստոսի ծննդեան, միւսը՝ Թաղման և երրորդը համբարձման տեղը։

Եպիսկոպոսները քրիստոնէութեան համար Կոստանդիանոսի պէս հզօր պաշտպան գտնելով՝ խնդրեցին նորան մի ընդհանուր եկեղեցական ժողով կազմել՝ այն ժամանակ տարածուած հերձուածողական վարդապետութիւնները քննադատելու համար։ Կոստանդիանոս 325 թ. առաջին անգամ տիեզերական ժողով կազմեց Նիկիա քաղաքում, որի մէջ ներկայ էին 318 հայրապետներ, իմիւսոց և Գրիգոր Լուսաւորչի որդին Արիստակէս՝ Հայոց կողմից։ Այստեղ դատապարտուեցաւ Աղեքսանդրիացի Արիոս երեցի աղանդը և հանգանակուեցաւ ճշմարիտ հաւատոյ գլխաւոր հիմունքը։

ՆՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ։ Կոստանդիանոս մտքումը դրաւ մի նոր մայրաքաղաք շինել տէրութեան արևելեան մասում, մասամբ նորա համար, որ հեռանայ Հռոմի մէջ բուն դրած հեթանոսական շրջանից. և մասամբ նորա համար, որ տէրութեան չափազանց ընդարձակութիւնը արևելքումն էլ մի կենտրոն էր պահանջում։ Կոստանդիանոս յարմար տեղ էր որոնում. նա ընտրեց Բիւզանդիոն աննշան քաղաքը, որ գտնվում էր Մարմարեան և Սև ծովերը միաւորող նեղ անցքի վերայ, այդ տեղն իբր մի բանալի էր նոյն ծովերըն ու Միջերկրական ծովը շրջապատող երկրների համար։ Նոր քաղաքը շքեղութեամբ զարդարելու համար ոչինչ աշխատանք, ոչինչ միջոց չէր խնայվում։ Ութ տարի շարունակ շինութիւններ էին շինում նորա մէջ (329—337)։ Նոր մայրաքաղաքը կոչուեցաւ Նոր—Հռոմ, իսկ յետոյ հիմնադրի անուամբ՝ Կոստանդինուպօլիս։ Սորանից յետոյ Կոստանդիանոս ճանապարհ ընկաւ դէպի Պաղեստինէ, որպէս զի Յիսուսի նման ինքն էլ մկրտուի Յորդանանի մէջ. բայց տեղ չհասած մեռաւ Նիկոմիդիա քաղաքում (337 թ.)։ Քրիստոնեայք սրբոց կարգը դասեցին նորան և Մեծ մականունը տուին։

ԻԸ.

ՀՌՈՄԻ ՎԵՐՋԻՆ ԿԱՅՍՐՆԵՐԸ.

Կոստանդիանոսից յետոյ նորա երեք որդիքը Կոստանդիանոս

Բ. Կոստանդիոս և Կոստաս իրանց մէջ բաժանեցին տէրութիւնը. բայց կարճ ժամանակից յետոյ նրքին պատերազմներ յարուցին իրար դէմ, որոնց վախճանն այն եղաւ, որ Կոստանդիոս միայնակ տէր դարձաւ բոլոր պետութեանը։ Այս միջոցին գերմանական ցեղերը նորէն յարձակուեցան Գալլիայի վերայ։ Կոստանդիոս իւր ազգակիցներից շատերին սպանել էր տուել. էլ ուրիշ յարմարաւոր անձն չէր մնացել նորան օգնելու, բացի Յուլիանոսից, որ իւր հօրեղբօրորդին էր. Կոստանդիոս սորան Կեսար նշանակեց և ուղարկեց Գալլիա։ Այստեղ Յուլիանոս մեծ յաջողութեամբ յաղթեց բարբարոսներին, երկիրը կարգաւորեց և իւր քաղցր, իմաստուն ու ժիր կառավարութեամբն ամենքին սիրելի եղաւ։ Յուլիանոսի յաջողութիւններն անհանգիստ էին անում Կոստանդիոսին, ուստի սա պատճառ բերելով արևելքում իւր կրած ձախորդութիւններ, զօրքը պահանջեց Յուլիանոսից։ Սակայն ոչ Գալլիացիք ոչ զօրքը չլսեցին Կոստանդիոսի պահանջը, և կայսր անուանեցին Յուլիանոսին։ Որքան էլ աղաչում՝ յորդորում էր Յուլիանոս, որ հնազանդեն Կոստանդիոսին, չէին համաձայնում։ Վերջապէս այս մասին յայտնեց կայսերը, խոստանալով միշտ հնազանդել նորան։ Կոստանդիոս զայրացաւ և երբ պատրաստվում էր պատերազմելու Յուլիանոսի դէմ՝ մեռաւ (361) և նորա տեղը նստաւ Յուլիանոս։

Յուլիանոս գիտնական և ուսումնասէր մարդ էր. նորա գործունէութիւնը զարմանալի էր. մի րոպէ նորան պարապ չէր կարելի տեսնել, կամ շռայլ զուարճութեանց ետևից ընկած։ Նա շատ պարզ չափաւոր կեանք էր վարում։ Մի օր սափրիչ պահանջեց իւր մօտ. սա եկաւ շքեղապէս հագնուած ու զարդարուած։ Կայսրը մնաց ապշած։ «Ես սափրիչ ուզեցի, ասաց նա, ո՛չ թէ մի բարձր պաշտօնակալ»։ Նորան պատասխանեցին թէ սա է սափրիչը։ Յուլիանոս հարցրեց նորան, թէ ո՛րքան եկամուտ ունի, և իմացաւ որ օրէնը 20 ստրկի և 20 ձախքէ ստանում գանձարանից. և բացի սորանից աճագին ռոճիկ ու մեծամեծ պարգևներ։ Իսկոյն հրամայեց վռնտել նորան՝ ուրիշ հազարաւոր խոհարարների, մատուակների և այլոց հետ։

Յուլիանոս հեթանոսութեան դէմ եղած բոլոր հրովարտակները ջնջեց և կրօնի կատարեալ ազատութիւն հրատարակեց. ինքն էլ յայտնապէս հետևեց հեթանոսութեան. այս պատճառով Ուրացող անուանեցին նորան: Յուլիանոս երկամեայ հմուտ և իմաստուն կառավարութիւնից յետոյ մեռաւ Ասիայում՝ Պարսից դէմ վարած պատերազմի մէջ:

Նորա մահուանից յետոյ Շապուհը նենգութեամբ կանչեց Տիրանին և աչքերը հանել տուաւ՝ Յուլիանոսին հասցրած օգնութեանը համար. Նորա տեղը Արշակ Բ.—ին թագաւոր կարգեց, որով ուզում էր Հայոց յարաբերութիւններն իսպառ կտրեցնել Հռոմայեցիներից և իւր ազդեցութեանը ենթարկել.

ԻԲ.

ՀՈՆԱՑ ԱՐՇԱՒԱՆՔԸ. ԱԶԳԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ, 375 Թ. Քր. ծն. յետոյ.

Յուլիանոսից յետոյ կայսր ընտրուեցաւ Վալենտինիանոս. սա էլ կայսերակից արաւ իւր եղբայր Վալէսին. յետոյ սոքա տէրութիւնն իրանց մէջ բաժանեցին: Արևելքում Յունական մասում՝ տիրում էր Վալէս, իսկ Արևմուտքում Հռոմէական մասում Վալենտինիանոս: Կարճ ժամանակից յետոյ մեռաւ այս վերջինս և տէրութիւնը մնաց մենակ Վալէսին: Սորա կայսերութեան ժամանակ Եւրոպայի մէջ պատահեցաւ ազգերի մեծ տեղափոխութիւնը, որի նախապատճառը Հոնք եղան (Մոնղոլաց ազգը):

Հոնք բնակւում էին Ասիայի հիւսիսում, Սիբիրիայից մինչև Չինաստան ու Հնդկաստան: Նոցա այլանդակ կերպարանքին նայելով՝ կախարդներ ու չար ոգիներ էին համարում նոցա: Կարճ և հաստ կազմուածք, մասլի պարանոց, լայն թիկունք, մեծ գլուխ և փոքրիկ պսպղուն աչքեր ունէին. նոքա տղաների երեսը մանկութեան ժամանակը ճեղքճեղքում էին, որ մազ չբուսնի: Նոցա հագուստը բաղկանում էր գազանների մորթուց, տները փաթաթում էին այծենով. վայրի բոյսերի արմատներ ու հում միս էին ուտում. միսը փափկացնելու համար դնում էին ձիու վերայ իրանց

տակը, որ ծեծկուի: Նոքա տների մէջ չէին ապրում և մանկութիւնից ընտելանում էին ցրտի, քաղցի ու ծարաւի: Նոքա իրանց տգեղ բայց վազկան ձիանց վերայ մեխուած՝ թափառում էին այս ու այն կողմ. մինչև անգամ ուտելիս, խմելիս, խորհրդակցելիս էլ չէին իջնում ձիերից. պատերազմը նոցա սիրելի պարապմունքն էր. նոքա կռւում էին խառն ի խուռն անկարգ յարձակմունքով և անվեհերութեամբ. մէկ ձեռքին սուր բռնած, միւս ձեռքին պարան, որով ձգում քարշում էին թշնամուն իրանց յետևից. նոցա աղտոտ ու անճոռնի կանայքն ու երեխայքը նոյնպէս հետևում էին տղամարդկանց: Այս անկարգ հրոսակների երեսից իրանց երկիրն ապահովելու համար՝ Չինացիք իրանց տէրութեան հիւսիսային սահմանով մի ահագին պարիսպ շինեցին 450 մղոն երկայնութեամբ:

Հոնք՝ մասամբ նեղուելով Չինացիներից, մասամբ ներքին խռովութեանց պատճառով՝ 375 թ. թողին իրանց հայրենիքը, ճանապարհ ընկան դէպի արևմուտք և խուժեցին Ալանաց վերայ. որ այն ժամանակ բնակւում էին Կովկասեան լեռներից դէպի հիւսիս, Դոն և Վոլգա գետերի մէջ տեղը: Սոքա չկարենալով դիմադրել Հոնաց՝ խառնուեցան նոցա հետ և իմիասին արշաւեցին Գոթաց վերայ, որ բնակւում էին Սև ու Բալթիկ ծովերի և Օդէր ու Վիսլա գետերի միջի տարածութեան վերայ. սոքա բաժանւում էին երկու տէրութեանց. Արևելեան Գոթացիք և Արևմտեան Գոթացիք (Օստ-Գոթ և Վեստ-Գոթ): Արևելեան Գոթացիք, որ բնակւում էին Դօն ու Դնեպր գետերի մէջ տեղը, չկարողացան բարբարոսների արշաւանքը խափանել, ուստի իրանց երկիրը թողին քաշուելով Արևմտեան Գոթացւոց սահմանը. այս վերջիններս էլ ճնշուելով նոցանից՝ Վալէս կայսրը խնդրեցին, որ տեղ տայ իրանց բնակուելու Թրակիայի մէջ Դանուբի եզերքում, և խոստացան որ պահպանեն նորա տէրութեան սահմանները: Վալէս համաձայնեցաւ, միայն պատանդներ առաւ նոցանից և ընդունել տուաւ Արիոսեան աղանդը, վասն զի ինքն էլ Արիոսեան էր:

Սակայն Գոթացւոց վիճակը կարճ ժամանակից յետոյ շատ անտանելի եղաւ, ըստ որում Վալէսի աստիճանաւորներն սկսան

շատ նեղել ու կեղեքել խեղճերին։ Գոթացիք չդիմացան նոցա տմարդի արարմանց, կատաղութեամբ մտան կողոպտեցին դրացի նահանգները և անլուր ոճրագործութիւններ արին։ Վալէս հարկադրուեցաւ զէնք առնել նոցա դէմ. բայց Ադրիանուպոլսի մօտ ջարդուեցաւ և փախաւ թաք կացաւ մէկ գիւղական խրճթի մէջ, ուր որ այրենից նորան։

Մեծ վտանգ էր սպառնում տէրութեանը. Գոթացիք հասել էին մինչև Կ. պօլսի դռները։ Այսպիսի տագնապալից միջոցում օգնութիւն հասաւ Թ է ո դ ո ս զօրավարը, որ կայսր ընտրուելով շտապեց խաղաղութիւն անել ահարկու թշնամու հետ, այն պայմանով որ Թրակիան տրուի Գոթացիներին, իսկ սոքա պարտաւոր լինին 40,000 օգնական զօրք տալ կայսերը և փոխարէնը ուտելիք և փող ստանալ։

ԻԹ.

ԱԼԱՐԻԿ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳՈԹԱՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԸ.

Թէպէտ Թէոդոս կայսրը մի կերպ դադարեցրեց բարբարոսների մոլեգին յարձակմունքը. բայց նորա յաջորդների ժամանակ նոցա յարձակմունքներն աւելի զօրեղացան։ Մեռնելու ժամանակ՝ Թէոդոս Հռոմէական պետութիւնը բաժանեց իւր երկու որդւոց վերայ՝ Ա ր կ ա դ է ո ս ի և Ո ն ո ր ի ո ս ի (395 Թ.)։ Առաջինը պիտի թագաւորէր Արևելքում, երկրորդը՝ Արևմուտքում։ Այս ժամանակներից իվեր տէրութիւնը վերջնականապէս բաժանուեցաւ առանձին մասերի՝ Արևելեան և Արևմտեան. կամ աւելի լաւ է ասել—Հռոմէական և Յունական։

Թէոդոսի որդիքը դեռ ևս անչափահաս էին, ուստի նոցա վերայ առանձին խ ն ա մ ա կ ա լ ն ե ր էին նշանակուած, Հռոմում՝ Ս տ ի լ ի ք ո ն Վ ա ն դ ա լ ը, իսկ Կ. պօլսում՝ Ռ ու փ ի ն ո ս Գալլիացին, տէրութիւնը կառավարողն էլ այս երկու նախարարներն էին։ Սոքա երկուքն էլ ատում էին միմեանց և ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել մէկ մէկի։ Ռուփինոս՝ մասամբ Ստիլիքոնին նեղի ձգելու, մասամբ Արևմտեան Գոթացւոց վտանգաւոր դրացու-

թիւնից ազատուելու համար՝ գրգռեց նոցա թագաւոր Ալարիքին, որ մտնէ Իտալիա։ Երկու անգամ անյաջող փորձ անելուց յետոյ՝ վերջապէս Ալարիք մտաւ Հռոմայեցւոց երկիրները։ Ստիլիքոն այս անգամ էլ քաջաբար ընդդիմադրեց Ալարիքին, վերջապէս հաշտութիւն արաւ, թողելով որ Գոթացիք բնակուին Իլլիրիայում և խոստանալով տալ Ալարիքին տարեկան թոշակ։ Այս միջոցին Գերմանացի և Գալլիացի խմբեր Ռադագայսի առաջնորդութեամբ ներս թափուեցան Իտալիայի հիւսիսային սահմանները։ Ստիլիքոն և Ալարիք ջարդեցին ոչնչացրին նոցա։

Սակայն Ստիլիքոնի չարանախանձ ոսոխներն այնքան գրգռեցին Ոնորիոսին, որ սա անմտութեամբ սպանել տուաւ այդ քաջ զօրապետին, որ մի քանի անգամ Հռոմն ազատել էր վտանգից։ Բացի դորանից, Ոնորիոս վճռեց, որ Ալարիքին այլևս չտայ որոշուած թոշակը։ Այն ժամանակ Ալարիք կատաղաբար արշաւեց Հռոմի վերայ։ Ոնորիոս սարսափած՝ փախաւ ամրացաւ Ռաւեննայի մէջ։ Ալարիք բանակ դրաւ Հռոմի առաջ։ Ամբողջ քաղաքը դողում էր սարսափից և մնացել էր շուարած. վերջապէս դեսպաններ ուղարկեցին Ալարիքի մօտ հաշտութիւն խօսելու։ Այս դեսպաններն Ալարիքին երկիւղ տալու համար ասում էին, թէ դժուար կլինի Հռոմի քաղաքացւոց անթիւ բազմութեանը հետ կռուել։ «փոյթ չէ, ասաց Ալարիք ծիծաղելով, որքան թանձր լինի խոտը, այնքան հեշտ կըհնձուի»։ Ակըզբում նա չէր ուզում հեռանալ, մինչև որ քաղաքի միջի բոլոր ոսկին ու արծաթը չտան իրան. վերջ ի վերջոյ համաձայնեցաւ պաշարումն վերցնել, երբ Հռոմայեցիք խոստացան տալ նորան 5000 ֆունտ ոսկի և 30,000 ֆունտ արծաթ։

Սակայն որովհետև Ոնորիոս մերժեց տալ նորան այս խոստացած տուգանքը, հետևեալ տարին Ալարիք նորից եկաւ Հռոմ, գիշերանց ներս մտաւ քաղաքը (410 Թ.) և հրամայեց անխնայաբար աւարել նորան։ Այսպէս՝ հազար տարուան ընթացքում գոռոզ Հռոմի մէջ ժողովուած հարստութիւնները կողոպտուեցան անգթաբար։

Ալարիք այստեղից ճանապարհ ընկաւ դէպի հարաւ, որ գնայ Սիկիլիային տիրէ և ապա անցնէ Աֆրիկա. սակայն նպատակին չհասած՝ մեռաւ հարաւային Իտալիայում Կոսենտի մօտ: Գոթացիք Բուզենտո գետի ընթացքը փոխեցին, Ալարիքին թաղեցին գետի հունի տակ և նորէն առաջուան ընթացքը տուին գետին: Այդ տեղից նոքա Ադօլֆի առաջնորդութեամբ դուրս եկան Իտալիայից և գնացին Պիւրենեան լեռների երկու էջքերի վերայ հաստատեցին նոր թագաւորութիւն՝ Տուլուզա մայրաքաղաքով:

Հռոմայեցիք հետզհետէ զրկւում էին իրանց նահանգներից. որովհետև մայրաքաղաքը բարբարոսների յարձակմունքից պաշտպանելու համար բոլոր զօրքը ժողովւում էին հեռաւոր նահանգներից: Այդպիսով անպաշտպան մնացած նահանգներից մեծ մասը Գերմանացւոց ձեռքն ընկաւ, որոնք գրաւած տեղերում հաստատեցին զանազան տէրութիւններ: Վանդալք և Ալանք Հռենոսն անցնելով՝ գնացին դուրս եկան Սպանիա: Մինչև այսօր էլ Սպանիայի մէջ մի մեծ նահանգ Վանդալների անուամբ կոչւում է Վանդալուսիա կամ Անդալուսիա: Այստեղից էլ (429 Թ.) Վանդալների թագաւոր Գենզերիկոս անցաւ Աֆրիկա, ուր օգնութեան էր կանչել նորան Հռոմայեցւոց կուսակալ Բոնիֆատիոս ընդդէմ իւր հակառակորդի. բայց Գենզերիկոս փոխանակ նորան օգնելու՝ խլեց Հռոմէական նահանգը և հաստատեց այնտեղ Վանդալական թագաւորութիւն (հին Կարքեդոնի տեղը):

ԱՏՏԻԼԱ ՀՈՆԱՑ ԹԱԳԱՒՈՐԸ (434—453).

Հոնք, որ իրանց յարձակմամբը տեղահան արին շարժեցին Եւրոպայի բոլոր ազգերը, վերջապէս տեղաւորուեցան Վոլգայի ու Դանուբի միջի տարածութեան վերայ: Նոցա թագաւոր Ատտիլլան բոլոր ցիրուցան Հոներին միացրեց իւր իշխանութեան տակ, նա զօրեղ ու դաժանաբարոյ մարդ էր և ասում էր, թէ գտել է պատերազմի Աստուծոյ սուրը՝ մարդկանց պատուհասելու համար: Նա բանակ էր դրել Թիսա և Դանուբ գետերի մէջտեղը. այդ դաշտավայրը նմանութիւն ունէր իրանց նախկին հայրենիքի հետ,

Ատտիլլան առաջ առաջ սարսափի մէջ ձգեց արևելեան պետութիւնը և հարկադրեց Կ. պօլսի կայսերը վճարել իրան տարին 2000 փունտ ոսկի, յետոյ կէս միլիոն զօրք ժողովեց և 450 Թ. չորդան տուաւ դէպի արևմուտք, իւր ճանապարհի վերայ ամենայն ինչ ոտնատակ տալով, կործանելով ու կողոպտելով: Վերջապէս նա մտաւ Գալլիա: Այստեղ Հռոմայեցւոց վերջին քաջ ու անվեհեր զօրավարը՝ Աէտիոս՝ Վեստ—Գոթացւոց թագաւոր Թէոդորիքի հետ միասին ժողովեց Գերմանական ցեղերը և Ատտիլլայի դէմ ելաւ Կատալաունեան դաշտում, Շալոնի մօտ (451): Զարհուրելի արիւնահեղ կոտորած եղաւ: Երկու կողմից 160,000 հոգի մեռաւ պատերազմի մէջ: Ատտիլլան առաջին անգամ էր այդպիսի սարսափելի ջարդ կրում: Նա յետ քաշուեցաւ և անցաւ Հռենոսը: Միւս տարին Հռոմէացւոց կայսերն առաջարկեց տալ իրան կնութեան իւր քոյր Ոնորիային և նորա հետ իբրև օժիտ՝ տէրութեան կէսը. նորան բաց ասացին: Այն ժամանակ Ատտիլլան արշաւեց Հռոմի վերայ. մտաւ Աքուիլէա քաղաքը կործանեց, որի բնակիչները փախան և Ադրիական ծովի կղզեակների վերայ շինեցին Վենետիկ քաղաքը: Ատտիլլան ճանապարհի վերայ բոլոր տեղերը քարուքանդ անելով՝ հասաւ Հռոմ: Ամենքը դողում ու զարհուրում էին: Այն ժամանակ Լեոն պապը քահանայապետական զգեստով՝ դաւազանը ձեռքին, գնաց Ատտիլլայի առաջը և աղաչանքներով ու պարգևներով համոզեց որ յետ գնայ: Ատտիլան դարձաւ իւր բանակատեղը և հետևեալ տարին մեռաւ: Նորա մարմինը դրին ոսկէ դագաղի մէջ. սա էլ արծաթի, վերջինս էլ երկաթի դագաղի մէջ, և այսպէս թաղեցին Հոնաց ահարկու թագաւորի դիակը: Նորա մահուանից յետոյ Հոնաց իշխանութիւնը ոչնչացաւ և ցիրուցան եղաւ:

Լ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (476 Թ.). ՕԴՈԱԿՐ.

Արևմտեան կայսրութիւնը վերջապէս հասաւ իւր կործան-

ման դուռը։ Ոնորիոսի յաջորդ տկար Վալենտինիանոսը Աէտիոսի մեծութիւնից վախենալով՝ իւր ձեռքովն սպանեց տէրութեան այս վերջին նեցուկն էլ։ Մէկ տարի չանցած՝ ինքն էլ սպանուեցաւ Մաքսիմոս զօրավարի ձեռքով, որ ուզում էր նորա կին Եւդոքսիային կնութեան առնուլ։ Սակայն Եւդոքսիան վրէժ հանելու համար՝ կանչեց Աֆրիկայից Վանդալաց Գենզերիկոս թագաւորին. սա էլ իսկոյն շտապեց եկաւ. երկու շաբաթ շարունակ իւր անգութ բարբարոսների ձեռքով կողոպտեց, աւերեց Հռոմը և վերջը Եւդոքսիային առաւ դարձաւ Աֆրիկա։ Ժողովուրդը կատաղութիւնից բռնեց կտոր կտոր արաւ Մաքսիմոսին (455)։

Հռոմի խարխալուած կայսրութեան վերջին հարուածը տուաւ Օդոակր Հերուլների և Ռուգիացիների առաջնորդը, որ 476 Թուին մտաւ Հռոմ, գահավէժ արաւ պատանի Հռոմուլոս Աւգուստուլոս կայսրը և ինք զինքն Իտալիայի թագաւոր անուանեց։

Այսպէս վերջացաւ Հռոմէական յաղթ պետութիւնը։ Միւս՝ արևելեան կէսը դորանից յետոյ 1000 տարի ևս շարունակուեցաւ, մինչև որ Թուրքաց Մէհէմմէդ Բ. սուլթանը 1453 Թ. Կ. պօլիսն առաւ և այդ պետութիւնն էլ կործանեց։

Ընդհանուր հայեացք

ՀՌՈՄԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԱՆԿՄԱՆ ՎՐԱՅ.

Ա.

Հնագոյն ժամանակներում Հռոմը կառավարվում էր թագաւորներով. սոցա իշխանութիւնը սահմանափակ էր և նշանաւոր դէպքերում պէտքէ խորհուրդ անէին ժողովրդի հետ։ Ժողովրդի ներկայացուցիչը Ծ ե ր ա կ ո յ տ ն էր. առանց սորա հաճութեան թագաւորներն իրաւունք չունէին կառավարութեան մէջ փոփոխութիւն-

ներ անել։ Բայց երբ որ թագաւորներն սկսան իրանց իշխանութիւնը դէպի չարը գործ ածել և բռնութիւններ անել՝ ժողովուրդը ոտքի կանգնեցաւ, հալածեց նոցա, ոչնչացրեց միապետական կառավարութիւնը և դորա տեղը հաստատեց հասարակապետութիւն։

Սկզբներում հասարակապետութիւնը միայն ազնուապետական էր, որովհետև միայն ազնուականներիցն էին ընտրվում կառավարիչները։ Ծերակոյտի մէջ ձայնի առաւելութիւնը պատրիկներին էր պատկանում։ Այսպիսի դրութեան հետևանքն այն եղաւ, որ ազնուականներն սկսան նեղել ու հարստահարել ռամիկներին և նոցա ոյժերը գործ ածել լոկ իրանց օգտին։ Երբ դրացի ազգերի հետ կատարուող անընդհատ պատերազմների մէջ՝ Հռովմը նեղի էր ընկնում և կարօտութիւն էր լինում ռամիկ ժողովրդի զօրութեանը, ազնուականները շողոքորթում ու սուտ խոստմունքներով գրաւում էին նորան. բայց հենց որ վտանգն անցնում էր՝ ռամկի վիճակն աւելի էր թշուառանում։ Ո՛չ ոք չէր ուզում ուշք դարձնել նորա բողոքների վերայ. պատերազմներին մասնակցելու ժամանակ՝ տնտեսական դրութիւնը խախտվում էր. ձեռք բերուած աւարներից ու հողերից շահվում էին միմիայն ազնուականները, իսկ ռամիկներն օր ըստ օրէ թաղվում էին պարտքի մէջ և դառնում էին իրանց պարտատէրների ստրուկը։ Նոցա դրութիւնն իրօք անտանելի էր. ուստի յայտնապէս սկսան պահանջել իրանց վիճակի թեթևութիւնը. դորանից յետոյ՝ հաւասար իրաւունք ազնուականների հետ. նոքա պահանջում էին հաւասար մասն պատերազմով ձեռք բերած նիւթական ստացուածքից. պահանջում էին նոյնպէս, որ քաղաքական գործերի և իրաւունքների վերաբերմամբ՝ խտիր չդրուի իրանց ու ազնուականների մէջ։ Ռամիկները երկարատև կամակորութեամբ այնքան կռուեցին, որ ազնուականները հարկադրուեցան հետզհետէ զիջանել նոցա պահանջներին և մէկը միւսից յետոյ տալ նոցա այս կամ այն իրաւունքը. որով վերացան Հռովմայեցի ժողովրդի միջից դասակարգերի խտրութիւնները. Ռամիկներն իրաւունք ստացան մասնակցել կառավարչական գործերին. նոքա իրանց կողմից ընտրում էին ցեղապետներ կամ տրիբուններ (թուով առաջ երկու,

յետոյ շատ), որոնց պարտականութիւնն էր պաշտպանել Ծերակուտի մէջ կամ ուրիշ դէպքում ռամիկների շահերը. և եթէ հակառակ ինչ նկատէին՝ «արգելում եմ» ասելով իրաւունք ունէին դադարեցնել ամենայն վճիռ: Այսպիսով հաստատուեցաւ կատարեալ հանրապետութիւն, և այս հանրապետութեամբն էր, որ այնքան փառաւոր կերպով զօրացաւ հռովմէական տէրրը:

Ռամկապետական հանրապետութիւնը ոգի ներշնչեց Հռովմի ժողովրդի մէջ. նորա հասարակական կեանքը սքանչելի կերպով բարգաւաճեց: Հռովմի հանրապետութեան պատմութիւնը փայլուն է հայրենասիրութեան, հաստատակամութեան, հզօրութեան, անձնազոհութեան և ուրիշ քաջագործութեանց վեհ օրինակներով Հանրապետական հաստատութիւնն էր, որ կարողացաւ դիմադրել հանճարեղ Աննիբալին. ամեն մի Հռովմայեցի թէ՛ յաղթութեան պարծանքը և թէ՛ պարտութեան նախատինքը իրանն էր համարում, ուստի և պատերազմի մէջ չէր համաձայնում հաշտուիլ մինչև չյաղթէր: Հանրապետութիւնը միջոց տուաւ Հռովմայեցիներին կոպիտ անկրթութիւնից դուրս գալ և քաղաքակրթուել. նոքա իրանց ժամանակի ամենալուսաւորեալ ազգը դարձան:

Բ

Չնայելով, որ հանրապետութեան ժամանակ Հռովմն այդքան յառաջադէմ էր, բայց այդ ժամանակներումն էլ ազատ չէր նա աշխարհակալութեան ոգուց, որ և պատճառ եղաւ նորա անկման: Իւրաքանչիւր նուաճուած ազգից խլվում էր նորա սեպհականութեան լաւագոյն մասը, և այս՝ գրգռում էր պատերազմի ո՛չ միայն Հռովմի կառավարիչներին, այլև քաղաքացիներին առհասարակ. պատերազմի աւարը գրաւում էր Հռովմի ժողովրդին: Հռոմայեցին միջազգային իրաւունք չէր ճանաչում. յաղթուած ժողովուրդը պարտաւոր էր հնազանդել իւր վերայ դրուող ծանր պայմաններին:

Հռովմայեցիք օգուտ էին քաղում ամեն հանգամանքից՝ օտար ազգերին սարկացնելու համար, արդարացի միջոցներով լինէր՝ թէ անարդար-մինոյն էր: Նոքա յարուցանում էին մի ազգ միւսի դէմ, գրգռում էին նոցա, աշխատելով որ փոխադարձ կռիւների մէջ սպառուէին նոցա ոյժերը, որպէս զի հեշտ լինի տիրել նոցա: Պատերազմի ժամանակ Ծերակոյտը համբերութեամբ տանում էր ամեն վիրաւորանք, մինչև որ հասնէր բարեյաջող դէպքը վրէժխնդիր լինելու համար: Հռովմայեցիք երբէք անկեղծ հաշտութիւն չէին կապում. նոքա հաշտվում էին միայն այն ժամանակ և այնպիսի ծանր պայմաններով, որ անշուշտ դէպի կորուստ էին տանում իրանց հետ գործ ունեցող տէրութեանը: Օրինակ, նոքա այդ տէրութեան զօրքը փչացնելուց յետոյ՝ ահագին գումար էին պահանջում իբրև պատերազմական ծախք. գանձարանը սպառուած լինելով՝ այդ տէրութիւնը հարկադրվում էր ծանր հարկեր դնել ժողովրդի վերայ, որպիսով ժողովուրդը գրգռվում էր կառավարութեան դէմ: Այսպէս, Հռովմը հարստանում էր անընդհատ պատերազմներով, և ամեն մի պատերազմ միջոց էր տալիս նոր պատերազմ սկսելու:

Հռովմի կուսակալներն ու աստիճանաւորներն էլ առանձին տուրքեր էին առնում իրանց համար՝ օտար թագաւորներից ու ժողովրդից: Ըատերը վերադառնում էին նահանգներից ահագին հարստութիւններով:

Նուաճած նահանգներից մայրաքաղաք էին կրվում բռնութեամբ յափշտակուած մեծամեծ գումարներ և կենսական պէտոյք: Այսպիսի հեշտութեամբ ձեռք բերուած ստացուածքը ժողովրդին սովորեցնում էր ծուլութիւն ու անգործութիւն և փչացնում էր նորա բարոյականութիւնը: Նարուց հին պարզութիւնը և հանրապետական սխրագործութիւնները, որ աննշան Հռոմը հասցրին այնքան բարձրութեան, չքացան անդառնալի. դոցա տեղ սկսան տիրել արևելեան ազգերի զեղխութիւնն ու փափկակեցութիւնը: Հին ծանրաբարոյ ու խստակեաց Հռովմայեցիք, որ իրանց ձեռքով մշակում էին իրանց հողը՝ չկային այլևս. նոցա թոռները ցածութիւն էին համարում երկիրը գործել. աշխատանքը յանձնում էին ծառաներին ու ստրուկներին, իսկ իրանք անձնատուր էին լինում շուայլութեանց ու զուարճութիւնց:

Ծերակոյտը կորցրեց իւր վսեմ նշանակութիւնը, օրէնքն՝ իւր պարտաւորիչ ոյժը, կրօնը՝ իւր բարերար ազդեցութիւնը մարդկանց սրտի ու մտքի վերայ: Գոռոզութիւնը, փառասիրութիւնը և ագահութիւնը իւրեանց զզուելի հետևանքներով յատկութիւն դարձան հանրապետութեան ղեկավարների համար: Բարձր պաշտօնականներն աշխատում էին միայն իրանց սեպհական օգուտների համար. սոքա անխիղճ կերպով կողոպտում էին գանձարանը, սպառում էին նահանգները, յափշտակում էին յաղթութեանց պտուղները և սեպհականում էին հասարակաց հողերը: Այսպիսով ահա հարստութիւնը փոքր առ փոքր հաւաքուեցաւ ճարպիկ տոհմականների ձեռքը. իսկ ժողովրդի մեծամասնութիւնը զրկուեցաւ ունեցուածքից: Բոլոր Հռովմը բաժանուեցաւ երկու տարբեր մասերի, մէկը՝ սակաւաթիւ հարստականները, որ ապրում էին համարեա թագաւորական զեղխութեամբ, միւսը՝ մեծաթիւ աղքատները, որ չէին կարողանում լցուցանել իրանց ամենագլխաւոր կարիքները: Սոցա թիւը շատացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ ազնուականները տալիս էին իրանց հողը մշակելու ոչ թէ Հռովմայեցի հողագործ դասին, այլ պատերազմներում գերուած ստրուկներին: Ժողովրդի նիւթական անկման հետ մեծանում էր և բարոյական անկումն: Հռովմի քաղաքացին այժմ միայն հ ա ց էր խնդրում և զ ո ւ ա ր ճ ո ւ թ ի ւ ն:

Գ.

Սակայն յարատև չեղան և այն շահերը, որ հասցնում էր պատերազմը: Առաջ քաղաքացիք պատերազմների ժամանակ զէնք էին առնում, իսկ վերջանալուց յետոյ՝ վերադառնում էին իրանց խաղաղ յարկի տակ. իսկ վերջը դոցա փոխարէն կազմուեցան պատրաստի վ ա ր ձ կ ա ն զ օ ր ա գ ն դ ե ր: Այս՝ միջոց էր տալիս ամեն մի շահախնդիր առաջաւորի իւր իշխանութիւնը հաստատել 'ի վնաս հանրապետութեան:

Առաջին միապետը Սուլլան եղաւ, որի ժամանակ Հռովմը

սպանութեանց և յափշտակութեանց հանդիսարան էր դարձած: Նորան հետևեցին ուրիշ փառասէրներ, որ տէրութիւնն իրար ձեռքից խլելու համար՝ անպատիժ կերպով վաղեցնում էին խաղաղ քաղաքացիների արիւնը, մինչև որ Օկտաւիանոս Օգոստոս թէև բռնի, բայց հանճարեղ կառավարութեամբ իւր ձեռքն ամփոփեց իշխանութիւնը: Կորաւ հանրապետութեան վերջին նշոյլը. հաստատուեցաւ միապետութիւնը: Լաւ էր, եթէ Օգոստոսի յաջորդները ունենային նորա խելքն ու կառավարչական շնորհը: Թէ Հռովմի վիճակը որքան դառն էր՝ բաւականին ցոյց են տալիս Տիբերիոսի, Ներոնի, Դոմետիանոսի և մի քանի բացառութիւններով Կոմմոդից մինչև Դիոկղետիանոսի ժամանակներում կատարուող գործերը: Յափշտակութիւն, սպանութիւն, լրտեսութիւն՝ տիրում էին ամեն ուրեք: Իրանք կայսրներն էլ աւելի երջանիկ չէին:— Բռնաւորական իշխանութիւնն արդէն ինքն ըստ ինքեան կասկածոտ էր. ամեն կողմից վտանգ էր սպառնում նորան, կամ հանրապետութեան կուսակիցներից, կամ անձնական թշնամիներից, կամ ուրիշ բաղդախնդիրներից, որոնք շատ անգամ իրանց գլխի ապահովութեան համար աշխատում էին բարձրագոյն իշխանութիւն ձեռք բերել: Այս ամենը ահա զօրացրին Հռովմի մէջ բռնակալութիւն և լրտեսութիւն:

Անարգ շահը և անգործութիւնը ստեղծեցին լրտեսների ահագին խմբեր: Բարեկամական շրջանների մէջ անգամ չէր կարելի ազատաբար դատել ու խօսել այն բանի վերայ, ինչ որ վսեմ ու կարևոր է մի քաղաքացու համար: Մարդիկ մեղադրվում էին մինչև անգամ այնպիսի յանցանքների մէջ, որ երբէք մտածած էլ չէին լինում: Տակիտոս պատմագիրն ասում է. «Եթէ լսելու պէս կարելի լինէր և մոռանալ, մենք կորցրած կլինէինք մեր յիշողութիւնն անգամ»: Այսպէս Հռովմը դարձել էր մի քաղաք բազմաթիւ աչքերի ու ականջների, որ նկատում էին ինչ որ կար և ինչ որ բոլորովին չկար: Եթէ մէկը տէրութեան մէջ մի նոր փոփոխութիւն մտցնելու վերայ մտածէր՝ պէտք է առաջ իւր գլխից ձեռք վերցնէր: Քաղաքացու մէջ մեռել էր յոյսը, թէ երբ և իցէ կա-

թող էր փոխուիլ կառավարութեան այդ եղանակը: Հռովմէական միապետութեան կազմութիւնն այնպէս քայքայուել ու ապականուել էր, որ ամենից բարի կայսրներն էլ չէին կարողանում բարեկարգել պետութիւնը. նոքա էլ վատերի վախճանն էին ունենում: Տրայանոսի, Ադրիանոսի, Մարկոս Աւրելիոսի նման կայսրները վաղանցուկ աստղերի պէս թռչում էին Հռոմի պետութեան մթին երկնակամարով: Նոցա իմաստուն կառավարութիւնը միմիայն ժամանակաւորապէս ուշացնում էր. հոգեվարք հիւանդի մահուան րոպէն:

Այսպէս էին աշխարհակալութեան և միապետութեան կորստաբեր հետեւանքները Հռովմի համար:—Նա մաշուեցաւ ու խախտուեցաւ և իւր գոյութիւնը քաշ էր տալիս մի կերպ, մինչև որ ազգերի մեծ գաղթականութեան և վայրենի բայց թարմ ցեղերի արշաւանաց հարուածը վերջապէս կործանեց նորա քայքայուած շէնքը 476 թ.

ՎԵՐՋ.

Гос.Пуб.Биб-ка Арм. С.С.Р.
Меж.Б.Аб.

13 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0550466